



ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱՆԻ
ՀԻՍՈՒՄ ՈՐԴԻ





ՀՐԱՏԱՐԱԿԶՈՅՈՒՆ

1991

ԳՄԴ 8421

և 631

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐԱԾԵՑ
ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԸ

Խմբագիրներ՝ ԱԶՍՏ ԲՈԶՈՅԱՆ,
ՀԱԿՈԲ ՍՈՎՍԵՍ

և 631 Ներսես Շնորհալի: «Հիսուս որդի»: Վիպասանական
ողբերգություն: [Գրաբարից թարգմ. Վ. Ղազարյանը.—
Երևան: Ապոլոն, 1991.—224 էջ:

*Միջնադարյան մեծ բանաստեղծ Ներսես
Շնորհալու «Հիսուս որդի» պոեմը հայ մշակույթի
գագաթներից է: Այն վիթխարի ազդեցություն է թողել
մեր հետագա ողջ բանաստեղծության վրա:
Աշխարհաբար թարգմանվում է առաջին անգամ:
Գիրքն ընդգրկում է նաև գրաբար ճշգրտված տեքստը:*

Շապուկիճ՝ Սկիֆի ծածկոց, 1862թ.:

և $\frac{4702080102 ()}{749 (01) 1991}$

ԳՄԴ 8421

ISBN 5-8079-0313-7

© Երևան, «Ապոլոն», 1991
Թարգմանության և ձևավորման համար

437-83 1.501-1
A117492

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ՀԻՍՈՒՄ ՈՐԴԻ



ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ

Գ Ի Ր Ր Զ, Ո Ր Կ Ո Չ Ի
ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ
ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ
Ի ՏԱՌԻՑ ՍՐԲՈՅ

Գ Ի Ր Զ, Ո Ր Կ Ո Չ Վ ՈՒ Մ Է
ՇԻՍՈՒՍ ՈՐԴԻ
ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ
ԸՍՏ ՍՈՒՐԲ ԳՐԶԻ

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻՆ ԵՎ ԻՐ «ՀԻՍՈՒՍ ՈՐԴԻՆ»

Հայ մշակույթը, հատկապես ջերթությունը և արվեստը $\theta - \theta$ դարերում համեմատելի է սրայն ե—Ը դարերի մշակույթի հետ: Ոսկեդարյան դարություն, ոսկեդենիկ լեզու համարվում են Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Նրանց ավագ ու կրտսեր աշակերտների ստեղծած մատենագրությունը և Նրանց աստվածային լեզուն: Մեսրոպ Մաշտոցից մինչև Մովսես Խորենացի թարգմանության, աստվածաբանության հայկազյան լեզուն հնչում է իր ողջ մաքրությամբ, հղկվածությամբ և անհաս մի գեղեցկությամբ, որ դարեդար ավելի հմայիչ է դառնում: Պակաս գեղեցիկ չէ նաև զանազան ոճերով հարստացված θ դարի հեղինակներ Թովմա Արժրունու, Հովհաննես Դրասխանակերտցու, Գրիգոր Նարեկացու լեզուն: ԺԱ դարից փոխվում է հայ ժողովրդի համար քաղաքական և մշակութային իրականությունը:

1021 թ. Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագավորը իր 200 000 մարդկանցով թողնում է հայրենիքը և տեղափոխվում Կապադովկիա և Նախկին Փոքր Հայք՝ Մեքաստիա: Փոքր Հայքը, որ Զ.Ժ.ա Բ դարից բաժանվել էր Հայաստանից և աստիճանաբար հայաթափ էր եղել (կամ հայերն էին դարձել հունախոս), Նորից աշխույժ հայկական կյանք է ստանում, մանավանդ երբ այնտեղ Կապադովկիայի և Կիլիկիայի սահմանին մերձ Ծամնդավ է տեղափոխվում Կարսի Գագիկ թագավորը: 1045-ին Անիի Գագիկ Բ թագավորը հրավիրվում է Կոստանդնուպոլիս և ակամա դառնում Կոստանդին Մոնոմախ կայսեր պատանդը, ավելի ուշ վտարանդվելով Կիլիկիա:

Ճակատագրի ցմահաճույքով Պահլավունիները (ավանդաբար Արշակունիներից սերող այս տոհմը) դառնում են Բագրատունիների (Արշակունի արքաների թագադիր ասպետների) գահի պահպաններ, ապա նաև ոստանի վերջին հզոր պաշտպանները: 1064-ին Ալփ-Արսլանի սելջուկյան վիթխարի ուժերի առջև Պահլավունիները չեն կարողանում պահել իազար ու մի եկեղեցիների քաղաք Անին: Բյուզանդական անհեռատես քաղաքականության պատճառով Հայաստանը զրկվել էր իր ամենակենսուկակ ուժերից, որոնք հեռացվելով հայրենիքից՝ եռանդով կենսական տարածություններ էին ստեղծում Կիլիկիայում, Հյուսիսային Ասորիքում, Կապադովկայում, Փոքր Հայքում: Իսկ մինչ այդ Բագրատունյաց բագի պաշտպան Վահրամ Պահլավունու եղբորորդին՝ Գրիգոր Մագիստրոսը, հույսը կտրած Բագրատունյաց արքաների վերադարձից, հանձնում է իր Բջնիի, Կայեսի և Կայծոնի հայկական կալվածքները՝ զինվորագրվելով Բյուզանդական բանակին:

Բայց մինչև Գրիգոր Մագիստրոսը, ԺԱ դարի այդ առեղծվածային հանձարը, հայկական ուսումնական հեզանքի այդ տխուր ասպետը, որին կարող է նախանձել Նույնիսկ մեր դարի ինտելեկտուալը, հայ և Բյուզանդական բանակների այդ երգսարի սուրը, թոնդրակյան շարժման այդ սառնասիրտ դահիճը, շարժում, որին հար և նման ռործունեությունը թարմ շունչ հաղորդեց արևմտյան աշխարհին՝ հանձինս բոգոմիլների և մեֆորմացիայի մարտիկների, դառնանք Բյուզանդական «հայազգի» կայսրերին:

Ովքեր էին նրանք, այդ «շուռ տված» ձայերը, այդ կասկածելի ինքնակոչ «Արշակունիները», Նոր Հոռմի նոր հավակնորդները, որոնք վերջնականապես հին Հոռմը ոխերիմ դարձրեցին իրենց՝ զոգոելով նրա անհազուրդ արտոժակը իրենց փարթաւութեամբ: Երանի նրանց գործունեությունը սահմանափակվել միայն իրենց սահմանների պաշտպանության հոգսերով և հելլենական կրթության ու հայրաբանական մատենագրության վերածնունդով, ճոխ մատենադարանների ստեղծումով, իտալական Վերածնությունը հիշեցնող այնպիսի բազմակողմանի ուսումնականներով, ինչպիսիք էին Փոռը, Լևոն Մաթեմատիկոսը, Միքայել Պետլիսը, Միքայել Բալիկոսը: Բայց նրանք թերևս կամենում էին աշխարհը հավաքել կայսեր գալիսունի տակ, դառնալ նոր Կոստանդիններ, իդեալական քրիստոնյա աշխարհակալներ, դժբախտաբար գործողներով ոչ քրիստոնեական և ոչ հեռատես միջոցներ: Արևելյան սահմանները մաքրվեցին «անհարազատ» համարված հայերից և նրանց անունը կրող զորաբանակից (Արմենիակոն թեմի), հայոց հողը մաքրվեց իր հզորագոր նախարարներից, մեծ ու փոքր արքաներից, թուրք-սելջուկներն անցան ամբողջ Պարսկաստանը, քանդեցին արաբական ամիրայությունները և խրվեցին Բյուզանդիայի սիրտը՝ Փոքր Ասիայում հիմնելով Բյուզանդիայի սուլթանությունը՝ Բյուզանդական կայսրության այդ մահացու խոցը. խաչակիրները Բյուզանդիան դարձրին ոտքի ու ձեռքի ճանապարհ, դեպի Փոքր Հայք, Կապադովկիա և Կիլիկիա տեղափոխված հայ արքաների ու իշխանների սերունդները Միջերկրականի հյուսիս-արևելյան ծովեզերքը վերածեցին մի նոր հզոր Հայաստանի, որը շուրջ երեք դար դիմացավ աշխարհաստան փոթորիկներին: Վասիլ Բ կայսեր խորամանկ և փայլուն, անարյուն իրագործված ծրագիրը՝ Հայաստանը զրկել նախարարական տներից, ուղղվեց իր՝ Բյուզանդիայի դեմ, նրան հաջորդած թուլամորթ կայսրերի դեմ, որոնք չունեին ոչ հայազգի կայսեր հզոր բանակը, ոչ էլ նրա անսպառ եռանդը: Մերձավոր Արևելքը դարձավ պատերազմների թատերաբեմ և այլազան մշակույթների խառնարան, որտեղ կոտնեիք հույն և ասորի անապատականների, հայ սքեմավորների, ֆրանկ, գերմանացի և անգլիացի ասպետների, տրուբադուրների ու ֆրանցիսկյան-դոմինիկյան կրոնավորների, արաբ ու պարսիկ, ալեյի ու չ՝ սելջուկ դերվիշների և ուսումնականների, որոնք վիստում էին Բալանիայից մինչև Հնդկաստան, զինված հայ, հույն և իտալացի, արաբ և հրեա վաճառականների, որոնց համար սովորական էր ստրկավաճառությունը: Արդեն նեղ էին գալիս ներփակ ազգային դարձած քրիստոնեական ոլորտները, նեղվում էր ոսկեդեմիկ հայերենը հին պատյանի մեջ: Նա մնում էր կատարյալ թերևս աստվածաբանության համար:

Բայց քերթության, հոմերական վիպերգության, բժշկագիտության, մարդու կազմախոսության, ուղղագրության, զրչության արվեստի, վերջապես՝ հայիոյանքների, կենդանի աղոթքների, գործնական հաշիվների, աշխարհիկ նոր օրենքների լեզուն: Հոգևոր հովիվների հսկողությունից դուրս էր մնում հոտը՝ անջատված մահմեդական և ոչ մահմեդական անվերջ փոփոխվող իշխանություններով: Հայ ազգը նստրանում էր մայր հայրենիքում, տարածվում դեպի Ասորիք, Կիլիկիա, Փոքր Հայք, Բարձր Հայք: Անիի ընկնելուց հետո միայն մեկ կաթոլիկոս՝ Պետրոս Գետադարձի հաջորդ, կաթողիկոսի տեղապահ Ռաչիկը մի փոքր մնաց ավերված Անիում:

Արդեն Կոստանդին Մոնոմախ կայսեր միջամտությամբ ընտրված Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Գրիգոր մեծ Վկայասեր կաթողիկոսը իր ապաստանը գտավ

հեռավոր Զեսունի մոտ՝ Գող Վասիլի տրամադրած Կարմիր վանքում: Կաթողիկոսի հայրը՝ Գրիգոր Մազիստրոսը, նույնահանգ քանաստեղծության սկիզբ դրեց իր նշանավոր «Հազարտողլանով»: 1045-ին Գրիգոր Պահլավունին Կոստանդնուպոլսում հանդիպեց մահմեդական ռաումնականներից մեկին՝ Մանուչեին, որ էր «այր յոյժ հմուտ իսմայելական դարուքեան, և ամենայն իմաստութեամբ պերճացեալ, և վարժեալ ի տաղաճացութիւնս և հռետորութիւնս, և ի բանաստեղծութիւնս հզօր գոլով», հռչակված Բաղդադում, Եգիպտոսում, բյուզանդական կայսրից ստացած բարձր պատրվներ: Մա պնդում է Կորանի առաջելությունը Աստվածաշնչից, որով հետևեալ Մահմեդը «զայսոսրկ ոգեաց տաղս միայեւ չափատրութեամբ գծի», այսինքն՝ ոտանավորով: Չորս օրում Մազիստրոսը գրում է Աստվածաշնչի բովանդակությունը հազար տողի մեջ և որանով «ապացուցում» Աստվածաշնչի առաջելությունը: Մազիստրոսը, որն իրեն կոչում էր «Վասպուրականի և Տարօնոյ և Մանազկերտի, Արճիշոյ, Բերկոյ, Միջագետաց տեր և Մոնոմախին մազիստրոս, վէստ և դուկ Խարթի», այսպիսով առաջին վկայողն է, թերևս իրագործողը նույնահանգ քանաստեղծության, հյուսված արաբականի նմանությամբ: Այս ամենի մասին ստույգ աղբյուրներով հավաստում է քանասեր Կ. Կոստանյանը (տե՛ս «Գրիգոր Մազիստրոսի թղթերը», Աղեքսանդրապոլ, 1910, էջ ԽԱ-ԽԳ): Մազիստրոսը մնում էր դեռևս քառաշէշտ քանատողի սահմաններում, որ իր հնչողությամբ մոտ էր շարականների ոտանավորին: Առնվազն մեկ դար պետք է անցներ, որ Պահլավունիների տոհմից մայրական գծով ծնվեր մեկ այլ քերթող, որն իր մեծ պապի մի հարվածով ստեղծած «թեթևալիկ» հանգախաղը հղկեր, տար նրան կենդանի շունչ, փոխելով նաև առհասարակ հնավանդ ոտանավորը: Այդ քերթողը Ներսես Շնորհալին էր:

Այս Պահլավունիները, որոնց երկրորդ լուսավորիչ էին կոչում, ծագում էին Անիի Ապուղամրեց տոհմից, որը Անիում կառուցել է մի շարք եկեղեցիներ, որոնցից մի քանիսը կան մինչև օրս, թողել բազմաթիվ վիմական հիշատակներ, բերդեր, նույնրակ ջաղաքներ: Այդ տոհմն իրեն համարում էր Կամսարականների շառավիղ, որոնց հետքը կորել էր Ը դարի խորքերում: Իսկ Կամսարականները մայրական գծով զաւիս էին Պարթևների կամ Պահլավների (Գրիգոր Լուսավորչի) ցեղից: Գրիգոր Մազիստրոսի նման կիրթ անձնավորության համար դժվար չէր իր տոհմին անուն գտնել, որը քիչ դեր չխաղաց ցիրուցան հայ ժողովրդի հավատքը և միությունը պահպանելու գործում մինչև Գրիգոր Տղա և Ներսես Լամբրոնացի: Եվ, իհարկե, նրանց շարքում թերևս առաջին տեղը պատկանում էր Ներսես Շնորհալուն, որն իր նշանավոր «Թուղթ ընդհանրականով» կարողացավ ի մի թերել ցիրուցան հայ հոգևոր և ազգային ուժերը:

Ներսեսը ծնվել է 1102-ին Մովս ղոյակում, որի տերն իր հայրն էր՝ Ապիրատ մեծ իշխանը: Նա ուներ երեք եղբայր և մեկ քույր: Եղբայրներից Գրիգորը և Ներսեսը հանձնվում են Գրիգոր մեծ Վկայասեր կաթողիկոսի խնամքին: 1105-ին, վերջինիս մահից հետո երեխաների խնամքն ստանձնում է Բարսեղ կաթողիկոսը: Սկզբում նրանք գտնվում էին Զեսունի մոտի Շուղր անակատում: Բարսեղ կաթողիկոսը երեխաների խնամքը հանձնում է Կարմիր վանքի առաջնորդ Ստեփանոս Մանուկին: Այստեղ են ուսանում հայ մատենագրության նշանավոր ներկայացուցիչներ Սարգիս Շնորհալին, Բանատիոսը, Բարսեղ Շնորհալին: Ինչպես երևում է, Շնորհալին պատվանունն էր Շուղրի և Կարմիր վանքերում:

1150-ին, երբ կաթողիկոս էր Ներսեսի եղբայր Գրիգոր փոքր Վկայաւեբը, կաթողիկոսական աթոռը տրադարվում է նոր զնված հունական բերդը՝ Հոռովկա,

Եփրատի աջ ափին, Եդեսիայից արևմուտք, Այնթապից հյուսիս-արևելք: Ներսեսը 1166-ին, եղբոր մահից հետո, դառնում է կաթողիկոս: Նա կաթողիկոս եղբոր պատվերով գրել է մի շարք գործեր, այդ թվում և «Հիսուս Որդին» վրպասանական ողբերգությունը (1152 թ.):

Դեռ 21-ամյա Շնորհալին, երբ գրում էր իր հանճարեղ հոմերական վիպասանությունը («Սակս Հայկազեանց սեռի և Արշակունեաց զարմի»), բողոքում էր իր թերուսության համար «չիմաստ բանի, վասն անկատար հասակի», ափսոսում, որ չի կրթվել Աթենքի վարժարաններում, Պլատոնի լսարանում, չի վարժվել հոմերական չափին, չի աշակերտել հռետորների և քերականների հույլին: Հավանաբար երիտասարդ քերթողին ոգեշնչում էին Մաշտոցի և Սահակի, Մովսես Խորենացու և Դավթի, Ստեփանոս Սյունեցու, իր մեծ պապ Գրիգոր Մագիստրոսի կերպարները, որոնց իրոք ներհմուտ էին հելլենական կրթության՝ իրենց գիտելիքներն ստացած լինելով կաստալյան առաջին աղբյուրներից:

Իսկ եթե Շնորհալին դիմեր հոմերոսյան չափ ու կշռության, ապա դժվար թե կյանքի կոչեր «հոմերական վիպասանության» հայկական այն տարբերակը, որն սկսվեց հայկազյան սեռին ու արշակունյաց զարմերին նվիրված իր քերթությամբ, և որը իբրև հոմերական վիպասանություն ընկալեց իր կրտսեր զարմիկը՝ Ներսես Լամբրոնացին՝ ներհմուտ մի անձ հելլենական կրթության:

Այդ վիպասանության հետ «Ողբ Եդեսիոն» և «Հիսուս Որդին» բավական կլինեին Շնորհալու համար տեղ ապահովելու հայ քերթության հանձարների Պառնասում: Ութվանկանի (ինչպես Ալիշանն է ասում՝ ութոտջանի) հիմնականում նույնահանգ այդ ոտանավորը ամբողջ միջնադարում ուղեկցեց հայ քերթությանը: Այն մեր հասուն և ուշ միջնադարյան քերթության համար նույնն է, ինչ տերցինները Դանտեի կամ օկտավները Արիոստոյի ու Բայրոնի համար: Դա անվերջ հոսող ոտանավոր է, որ ծառայում է վիպական պատմություններին, ողբերգություններին, ներբողյաններին, որտեղ քերթողը պատմական կամ աստվածաշնչյան պատումներին կարող է հյուսել սեփական ապրումները և վերապրումները՝ համապատասխան Սուրբ Գրոց դեպքերի և անձանց, բողոքել իր կորուստների համար, բանաստեղծական մատչելի տեսք տալ աստվածաբանական ու իմաստասիրական մտքի ամենաթարդ ու վերացական հասկացություններին, դրանց այնպես ներհյուսել, որ ամեն մի քերթողական հատվածում միմյանց արձագանքեն մի քանի ձայնեղանակների նման (ինչպես նշում է Շնորհալու երաժշտական արվեստի գիտակ Ն. Թահմիզյանը, «Հիսուս Որդին» ասերգի ձևով պատմվել է և տեղ-տեղ երգվել):

Այս չափով են գրվել հենց իրեն՝ Շնորհալուն, Ներսես Լամբրոնացուն, Գեորգ Ավետացուն ձոնված ներբողները, Զրիկի շատ քերթվածներ, բազմաթիվ հիշատակարաններ (Մմբատ Գունդստաբլի, Սարգիս Պիծակի, «Ավետայի պատարանի» և այլն), Ռուբինյանց տանը նվիրված Վահրամ Բաբունու վեպը: Այս չափով գրված երկարաշունչ ոտանավորները հիշեցնում են անվերջանալի հյուսվածքագարդեր, որոնք ներսում ընդգրկում են խաչի զանազան պատկերներ, զարդաբլուզ մեր ձեռագրերը, եկեղեցիները, խաչքարերը, հյուսվածքագարդեր, որոնցով այնքան հարուստ է ողջ քրիստոնեական արվեստը Հայաստանից մինչև եգիպտոս և Բուլանդիա:

Այս չափով ինչ ասես, որ չեն ներկայացնում մեր քերթողները՝ էլ ականատեսի վկայություններ, էլ շքեղ առարկաների նկարագրություններ, էլ իրենց ուսուցիչների վարքն ու գործը, էլ մեսրոպյան այբուբենի ոլորազարդ գովաբանություններ, էլ հեքիաթային անցուդարձեր: Միջնադարում այսքան հարուստ ու ճկուն երանգա-

պնակ թերևս չունի նույնիսկ հայրենի չափը, որի գագաթները Լարեկացու և Զուչակի տաղերն են, ներթողական վսեմ խորհրդապաշտական և քնարական մտերմիկ, աշխարհական այդ գլուխգործոցները:

«Հիսուս Որդի» վիպասանության հիշատակարանը ևս մի քանի մոտիվների սերտաձման փայլուն օրինակ է: Իհարկե, դրանց տեքստային շերտերի արտահայտության ուսումնասիրությունը բանասերների գործն է: Մենք կփորձենք միայն ուրվագծել այդ մոտիվները: Հիշատակարանի սկիզբը «Հիսուս Որդու» գրման տարեթիվն է և նրա արտաքին բնութագրումը (տների թիվը), ապա նյութը (սկսած նախաստեղծ հորից՝ Ադամից, մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը և Սուրբ Հոգու վերջին ընկալողները՝ ներկայացված դիմառնական ձևով, այսինքն դրանց հետ անձի հարաբերակցությամբ): Այնուհետև այդ նյութի աստվածաբանական ներգործությունն է (հար և նման Սուրբ Գրքի ներգործությանը), որն աշխարհիկ միտքը (ծովի պատկերով) հրի նման կարող է վեր բարձրացնել դեպի անմարմնական գունդը՝ երկնային դասերը: Ուսանավորն իր ընդգրկած սրբազան ուժի շնորհիվ ստանում է Սուրբ Գրքի ուժը (Սուրբ Հոգին) և Աստծո սերը տենչացողներին օգնում վեր սլանալու՝ հողվելու Քրիստոսին:

Այնուհետև գալիս է քերթողի եղբոր՝ Գրիգոր կաթողիկոսի գովերգումը և իր սեփական անձի փնտվումը: Հաջորդ քայլը աստվածաշնչյան խոսքի չափաբերումի հիմնավորումն է (անսպասելի իբրև մոտիվ), այսինքն բացատրումը, որ եթե արտաքին (այսինքն հեղինական, ափրոդիտյան) բանաստեղծությունը չափով գեղեցիկ է դառնում, ապա որքան ավելի կվայելանա հոգևոր խոսքը: Դրանից հետևող մոտիվը խոսքի տարբեր շնորհների արտացոլումն է, որոնցից մեկն էլ ուսանավոր ձև տալու արվեստն է, որին տիրապետում է բանաստեղծը: Վերջում քերթողը հիշատակում է իրեն հարազատ մարդկանց անունները՝ իր եղբայրներ Գրիգոր կաթողիկոսի, Վասիլ իշխանի, Ջորավարի, Մարեմ ճգնավոր քրոջ՝ վերջինիս հանգուցյալ զավակի հետ՝ նրանց կյանքի փրկության արձան համարելով իր քերթվածը:

Անշուշտ, Ներսես Շնորհալու վիպասանություններից հետո գրվեցին բազմապիսի ու բազմաբովանդակ վիպասանություններ, բազմաթիվ գյուտերով, նորամուծություններով, տաղանդի այս կամ այն աստիճանով (Գրիգոր Տղա, Վահրամ Բաբունի, Սիմեոն Ապարանցի, Առաքել Սյունեցի և ուրիշներ), սակայն նրանց բոլորի համար էլ իբրև ոսկե էտալոն, իբրև բարձրագույն չափանիշ մնում են Շնորհալու վիպասանությունները:

Ընդ Աստուծոյ դէմ յանդիման

Խօսակցելով անձ անարժան:

Հակադրության այսպիսի համարձակության օրինակ միայն կարող էր տալ Լարեկացին: Ինչպես նկատում է Լարեկացու «Մատյանի» և «Հիսուս Որդու» ֆրանսերենի թարգմանիչ Սահակ Զեշիշյանը, ողջ պոեմը հիմնված է տրամախոսության վրա (այսինքն դրամատիկ է), իսկ տրամախոսությունը հիմնված է հակադրությունների վրա: Բայց այդ տրամախոսությունը չի ստացվի, եթե չլինի երրորդ անձը, որը գործում է առաջին պլանի անձանց թիկունքում. նա հանդես է գալիս սատանայի, այսի, օձի, առաջին մարդասպանի, բռնավորի, մահաստեղծի, լեգեոնի և վերջապես չարի տեսքով: Եվ Ներսեսի բոլոր դժբախտությունները, պարտությունները, անկումները, հիվանդությունները առաջանում են այդ անձի դեմ մղած անհավասար պատերազմում: Եվ միայն Հիսուսի՝ Հոր Միածնի դաշինքը

նրան կարող է փրկել այդ ամենից՝ մեղքերից, ծուղակներից, անկումներից, ախտերից, կտտանքներից, բանտից, աքսորից, խավարից: Ներսեսը այն բոլոր վրիպումներն է թույլ տալիս, ինչ Սուրբ Գրքի հին և նոր կտակարանային հերոսները՝ սկսած Ադամից: Բայց նրանք, հին կտակարանային անձինք, թույլ էին, նրանք մահակիր էին, նրանք մարմին էին, բայց և հաղթեցին չարին — Ադամը, Մովսեսը, Դավիթը, Սողոմոնը, եզեկիան և ուրիշներ: Բսկ ինքը՝ ավագանով մկրտված, Հիսուսի հոգին ստացած, իր իսկ կրոնական հովվապետի կոչումով ուրիշներին դարձի բերողը մերկ և անօգնական է չարի առջև: Փրկչի լույսն ստացածի և այն չպահողի պատիժը ահավոր է: Բայց էլքը կա՝ մաքսավորի խնդրանքը, աղոթքը մինչև մահ, որ թերևս փրկի մինչև դժոխք իջնելը սատանայի ձեռքով:

Իհարկե, եթե փորձենք գտնել որևէ ստեղծագործություն, որից մեկնել է Շնորհալին, դա Նարեկացու «Մատյանն» է: Այդ երկու քերթողների նմանությունների և տարբերությունների մասին դժվար է ավելին ասել, քան հայր Ալիշանը և Մանուկ Աբեղյանը: Տարբեր են թե նրանց լեզվամտածողությունը, թե տաղաչափությունը, թե խառնվածքները, թե խորհրդապաշտության տեսակները, թե Աստուծո հետ խոսելու եղանակը: «Հիսուս Որդին» նոր տեսակի հայկաբանություն է՝ քարձրաճաշակ, մարդամոտ, գրեթե խոսակցական, քերականական և բառակազմական պարզ ձևերով:

Այդ երկու գործն էլ աստվածային են համարել թե՛ հայերը, թե՛ օտարները: Ուստի զարմանալի չէ, որ սկսած 1643-ից մինչև 1928 թ. «Հիսուս Որդին» տպագրվել է 13 անգամ (1643, 1660, 1660, 1686, 1702, 1724, 1746, 1746, 1785, 1792, 1824, 1830, 1928 թթ.), անգլերեն թարգմանվել 1947-ին (Jesus, Son only-begotten of the Father, a Prayer by Nerses the Grace-Illied, Armenian Catholikos, 1100-1179, rendered into English by Jane S. Wingate. The Delphic Press, New York), իսկ ֆրանսերեն 1973-ին (Nersès Snorhall. Jesus fils unique du Père. Introduction, traduction de l'arménien et notes par Isaac Kechichian. L'édition du Cerf. Paris 1973) «Զրիստոնեական աղբյուրներ» մատենաշարով:

Դժբախտաբար չենք տեսել անգլերեն թարգմանությունը: Ֆրանսերեն թարգմանությունը անհանգ է, չի չափաբերված, բայց պահպանված է բանաստեղծական-դրամատիկ շնչառությունը: Նրանում օգտագործված են ԺԳ—ԺԴ դարերի երեք ընտիր ձեռագրեր, որոնց տարընթերցումները ևս տրված են թարգմանաբար:

Մեր կազմած բնագրի և թարգմանության համար հիմք ծառայել է Սանկտ Պետերբուրգի 1785-ի հրատարակությունը («Գիրք որ կոչի Յիսուս Որդի. Արարեալ և շարադրեցեալ ի Ներսիսէ Կլայեցոյ յոգներախոտ հայրապետէ յեղբօրէ Գրիգորիսի Վկայասիրի հայոց կաթողիկոսի»), որը համեմատվել է Կոստանդնուպոլսի 1824 թ. («Գիրք որ կոչի Յիսուս Որդի, շարադրեալ ներչափական բանիւք ի մերս Շնորհալի հայրապետէ ի Ներսիսէ Կլայեցոյ») և Վենետիկի 1928 թ. («Տն. Ներսէսի Շնորհալոյ հայոց կաթողիկոսի Բանք չափալ») հրատարակությունների հետ: Ընդ որում բուն վիպերգության ենթավերնագիրը («Տեառն Ներսիսի Կլայեցոյ ասացեալ բան մխիթարական յաղագս մանկանց...») հաճախ է դրվում տպագիր հրատարակություններում:

Այս ութվանկանի ոտանավորում գլխավոր շեշտերն ընկնում են 4-րդ և 8-րդ վանկերի վրա: Ըստ Մ. Աբեղյանի, սա մեր ամենաճկուն ոտանավորներից է, որ ուրիշմական լայն հնարավորություններ ունի: Թարգմանելիս ըստ ամենայնի աշխատ-

տել եմ պահպանել և ուժանկանի չափը, և միակերպ հանգավորումը: Սակայն նոր և հին բարբառների քերականական տարբերությունների պատճառով (հոլովում, խոնարհում, շարահյուսում) հնարավոր չեղավ կատարելապես ապահովել հանգի միակերպությունը նույնիսկ մեկ էջի սահմաններում: Ուստի երբեմն ներմուծել եմ ավելի հարուստ հանգային համակարգ, որ դեմ չէր իր իսկ՝ Շնորհալու բանարվեստի տեսությանը (նա խորհուրդ էր տալիս երբեմն հանգը փոխել, որ ընթերցողը չձանձրանա): Մյուս կողմից ութմական տեսակետից երբեմն կատարել ենք մեղանշումներ, որ հատուկ չէ արևելահայ ոտանավորին. ա) երբեմն շեշտն ընկնում է 3-րդ կամ 5-րդ վանկի վրա. բ) երբեմն անտեսել ենք Ը ձայնավորով արտահայտվող թույլ վանկերը. գ) շատ հազվադեպ ստացվել են հավելավանկեր:

«Հիսուս Որդի» վիպասանությունը լույս է տեսնում առաջին անգամ բնագրով և զուգահեռ աշխարհաբար թարգմանությամբ: Դա թարգմանչի համար մեծ փորձություն է, մանավանդ բանաստեղծության թարգմանչի, որ ավելի մեծ շեղումներ է թույլ տալիս, քան արձակի թարգմանիչը: Միաժամանակ բնագրի կողքին ավելի ցայտուն են երևում թերությունները: Հուսով ենք, որ ընթերցողը ներողամիտ կլինի:

Միաժամանակ մեր խոր շնորհակալությունն ենք հայտնում պատմական գիտությունների թեկնածու Ազատ Բոգոյանին, որն հանձն առավ Սանկտ Պետերբուրգի 1785-ի հրատարակությունը Կ. Պոլսի 1824-ի ավելի ճշգրիտ թվացող հրատարակության հետ համեմատելու դժվար խնդիրը, և նրա բազմաթիվ դիտողությունների և բնագրագիտական ճշտումների շնորհիվ շահեցին և բնագիրը, և թարգմանությունը: Հիշատակարանը համեմատվել է Մատենադարանի № 4207 ձեռագրի հետ, գրված 1284 թ. Ադանայում:

ՎԻԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

**ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ԿԱՅԵՅԻՈՅ ԱՍԱՅԵԱԼ ԲԱՆ
ՄԻԻԹԱՐԱԿԱՆ ՅԱՂԱԳՍ ՄԱԿԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ,
ՈՐՔ ՕՐՀՆԵՆ ԶԱՆՈՒՆԼ ՅԻՍՈՒՍԻ ՄԻՇՏ ԵՐԳՈՎ
ՔԱՂՅՐՈՒԹԵԱՆ**

Յիսուս Որդի, Հօր Միածին,
Եւ ճառագայթ՝ կերպարանին,
Ծնունդ անճառ սկզբնատըպին,
Անհատաբար Քոյմ ծընողին,
Յորմէ եղեալքս ներգործին,
Իմանալիք, ի որք երևին,
Մարմին եղեալքս և անմարմին,
Անբանականք հանդերձ Բանին,
Կենդանականք, որք բուսանին,
Եւ անկենդանք, որք ոչ շարժին,
Յորոց ընդ Հօր՝ Քոյմ սիրողին,
Քեզ գոհութիւնք մատուցանին:
Եւ ընդ Հոգւոյդ Քոյմ էակցին
Փառատրութիւնք վեր առաքին:
Ի ընտրելոց մաքրագունից,
Որք ընդ յարկաւ Քո մուծանին:
Ընկալ և զիս, Տէր, ընդ նոսին,
Զըստունգանողս պատուիրանին,
Ըզնըմանողս անառակին
Եւ զինչքս Հօրդ վատնողին,
Զի Քէն պատին անարգողին
Եւ հաւասար գոլ անմըտին,
Ի դիւցըն ագարակին,
Զերամ խոզիցն արածողին,
Սովեցելոյն՝ ոչ սով հացին,
Այլ լըսելոյ Տեառնդ բանին,
Յանկացելոյ ջերմ եղջերին,
Քաղցըր մեղաց դառնագունին,
Որպէս Ադամն այն առաջին,
Այն, որ մեղօքն անուանի հին,
Որով մեռաք ամենեքին

ՄԱՏ. Ը 30-

32. ՄԱՏ. Ե,

11-13. ՂՈՒ. ԺԵ,

11-32

ԵՂԵՐ — ԽՈԶԵՐ

ԿԵՐԱԿՈՒՐ

ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ԿԼԱՅԵՅՈՒ ԱՍԱԾ ՄԽԻԹԱՐԱԿԱՆ
ԽՈՍԲԸ ԵԿԵՂԵՅՈՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ
ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՕՐՀՆՈՒՄ ԵՆ
ՀՐՍՈՒՄԻ ԱՆՈՒՆԸ ՄԻՇՏ ՔԱՂՅՐՈՒԹՅԱՆ ԵՐԳՈՎ

Հոր Միածին՝ Հիսուս Որդի
Եվ ճառագայթ Նրա կերպի,
Ծնունդ անճառ սկզբնատիպի
Եվ մինուճար Քո ծնողի,
Որից սերվածներս ենք ազդվում,
Որ կան երկրում և երկնքում,
Ստեղծված մարմնով և անմարմին.
Անասուններն հետն ասունի,
Բույսերն աճող ու կենդանի,
Աշարժ իրերը անկենդան,
Որ Քեզ սիրող Հորըդ հետ կան,
Գոհություն ենք Քեզ մատուցում
Եվ Սուրբ Հոգուն Քեզ էակից
Փառատրություն վեր առաքում:
Ընտրյալների հետ մաքրագույն,
Որոնք Քո տանն են ընդունվում,
Ինձ էլ վերցրո՛ւ Նրանց հետ, Տեր,
Որ պատվիրանն եմ Քո ժխտել,
Նըմանվողիս անառակին
Եվ Հորըդ ինչքը վատնողին
Եվ Քո պատիվն անարգողին,
Որ հավասար եմ անմիտին,
Դևերի մեջ ագարակի
Խոզերի երամը հովվողին,
Որ կարոտ եմ ոչ թե հացի,
Այլ անսալու Տիրոջ Բանին,
Ցանկացողին տաք եղջյուրի,
Քաղցր մեղքից դառնագույնին:
Ինչպես Ադամն այն առաջին,
Այն, որ մեղքով կոչվում է հին,
Որով եկավ մահ ամենքին,

ՄԼՆ Բ, Գ

ՍՍԴ ՃԺԸ

(ՃԺԸ), 61

ՄԱՇԿԵՐՆԵՆ ԶԳԵՍ-
ՏԸ ԱՊԱՄԻՆԸ ԵՐ,
ՊԱՏՄՈՒՄԱՆԸ
ՔԱՂԱՎԱՅՐԱԸ

Եւ կորուսաք ըզցանկալին:
Ո՛հ, ես նըման մեղաց նըմին
Եւ յանցանաց մօրն եւային,
Եւս առաւել քան ըզնոսին,
Գըտայ յանցող Սուրբ օրինին:
Զի պատուիրան էր նոցա մին,
Վասըն միոյ դառըն պըտողին:
Իսկ ինձ բազումըս քարոզին
Վասըն բազմաց զիս սպանողին:
Յորոց ի բաց կալ հրամայիմ,
Զի մի մահու մեռանիցիմ:
Եւ ես կապեալ կամ ի նոսին
Տոռամբ մեղաց, որպէս ասին:
Բացի զականջըս պատրողին
Եւ զլըսելիսըս չար օձին,
Լեզուաւ ետու զպատասխանին
Անմըտաբար խորամանկին,
Զաչըս հարի առ ցանկալին,
Յորմէ արգել բան հրամանին:
Ոտք իմ յընթացս արշաւեցին,
Փայտին մահու մերձ զիս ածին:
Չեռն իմ ձըգեալ յուղէշ ծառին՝
Կթել պըտող ինձ մահածին,
Բերանս առեալ ճաշակ մեղուին,
Բայց յորովայնըս մաղձ դառին,
Յորմէ վիժեալ թոյնք վիշապին
Եւ գարշահոտ մահաբերին,
Էհեղ ըզսիրտս ի պղծալին,
Զերիկամունս ի ջերմ ախտին:
Ըզպատմուճան սըրբասիրին,
Զոր ըզգեցայ յաւազանին,
Զայն մերկացայ խաբամբ չարին,
Զինն արկի զմաշկեղինին:
Ընդ փափկութեան կենաց դրախտին,
Որ իմաստիցն օրինակին,
Մշակեցի յիմոմ անձին,
Զփուշ և զտատասկ մեղաց բուսին:
Ընդ անաշխատ կենաց վայրին,
Որ ըստ յուսոյն թեթև ասին,

Եվ կորցրեցինք փափագելին:
 Օ՛հ, ես մասն եմ նըրա մեղքի
 Եվ մայր եվայի հանցանքի,
 Դեռ նըրանցից էլ ավելի
 Ես եւրբ Օրենքը խախտեցի.
 Զի պատվիրանն էր նըրանց մի՝
 Չըմոտենալ դառը պըտղին:
 Բայց շատերն ինձ քարոզեցին
 Ինձ սպանող մեղքերի մասին:
 Ուզում եմ ինքս էլ հեռու մընալ,
 Մեղքի մահով չըմահանալ:
 Բայց կապված եմ նըրանց հետ ես
 Մեղքի կապով, ինչպես ասվեց,
 Ականջս կախ՝ ինձ խաբողին
 Եվ լըսելիքըս՝ չար օձին,
 Լեզվով տըվի ես պատասխան
 Անմըտաբար խորամանկին,
 Աչք գցեցի ցանկալիին՝
 Պատվիրանով արգելվածին,
 Ոտքերս իսկույն ճամփա ընկան,
 Ինձ մոտեցրին փայտին մահվան,
 Ձեռք գցեցի ծառի ճյուղին՝
 Պըտուղ պոկեմ ինձ մահածին,
 Բերանս մեղրի համը առավ,
 Բայց փորիս մեջ այն մաղձ դառավ,
 Որից վիժեց թույն վիշապի
 Եվ գարշահոտ, և մահալի:
 Պըղծությունը սիրտըս լըցվեց,
 Երիկամունքս ախտահարվեց.
 Պատմուճանն էլ սըրբասերի,
 Որ ես հագա ավազանում,
 Դեն նետեցի՝ խաբված չարից
 Եվ շոր հագա մորթեղենից:
 Կենաց դրախտի պերճության հետ,
 Որ իմաստներն է ցույց տալիս,
 Մըշակեցի ես անձը իմ,
 Բայց մեղքի փուշ, տատասկ բուսին:
 Այս անաշխատ կենաց վայրում,
 Որ հույսով են թեթև ասում,

ԾԵՆ. Գ,

18-19


ՂՈՒ. ԺԵ. 15-32

ՄԱՍ. ԺԸ,

12, 13. ՂՈՒ. ԺԵ. 4

Ուտեմ քըրտամբբ զառօրէին,
Դառնամ ի հող, ուստի առին:
Արդ աղաչեմ ես ընդ նրմին,
Թէ, Հայր, մեղայ Քեզ ի յերկին,
Չեմ արժանի կոչիլ որդին,
Այլ վարձկանացն արա վերջին,
Արժանացո՞ մաքրագունին,
Հօրըդ բարւոյ սուրբ ողջունին
Ընդ հովանեաւ հարսնարանին
Ժողովեսցես զիս վերըստին.
Եւ զպատմուճանըն զառաջին,
զոր աւագակք մերկացուցին,
Արկցես զինն դարձեալ կըրկին,
Որպէս ըզգարդ պըճնեալ հարսին,
Զարքունական ըզմատանին,
Ըզնըշանակ տիրականին
Տացես ունել յաջու ձեռին,
Ոչ խոտորել՝ այլ յահեկին:
Եւ պահապան ընդդէմ օձին
Շնորհեա կօշիկ գարշապարին,
Զի մի հարցէ ընդ խաւարին,
Այլ կոխեսցի գըլուխ նորին:
Զենման եզին պարարակին,
Որ ի խաչին պատարագին
Եւ տիգահոս արեան կողին,
Կենաց վըտակ մեզ բըղխողին
Հաղորդս արա զիս վերըստին,
Ըստ օրինակի անառակին:
Ուտել ըզհաց Քո երկնային,
Ըմպել զբաժակ Կենարարին:
Մոլորեցայ յանապատին,
Թափառեցայ յանվայր վայրին,
Որպէս առակն է ոչխարին
Մի ի թըւոցըն հարիւրին,
Զոր պատառեալ չար թըշնամին,
Վիրօք լըցոյց անհընարին,
Ուստի այլ ոչ է դեղ Վիրին,
Բայց թէ ի Քէն բըժըշկեսցին:
Առ որ գոչեմ արտասուելին,

Զըրտինքով դատում առօրյա,
 Դառնում հողը, ուսկից ելանք:
 Խընդրում եմ արդ Ադամի հետ,
 Թե, Հայր, մեղա Քեզ երկընքում:
 Չարժեմ կոչվել ես Քո որդին,
 Կարձկաններից դարձրու վերջին,
 Արժանացրու սըրբագույնին,
 Հորդ բարու սուրբ ողջույնին,
 Հովանու տակ հարսնարանի
 Ինձ միացրու Դու վերջստին:
 Եվ պատմուճանն իմ առաջին,
 Որ ավազակները հանեցին,
 Խընդրեմ, վըրաս գըցիր կըրկին,
 Ինչպես զարդը պըճնյալ հարսի.
 Արքունական տուր մատանին,
 Իբրև նըշան տիրականի,
 Որ դընում ես իմ աջ ձեռքին,
 Որ չըշեղվեմ էլ դեպի ձախ,
 Որպես պաշտպան ընդդեմ օձի
 Տուր ինձ կոշիկ գարշապարի,
 Որ չըփորձվեմ ես խավարից,
 Այլ տըրորեմ գանգը նըրա:
 Զոհաբերմանը պարարտ եզի,
 Որ ի խաչին պատարագի,
 Եվ տիգահոս արյամբ կողի
 Կենաց վտակ մեզ բխողին
 Հաղորդ արա ինձ վերջստին,
 Ըստ պատմության անառակի,
 Որ հացն ուտեմ Քո երկնային,
 Բաժակն ըմպեմ Կենարարի:
 Անապատում մոլորվեցի,
 Անշեն վայրում թափառեցի,
 Ինչպես առակն է ոչխարի
 Հարյուր հատից մեկի մասին,
 Որին որսաց չար թշնամին,
 Հասցրեց վերքեր ծանըր, ուժգին:
 Ուստի չըկա վերքին այլ դեղ,
 Դու վերքերն այդ կըփարատես,
 Քեզ եմ կանչում ես լալագին,



3042. 4, 11 Աղաղակեմ զիս փըրկողին,
 Հովիւըդ քաջ և երկնային,
 Ել ի խընդիր փոքու հօտին,
 100. ԺԵ, 9 Ա՛յց արա, Տէր, անկեալ դրամին
 Եւ կորուսեալ Քո պատկերին,
 Զոր թաղեցի մեղաց յախտին
 Եւ չարաչար հոտեալ յաղբին:
 ՍԱՂ Ծ, 9 Լուա և զիս, յաղտոյ անձին
 ՏԵՍ 100. ԺԵ, 8 Ի մաքրութեան ձեան սպիտակին:
 (ՏԱՍԸ ԴՊԱՄԸ) Լըցցես ըզթիւ տասներորդին,
 ՆԿԱՏԻ ՈՒՆԻ ՍԵ- Որպէս ըզսուրբ քառասնեկին,
 ԲԱՍՏԻԱՅԻ (ԹՈՔԻ ԲԱՐՃ Ի յուսոյ, ըստ ոչխարին,
 ՀԱՅԵ) ԶԱՌԱՍՈՒՆ Հանցես ի վեր զանկեալ հոգին,
 ՎԱՆԵՐԻՆ (Դ ԴԱՐ) Ուրախացո՛ղ զգօրսըն վերին
 Վասըն միոյ մեղաւորին,
 Ընդ Աբելի պատարագին
 Ի հօտ անուշ Քեզ ընծային:
 Ընկալ և զիմս, Տէր, ընդ նըմին,
 Մի խոտեցայց ընդ Կայենին:
 Թէպէտ և ոչ ըստ արժանին
 Քեզ մատուցի զողջակիզին,
 Զի ընտրեցի զիմն առաջին
 Եւ զՔոյն վերջին մասն ի զոհին:
 Նըմանեցայ նենգաւորին,
 Եղբայրասպան դաւաճանին,
 Ըսպանելով զիս կամովին
 Եւ նենգելով անձամբ անձին,
 Ո՛չ զարտաքին եղբօր մարմին,
 Այլ ըզհոգիս իմ ըզներքին,
 Ուստի շըրջիմ երերալի
 Միտք և խորհուրդք իմ տաւանին,
 Որ մխիթար տըրտմազգեցին
 Ետուր ըզՍէք ընդ Աբելին,
 Լինիլ սերունդ նախաստեղծին
 Եւ նահապետ բարւոյ ազգին:
 Փարատեցո՛ղ, Տէր, և յինէն
 Զորդեկորոյս սուգ տըրտմագին,
 Որք են մասունք իմաստութեան,
 Ծընեալ մանկունք զործնականին

Աղաղակում ինձ փըրկողին:
Հովիվըդ քաջ և երկնային,
Ել փընտրելու փոքր հոտին,
Այց արա, Տեր, ընկած դրամին
Եվ կորուսյալ Քո պատկերին,
Որ թաղեցի մեղքի ախտում
Եվ այլանդակ հոտած աղբում:
Անձիս աղտից լըվա՛, Տեր, ինձ,
Մաքուր դարձրու սպիտակ ձյունից,
Լըրացրու թիվը տասներորդ,
Ինչպես որ սուրբ բառասունին:
Ոչխարի պես դիր Քո ուսին,
Երկինք հանիր ընկած հոգին,
Ուրախացրո՛ւ գորքը վերին
Հանուն այս մի մեղավորի,
Զոհաբերման պես Աբելի
Իբրև անուշ հոտ ընծայվի,
Նըրա հետ իմն էլ ընդունիր,
Կայենի պես ինձ մի մերժիր,
Թեպետ և չէր Քեզ արժանի
Ողջակեզն այն, որ մատուցի,
Վերցրի զոհի մասն առաջին,
Իսկ Քեզ տըվի մասը վերջին,
Նըմանվեցի նենգավորին,
Եղբայրասպան դավաճանին,
Ըսպանելով ինձ կամովին,
Խաբելով ինքըս իմ անձին,
Ոչ ինձնից դուրս եղբոր մարմինն,
Այլ՝ սպանեցի հոգիս ներքին:
Ուստի շըրջում եմ երերուն,
Միտքս ու խոհերս են մոլորուն,
Իբր սփոփանք տըխրամածին
Աբելի հետ տըվիր Սեթին՝
Սերունդ լինել նախաստեղծին
Եվ նահապետ բարի ազգին:
Փարատիր, Տեր, նաև ինձնից
Որդեկորույս սուգը վշտի,
Որ մասունք են իմաստության,
Ծընված մանուկներ գործնական,

ԾԱՆ. Ե

Եւ աճեցո՛ր յիս վերըստին
Զանապական սերմըն բանին,
Զլուսոյ ծընունդն իմանալին,
Հրեշտակական և երկնային:
Մի նմանեցայց որդւոց Սէթին,
Յանկալ դըստերցըն Կայենին,
Այլ՝ Ենովսայ նահապետին,
Որ յուսացաւ նախ առաջին,
Եւ Ենովջայ անարատին,
Այն, որ փոխեալն է ի դրախտին,
Որ ժառանգեաց ըզհայրենին
Ընդ պահելոյ պատուիրանին:
Բայց յայսցանէ զհնչ օգտիցիմ,
Որոց նըման ես ոչ լինիմ:
Զի չհետևիմ շաւղաց նոցին,
Ոչ վերանամ մըտօք յերկին,
Այլ կամ անկեալ յախտըս խորին,
Ի գուբ տըղմոյ գէշ խոնաւին,
Որով անդունդք անհընարին
Զիս ի յինքեանս ըմբռնեցին:
Որպէս մարդիկ նախնի դարին,
Որք ի յաւուրս էին Նոյին,
Որք ուտէին և ըմպէին,
Անասնաբար խառնակէին,
Մինչև եհաս ջուր հեղեղին,
Ի՛նչպէս անեաց զամենեսին:
Միայն պահեալ՝ այն որ պահեաց .
Ամ հինգ հարիւր ըզկուսութիւնն,
Այլ որ ըզՆոյ և զԵօթն ոգին,
Ապրեցուցեր ի տապանին,
Հանդերձ սեռիւք չորքոտանին
Եւ օղական թեաւորին:
Եւ զիս պահեա ի հեղեղէ
Յաշխահածուփ ալեաց չարին
Քո տապանաւ սուրբ խորանին,
Ամրածածուկ ընդ հովանին:
Մերժեմ յոգւոյս իմ տապանէ
Զգիշերատես գոյն ագռաւին,
Որ է նա տիպ գաղտնի նետին,

ԾԱՆ. Զ, Ե

ԾԱՆ. Ը, 7

Աճեցրո՛ւ մեջըս վերըստին
Անապական սերմը Բանի,
Լույսի ծընունդն իմանալի
Հրեշտակային և երկնային:
Չընըմանվեմ Սեթի զարմին՝
Ցանկամ Կայենի դուստրերին,
Այլ՝ թող ենովս նահապետին,
Որն առաջինն էր, որ հուսաց,
Նաև անարատ ենովքին,
Որը դըրախտ փոխադըրվեց,
Որ ժառանգեց իր հայրենին՝
Հետևելով պատվիրանին:
Բայց հնչ օգուտ ինձ նրանցից,
Որոնց նման չեմ լինի ես:
Թողեցի ես նըրանց ուղին,
Չըվերացա մտքով երկինք,
Այլ ընկա խոր ախտերի մեջ,
Տղմի գուբը խոնավ ու գեջ,
Որ վիհեր են չտեսնըված,
Ուր մնացի ես բանտարկված,
Ինչպես մարդիկ հին դարերի,
Նոյի կենաց ժամանակի,
Որ լափում էին և հարբում,
Անասունի պես խառնակվում,
Մինչ օրն հասավ ջըրհեղեղի,
Վերջը տըրվեց այդ ամենի,
Միայն ով հինգ հարյուր տարի
Պահեց կուսությունն իր մարմնի՝
Նոյին, նրա հետ յոթ հոգու
Դու ապրեցրիր տապանի մեջ,
Չորքոտանի տեսակներով,
Նաև օդի թռչուններով:
Ինձ էլ պահիր ջըրհեղեղից,
Աշխարհածուփ չար ալիքից
Քո տապանով սուրբ խորանի,
Հովանու տակ ամուր ծածկի:
Մերժիր հոգու իմ տապանից
Գիշերատես գույնն ագռավի,
Որ խորհուրդն է գաղտնի նետի,

ԾՆՆ. Ը, 8-12

ԾՆՆ. ԺԱ, 1-9

ԾՆՆ. Ժ, 10

ԾՆՆ. ԺԱ, 1-9

ՍՏԱՍԽԱՆ,
ԼՅՈՒԹՅՈՒՆ

Այն, որ թըռչի ընդ խաւարին.
Եւ բաց ի սիրտս աղջամըղջին
Ինձ պատուհան մեծի լուսին,
Յորմէ խաւարըն մեղսածին
Հալածական անհետ լինին:
Մոյծ ընդ բացեալ լուսարանին,
Զի գոյն ոսկւոյ սուրբ զաղանին,
Բերել առ յիս ըզձիթենին,
Որ է մաքուր և Սուրբ Հոգին:
Բայց ես ախտիւ մարմնականին
Միայն չհեղձի զանձն ի ծովին,
Այլ հոգեկան և մըտաւոր
Կըրիւք եղէ անօթ չարին.
Քանզի նըման գոլով նոցին,
Որ զաշտարակըն շինեցին
Ի Քաղանէ մեծի դաշտին
Եւ յաշխարհի Բաբելովնին,
Որ ի ջըրոցըն հեղեղին,
Եթէ գայցէ, այլ պահիցին.
Կամ թէ յերկինըս վերանալ
Հըպարտութեամբըն խորիէին:
Մինչև հընչեալ հողմոյ յուժգին,
Հոգւոյն հընչումըն սաստկագին,
Քակեաց զլերինըս հըպարտին
Եւ զաշտարակն այն ահագին.
Եւ ըզլեզուսըն միակին
Զայն խառնակեաց յեօթանասնին,
Զի մի ի չար միաբանին,
Այլ բարիոք բաժանեցին:
Նոյնպէս և ես բարձրացուցի
Զպարիսպ մեղաց աշտարակին,
Հըպարտութեամբ շինեալ քարամբ
Ամբարտաւան ամբարտակին.
Որոյ հըմուտ ճարտարապետ
Է Արուսեակն անդըղային,
Եւ գործօնեայք չար իշխանին,
Դիւացըն գունդք լեգեովնին:
Ոյք և անկեալ կործանիցին
Ընդ մեքենայս, զոր շինեցին.

Որ թըռչում է մեջը մուրի,
 Եվ սըրտիս մեջ աղջամուղջի
 Բաց պատուհանը մեծ լույսի,
 Որից խավարը մեղսածին
 Հալածական անհետ կորչի:
 Բեր միջով բաց լուսարանի
 Սուրբ աղավնու գույնը ոսկի,
 Որ ինձ բերի-տա ձիթենին,
 Որն է մաքուր և Սուրբ Հոգին:
 Բայց անձս ախտով մարմնավոր
 Ծովում միայն չըխեղդեցի,
 Այլ հոգեկան և մըտավոր
 Կըրող եղա չար անոթի,
 Քանզի նըրանց նըմանվեցի,
 Որ աշտարակը շինեցին
 Բաբելոնի երկրում ազատ,
 Այն Քաղանե դաշտում արձակ,
 Որ եթե գար նոր քրիեղեղ,
 Պահպանեին այն համարձակ,
 Կամ խորհեցին գոռոզությամբ
 Դեպի երկինքը բարձրանալ,
 Մինչև հընչեց հողմը ուժգին,
 Հոգու հնչումը սաստկագին,
 Քանդեց լեռները այն հպարտ
 Եվ աշտարակը ահագին,
 Եվ գործածվող միակ լեզուն
 Խառնեց, դարձրեց յոթանասուն,
 Որ չար մտքով չմիանան,
 Այլ բարիով հեռու մնան:
 Նույնպես և ես վեր բարձրացրի
 Մեղքի բուրգի շուրջը պարիսպ,
 Հպարտությամբ ես շարեցի
 Քարերը գոռ ամբարտակի,
 Որի հմուտ ճարտարապետն
 Արուսյակն է անդընդային,
 Գործիքները՝ չար իշխանի,
 Դևագնդերը լեզեոնի,
 Որոնք ընկած կըկործանվեն
 Գործիքներով, որ շինեցին.

ԱՅԼ ՀՐԱՏ. ՄԵԶ՝
«ԵՔԵՐՆԵՔՐԱՅԵ-
ՑԻՆ», ՈՐԻ ԱՆՈՒ-
ՆԻՑ Է ԵՔՐԱՅԵՑԻ
ՑԵՂԻ ԱՆՈՒՆԸ
(ԾՆՆ. ԺԼ, 16-17)
ԾՆՆ. ԺԴ, 18-19

ԴԵՒՏ. ԻԷ,
30-32

ԾՆՆ. ԺԸ, 1

ԾՆՆ. ԺԸ, 10

Եւ իմ զերծեալ հաղբից նոցին,
Որպէս երբեմն եբրայեցին:
Որ օրինակ Քեզ ընտրեցեր
ԶՄելքիսեդէկ քանանացին,
Անհայր անմայր անազգային
Եւ քահանայ աստուածային,
Տասանորդող ղևտականին,
Մինչ էր յերանսն Աբրահամին
Եւ թագաւոր էր Սաղիմին,
Որպէս և Դու, Տէր երկնային:
Ընկալ և զիս հայցմամբ նորին
Յերուսաղէմըդ Քո վերին
Թագաւորել ընդ Քեզ ի նմին,
Իբրև զորդիսըն Սիովնին:
Որ կոչեցեր ազգմամբ ձայնին
Ըզնահապետ հանուրջ ազգին,
ԶԱբրահամն այն առաջին
Պանդըխտանալ յօտար երկրին.
Երևեցար ի Մամբրէին,
Մինչդեռ նըստեր նա ընդ կաղնին,
Կերակրեցար, որպէս մարմին,
Յորժամ բնութիւնդ էր անմարմին,
Եւ խոստացար նըմա զորդին,
Որով որդիք մարդկան օրհնին
Ի յօրինակ Քո գալըստեանդ,
Որ մարմնացար յորդոց նորին:
Հանցես և զիս, յորոց նեղիմ,
Միջոյ չարեաց նենգաւորին,
Ի բազմագոյն ախտից նեղչին
Եւ ի բանից մեղսասիրին:
Ջնըծդեհացեալս մարմնով ի սմին
Յօտարոտի կեանս երկրային
Փոփոխեցես ի հայրենին,
Որպէս զորդիսն Աբրահամին:
Երևեցո՛ր զերեսս Քո, Տէր,
Ինչ, որ նըստիմ ներքոյ ստուերին,
Զի ընդ առաջ Քո յարուցեալ
Երկիրպագից Քեզ ի գետին:
Խոնահեսցիս յիջևանիս,

Աղբից նրանց ազատվեցի,
Ինչպես երբեմն եբրայեցին:
Դու նախատիպ Քեզ ընտրեցիր
Մելքիսեդեկ քանանացին՝
Անհայր, անմայր, անազգային
Եվ քահանա աստվածային,
Տասանորդողը ղևտականի,
Քանի ցեղն էր Աբրահամի,
Նա թագավորն էր Սաղիմի.
Եվ Դու այդպես, Տեր երկնային,
Նրա հայցով ինձ ընդունիր
Երուսաղեմը Քո վերին՝
Թագավորեմ այնտեղ Քեզ հետ,
Ինչպես որդիքը Սիոնի,
Որ կանչեցիր ազդու ձայնով
Նահապետին ողջ ազգերի,
Աբրահամին, որն ըսկըզբում
Պանդըխտացավ օտար երկրում,
Եկար կաղնին Դու Մամբրեի,
Մինչ նըստած էր նա կաղնու տակ,
Կերակրվեցիր, ինչպես մարմին,
Երբ բնությունդ էր անմարմին,
Նրան որդի դու խոստացար,
Որով որդիները մարդկանց
Օրինությունն են Քո ընդունում
Օրինակով Քո գալըստյան.,
Որ մարմնացար Դու նրանց մեջ:
Ազատիր ինձ նեղիչներից,
Նենգավորի չարիքներից,
Նեղչի բազմագույն ախտերից
Եվ մեղք սիրող չարի խոսքից,
Թափառականիս մարմնով այստեղ,
Օտար կյանքում այս երկրային՝
Տար դեպի կյանքն իմ հայրենի,
Հանց զարմերին Աբրահամի:
Ինձ էլ ցույց տուր երեսը Քո,
Որ նըստած եմ ստվերիդ ներքո,
Եվ Քո առաջ երբ ես լինեմ՝
Մինչև գետին երկրպագեմ,
Որ խոնարհվեմ իջման վայրում

ԾԱՆ. ԺԹ

ԾԱՆ. ԽԲ, 1-13

Ընդ Քեզ և Հայր Քո և Հոգին.
Կերակրեսցիս յիմում բարին
Յաղքատանաց և ի չընչին:
Ջանձնընդական զամուլ հոգիս
Բարեաց գործոց հոգևորին
Պըտղաբերեա ընդ Սառային
Աւետաւոր բանիւ Քոյին.
Որ աղօթիւք հայրապետին
Սիրեցելոյ Աբրահամին
Ազատեցեր զեղբօր որդին
Հանեալ ըզՂովտ ի Սողոմին,
Ջիս արձակեա, Տէր, ընդ նըմին
Կապից մեղաց հայցմամբ նորին
Ի խորհըրդոց սողոմային
Եւ ի գործոց պըղծասիրին.
Ջի մի ի հուր ծըծըմբածին
Տոչորիցիմ որպէս նոքին.
Եւ մի յարձան մածանիցիմ,
Որպէս ըզկինն ի չար դարձին:
Այլ հրամայեա սուրբ հրեշտակին
Յափըշտակել զիս ընդ նոսին,
Հանել ի լեռոնըդ երկնային,
Կարգել ի դասն ընդ որ կացին:
Ստեղծիչ սըրտից, Տէր, առանձին
Տեսող գործոց և խորհըրդին,
Ի փորձ մըտեր առ սիրելին,
Պատարագել Քեզ զամլորդին,
Երթալ ի մեծ բարձըր ի լերին
Ի Գողգոթա, որպէս ասին,
Բառնալ ըզփայտ ողջակիզին
Իւր միածնին ողջախոհին.
Ջոր և հանեալ ի սեղանին,
Որպէս ըզՔեզ, Տէր, ի խաչին,
Բուռն հարեալ ի սուսերին
Եւ մերձ եղեալ պարանոցին,
Մինչ ի վերուստ հնչեալ ձայնին,
Թէ մի մըխեր ի պատանին,
Այլ հայեսցիս յաջոյ ձեռին
Կախեալ ըզխոյն ի սաբեկին:

Քեզ հետ և Հորը Քո, և Հոգուն,
Որ ճաշակես բարիքը իմ
Ողորմելի, աղքատ, չնչին:
Իմ անծնունդ, ամուլ հոգում
Բարի գործերը հոգևոր
Պտղաբերեն Սառայի հետ
Ավետավոր Քո խոսքերով.
Երբ աղոթքով հայրապետի՝
Քո սիրելի Աբրահամի
Եղբորորդուն ազատեցիր,
Սողոմից Ղովտին հանեցիր:
Նրա հետ, Տեր, փըրկիր և ինձ
Նըրա խոսքով մեղքի կապից,
Սողոմային խորհուրդներից,
Պղծասերի սև գործերից,
Որ հրերում ծծմբական
Չտոչորվեմ նրանց նման,
Ոչ էլ դառնամ քար, հանց արձան,
Ինչպես կինը իր չար դարձին,
Այլ պատվիրիր հըրեշտակին՝
Ինձ էլ տանել նրանց կողքին,
Հանել Քո լեռը երկնային
Եվ միացնել նրանց դասին:
Տեր, արարիչ Դու սըրտերի,
Քըննող գործերի, խոհերի,
Փորձեցիր Քո սիրելին՝
Ջոհ բերել իր միևնուճարին,
Գնալ դեպի մեծ, բարձր լեռ,
Որ Գողգոթա կարող ես կոչել,
Ողջակեզի փայտ ժողովել,
Իր միածին անմեղ մանկան
Պատարագի հանել սեղան,
Ինչպես Քեզ, Տեր, խաչի վրան.
Ապա ձեռքը վերցնել սուսեր
Եվ պարանոցին մոտեցնել,
Մինչ ի վերուստ հնչեր մի ձայն,
Թե մի մորթիր այդ երեխան,
Այլ նայիր դու քո աջ ձեռքին,
Սաբեկա ծառից կախված խոյին,

ՅԱԿ. Ա. 13-14

Ջոր փոխանակ բանականին,
Իսահակայ Քում ծառային
Ետուր ի զոհ պատարագին
Ջանբան ստեղծեալըն կենդանին:
Մի զիս փորձեր, Տէր, ընդ նըմին,
Ջանփորձ բարեաց ամենայնին,
Ջփորձեալս ի չար և յոչ բարին
Եւ զանհամբեր անձն իմ փորձին:
Ջի ոչ արծաթ եմ քուրային
Եւ ոչ ոսկի թէ հրով փորձիմ.
Այլ եմ անագ ընդ կապարին,
Որ ի պարզելըն կորընչին.
Եւ ոչ եմ վէմ յեզր ծովին,
Որ ի յալեաց անշարժ պահին.
Եւ ոչ արմատ ծառոց խորին,
Որ ի հողմոց ոչ տապալին:
Այլ եմ նըման բեկեալ նաւին,
Տարաբերեալ ի մէջ ծովին,
Կամ հողմահար խըռիւ խոտին
Ի ժամանակս աշնանային.
Արդ մի տանիր ի փորձութիւն,
Որ ոչ փորձես զոք երկրածին:
Ջի Քո անփորձ գոլով չարին,
Փորձիմք ի մէնջ, որպէս ասին:
Այլ ի փըրկել զիս փութացիր
Ի փորձութեանց բըռնաւորին,
Որպէս ըզհայրըն հաւատոյ
Յորոգայթից փորձասիրին.
Պատարագել ընդ խընդալին
Ջիողի ըզմիտս և ըզմարմին,
Կենդանական զոհ անմահիդ
Հաճոյ և սուրբ աստուածային:
Որ ըզկըրտսեր ծընեալ զորդին
Իսահակայ և Ռեբեկին
Անուանեցեր Քեզ սիրելին
ՋՅակովք փոխեալն յիսրայէլին.
Յուցեր նըմա զապագային,
Կանգնեալ սանդուղջ յերկրէ յերկին,
Յոր Տէր ի նմա բարձըր ի տեղին,
Եւ ել և էջ հրեշտակային:

ՄԼՆ. ԻԵ,
25-26

Ոչ թե խոսող բանականին
Եվ քո ծառա Իսահակին,
Այլ դարձրու զոհ պատարագին
Անբան ստեղծված այն կենդանին:
Մի փորձիր, Տեր, նրա հետ ինձ,
Բարի գործով չըստուգվածիս,
Ոչ թե բարուց, փորձված չարից,
Չի դիմանա անձն իմ փորձի:
Զի ոչ արծաթ եմ քուրայում,
Ոչ էլ ոսկի՝ փորձված հըրում,
Այլ անագ եմ կապարի հետ,
Որ պարզվում-կորչում է անհետ:
Ոչ էլ վեմ եմ ծովեզերքին,
Անշարժ՝ ընդդեմ գոռ ալիքին,
Ոչ՝ ծառերի արմատ խորին,
Որ դիմանում է հողմերին,
Այլ նման եմ նավին բեկված՝
Ծովի խորքում տարուբերված,
Կամ հողմահար խըռիվ խոտին՝
Ժամանակին աշնանային:
Արդ մի տանիր ի փորձություն,
Փորձության մի մատնիր մարդուն,
Որ Քեզնով դեմ կանգնած չարին
Մեր մեջ փորձվենք, ինչպես ասին:
Այլ փութացիր ինձ փրկության
Բըռնավորից սև փորձության,
Ինչպես որ հայրը հավատի
Փորձասերի որոգայթից,
Պատարագիր խընդությամբ լի
Մարմինն ու միտքը և հոգին,
Կենդանի զոհ՝ Քեզ՝ անմահին
Հաճո և սուրբ աստվածային:
Դու կոչեցիր Քեզ սիրելի
Իսահակի և Ռեբեկի
Ծնած կրտսեր այն զավակին,
Իսրայել դարձած Հակոբին,
Նրան ցույց տվիր ապագան,
Երկրից երկինք սանդուղքը այն,
Որովդ Տեր, երբ է իր բարձունքին
Եվ կոչեց Կորնուբին:

Իւղով օծեալ ըզգլուխ վիմին,
 Տուն անուանէր տիրականին,
 Ի նմանութիւն մեծ խորհրդոյին,
 Զոր հոգեկիրքն ծանուցին,
 Գօտեմարտեալ յերեկոյին,
 Որպէս է գրեալ ի Սուրբ տառին,
 Եւ ժուժկալեալ յառաւօտին,
 Սակայն յաղթեալ որպէս մարմին:
 Եւ ես կըրտսերս առ ի բարին
 Եւ կատարեալ գոլ ի չարին,
 Որպէս Եսաւըն նախածին,
 Բայց ըստ հոգւոյ գոլով վերջին.
 Վաճառակուրս անգին գանձին
 Վասըն յագման որովայնին,
 Եւ եղծանողըս կամովին
 Զգիրս անդրանկացն, որ ի յերկին,
 Զոր աղաչեմ զլոյսըդ վերին
 Զիշխան դասուցըն հրեղինին,
 Բացցին և ինձ դրունք եթերին,
 Որպէս յայնժամ Իսրայէլին:
 Հանցես ի վեր զանկեալ հոգիս,
 Ըստ լուսակազմ աստիճանին,
 Որ յօրինակ մարդկան բերին
 Յերկէ յերկինս անդրադարձին:
 Օծմամբ անուշ իւղոյ Հոգւոյն,
 Զոր կորուսի խաբմամբ չարին,
 Օծցես ըզգլուխ իմ վերըստին
 Պահպանական աջով Քոյին:
 Ոչ ժուժկալեմ դեմ հըզօրիդ
 Գօտեկըռիւ ըստ Յակովբին.
 Քանզի տըկար գոլով անձին
 Անկայ ի բուռն անըզգամին.
 Այլ կարկառեա՛ զաջդ երկնային,
 Հաս ի թիկունս ինձ ի մարտին.
 Եւ խորտակեա՛ զիմ թըշնամին.
 Զի մի կացցէ այլ ի յոտին:
 Երկոտասան ցեղապետին,
 Ծընեալ որդւոց նահապետին,
 Պաւաճանեալ մետասանին
 ԶՅովսէփ, ի ձեռս Իսմայէլին

ՇԼՆ, ԼԷ,
 25-28

Յուզով օծեց նա քարը այն
 Եվ անվանեց տուն տիրական,
 Նըմանությամբ մեծ խորհրդրդի,
 Հոգեկիրներին լոկ հայտնի,
 Երեկոյան գոտեմարտեց,
 Ինչպես գրված է Սուրբ Գրքում,
 Եվ մինչ առավոտ դիմադրեց,
 Սակայն որպես մարմին պարտվեց:
 Եվ ես փոքր եմ բարու համար,
 Բայց կատարյալ չարի համար,
 Հանց եսավը սկզբում ծնված,
 Բայց հոգով վերջինը եղած,
 Անգին գանձս եմ ծախում էժան
 Հանուն իմ փորի հագեցման
 Եվ եղծանում եմ կամովին
 Երկնից տրված գիրն անդրանկի.
 Աղաչում եմ Քեզ, լույս վերին,
 Տիրոջն հրեղեն դասերի,
 Ինձ էլ բացվի դուռն եթերի,
 Ինչպես բացվեց Իսրայելին:
 Վեր հանիր իմ ընկած հոգին,
 Դիր լուսակազմ աստիճանին,
 Որ օրինակ է մարդկանց բերվում,
 Երկրից երկինք անդրադարձվում.
 Օծված Հոգու անուշ յուզով,
 Որ կորցրի չարի թակարդով,
 Օծիր գլուխըս վերըստին
 Քո պառնայնող աջով կրկին:
 Չդիմացա գոտեմարտում,
 Ինչպես Հակոբը անցյալում:
 Քանզի հոգով եմ իմ տկար,
 Անզգամի բուռն ես ընկա:
 Կարկառի աջըդ երկնային,
 Թիկունք դարձիր ինձ այս մարտին,
 Եվ խորտակիր իմ սոսիսն,
 Որ չըկանգնի այլևս ոտքի:
 Նահապետի որդիներից
 Ծնված տասներկու ցեղապետից
 Տասնըմեկն ահա մատնեցին
 Իրենց եղբորը՝ Հովսեփին

Զեղբայրն իւրեանց վաճառեցին
 Ընդ երեսուն դահեկանին,
 Ի նմանութիւն աշակերտին,
 Գաղտ նենգաւոր գոլ Յուդային:
 Վաճառեցար, Տէր, ընդ նըմին
 Ծառայ ի տան Պետափրէին,
 Եւ փըրկեցեր յեգիպտուհոյն
 Զոգի մաքուր ողջախոհին.
 Մըտեր ի բանտ փառաւօնին,
 Տեսիլ ցուցեր ի գիշերին.
 Արձակեցեր վասն երազին
 Եւ կացուցեր տէր աշխարհին:
 Նոյնպէս և ինձ դաւ գործեցին
 Որդիքըն մօր գաղտ նենգեցին,
 Բազմաբեղուն ախտից մեղաց
 Վաճառեցին զիս դիւրագին:
 Թէ և լըցի զկամըս նորին,
 Անհակառակ գոլով նըմին,
 Սակայն էարկ զիս ի բանտին,
 Յանել անլոյս արգելանին:
 Այլ որ ըզնա յամենայնին
 Ազատեցեր անլոյս վայրին
 Եւ զիս փըրկեա, Տէր, ընդ նըմին
 Ի զանազան ախտից չարին.
 Եգիպտուհոյ վաճաշոտին
 Մի մատնեցայց գարշ պոռնըկին,
 Այն, որ սողայ նըման օձին,
 Ահեղ գոչէ ըստ առիւծին:
 Այլ բարձրացո՞ր քան ըզնոսին
 Եւ տէր կացո՞ր Եգիպտոսին,
 Զի յաղթեցից չար իշխանին,
 Աներևոյթ բըռնաւորին:
 Ի սովամահ լինիլ նոցին,
 Զիս տո՞ւն արա կենաց հացին.
 Զի հագեցայց և բաշխեցից,
 Որք են կարօտ անմահ բանին:
 ԶՅօբ յիշեսցուք զերանելին,
 Այն որ յիշման է արժանի.
 Թէպէտ յորդոցն է յեսաւին,
 Այլ գերագոյն քան զՅակովբին:

Եվ երեսուն դահեկանով
 Իսմայելին վաճառեցին,
 Նըմանությամբ աշակերտի,
 Նենգ գաղտնամուլ այն Հուդայի:
 Վաճառվեցիր, Տեր, Նըրա հետ,
 Իբրև ծառա Պետափրեի
 Եվ փըրկեցիր եգիպտուհուց
 Դու անաղարտ մաքուր հոգին,
 Մըտար բանտը փարավոնի,
 Գիշերն երազ աչքին բերի,
 Արձակեցիր ըստ երազի
 Եվ դարձրիր տերը աշխարհի.
 Իմ դեմ էլ գաղտ դավ գործեցին,
 Մորըս որդիքն ինձ նենգեցին,
 Մեղքի ախտերին բազմածին
 Էժան գընով վաճառեցին:
 Թեև կամքը կատարեցի
 Եվ հակառակ չգնացի,
 Սակայն նա ինձ պահեց բանտում,
 Անել, անլույս այն թակարդում:
 Եթե Նըրան ամեն դեպքում
 Ազատեցիր անհույս վայրից,
 Տեր, Նըրա հետ փըրկիր և ինձ
 Չարի զանազան ախտերից,
 Եգիպտուհուց այն վավաշոտ՝
 Չըմատնըվեմ գարշ պողնիկին,
 Նա, որ սողում է ինչպես օձ,
 Ահեղ գոչում, ինչպես առյուծ,
 Այլ բարձրացրու նրանցից վեր,
 Եգիպտոսին դարձրու ինձ տեր,
 Որ ես հաղթեմ չար իշխանին,
 Ասերևույթ բռնավորին:
 Երբ սովամահ լինեն նրանք,
 Ինձ տուն տուր, Տեր, կենաց հացի,
 Որ հագեցնեմ ես և բաշխեմ,
 Ով կարոտ է անմահ խոսքին:
 Հովբին հիշենք երանելի,
 Որը հիշման է արժանի:
 Թեև ցեղից է Եսավի,
 Բայց գերագույն է երևի,
 Քան որդիները Հակոբի:

ՅՈՒ Ա 21

ՅՈՒ Բ

ՅՈՒ Բ, 8-13

Այն, որ ի Քէն յոյժ գովելին
Եւ վըկայեալն է ի բարին,
Թէ այր արդար և ճըշմարիտ
Եւ կատարեալ յամենայնին.
Զոր բանսարկեր չար թշնամին,
Խընդրէր ի փորձ պատերազմին
Որում տըւեալ իշխանութիւն,
Յայտնի լինել Քում ծառային:
Նախ զարտաքին ստացուած մեծին
Զընջէր ի սպառ ըզկենդանին.
Ապա զորդիսն ըզտասնեսին
Սպան յապարանս ի բազմոցին:
Որոց հասեալ առ նա գուժին,
Ոչ բանս ասէր նա մարդկային,
Այլ գոհութիւնս աստուածային
Իմաստութեամբ բըղխէր հոգին.
Տէր, ասէ, ետ ըզմեծութիւն
Եւ Տէր էառ, որպէս կամին.
Զի մերկ ելաք յորովայնէ,
Եւ մերկ դընիմք ի տապանին:
Դարձեալ վառեալ առ նա չարին
Զիւր մեքենայս բազմագունին,
Խընդրել ի Քէն զնորին մարմին
Տանջել ցաւօք անհընարին:
Որոյ առեալ ըզցանկալին,
Բայց ոչ էհաս յիւր ըղձալին.
Այլ մանրեցաւ ծախող ժանին,
Իբր ի պըղինձ կամ յերկաթին:
Քանզի սաստիկ շարժեաց յախտին
Եւ յորդնալից արար զմարմին,
Նըստէր նեխեալ ի մէջ աղբին,
Քերէր քարամբ զշարաւ վիրին:
Բարեկամացն, որք մերձ եկին,
Բանիւք զըզուէր զերանելին.
Այլ և կընոջն անըզգամին,
Զոր զէն առեալ ըստ եւային:
Եւ այսքանեօք ոչ շարժեցին
Զանդամանդեայ վէմ հաւատին,
Խօսել բանիւ հայիոյութիւն
Առ տիրականըդ Քո բարին.

Նա՝ Քո կողմից հույժ գովելի
 Եվ վկայված իբրև բարի,
 Այր, որ արդար է, ճշմարիտ
 Եվ կատարյալ է բոլորից.
 Բանասարկում էր չար թշնամին,
 Նրան քաշում պատերազմի
 Իրեն տըրված իշխանությամբ,
 Որ հայտնի էր Քո ծառային:
 Նախ արտաքին իր կայքը մեծ
 Եվ խաշները իսպառ ջնջեց,
 Ապա տասը զավակներին
 Սպանեց տանը ճաշի ժամին,
 Որոնց գույժը հասավ նրան,
 Բայց բան չասաց նա մարդկային,
 Այլ գոհությամբ աստվածային
 Իմաստությամբ հորդեց հոգին:
 Տերն, ասաց, տվեց մեծություն
 Եվ տերն առավ ետ կամովին,
 Որովայնից մերկ ելանք մենք
 Եվ գերեզման մերկ կըղըրվենք:
 Դարձյալ չարը իր դեմ լցվեց
 Մախանքներով իր բազմագույն,
 Նրա մարմինը Քեզնից խընդրեց,
 Որ անպատում ցավով լըկի.
 Առավ մարմինն այն անձկագին,
 Բայց չհասավ իր բաղձանքին,
 Փշրեց ժանիքն ամենակուլ՝
 Հանց պըղընձին կամ երկաթին,
 Ախտով լցրեց սարսափելի,
 Մարմինն արեց որդերով լի.
 Եվ նստած Հովբը աղբերում՝
 Քարով վերքերն էր փորփըրում,
 Իր մոտն եկած ընկերների
 Խոսքից զըզվեց երանելին,
 Նաև հիմար կնոջ խոսքից,
 Որ զինվել էր, ինչպես եվան:
 Բայց այս ամենն էլ չխախտեց
 Վեմն հավատի ադամանդյա,
 Հայհոյական ոչինչ չասեց
 Քո տիրական խոսքին ոսկյա,

Այլ գոհանայր ըզՔէն ի նմին,
 Ընդդիմանայր բանից նոցին.
 Մինչև եղև զըրաւ մարտին
 Եւ կատարումըն հանդիսին,
 Երևեցար, Տէր, ի միգին
 Եւ խօսեցար ընդ սիրելին.
 Պըսակ ետուր Դու յաղթողին,
 Առողջութիւն յոյժ հիւանդին.
 Ըզկենդանեացն ազգ անբանին
 Զայն շնորհեցեր նըմա կըրկին.
 Իսկ ըզբնութիւն բանականին
 Պարգևեցեր նոյն միակին:
 Եւ այս խորհուրդ ծածկեալ խորին
 Յառաջագոյն անդ ցուցանին,
 Թէ որք մեռանն, ո՛չ կորընչին,
 Այլ յարիցին յօրըն վերջին:
 Արդ ես հայցմամբ նահատակին
 Եւ համբերող ճըզնաւորին
 Առ Քեզ կարդամ և պաղատիմ,
 Հեղում զարտօսըր լալագին.
 Զի թէ խընդրէ իմ թըշնամին
 Առ ի փորձել զիս ի մարտին,
 Մի տար ի ձեռս աւազակին,
 Մի մատնեսցես կամաց նորին:
 Զի ես տըկար լուծեալ մարմին,
 Հոգիս յօժար, բայց ոչ շարժին
 Անձն իմ խաւար, միտքըս մըթին,
 Կամաւ ի բանտ կամ ի խորին.
 Բայց Դու ընդ իմ տարտամս անձին
 Մարտի՛ր ընդդէմ ախոյանին.
 Որ ասացեր քաջալերել,
 Զի յաղթեցեր չար իշխանին:
 Միայն զկամելս իմ ի բարին
 Ընկա՛լ փոխան Յոբայ ջանին
 Եւ ըզպըսակ յաղթանակին
 Ինձ պարգևե՛ա յապագային:
 Որ ըզՄովսէս ըսքանչելին
 Զի ծնընդէն է ընտրեալ արին
 Փըրկեալ ի ջուրց հեղձականին,
 Սնուցեր ի տան փարաւոնին.

Գոհ Քեզանով և Քո խոսքով՝
Նրանց խոսքին ընդդիմացավ,
Մինչև հասավ վերջը մարտի
Եվ փորձության մեծ հանդեսի,
Երևացիր, Տեր, մեզի մեջ
Եվ խոսեցիր սիրելուդ հետ,
Պսակ տվիր Դու հաղթողին,
Առողջություն՝ խոր հիվանդին,
Շնորհեցիր կրկին նրան
Կենդանիների ցեղն անբան,
Եվ բնությունը բանական
Պարգևեցիր միասնական:
Եվ խորհուրդն այս ծածկված խորին
Մատնանշում է ապառնին,
Ովքեր մեռան, տես, չեն կորչի,
Այլ կհառնեն օրը վերջին:
Արդ ես խնդրով նահատակի
Եվ համբերող ճգնավորի
Քեզ եմ կանչում և պաղատում,
Հեղում արցունքն իմ լալագին,
Թե Քեզ խընդրի իմ թշնամին՝
Ինձ փորձության տանել մարտի,
Մի տուր ինձ ձեռքն ավազակի,
Մի մատնիր ինձ նրա կամքին:
Զի ես տըկար եմ, թույլ մարմին,
Հոժար է, բայց անշարժ հոգին,
Անձըս խավար, միտքըս մըթնում,
Կամքով վիհում եմ կամ բանտում,
Բայց Դու տարտամ իմ անձի հետ
Ելիր կըռվի թշնամու դեմ,
Որ հորդորես, զորացնես ինձ,
Թե կըհաղթես չար իշխանին,
Լոկ ցանկությունը իմ բարի
Տեղն ընդունիր Հովբի ջանքի,
Եվ պսակը հաղթանակի
Ինձ պարգևիր ապագային:
Հանց Մովսեսին սքանչելի,
Որն ընտրյալ էր ծընված օրից,
Փըրկված ջրի մեջ խեղդվելուց,
Սընուցված տանը փարավոնի,

ԵԼԷՅ, 1-10

Եւ ի լըման ժամանակին
Կըրկին ամաց քառասնէկին,
Երևեցար, Տէր, ի լերինն,
Բոցով հըրոյ ի մորենին,
Փըրկիչ ըզնա գերեալ ցեղին
Առաքեցեր Իսրայիլին,
Վասն առաջին սըրբոյ ուխտին
Եղեալ առ հօրն Աբրահամին,
Ոչ արձակել փարաւոնին.

ԵԼԷՅ, 19-26

Եդիր ըզնա Աստուած նորին
Եւ զօրութեամբ գաւազանին
Ետուր նըմա զբան նըշանին:
Հարեր զաշխարհ եգիպտոսին
Տասըն հարուած, որպէս ասին.
Յորում խորհուրդ զենման գառին
Եւ ելք որդւոցն Իսրայիլին:

ԵԼԷ ԺԴ-ԺԵ

Բաժանեցեր յերկուս մասին
Ջանդունդս խորոց Կարմիր ծովին,
Եւ ըզբնութիւն լուծականին
Կարծրացուցեր իբր արձանին.
Որպէս ծաղկեալ մարգագետին
Էր ճանապարհն անդընդային,
Ընդ որ ոտիւք ընթանային,
Ոչ թանալով գարշապարին:
Եւ զփարաւոն եգիպտացին,
Որ զհետ մըտեալ կառօք նորին,
Ընկըղմեցեր ի մէջ ծովին
Ի յօրինակ Բելիարին:

ԵԼԷ ԺԶ,

32-36

Իսկ Քո ընտրեալ և սուրբ գընդին
Առաջնորդեալ, որպէս խաշին,
Հորդան ետուր յանապատին
Հըրով լուսոյ և սեամբ ամպին:
Ետուր նոցա հաց երկնային
Եւ մանանայ հրեշտակային
Տըպաւորեալ ըզՔոյդ մարմին
Ջերկնից իջեալըն կենդանին:

ԵԼԷ ԶԷ, 5-7

Հարեր ըզվէմն և բըղխեցին,
Ջերկոտասան վըտակն արբին,
Ի յօրինակ աղբեր կողին
Առաքելոցըն քարոզին:

Երբ ժամանակը լըրացավ,
 Կըրկնակի քառասուն դարձավ,
 Երևացիր լեռան վրա
 Վառվող մորենու բոցերում,
 Նրան փըրկիչ գերված ցեղին
 Ուղարկեցիր Իսրայելին,
 Հանուն առաջին սուրբ ուխտի,
 Որ արվեց հայր Աբրահամին.
 Նրա Աստծու հըրամանով
 Փարավոնը հրեաներին
 Բաց չըթողեց Եգիպտոսից,
 Դու զորությամբ գավազանի
 Նրան տվիր բան նշանի,
 Զարկիր երկիրն Եգիպտոսի
 Տասը զարկով, ինչպես ասվեց,
 Աստ խորհուրդն էր զենման գառի,
 Ելքը որդոց Իսրայելի:
 Բաժանեցիր երկու մասի
 Անդունդները Կարմիր ծովի,
 Բընությունը հեղուկային
 Դարձրիր կարծրը, ինչպես արձան,
 Ճանապարհն էր անդընդային,
 Ինչպես ծաղկած մարգագետին,
 Որով գընում էին ոտքով,
 Կրունկները չըթըրջելով:
 Եգիպտացի փարավոնին,
 Նրա հետ եկած կառքերին
 Ընկղմեցիր մեջը ծովի
 Օրինակով Բեւիարի:
 Իսկ Քո ընտրյալ և սուրբ գընդին
 Դու վարեցիր, ինչպես հոտին,
 Ճամփա բացիր անապատում
 Լույսի հըրով և սյամբ ամպի,
 Տըվիր նըրանց հաց երկնային
 Եվ մանանան հրեշտակային,
 Երկնից իջածը կենդանի
 Նըմանություն ստացավ մարմնի,
 Զարկեց վեմին, և բըխեցին
 Տասներկու վտակ, որ խըմեցին
 Առաքյալների բարոզի

ԵԼԶ ԻԴ, 12-18

ԵԼԶ ԺԻ, 9-25

ԵԼԶ ԼԲ, 8

ԵԼԶ ԼԲ, 19

ԵԼԶ ԼԴ, 1...

Բ ՕՐ. Ժ

ԵԼԶ ԻԶ

ԵԼԶ ԻԸ, 1...

ՅՈՒ. ԻԵ, 1...

Երրեակ պահօք քառասնեկին
Մովսէս գոլով ի մէջ միգին,
Որպէս կենաց ժամանակին
Ամբըն նորա այսքան թըւին,
Յուցեր զյետոյս Քո խորըրդին
Թագուցելոյ ի փապ վիմին:
Հեղեր ըզլոյսդ անճառելի
Ի հողեղէն դէմս նորին,
Առեալ զօրէնսն ի տախտակին՝
Գըրեալ մատանցդ աստուածային
Վասն անօրէն անհաւանին
Եւ խըստերախտ ժողովըրդին,
Զոր խորտակէր նա զառաջինս
Ընդ պիղծ որթոյն, զոր կազմեցին,
Առ ի խորհուրդ ծածկեալ իրին
Վասն օրինացն, որ լուծանին.
Որպէս երկրորդն, որ հաստատին
Քոյում եդեալ անշարժ ուխտին,
Որ կայ և մնայ յաւետ ի սմին
Մինչ ի կատար յաւիտենին:
Հրաման ետուր կազմել նոցին
Ըզզանազան կարգ խորանին,
Ի նմանութիւն Պետրեան վիմին
Կամ գերակայ մօր Սիովնին
Եւ տապանակ Կտակարանին
Յանփուտ փայտից պատեալ յոսկին,
Անապական մարմնոյ Քոյին,
Ի՛սստուածութեանդ օրինակին:
Եւ զպատմութեանն Ահարօնին
Ըզդևտական քահանային
Առ ի խորհուրդ հոգևորին
Զարդարեցեր զերևելին:
Եւ այսքանեօք բարեգործեալ,
Եւս առաւել քան ըզսոսին,
Սակայն որթուն երկիր պագին
Ի Բելբեքովր զոհ մատուցին:
Զմեծըն Մովսէս դառնացուցին
Եւ զԱհարովն անարգեցին,
Ընդ Մադիամ խառնակէին,

Կողի աղբրի օրինակով:
Երեք պահքով քառասունքի
Մովսեսն ընկավ մեջը մեզի,
Տարիները նըրա կյանքի
Հասնում էին քառասունի,
Հետո խորհուրդ ցույց տըվեցիր
Վեմի խորքում թաքնըվածին,
Հեղեցիր լույսդ անճառելի
Դու հողեղեն նըրա դեմքին,
Եվ Օրենքները տախտակին՝
Գըրված մատով աստվածային,
Վասն անօրեն և անհավան
Ժողովըդդի խստաբերան:
Եվ տախտակները խորտակեց
Պիղծ հորթի հետ, որ կանգնեցվեց,
Ծածկված խորհուրդի պատճառով
Եվ օրենքի, որը քանդվեց:
Իսկ երբ երկրորդը հաստատվեց,
Ուխտըդ անշարժ հիմքում դրվեց,
Որը հավետ կա, կլինի
Մինչ ավարտը հավիտյանի:
Հրամայեցիր նըրանց կազմել
Ջանազան կարգը խորանի,
Նմանությամբ Պետրոս վեմի
Կամ ծայրագույն մայր Սիոնի,
Եվ տապանակը Հին ուխտի
Անփուտ փայտից՝ պատած ոսկի,
Քո մարմնի պես անապական
Եվ աստվածությանըդ նման,
Եվ պատմուճանն Ահարոնի՝
Այդ դևտական քահանայի,
Որպես խորհուրդը հոգեղեն՝
Ջարդարեցիր Դու լուսեղեն:
Այսքան բարիք Դու գործեցիր
Եվ ավելին, քան թըվեցի,
Սակայն հորթին երկըրպագին,
Բելբեքովրին զոհ բերեցին,
Մեծ Մովսեսին դառնացրեցին,
Ահարոնին անարգեցին,
Մադիամի հետ խառնակվեցին,

Զորդիս դիւացըն զոհէին,
 Մինչն ի սպառ բարկացուցին,
 Զներողութիւնըդ շարժեցին.
 Հուր ի Յակոբ բորբոքեցին
 Եւ բարկութիւն յիսրայիլին:
 Եւ յաւետեաց սուրբ աշխարհին,
 Զոր խոստացար Դու տալ նոցին,
 Բաց ի յերկուց անդ ո՛չ մըտին
 Վասըն մեղացն, որ գործեցին:
 Արդ ես ժըխտողս ամենայնին
 Եւ համեմատ չարեաց նոցին,
 Որ առաւել առ ի բարին
 Ի՛նչ եմ ապերախտ, քան ըզնոսին:
 Նոցա հերձեր ծով ըզգալին,
 Ինձ ըզխաւարն աղջամըղջին.
 Յայնժամ ծածկեալ զեգիպտացին
 Եւ աստ զիշխանըն մահածին.
 Նոցա ի տուէ ամպ հովանին
 Ի՛նչ գիշերի լոյս արփենին,
 Իսկ ինձ է լոյս իմաստ բանին
 Եւ հովանի է Սուրբ Հոգին:
 Անդ մանանայ լուծանելին,
 Զի որք կերան մեռանէին.
 Եւ աստ մարմին Քո երկնային,
 Որ կեանքս տայ ճաշակողին:
 Նոքա արբին զջուր վիմածին,
 Եւ ես զարիւն վիմիդ կողին:
 Նոցա կախեալ օձ պըղընձին,
 Եւ ես տեսի զկեանսդ ի խաչին:
 Նոցա օրէնքըն Մովսէսին
 Գրաւորական ի տախտակին,
 Եւ ինձ Հոգւոյդ իմաստութիւն
 Աւետարանդ աստուածային:
 Վասն այսորիկ յոյժ պահանջին
 Քան ըզնոցունց յինէն բարին.
 Որպէս առակն է ծառային,
 Գիտող կամաց լ՛ոչ գիտողին:
 Նոքա յոսկւոյ որթ կազմեցին
 Եւ Քո փոխան երկիր պագին,
 Եւ ես ի սէր հիւթանիւթին

թու. Ի, 7-11

թու. ԻԼ, 4-9

սւս. ժԸ, 23-35

Որդկանց դևերին զոհեցին,
Մինչև իսպառ բարկացրեցին,
Ներողությունը շարժեցին,
Հակոբի մեջ հուր վառեցին
Եվ բարկություն Իսրայելում:
Ներսը ավետյաց սուրբ երկրի,
Որ խոստացար Դու տալ նրանց,
Երկուսից զատ ցեղ չըմտավ
Մեղքի համար իրենց գործած:
Արդ ես՝ ժըխտողն ամենայնի
Եվ նրանց պես անոթ չարի,
Որ առավել առա բարի,
Շատ ապերախտ եմ նրանցից:
Նրանք անցան ծովն զգալի,
Ես՝ խավարը աղջամուղջի,
Այնտեղ խեղդվեց եգիպտացին,
Այստեղ՝ իշխանը մահածին,
Նրանց ծեգից՝ ամպ հովանի
Եվ գիշերով՝ լույս արևի,
Իսկ ինձ՝ լույսը Աստծո խոսքի
Եվ հովանի ինձ՝ Սուրբ Հոգին:
Անդ մանանա տըվիր հալվող,
Որ ուտողները մեռնեին,
Այստեղ՝ մարմինը Քո երկնային
Կյանք է տալիս ճաշակողին:
Նրանք ջուրն ըմպին վիմածին,
Ես՝ արյունը վեմիդ կողի,
Նրանց տըվիր պըղնձե օձ,
Իսկ ես տեսա կյանքըդ խաչին,
Նրանց օրենքն էր Մովսեսի
Արձանագրոված տախտակին,
Իսկ ինձ՝ Հոգու իմաստություն
Ավետարանըդ աստվածային:
Ուստի ինձնից է պահանջվում
Նրանցից շատ լինել բարի,
Ինչպես առակն է ծառայի՝
Հասկացողի, ո՛չ անգետի:
Նրանք ոսկուց հորթ սարքեցին,
Քո տեղ նրան խոնարհվեցին,
Իսկ ես ի սեր երկրանյութի

ԱՅՍԻՆԷՆ՝
ՍՈՎՍԷՍԻ

ԵԼԶ ԼԳ, 11

ԵԼԶ ԺԷ, 13-15

ՅԵՍՈՒ Գ

Խոնարհեցայ յանհազ ախտին.
Նոքա քաղցեալ տըրտընջէին,
Վասըն հացին յանապատին,
Եւ ես լըրմամբ հարկաւորին
Միշտ ի խընդիր աւելորդին.
Նոքա զերկիր շաղախէին
Պոռնըկութեամբ Մադիամին.
Ես ըզհոգիս իմ զերկնային
Աղտեղեցի գործովք չարին:
Բայց որ քաւիչ եղեր նոցին,
Տէր իմ գըթած, Հօր միածին,
Եւ դարձուցեր ըզբարկութիւն
Հայցմամբ մեծի մարգարէին,
Անցո՛ր յինէն զաններելին
Ըզպատուհասն, որ ինձ պահին,
Եւ պարգևեա՛ն զըղջումն անձին
Եւ թողութիւն անցեալ յանցին:
Մի արգելցես զիս ընդ բազմին
Յաւետաբեր երկրի Քոյին.
Այլ ընդ երկուցն, որ անդ մըտին,
Մոյծ զիս յաշխարհըդ Քո վերին:
Որ ըզՅեսու որդի Նաւին
Ընտրեալ իշխան յետ Մովսէսին,
Այն, որ սընեալ ի խորանին
Եւ ի լերինն էր ընդ նըմին,
Անուանակիր ըսքանչելին՝
Անուանըդ Քում փըրկականին,
Որում Յովսէ նախ կոչէին
Եւ զկնի Յեսու առձայնէին,
Որ յաղթական գոլ ի մարտին
Ընդդէմ ժըպիրի Ամաղէկին,
Մինչ տարածմամբ Մովսէս ձեռին
Գոյր օրինակ Քեզ ի խաչին.
Որով զորդիսն Իսրայիլին,
Ջայնս որ ծընան յանապատին,
Ածեր յաշխարհըն Պաղեստին
Ընդ Քո խոստման անսուտ բանին:
Ընդ Յորդանան անցանէին
Տապանակաւ Կտակարանին,
Ջուրքն ի յակունսըն դառնային

Սուզվեցի խորն անհագ ախտի.
 Նրանք քաղցած տրտնջացին
 Անապատում՝ հանուն հացի,
 Իսկ ես ամեն ինչ ունեի,
 Բայց ձգտեցի առավելին,
 Նրանք հողով շաղախվեցին
 Պոռնըկությամբ Մադիամի,
 Իսկ ես հոգին իմ երկնային
 Կեղտոտեցի գործով չարի:
 Բայց Դու քավիչ եղար նըրանց,
 Հոր միածին, Տեր իմ գըթած,
 Եվ բարկությունդ մեղմեցիր
 Խնդրանքով մեծ մարգարեի,
 Ինձ էլ ներիր աններելին,
 Պատուհասները ինձ հասած,
 Եվ պարգևիր զղջում անձիս
 Եվ թողություն գործած մեղքիս,
 Մի արգելիր բազմության հետ
 Ավետաբեր երկիրըդ գալ,
 Երկու ցեղի հետ հրեական
 Ինձ էլ վերին երկիրըդ հան:
 Մովսեսից հետո Հեսուն Նավյան
 Ժողովըդին կարգվեց իշխան,
 Նա, որ սընված էր խորանում,
 Հետը լեռան մոտ էր կենում,
 Անվանակիրն սքանչելի
 Քո փըրկչական սուրբ անունի,
 Որին Հովսե նախ կոչեցին,
 Հետո Հեսու առձայնեցին:
 Որ հաղթական էր գոռ մարտին
 Ընդդեմ Ժպիրի Ամաղեկի,
 Երբ պարզած ձեռքը Մովսեսի.
 Նմանակում էր Քեզ խաչին,
 Որով որդիք Իսրայելի,
 Որ ծընվեցին անապատում,
 Երկիր բերեց Պաղեստինի,
 Ըստ Քո խոստման՝ ըստույգ խոսքի,
 Հորդանանով նրանք անցան
 Տապանակով Կտակարանի,
 Ջրերն ակունքն էին դառնում

ՅԵՍՈՒՋ

ՅԵՍՈՒՋ, 1-15,
12, 13

ՅՈՐ ՉԱՐ
ԽՈՐՀՈՒՐԸ
ՆՄԱՆԵՅՆՈՒՄԷ
ՃԵՍՈՒԻ ԶԱՐԿԱԾ
ՅՈՐ ԱԶԳԻՆ

Ի յօրինակ մարդկան ազգին:
Եօթըն պարիսպք երիքովին
Ի նմանութիւն խոր դժոխին,
Յեօթնիցն շուրջ գալով նոցին
Ջեռթ ջուր հեղեալ կործանէին:
Եւ զթագաւորս եօթըն ազգին
Որ երեսուն թուովն էին,
Հարեր նովաւ զամենեսին
Կախեալ զփայտէ նըշաւակին:
Ջերագընթաց շարժումն արփին
Ջարեգական լուսաբերին
Կացոյց հանդէպ Գաբաւօնին,
Ջլուսինն ձորոյն ելիօնին:
Եւ այլ բազմօք որպէս պատմին
Հրաշագործեալ յայնմ յաշխարհին.
Ջոր վիճակեաց ցեղից նոցին,
Ի՛նք ժամանեաց հարցն առաջին:
Արդ՝ ճըշմարիտ զօրինակին
Հոգւոց փըրկչիդ՝ մարմնականին
Յաղերս ածեմ վասն իմ անձին
Ջարդարութիւն գործոց նորին:
Թէպէտ և ոչ նըման նըմին
Արիացայ ընդդէմ չարին,
Այլ մեղկացայ յասպարիսին,
Եղէ հանգոյն վատ ծառային,
Բայց ձեռնն տո՛ւր իմում մարտին
Ընդ անմարմին Ամաղէկին:
Ջըգմամբ ձեռին Քո ի փայտին
Ըստ Մովսիսի անդր ի լերին
Հարցես և զեօթ ազգ խորհրդին,
Որպէս նովաւ զքանանացին.
Ջոր կորըստեանն և զպոռնըկին,
Ջարծաթասէրն և ձանձրալին,
Ըզբարկութիւն, տըրտմականին
Եւ զսնափառ պիղծ հըպարտին:
Կարկուտ քարեայ հոսեալ նոցին
Եւ ըզպիծակ զօրաց Քոյին
Անցո՛ ընդ գետս այս երկրային
Անթաց յաղթից գարշապարին,
Դարձո՛ անդրէն, ուստի ելին,

Օրինակով մարդկանց ազգի:
Յոթնապարիսպ երիջովի
Նմանությամբ խոր դժոխքի
Յոթն անգամ շուրջը շրջեցին,
Զերթ ջրիհեղեղ կործանեցին,
Թագավորները յոթ ազգի,
Որ երեսուն հոգի էին,
Զարկեց նրանց՝ այդ բոլորին,
Կախեց փայտից անարգանքի
Եվ ճեպընթաց շարժումն արփու,
Արեգական լուսաբերի,
Կանգնեցրեց դեմը Գաբավոնի,
Լուսինը՝ ձորում ելիոնի:
Եվ բազմաթիվ այլ հրաշքներ
Գործեց Հեսուն այն աշխարհում,
Ինչպես Գըրքում է պատմվում:
Առաջինն ինքն էր հայրերից,
Որ ստացավ այն ցեղերից:
Ճշմարիտ այդ օրինակով
Մարմնականից հոգու Փըրկչիդ
Աղերսում եմ վասն իմ անձի
Արդարությունը նրանց գործի,
Թեև չեղա նըրանց նըման,
Ընդվզելով ընդդեմ չարին,
Այլ թուլացա ասպարեզում,
Նըմանվեցի վատ ծառային,
Բայց ձեռքդ տուր ինձ այս մարտում
Ընդդեմ անմարմին Ամաղեկի,
Չգելով ձեռքը Քո խաչին,
Հանց Մովսեսը լեռան կողին,
Լուծիր խորհուրդը յոթ տեսակ,
Քանանացուն բեր օրինակ,
Ինչպես կորլստյան, բոզոլոյան,
Արծաթասիրության, ձանձրության,
Եվ բարկության, և տըրտմության,
Սընափառ պիղծ հպարտության:
Քարե կարկտով նըրան զարկիր,
Պիծակներով Քո զորքերի,
Անցկացրու գետն այս երկրային,
Անթաց տակով գարշապարի,
Դարձրու այնտեղ, ելանք ուսկից՝

ՊՍ. Է

ՊՍ. ԺԴԶ

Ա ՔԱԳ. Դ, 18

Յանմահական վայրըս դրախտին.
Պարիսպք ճեղաց երիքովին
Դըրամբք փակեալ անյուսալին,
Աղաղակաւ տապալեսցին,
Դրունքն ի հիմանց քանդեալ բարձցին.
Եւ յաւետեացդ յաշխարհ վերին,
Յորում մըտեր նախ առաջին,
Հետնեցո՞հ հետոց Քոյին,
Ժառանգ լինիլ ինձ վերջստին:
Որ ըստ արդար դատաստանին,
Որով դատիս զազգ երկրածին,
Խնամեալ պահես բոլորովին
Զիւրաքանչիւր ոք ըստ կարգին,
Ընտրեալ եղիր յիսրայիլին
Յետ Յեսուայ զօրավարին
Ըզդատաւորս ցեղից նոցին,
Ըստ օրինաց դատել զնոսին:
ԸզԳեդեհովն յաղթող արին,
Որ զՄադիամ հարեր նովին,
Երեք հարիւր զօրականին
Զբիւրջս բիւրոց այլասեռին:
Եւ ըզՄամփսոն անյաղթելին,
Որ յուխտական յորովայնին,
Այն որ զգիսակս ունէր մազին
Ըզսա Հոգւոյն շնորհացըն եօթնարփին:
Եւ զայլ ոմանս, որ կայ ի Գրին,
Մինչ ի Հեղի՝ յայն ծերունին.
Այն, որ մեռաւ բեկմամբ ողին
Վասըն գերեալ տապանակին:
Ահա և յիմըս քաղաքին,
Զոր շինեցեր ձեռմամբ Քոյին,
Եղիր դատել դատաւորին,
Զհոգիս այրի՝ մըտաց խըղճին,
Բայց ոչ դատեաց ըստ Օրինին,
Ո՛չ դիմացաւ չար ոսոխին,
Այլ մեղէնացաւ կամաւ յախտին,
Մատնեաց ի ձեռս աւազակին:
Արդ որ փըրկիչ եղեր նոցին,
Ետուր յաղթել հակառակին,
Տացես և ինձ, Տէր, յաղթութիւն

Դեպ անմահ վայրը դըրախտի:
Մեղքի պարիսպը Երիքովի
Փակ դռներով անհուսալի
Աղաղակով թող տապալվեն,
Հիմքից դռները կործանվեն:
Ավետյաց երկիրը վերին,
Ուր մտար նախ Դու՝ առաջին,
Քո ետևից թող ես էլ գամ,
Կըրկին նըրան ժառանգ դառնամ,
Որ ըստ արդար դատաստանի,
Որով դատում ես ազգն երկրածին,
Խընամես ըստ ամենայնի
Յուրաքանչյուրին ըստ կարգի,
Հեսու զորավարից հետո
Դու ընտրեցիր Իսրայելում
Դատավորներ նըրանց ազգից,
Որ դատեին ըստ օրենքի,
Գեդեոնին հաղթող դարձրիր,
Որ զարկեց մադիամի ցեղին,
Երեքհարյուր զորականով
Այլազգի բյուր բյուրավորին,
Եվ Սամսոնին անհաղթելի,
Որ ուխտ ուներ մոր արգանդից,
Այն, որ գիսակ ուներ մազի,
Որ Հոգու շնորհն էր յոթնարփի,
Ուրիշների, որ կան Գըրքում,
Մինչև Հեղին այն ծերունի.
Նա, որ մեռավ կոտրած ողից
Հանուն գերված տապանակի:
Ահա և այս իմ քաղաքում,
Որ շինեցիր Դու Քո ձեռքով,
Դատել տվիր դատավորին
Հոգիս այրի խըղճի մըտոք,
Բայց չըդատեց նա օրենքով,
Չըդիմացավ չար ոսոխին,
Այլ կամովին ընկավ ախտից,
Մատնըվեց ձեռքն ավազակի:
Դու, որ նրանց եղար Փըրկիչ,
Տըվիր հաղթել ոսոխներին,
Ինձ էլ շընորհիր հաղթություն,

Ընդդիմանալ ախոյանին.
 Ուսո՛ դատել որպէս նոքին
 Արդարապէս մըտաց զհոգին,
 Զի մի՛ զյետին նաքարակիտն
 Պահանջեցայց անդր ի բանտին:
 Որ Աննայի լուար ձայնին,
 Եւ յամլութեանն ետուր զորդին,
 Զոր Բեզ մատոյց ի խորանին՝
 Ընծայ զպտուղ որովայնին.
 Եւ ես գոչեմ ձայնիւ նորին,
 Անշարժ շըրթամբք խորոց սըրտին,
 Աղաղակեմ անլըռելին,
 Հեծեմ հոգւովըս վըշտագին,
 Թէ զանպըտուղ անձս ի բարին
 Եւ զպըտղաբերս գործոց չարին,
 Պըտղաբերեա բարեաց գործին
 Եւ գօսացո զարմատ չարին:
 Զախտըս մեղաց ըզբազմածին
 Դադարեցո՛ ըստ Փեննային,
 Ամուլ հոգւոյս ըստ Աննային
 Շնորհեա՛ որդիս յեթանեկին:
 Մեռցին անդամք իմ երկրային,
 Կեցցէ հոգիս իմ վերըստին.
 Իջցէ ի գուբ չար թըշնամին
 Եւ զիս հանցես յերկին վերին.
 Որ ըզԴաւիթ յեսսէածին
 Յորդիս եղեալ ծընունդ վերջին,
 Մանուկ խարտէշ գեղեցկագին,
 Հովիւ խաշանց անբան հօտին,
 Օծեր իւղովն, որ յեղջերին,
 Առ ի բեկումն, որ յապակին:
 Ի ձեռնն սուրբ մարգարէին
 Սամուէլի տեսանողին:
 Յորմէ հետէ խաղայր Հոգին
 Եւ հովանի լինէր նըմին,
 Հընչեր նովաւ գերգ սաղմոսին
 Իմաստնապէս ի տասնաղին,
 Հալածելով զայսըն ձայնիւ,
 Զոր հարկանէր ի Սաւուղին:
 Մերժեր զգազանսն երևելիս

ՄԱՏ. Ե, 26

Ա թԱԳ. Ա

Ա թԱԳ. ԺԶ,

12,13

Ա թԱԳ. ԺԶ,

19-23

Ընդդիմանալ չար թըշնամուն,
Ուսիր դատել նըրանց նըման
Խղճմըտանքով, արդարությամբ,
Որ չըվերցվի ստակը վերջին,
Պահանջվելով մեջը բանտի:
Դու լըսեցիր ձայնն Աննայի
Ամլությանն իր տըվիր որդի,
Որ մատուցեց Քեզ խորանին
Պտուղն ընծա՝ որովայնի:
Ես գոչում եմ նըրա ձայնով,
Սըրտի խորքից անշարժ շըրթով,
Աղաղակում անլըռելի,
Հեծում հոգովըս վըշտալի,
Թե ամուլ եմ ես բարիում
Եվ պըտղաբեր՝ չար գործերում,
Պըտղաբերի՜ր գործեր բարի,
Չորացրո՛ւ արմատը չարի:
Մեղքի ախտերը բազմածին
Դադարեցրու ըստ Փեննայի,
Ամուլ հոգուս ըստ Աննայի
Շընորհիր յոթ անգամ որդի:
Կորչեն անդամներս երկրային,
Կեցցե հոգին իմ վերըստին,
Թող գուբն իջնի չար թշնամին,
Իսկ ինձ հանիր երկինք վերին,
Ինչպես Դավթին հեսսեածին,
Որդիներից որդուն վերջին,
Խարտյաշ մանկան գեղեցկագին,
Հովվին խաշանց անբան հոտի,
Որն օծվեց յուղով եղջերի
Բեկման ժամանակ բաժակի:
Ձեռքովը սուրբ մարգարեի,
Սամուել տեսանողի,
Որից հետո շարժվեց Հոգին
Եվ դարձավ նըրա հովանին:
Հընչեցրեց երգը Սաղմոսի,
Իմաստուն ձայնը տավիղի,
Հալածելով ձայնով դևին,
Որ հարվածում էր Սավուղին,
Հաղթեց հըզոր գազաններին,

Ա թԱԳ. ԺԷ

Զարջ և զառիւծ ի միասին.
Եւ ի խըմբել պատերազմին
Ճակատ ընդդէմ Իսրայելին,
Վանէր նովաւ Դու ըզնոսին
Առանց զինու պատերազմին.
Քանզի պարսիւ հուվուականին
Դոյզըն քարիւ հեղեղատին
Հարեր զճակատ Գողիաթին
Բարձեր նախատ յԻսրայելին.
Եւ ի նեղչացն, որոց հասին
Բազմադիմի փորձանք նըմին,
Ապրեցուցեր զկեանքս նորին
Եւ կացուցեր գըլուխ նոցին:
Ո՛չ ընտրեցեր զազգն եփրեմին,
Ո՛չ ըզխորան Մանասէին,
Այլ զյուդայեան Բեթլէհէմին,
Յորմէ և Դու առեր մարմին,
Ետուր նըմա պարգև կըրկին
Յոյժ բարձրագոյն քան ըզբնաւին,
Արքայ օծեալ Հրեաստանին
Եւ մարգարէ աստուածային.
Թէպէտ էանց ըստ հրամանին,
Սխալեաց կամաւ ի յերկոսին,
Պոռնըկեցաւ ընդ Բերսաբին,
Ի՛նչեհ զարիւն Ուրիային.
Զի յայտ լիցի թէ է մարմին,
Ի՛նչեհ բնութիւն նա մարդկային.
Եւ ո՛չ օտար կամ երկնային,
Այլ ի ծնընդոց հողեղինին:
Նա և ի յոյս յանցաւորին,
Ետուր գըթել յայնժամ մեծին.
Զի մի մեղօքն անյուսասցին,
Այլ որպէս զնա փութով դարձցին:
Եւ զիս առեր մարդ հողածին
Ի յԱդամայ որդւոց վերջին,
Ծընունդ գոլով գիշերային,
Ախտիւք գերեալ և աղախին,
Ծընար հոգւով զիս վերըստին,
Ստեղծեր նորոգ յաւազանին.
Օծեր իւղով Քո երկնային

Ա թԱԳ. ԺԷ, 58

Բ թԱԳ. ԺԱ

Արջին, առյուծին միասին,
Եվ երբ կազմել էին ռազմի
Ճակատ ընդդեմ Իսրայելի,
Նըրա ձեռքով Դու վանեցիր
Առանց զենքի պատերազմի,
Քանզի հովվի պարսատիկով,
Հեղեղատի քիչ քարերով
Խըփեց ճակատին Գողիաթի,
Սըրբեց ամոթն Իսրայելի
Նեղիչներից, որոնք բերին
Նըրան փորձանք բազմադիմի,
Կյանքը նըրա Դու ապրեցրիր,
Առաջնորդ ազգին կարգեցիր:
Չընտրեցիր ազգը Եփրեմի,
Ոչ խորանը Մանասեի,
Այլ՝ Բեթլեհեմը Հուդայի,
Որից և Դու առար մարմին,
Տըվիր նըրան պարգև կըրկին
Եվ բարձրացրիր վեր ամենքից.
Օծված արքա Հրեաստանի
Եվ մարգարե աստվածային,
Թեպետ հըրամանը խախտեց,
Կըրկընակի հանցանք գործեց,
Պոռնկացավ հետը Բերսաբեի,
Հեղեց արյունն Ուրիայի,
Որ պարզվի, որ ունի մարմին,
Ունի բընուություն մարդկային,
Եվ ոչ օտար կամ երկնային,
Այլ ծընունդով հողեղենի,
Հանցավորին հույս տըվեցիր,
Մեծ գըթություն բաժանեցիր,
Որ մեղքերից չըվըհատվեն,
Այլ նըրա պես շուտով շըտկվեն:
Ինձ էլ դարձրիր մարդ հողածին
Ադամորդիներից վերջին,
Որպես ծընունդ գիշերային,
Ծընված երկունքով և ծառա,
Ծընեցիր հոգով ինձ կըրկին,
Ավազանում նորոգեցիր,
Յուղով երկնային օծեցիր

սաւ Ծ (Ծա),
10

Յորդեգրութիւն Հօրըդ վերին:
Բայց ես անկայ յախտըս կըրկին,
Եղեալ ծընունդ մեղսասիրին,
Զօծումըն սուրբ աստուածային
Աղտեղեցի գործովք չարին:
Արդ պաղատիմ երգով նորին,
Հայցեմ ի Քէն ըստ սաղմուսին.
Սիրտ սուրբ հաստեմ յիս վերըստին,
Յորովայնիս զուղիղ հոգին.
Ինձ լըսեցո զլուր Քո ձայնին
Զուրախարարն և զցընծալին:
Յորժամ հընչէ փողն ահագին,
Ազդել ոսկերս իմ ցաւագին,
Տէր, ի մեղաց դարձո զհոգիս,
Պարտեացն իմոց գիր ջընջեսցին
Եւ յարենէ գոյն յորդանին
Մաքրեմ յիմոց և յօտարին:
Յայնժամ շրթունք հոգւոյս բացցին,
Բերանս օրհնել արժանասցին.
Եւ զուարակիդ զենման գառին
Հաղորդ զըտայց պատարագին:
Որ յօրինակ Քեզ ընտրեցեր
Զորդի մեծի մարգարէին
ԸզՍաղովմոն խաղաղութիւն,
Ի քէն բերեալ երկնաւորին,
Նա ի հօրէն իւր սեփական
Զաթոռն առեալ ըզհայրենին,
Որպէս և Դու Հօր միածին,
Ո՛չ յօտարուստ կամ արտաքին,
Տաճար շինեաց նա երկրային,
Դու ըզբնութիւնըս մարդկային.
Նըմա տըւաւ իմաստ բանին,
Բայց Դու տըւող անճառ շնորհին,
Նա ժողովող յոգն իմաստին
Անուանեցաւ յիսրայէլին,
Իսկ Դու զցրուեալ ազգ երկրաճին
Ժողովեցեր ի միասին.
Նըմա դըշխոյն հարաւային
Եկն իւտեսիլ բաղձմամբ սըրտին,
Քեզ քառանկիւն կողմ աշխարհի

Գ թագ. Ե, Զ, Է

Գ թագ. Ժ

Որդեգրությամբ Քո Հոր վերին:
Բայց ախտի մեջ ընկա կրկին,
Եղա ծընունդ մեղսասերի,
Օծումըդ սուրբ աստվածային
Աղտոտեցի գործով չարի,
Արդ խընդրում եմ Դավթի երգով,
Հայցում եմ Քեզ սաղմոսներով,
Ոգեպընդիր ինձ վերըստին,
Ի ծընե ճըշմարիտ հոգին:
Ինձ լըսեցրու լուրը ձայնիդ
Ուրախալի և ցընծագին,
Ուր երբ հընչի փողն ահագին,
Ջարկի ոսկրերիս ցավագին,
Մեղքից հանիր, Տեր, իմ հոգին,
Որ ջընջվի գիրը պարտքերիս,
Եվ արյունից որդան գուլնի
Իմ և այլոց մեղքը ջընջվի:
Շըրթերն հոգուս բացվեն այնժամ
Եվ օրհնության արժանանան,
Թող հաղորդվեմ պատարագիդ,
Ջոհաբերման գենման գառիդ:
Որ օրինակ Քեզ ընտրեցիր
Որդուն Դու մեծ մարգարեի,
Խաղաղության Սողոմոնին,
Երկնավորիդ օրինակին,
Նա, որ հորից իր սեփական
Վերցրեց աթոռը հայրական,
Ինչպես Դու ես՝ Հոր միածին,
Ոչ օտար ես, ոչ արտաքին:
Տաճար շինեց նա երկրային,
Դու՝ բնությունը մարդկային,
Նըրան տըրվեց իմաստ բանի,
Դու՝ տըվող անճառ շնորհի,
Նա՝ ժողովող իմաստության
Իսրայելի մեջ հըռչակվեց,
Իսկ Դու ցըրված ցեղը մարդկանց
Ժողովեցիր մեկտեղ այդպես:
Նըրան դըշխոն հարավային
Եկավ այցի բաղձմամբ սըրտի,

ՄԱՏ. ԻԵ,

14-30

Անտեսաբար երկիր պագին:
Եւ ես շնորհաց Քոց ընդ նրմին
Եղէ ստացող մի քանքարին,
Ոչ պահելով զայն ընդ վատին,
Այլ կորուսի ըզգլուխ նորին:
Զի որպէս նա զփառս անեղին
Փոխեաց փառաց եղծականին,
Նոյն ես ըզլոյս շնորհաց Քոյին
Փոխարկեցի ընդ խաւարին:
Արդ եթէ նա վասըն յանցին
Տուծիւք պատժեալ յօրինակին,
Զինչ ունիմ յոյս թշւառս անձին
Կորուսողիս ըզճըշմարտին:
Եւ թէ նորա գոլ թողութիւն
Երկբայելի զըղջմամբ սըրտին,
Ինձ արդարն անյուսալին
Բարկացելոյդ Հօր հաշտութիւն:
Բայց որ գըթածդ ես յամենից
Հեղ յիս ըզսէր շնորհաց Քոյին,
Իմաստութիւն Հօրըդ վերին,
Իմաստնացո զիս յերկոսին,
Յարդիւնաբար գործնականին
Եւ ի յիմաստ տեսականին.
Զի կարացից լուսով շնորհին
Երկու աչօք նայել յերկին:
Քանզի է սկիզբն իմաստութեան
Երկիւղ Քո սուրբ ըստ Առակին.
Եւ գիտութիւն առանց նորին,
Առիթ չարեաց է ունողին:
Այսուիկ բազումք յանդիմանին
Եւ Սաղովմոն նախ առաջին:
Սոյն իմս և խուն իմաստութիւն,
Անօգտակար առանց սանձին:
Թողից գլուղս, որ ըստ կարգին,
Զի ոչ ներէ բանըս բազմին.
Ըզմարգարէս և զթագաւորս
Եղեալ ի տան Հրէաստանին,
Որ ի յերկուս եղեալ բաժին
Ի Յուդային և յեփրեմին:
Զի և Գիրք սուրբ աստուածային

ԱՄԱԿ Ա, 7

Քեզ չորս կողմերը աշխարհի
Դեռ չըտեսած՝ երկըրպագին:
Նըրա հետ քո շընորհներից
Եղա ստացող մի քանքարի,
Այն էլ, ծուլլ եմ, չըպահելով,
Կորցրի իսպառ հեծեծելով,
Եվ ինչպես փառքն անմահական
Փոխեց փառքով նա եղծական,
Լույսն այդպես Քո լույսը շնորհների
Փոխարկեցի ես խավարի:
Արդ եթե նա իր հանցանքով
Պատժվեց իբր օրինակով,
Էլ ինչ հույս իմ թըշվառ անձին,
Ճըշմարտությունը կորցնողին:
Եթե նըրա մեղքը ներվի,
Երբ զըղջումն է կասկածելի,
Հույս չունեմ ես արդարապես,
Թե բարկացած Հայրըդ հաշտվի:
Բայց Դու՝ գըթածըդ ամենից,
Շընորհներիցըդ սեր տուր ինձ,
Հորըդ վերին իմաստությամբ
Իմաստնացրու երկու գըծով՝
Արգասաբեր գործնականով,
Տեսականի իմաստներով,
Որ կարենամ լույսով ձիրքիս
Երկու աչքով նայել երկինք,
Քանզի սկիզբն է իմաստության
Քո սուրբ երկյուղն ըստ Առակի,
Եվ գիտությունն առանց ահի
Չարի պատճառն է գիտունի,
Ուստի շատերն են կըշտամբում
Նախ և առաջ Սողոմոնին,
Իմաստությունս էլ քիչ, որ կար,
Անօգուտ էր առանց սանձի:
Մեղքը ոմանց նա կըթողնի,
Բայց չի ների շատ շատերի:
Մարգարեներ, թագավորներ
Եղան տանը Հրեաստանի,
Որ երկուսի բաժանվեցին՝
Մեկն Հուդային, մյուսն՝ Եփրեմին:

Դ թԱԳ. Ի, 1-6
Բ ՄԱ Ա, 20

Դ թԱԳ. Թ,
1-8

ԸՍՏ ԵՐԵՄՈՎ
ՄԱՐԳԱՐԵՐ

ՆՍ. ԼԸ, 9-20

Յառաջագոյն մեզ պատմեցին,
Զիւրաբանչիւր վարըս նոցին
Ի զգուշութիւն մեզ ծանուցին.
Զոմանց բարեաց վըկայեցին,
Զի յօրինակ մեզ եղիցին,
Զայլոց ըզչար վըկայեցին,
Զի մի նըման լիցուք նոցին:
Եւ ես մերժեալ յինէն զբարին,
Չբերի զլաւացըն տիպ յանձին,
Այլ ընտրելով զներհակ նորին
Եղէ նըման յոյժ վատթարին:
Եւ կորուսի զիմաստութիւն,
Զոր ընկալայ բանիւք Քոյին:
Արդ Քեզ գոչեմ զաղերս բանին
Եզեկիայ թագաւորին,
Ի նեղութեանց փըրկել կըրկին,
Որպէս և յայն ժամ ըզնոսին
Ի յասորոց բըռնաւորին,
Ի սպառնալեացն Ըռափսակին,
Եւ ի յախտիցըն սաստկագին
Հայցմամբ մեծի մարգարէին:
Հարցէ ի սպառ սուր հրեշտակին .
Ըզբազմութիւն լեզեօնին
Զանմարմնական, Լ'որք ի մարմին
Ընդ եկեղեցւոյ Քում մարտընչին,
Եւ զախտ մեղաց մահաբերին
Տագնապելոյս ջերմամբ նոցին
Բարձցես յինէն հըզօր դիւրին,
Որպէս կարող յամենայնին:
Դարձն զըստուեր երեկոյին
Ի լոյս կենաց առաւօտին,
Որպէս նովաւ օր միակին
Դարձեալ եղև տիւ երրակին.
Որ էր նըշան երեք լուսոյն
Երրորդութեանդ երրեակ անձին,
Նաև ծագման Քո և դարձին
Եւ գալըստեանդ ի յերկրորդին:
Բայց իմ բարձեալ՝ որպէս նորին,
Աւուրք կենաց հոգևորին՝
Մերձ եմ ի դրունս դըժոխոց,

Գըրքերը Սուրբ աստվածային
Առաջինը մեզ պատմեցին,
Ամեն մեկի վարքն առանձին
Զգուշությամբ մեզ հայտնեցին.
Ոմանց բարին վըկայեցին,
Որ օրինակ մեզ ծառայեն,
Ոմանց էլ վատը նըշեցին,
Որ նըրանց մենք չընըմանվենք:
Ես մերժելով ինձնից բարին՝
Օրինակ չընտրեցի լավին,
Այլ հակառակն ես արեցի,
Նըման եղա հույժ վատթարին,
Իմաստությունն իմ կորցըրի,
Որ հասկացա ես Քո խոսքից:
Քեզ կանչում եմ աղերսելով՝
Նման եզեկիա արքային,
Որ ինձ փըրկես նեղությունից,
Ինչպես նըրան այն ժամանակ
Սպառնալիքներից Ռափսակի,
Ասորիքի բըռնավորի,
Եվ ախտերից մեծ և ուժգին,
Խընդդանքով մեծ մարգարեի,
Զընջիր սըրով հըրեշտակի
Հոծ խըմբերը չար Լեգեոնի,
Որ անմարմին և մարմընում
Եկեղեցուդ դեմ են ելնում,
Եվ մահաբեր ախտը մեղքի՝
Նըրա ջերմը իմ մարմընի
Հանիր ինձնից, Հըզդր, դյուրավ,
Որ հասու ես ամեն ինչի:
Փոխիր ստվերը երեկոյի
Առավոտյան կենաց լույսի,
Ինչպես նրա օրը միակ
Ցերեկ դարձավ նորից եռյակ,
Որ նըշան էր երեք լույսի,
Երրորդության եռյակ անձի,
Նաև Ծնընդի Քո և դարձի
Եվ Քո երկրորդ Մեծ գալուստի:
Օրերըս հոգևոր կյանքի
Հասան նըրա պես ավարտի,

Եւ ստուերք մահու զիս ծածկեցին:
 Ի յիշատակ թողում յետին
 Զհամբաւ չարեաց զպարսաւ անձին,
 Կամաւ մատներ չար ոսոխին,
 Որ ի յառիւծ նըշանակին.
 Այն, որ մանրեաց զոսկերս խորին,
 Եւ խորտակեաց զխորհուրդ սըրտին
 Ի ծնընդենէ առաւօտին
 Մինչ ի գիշեր մահու ստուերին:
 Եւ ես տըկար որպէս ծիծառն,
 Անդիմադարձ իբր աղաւնին,
 Տեսեալ ճըչեմ առ թշնամին
 Նըւաղ ձայնիւ որպէս մընչիւն:
 Զաչս ի լուսոյ խաւարեցին
 Եւ կուրութեամբ զիս տուծեցին.
 Յաշխարհ նայիլ ինձ ուսուցին
 Եւ ոչ ի լոյսդ աստուածային.
 Արդ ինձ շնորհեա, Տէր, ընդ նըմին
 Մերժիլ յախտից ցաւոց անձին,
 Դարձն զմեղացըս դառնութիւն
 Ի քաղցրագոյն խաղաղութիւն:
 Ընդ որս և զիմ փոխարկեսցես
 Ի պըտղաբեր զամուլ հոգին,
 Առ ի ծնանել զարդարութիւն
 Զորդիս լուսոյ հոգևորին.
 Զի անդադար Քեզ օրհնութիւն
 Մատուցանեմ մինչ ի մարմին,
 Եւ ընդ հրեշտակս յապագային
 Փառըս հընչել ի տաճարին:
 Եւ ընդ ամաց երից հընգին
 Զոր յաւելեր ի կեանս նմին,
 Շնորհեա և ինձ զանթըւելին
 Յանգրաւական յաւիտենին:
 Չայնիւ մաղթեմ Մանասէին
 Զըղջացելոյ յանցաւորին,
 Որ ըզպատկեր չորեքդիմին
 Կանգնեաց ի տան սըրբարանին,
 Եհեղ զարիւն մարգարէին,
 Սղոցիւ հերձեալ նըման փայտին
 Եւ ինքն էառ զդարձուած չարին,

Դ թԱԳ. Ու,
 1-17. Բ ՄԼԱՅ.
 29, 1-20

Մոտ եմ դըժոխքի դարբասին,
 Մահու ստվերներն ինձ ծածկեցին:
 Հիշատակ եմ թողնում վերջին
 Չարի համբավ՝ ամոթ անձիս,
 Ինձ մատնեցի չար ոսոխին,
 Որ շատ նման է առյուծի,
 Որ ոսկերքըս մանրեց խորքի,
 Խորտակեց հավատը սըրտիս
 Իմ ծընընդյան առավոտից
 Մինչ գիշերը մահանըման:
 Եվ ես տըկար, ծիծառն ինչպես,
 Չըդիմադրող աղավնու պես,
 Դեռ չըտեսած իմ թըշնամուն՝
 Նըվաղ ծըվում եմ, հանց մընչյուն:
 Աչքերս լույսից խավարեցին
 Եվ կուրությանբ ինձ պատժեցին,
 Ինձ աշխարհին սովորեցրին,
 Բայց ոչ լույսիդ աստվածային:
 Շընորհիր ինձ նըրա հետ, Տեր,
 Ապաքինել ցավ ու ախտեր,
 Դարձրու դառնությունը մեղքիս
 Խաղաղություն քաղցր ու հանգիստ:
 Ընդ որում իմ ամուլ հոգին
 Թող պըտղաբեր դառնա կըրկին,
 Արդարություն որ երբ ծընվի
 Եվ հոգևոր որդիք լույսի,
 Թող անդադար քեզ օրհնություն
 Մաղթեմ, քանի շունչ կա մարմնում,
 Հրեշտակաց հետ գալիքում
 Հընչեցնեմ փառքըդ տաճարում:
 Եվ երեք հընգյակ տարվա հետ,
 Որ հավելվեց նրա կյանքին,
 Ինձ էլ շնորհիր անթըվելին,
 Անվախճան կյանքն հավիտյանի:
 Ձայնով եմ կանչում Մանասեի,
 Այդ զղջացող հանցավորի,
 Որ տաճարում սըրբարանի
 Արձան դըրեց չորեքդիմի,
 Արյուն հեղեց մարգարեի,
 Սղոցով կըտրեց նըման փայտի

ՍՍՏԱՆԱՅԻ

Գ թԱԳ. ԺԵ-ԻԱ

Դ թԱԳ. Ա-Բ

Կապեալ յերկաթ ի տան բանտին:
Գոչէր լալով այրմամբ սըրտին,
Արտասուելով թախծեալ անձին,
Աղաղակէր յաղերս բանին,
Բաղխէր ըզկուրծս ողորմագին.
Ամենակալ ստեղծող գոյից,
Տէր և Աստուած Աբրահամին
Իսահակայ՝ Քում ծառային
Եւ Յակոբայ սըրբասիրին,
Որոց չեդեր ապաշխարել,
Ջի վերք մեղաց ոչ ունէին.
Այլ իմ ցաւոցս է սպեղանին,
Ջի քան զաւագ շատ է ծովին:
Չեմ արժանի նայիլ յերկին,
Ջի կափուցի զաչս ի բարին.
Եւ կորացայ յաշխարհի ստորին,
Կապեալ մեղօք իբր յերկաթին:
Եւ կանգնեցի զպատկեր չարին
Հանդէպ աչացս ըզտիպ ախտին.
Այժմ ի խոնարհ Քեզ արկանեմ
Ջծունըր ծընկաց և ըզսըրտին:
Բայց եմ անձամբըս ցաւագին,
Լեզուաւս ասեմ՝ մեղայ կըրկին.
Թող ինձ, Տէր, թող մինչ ի մարմին,
Ջի մի կորեայց ի մեղս անձին.
Մի դատեցայց ընդ սպանողին
Ընդ փայլականըն ստորանկին.
Այլ ընդ զուարթունսն արժանացո՛ւ
Փառատրութեան անվախճանին:
Յաղերս բանի քեզ ընդ բազմին,
Ըզվարս ածեմ զեղիային,
Ջայնմ, որ յերկրի էր երկնային,
Իբր անմարմին կոյս ի ստուերին.
Որ կերակրիւր ի յանձաւին
Ի յառգաւուց բերեալ հացին.
Շրջէր մորթովք մեռեալ մաշկին
Մոլորական յանապատին.
Յիջավանեալ առ կինն այրին
Եւ զլիութիւն շնորհող նըմին,
Ի յօրինակ կենաց հացին

Եվ ինքը ետ դարձավ չարից,
Շղթայակապ ներսում բանտի,
Լալիս էր զիլ այրմամբ սըրտի,
Ողբալով անձն իր վըշտալի,
Աղաղակում աղերս խոսքի,
Կուրծքն էր բախում ողորմագին:
Ամենակալ ստեղծող գոյի,
Տեր և Աստված Աբրահամի,
Ու Քո ծառա Իսահակի,
Նաև Հակոբ սըրբասերի,
Որոնց չեղավ ապաշխարանք,
Քանզի մեղքի վերք չունեին,
Իմ ցավին է պետք սպեղանի,
Զի ավագից շատ է ծովի,
Չեմ արժանի նայել երկինք,
Զի փակեցի աչքըս բարուց,
Հակվեցի աշխարհն ստորին,
Կապված մեղքով, հանց երկաթով,
Եվ կանգնեցրի կուռքը չարի,
Աչքիս առաջ տիպը ախտի:
Այժըմ խոնարհ դեմդ եմ ընկնում,
Ծունըր գալիս, սիրտ խոնարհում,
Սակայն անձամբ և ցավագին
Ասում եմ ես մեղա կըրկին:
Թող, Տեր, մարմնի մեջ եմ քանի,
Մեղքերում անձըս չըկորի,
Սպանողի հետ ինձ մի դատիր
Կայծակներով կործանվածի,
Հրեշտակաց հետ արժանացրու
Օրհներգությանն անվախճանի:
Շատերի հետ իմ աղերսում
Ես Եղիայի վարքն եմ բերում,
Նա, որ երկրում էր երկնային,
Սովերի մեջ՝ կույս անմարմին:
Կերակրվում էր անձավում
Ագռավների բերած հացով,
Շըրջում մորթե վերարկուով
Անապատում թափառելով,
Մինչ այրիի տունը իջավ
Եվ լիություն շնորհեց նրան,

Գ թԱԳ. ԺԸ, 4...,
ԺԹ, 8...

Դ թԱԳ. Բ, 1-11

Եւ յօծութիւն Հոգւոյ շնորհին.
Զփակող բանիւ Քոյով զերկին
Եւ ըզբացողըն յետ զոհին.
Ջոր ի սեղան ողջակիզին
Լըւար նըմա հրով երկնային.
Այն որ անձրև յետ երաշտին
Իջոյց նըման իջման Քոյին,
Որով պասքեալ ազգ մարդկային
Զցօղ կենաց Հոգւոյն արբին:
Ի սպառնալեաց եզաբելին
Փախեալ պահօք քառասնեկին.
Ջի տկարութիւն բնութեանս յայտնին,
Թէ չէ օտար հողանիւթին:
Ել ի Քորեբ ըստ Մովսիսին,
Եմուտ ի յայրն ըստ հրամանին.
Էառ հընչին սաստիկ հողմին,
Նըման անցեալ ջըրհեղեղին:
Ետես և զհուրըն Սողոմին,
Յորում Դու ոչ, Տէր, ի նոսին.
Ջի բարկութեամբ հանդերձ էին
Եւ ոչ սիրոյ ցուցման մեծին:
Լըւաւ և ձայն ըզքաղցր օդին,
Ի տիպ իջման Քո մեղմագին,
Որ զհեզաբար գալուստ Քոյին
Նըշանակէր յամըս վերջին:
Նոյն որ մաշկաւ մեռեալ ախտին
Ջեղիսէոս կոչեաց յանդին,
Որպէս և Դու զվէմ հաւատին
Եւ սուրբ զորդիսըն Ջեբեթին,
Եւ զՅորդանան ցելեալ նովին
Անցին ցամաք ըստ Յեսուին:
Հրեղէն կառօք հանէր յերկին,
ՋՀոգին ետուր միւսոյն կըրկին.
Որ Համբարձման Քո գուշակին,
Տալ ըզհոգին մետասանին.
Եւ Քո փոխան լինիլ նոցին
Եւ յետ նոցա, որք ըստ կարգին,
Ջի որպէս նա վարդապետին
Եղև նըման ամեննին,
Եւ Քեզ ընտրեալքն ի յաշխարհէ

Կենաց հացի օրինակով
Եվ օծության՝ Հոգու շնորհով,
Որ Քո խոսքով երկինքը փակեց,
Պատարագից հետո բացեց,
Ողջակեզի սեղանի մոտ
Լսիր նրան երկնային հըրում,
Որ երաշտից հետո անձրև
Իջավ նըրան Քո իջնելով,
Որով պապակ ազգը մարդկանց
Արբեց ցողով Հոգու կենաց,
Սպառնալիքից Եզաբելի
Փախավ պահքով քառասնօրյա,
Որ հայտնըվի մեր բընության
Տըկարությունըն անսահման,
Ոչ թե օտար հողանյութի:
Մովսեսի պես Քորեբ ելավ,
Հըրամանով այրը մըտավ,
Լըսեց ձայնը սաստիկ հողմի,
Նըման անցյալ ջըրհեղեղին,
Տեսավ և հուրը Սողոմի,
Զի Աստված էր բարկությամբ լի,
Տեր Դու սակայն նրանց հետ չէիր.
Լըսեց և քաղցըր ձայնն օդի,
Քո վայրէջքի պես մեղմագին,
Որ մեղմասահ գալուստը Քո
Ցույց էր տալիս վերջին տարին:
Նա, որ մեռավ վերարկուով,
Եղիսեին հետն առնելով,
Ինչպես Դու հավատի վեմին
Եվ Ջեբեդի որդիներին,
Հորդանանը բացին նըրանք,
Հեսուի պես անցան ցամաք,
Հըրե կառքով հասցրիր երկինք,
Հոգին մյուսին տըվիր կըրկին,
Քո Համբարձման սուրբ գուշակին,
Երբ Քո տեղը տասնըմեկին
Այնուհետև տըրվեց Հոգին,
Իսկ ավելի ուշ՝ ըստ կարգի:
Քանզի և Նա մեծ ուսուցչին
Նըման եղավ ամբողջովին,
Քո ընտրյալները աշխարհից

Դ թագ. Բ, 12-14,
23-25

Դ թագ. Դ

Դ թագ. Դ

Ի գործ հրաշից նըմանեցին:
Նա մաշկեկաւ սփածեալ շնորհին
Եհերձ ըզջուր Յորդանանին,
Սոքա զմեղաց ծովըն հերձին
Քարոզութեամբ կենաց բանին:
Նա ըզմանկունսըն Բեթելին
Տապաստ էարկ վասն այպանին.
Սոքա ըզծընունդ մեղաց չարին
Սըրով Հոգւոյն կոտորեցին:
Նա յամլութեան շնորհեաց զորդին
Ջոր և յարոյց ըզմեռեալ դին,
Գալով առ նա եօթանեկին,
Ըստ գալըստեան Քո ի յութին.
Եւ յետ մահուն կենդանութիւն
Ետուն ոսկերքն ի տապանին,
Ի տիպ մահուան Քո ի վիմին,
Որով յարեալ մեք վերըստին:
Սոքա զամուլ զեկեղեցին
Ի բազմածնունդս փոխարկեցին,
Եւ ըզմեռեալըս յարուցին
Ի Յարութեան հաւատ վերջին.
Նա զդառըն ջուրսն Երիքովին
Փոխեաց ի քաղցր արկմամբ աղին.
Սոքա ի Քեն աղ անուանեալ,
Ջանհամ բնութիւնս անուշեցին,
Նա զնէեման Դամասկացին
Յորդանանաւ սըրբեաց յախտին,
Սոքա ըզսեռըս մարդկային
Աւազանին ջուրբ մաքրեցին:
Արդ Քեզ հաճոյ վարուք նոցին
Ջիմ փոփոխեա զվարս ի բարին
Եւ փոխադրեա՛ յերկրէ յերկին
Ջիողիս մարմնով յապագային:
Հայցմամբ կառօք ամբարձողին,
Ջոր ի Թաբօր բերեր լերին,
Հանդերձելոց հանդերձողին
Կարապետի Քո յերկրորդին,
Այրի հոգւոյս տուր լիութիւն,
Որպէս նոքօք առ երկոսին.
Եւ մաշկեկաւ մեռելութեան

Նմանվեցին հրաշքի գործին:
Մեջքին կապած թիկնոց ձիւրքի՝
Զուրը ճեղքեց Հորդանանի,
Սրանք էլ ծովը մեղքի կըտրին
Քարոզությամբ կենաց բանի:
Նա Բեթելի մանուկներին
Զարկեց, քանզի ծաղրում էին,
Սրանք էլ ծնունդը չար մեղքերի
Հոգու սրով կոտորեցին:
Նա ամուլին շնորհեց որդի,
Ապա հարուցեց մեռյալ դին,
Գալով մոտը օրն յոթերորդ,
Ինչպես եկար օրն ութերորդ:
Մահից հետո կենդանություն
Առան ոսկերքը տապանում,
Ինչպես մահը շիրմում քարի,
Որով հառնեցինք վերըստին,
Նրանք ամուլ եկեղեցին
Բազմածընունդ դարձրեցին,
Մեռելերին կենդանացրին
Հարության հավատով վերջին,
Նա դառ ջուրը երիքովի
Քաղցըր դարձրեց աղ լըցնելով,
Սըրանք Քեզնից աղ կոչվեցին,
Անհամությունն անուշ դարձրին,
Նա Նեեման Դամասկացուն
Փըրկեց ախտից Հորդանանով,
Սըրանք տեսակը մարդկային
Ավազանի ջրով մաքրին:
Արդ Քեզ հաճո վարքով նըրանց
Փոխիր վարքըս դեպի բարին,
Եվ փոխադրիր երկրից երկինք
Գալիքում մարմինն իմ և հոգին,
Հայցմամբ կառքով համբարձվողի,
Որին Թաբոր լեռ բերեցիր,
Հանդերձյալը պատրաստողի
Եվ Զո երկրորդ Կարապետի,
Այրի հոգուս տուր լիություն
Նմանությամբ այն երկուսի
Եվ թիկնոցով մեռելության

Գ թԱԳ. ԺԷ, 17-24

Դ թԱԳ. Գ, 10-27

Դ թԱԳ. Դ, 18-37

ԺԳ, 20-21

Դ թԱԳ. Ե, 1-14

Դ թԱԳ. Ջ, 5-7

Դ թԱԳ. Ք

Բ ՄԼԱՅ. ԼԶ.

Ա ԵՋԲ. Ա

Անցո ընդ գետս այս երկրային:
Ըզդառնորակ մեղաց համին
Փոխեա ի քաղցր և ի բարին
Անապական աղիւ բանին,
Ջոր յիս արկցես ըստ առակին:
Յարո՞ զհոգիս մեռեալ ախտին,
Որպէս նոքօք գերիս մարմին.
Մաքրեա՞ ըզբոր մահու մասին
Ըստ ասորւոյ Նէեմանին.
Ջիս վերածեա ըստ տապարին,
Փայտիւ Քոյոյ կենաց կարթին.
Եւ բիբջ աչաց հոգւոյս բացցին,
Ըստ պատանւոյն յիմանալին:
Տո՛ւր աղեղամբ ինձ հըզօրին
Հարուլ ըզսիրտ Բելիարին,
Որպէս և նա ի վախճանին
Նետիւք նըշան ետ արքային:
Տացես և ինձ արիութիւն .
Նետիւք խոցել զիմ թըշնամին
Եւ ապրեցայց հաղբից նորին,
Յորոգայթ չար որսողին:
Ինձ յօրինակ պարտ է յիշել
Եւ զգերութիւն Բաբիլոնին,
Յորժամ զուխտիւ սուրբ Օրինին,
Ջոր ասացեր նոցա անձին,
Ածեր պատիծս ի ծոց նոցին,
Յաւուր վրիժուց գըթեալ ոտին՝
Ըզսպառնական լըցեալ բանին,
Ջոր աւանդեաց Մովսէս նախկին:
Քանզի արքայ քաղդեացին
Եմուտ յերկիր Հրէաստանին,
Ջերուսաղէմ տապալեցին,
Ջորդիս նորա խողխողեցին.
Ջտաճարըն սուրբ հըրո՞վ լուցին,
Ըզսըրբութիւնսըն պըղծեցին,
Եւ զօրհներգուսըն Սիովնին
Ի գերութիւն խիստ վարեցին.
Որք ի յուռիսըն կախէին
Սուրբ գերգարանըս տաճարին,
Եւ անդադար նըստեալ լային

Անցկացրու գետն այս երկրային:
 Եվ դառնորակ համը մեղքի
 Փոխիր դեպի քաղցր ու բարի,
 Անապական աղով Բանի,
 Որ ինձ թողնես, ըստ առակի,
 Հոգուս կյանք տուր մահվան ախտից,
 Ինչպես նըրանց՝ այն երեքին,
 Մաքրիր ինձնից բորը մահվան,
 Հանց ասորի Նեեմանի,
 Ինձ վեր հանիր տապարի պես,
 Կենաց կարթիդ ձողով ասես,
 Բացվեն բիբերն հոգուս աչքի,
 Հանց պատանուն՝ իմանալին:
 Թող, հարվածով այս աղեղի
 Զարկեմ սիրտը Բելիարի,
 Ինչպես և նա՝ վերջին պահին
 Նետով զարկեց իր արքային,
 Ինձ էլ տուր Դու արիություն՝
 Նետահարեմ իմ թշնամուն,
 Թող ազատվեմ աղբից նրա,
 Որոգայթից չար որսորդի.
 Հանց օրինակ, պետք է հիշեմ
 Գերությունը Բաբելոնի,
 Երբ որ Ուխտը սուրբ Օրենքի,
 Որ դըրեցիր նըրանց անձին,
 Պատժով լըցրիր ծոցը նըրանց,
 Վըրեժի օրը գայթեցին
 Ըսպառնական այն խոսքերով,
 Որ Մովսեսին ավանդվեցին:
 Քանզի արքան քաղդեացի
 Մըտավ երկիրն Հրեաստանի,
 Երուսաղեմը տապալեց,
 Որդիներին նըրա մորթեց,
 Սուրբ տաճարը հրի մատնեց,
 Սըրբությունները նա պըղծեց,
 Եվ Սիոնի երգիչներին
 Ծանըր գերության վարեցին,
 Ուռիներից որ կախեցին
 Երգարանները տաճարի
 Եվ անդադար նըստան լացին

սս. Ը, 30-34

սւր. Ե, 12-16

սսւ. ՃԻԵ (ՃԻԶ), 4

սսւ. ՃԻԵ

(ՃԻԶ), 6

Միշտ առ գետով Բաբիլովնին:
Նոյնպէս և զիմ քաղաքս առին
Խառնակութիւնք ախտասիրին,
Անմարմնական զօրքըն չարին,
Որք ի Բաբել նըշանակին:
Զմասունս երիս տիրականին
Ախտից սըրով խողխողեցին,
Եւ ըզքառեակ ծընունդ սորին,
Որով մասունք իւր զարդարին,
Ի գերութիւն տարագրեցին
Յօտար աշխարհ այլասեռին.
Ի յարածել զերամ խոզին
Յայսմ աշխարհի ագարակին:
Եւ ի տաճարս աստուածային,
Յորում բնակեաց Քո Սուրբ Հոգին,
Ըզհուր մեղաց բորբոքեցին,
Կիզմամբ ախտից տոչորեցին:
Զայգիս տընկեալ աջով Քոյին
Եւ մըշակեալ Հօր Քո ձեռին,
Զցանկըն քակեալ յատակեցին,
Կըթեն անցորդք ճանապարհին:
Այլ որ զգերեալսըն Սիօնին
Դարձուցեր յետս ի հայրենին,
Շինել զտաճարըն վերըստին
Պայծառ և շքեղ քան զառաջին,
Դարձն և զիմըս գերութիւն՝
Որպէս և զուխսըն հարաւային՝
Յօտարոտի երկրէ չարին,
Զմիտըս գերեալըս գերողին.
Որք ի յերթալն իմ ողբային -
Մինչ զսերմանսըն տանէին,
Դարձեալ ի գալն ուրախասցին՝
Յարդիւնաբեր հունձս որային:
Հատն դրացեացս եօթանեքկին
Ընդ բիւր չարեացն ի ծոց նոցին,
Եւ սպանելոյս շահեան զհոգին,
Խընդրեան զարիւնըն, զոր հեղին:
Այլև դըստեր Բաբիլովնին
Թըշուառական և դըժնեին

Բաբելոնի գետեզերքին,
 Այդպես քաղաքն էլ իմ առավ
 Խառնակությունը չարասերի,
 Անմարմին զորքն ախտասերի,
 Որ նըշանն են Բաբելոնի:
 Երեք մասերը տիրական
 Ախտի սըրով խողխողեցին:
 Եվ քառյակ ծընունդը սըրանց,
 Որով մասերն են զարդարված,
 Տարագրեցին ողջ գերության,
 Օտար երկիր՝ այլ ազգության,
 Հանց խոզի ջոկն է արածում
 Այս աշխարհի ագարակում:
 Եվ տաճարում աստվածային,
 Ուր բնակվում էր Սուրբ Հոգին,
 Հուրը մեղքի բորբոքեցին,
 Ախտի կիզմամբ տոչորվեցին:
 Այգին էր Քո աջով տընկված
 Եվ Քո Հոր ձեռքով մըշակված.
 Բայց ցանկապատն ավերեցին,
 Անցորդները թալանեցին.
 Բայց Սիոնի գերյալներին
 Դարձրիր երկիրը հայրենի,
 Որ տաճարը նորոգեին
 Պայծառ ու ճոխ, քան առաջինն.
 Ինձ էլ դարձրու գերությունից,
 Ինչպես գետերն հարավային:
 Օտարոտի երկրում չարի
 Միտքըս գերված է գերողին,
 Եվ երթալըս էին ողբում,
 Երբ սերմերս էին տանում,
 Ապա՝ դարձիս ուրախանում
 Արդյունավոր հունձով շեղջիս:
 Յոթնապատիկ զարկիր կըրկին
 Դրացիներիս, որոնց ծոցում
 Բյուր չարիքներ են բընակվում,
 Իսկ սպանվածիս հոգին շահիր,
 Հեղած արյունը պահանջիր,
 Իսկ դըստերը Բաբելոնի
 Թըշվառացրու, դարձրու դըժնի,

	Հատո՛ր փոխան գործոց նոցին, Զոր ի սկըզբանն ինձ արարին: Հըզօր, տո՛ւր ինձ լինել ուժգին Եւ ի դիմի հարուլ չարին, Առնուլ զոտից մանկանց նորին Եւ հարկանել զկարծըր վիմին. Լըսել ըզբան մարգարէին Ընդդէմ մահու բըռնաւորին, Ո՛ւր, ասէ, մահ, Քո յաղթութիւն Կամ ո՛ւր, դըժոխք, խայթոց քոյին: Մինչ դարձուցես առ հայրենին, Ուստի անկաւ մարդն առաջին, Ի փափկութեան ադին դրախտին Յանմահական և յերկնային: Հայցմամբ մաքուր յորովայնէ Երեմիայի մարգարէին Եւ քրովբէից տեսանողին ԶՏէրդ ի վերայ Քոբար գետին. Որք ընդ գերեալսն ընթանային Որպէս հովիւ ըզկնի հօտին, Զի մի յանգիւտ մուրիցին Եւ գահավէժ հոգւով լիցին: Նա և յոգունց համանմանից, Որք յայնմ էին ժամանակին, Քոյին Հոգւով տեսանէին Եւ զապագայսն պատմէին. Յովսէայ բարւոյ սերմանողին, Եւ Ամովսայ քարոզողին. Միքիայ ըզծնունդ Քո տեսնողին Ի Բեթլեհէմ տուն Եփրատին. Եւ Յովսէայ ողբերգակին, Որ ի դէմս իմ վայ տայր անձին. Եւ Աբդիու հոգեկրողին, Ընդ որս Նաւում եղկիսացին: Ամբակումայ զարմանալոյն Պահօք ելող բարձր ի վիմին, Այնմ որ զվարսիցն հրեշտակին Առեալ բերէր ճաշ ի գըբին. Սոփոնիայ հրատարակին Եւ Անգէի քարոզ բանին:
ՈՎՍԵ ԺԳ, 14	
Ա ԿՈՐՆ. ԺԵ, 55	
ԵՐ. Ա, 5	
ԵԶԵ. Ժ	
ԵԶԵ. Ա	
ՄԻԶԻԱ Ե, 2	
ԱՄՔ. Բ	

Տեղը բոլոր չար գործերի,
 Որ նախապես գըլխիս բերին.
 Հըզոր, թող ես լինեմ ուժգին
 Եվ դիմադարձ զարկեմ չարին,
 Նըրա մանկանց ոտքերն առնեմ՝
 Կարծր ու կոպիտ վեմին զարկեմ,
 Լըսեմ խոսքը մարգարեի,
 Ընդդեմ մահվան-բըռնավորի.
 Ո՛ւր է խայթըդ, դըժոխք, գոչեմ,
 Կամ՝ հըր է, մահ, քո հաղթություն:
 Մինչև դարձնես դեպ հայրենին,
 Ուր ընկավ մարդըն առաջին
 Փառքից եդեմի դըրախտի
 Անմահական և երկնային:
 Հայցմամբ մաքուր հոգու խորքի
 Երեմիա մարգարեի,
 Տիրոջն ու քերովբեներին
 Քոբարի վրա տեսնողին,
 Որը մեջն էր գերիների,
 Որպես հովիվ գըլխին հոտի,
 Որ էլ անհույս չըմուռովեն,
 Գահավեժ հոգով չըլինեն:
 Նաև մարդկանց համանըման,
 Որոնք կային այն ժամանակ
 Եվ Քո հոգով էին տեսնում,
 Ապագան էին մեզ պատմում,
 Բարիք սերմանող Հովսեի,
 Նաև Ամովս քարոզողի,
 Միքիայի՝ ծնունդդ տեսնողի
 Բեթլեհեմում՝ տանն Եփրատի,
 Ապա Հովել ողբերգակի,
 Իմ տեղ վայ ասող իր անձին,
 Եվ Աբդիա հոգեկրողի,
 Նաև Նաում եղկիսացու,
 Ջարմանալի Ամբակումի,
 Պահքով վեմի ծայրն ելնողի,
 Նա, որ վարսով հըրեշտակի
 Բերեց ճաշը մոտն իր փոսի,
 Եվ Սոփոնիա մունետիկի,
 Անգեի՝ Քո խոսքն ասողի,

ՋԱԸ Դ

ՋԱԸ Թ, 9...

ԺԲ

ՊԱՆԻ Ա

Եւ Յովնանու որսոյ կիտին,
Եւ Նինուէի մեծ քարոզին:
Զիս վերածեա՛, Տէր, ընդ նըմին
Յորովայնէ չար վիշապին,
Հայցմամբ Քոյոյ օրինակին
Երեքօրեայ թաղմամբ յերկրին:
Զաքարիայ տեսանողին
Եւ եօթնալոյս աշտանակին,
Այն, որ նըստեալ յաւանակին
ԶՔեզ աւետէր նոր Միօնին:
Մաղաքիայ՝ որ է վերջին
Ի մարգարէսն այն առաջին,
Անուանակիր սուրբ հրեշտակին
Եւ համատիպ գեղոյ նորին:
Երից մանկանց Բաբիլովնին,
Աշակերտաց Դանիէլին,
Անանիայ, Ազարէին,
Մաքուր մանկան Միսայէլին:
Այնք, որ ի հուրն անկան հնոցին,
Զի պատկերին ոչ զոհեցին.
Յորում իջէր Տէր առ նոսին,
Չորրորդ եղեր ընդ երրորդին.
Փոխարկեցեր զբնութիւն հրային
Ի մեղմագոյն ցօղ անձրևին,
Որ բարձրանայր չորրեակ տասին
Ինըն կանգուն յաւելուածին.
Ի յօրինակ եօթանց եօթին,
Այս կենցաղոյս եօթանց դարին,
Յորում զօրէ հուր ախտային
Վառեալ փըջմամբ մեղսասիրին,
Այն, որ յաւուր ութերորդին
Բառնի ի սպառ գալով Քոյին,
Եւ մեղաւորք մեղօք ջընջին
Եւ ամբարիշտք ոչ զըտանին:
Բայց ես մեղօք յայժմուս կիզիմ
Իբր զվառող այնըր հրատին,
Եւ բարձրանայ յիս բոց չարին
Յոյժ առաւել, քան ըզհնոցին.
Փըրկեա և զիս, Տէր, ընդ նոսին
Յայրեցմանէ չար խորհըրդին,

Նաև կետի որս Հովնանի,
Նինեացվոց ճարտասանի,
Ինձ էլ հանիր, Տեր, նըրա պես
Որովայնից չար վիշապի,
Օրինակով հենց Քո տըված,
Երբ երեք օր եղար թաղված:
Նըման Ջաջարիա տեսնողին,
Որ յոթնալույս աշտանակից
Քեզ էր ավետում Նոր Սիոնում,
Ուր ավանակ նըստեցիր Դու,
Մաղաքիայի, վերջինն է նա
Մարգարեններից առաջին,
Անվանակիր հըրեշտակի
Եվ համատիպ նըրա տեսքի,
Երեք մանկանց Բաբելոնի,
Աշակերտներին Դանիելի —
Անանիայի, Ազարիայի,
Մաքուր մանկան Միսայելի,
Նըրանց, որ հուրն ընկան հնոցի,
Քանգի կուռքին զոհ չբերին,
Եվ երբ Տերն իջավ նրանց մոտ,
Երրորդի հետ եղավ չորրորդ,
Եվ բընությունը հըրային
Դարձրեց մեղմ ցող անձրևային,
Որ ելնում էր քառասուն կանգուն,
Ինն էլ՝ վըրան ավելանում,
Հանց օրինակ յոթով յոթի՝
Մեր այս կյանքի յոթ դարերին,
Ուր հըզոր է հուրն ախտային,
Վառված՝ փըշմամբ մեղսասերի,
Որ ութերորդ օրն է մարում
Եվ գալըստյամբ Քո վերանում,
Մեղավորներն՝ մեղքով ջընջվում,
Ամբարիշտներն՝ անհետանում,
Բայց ես այժմ եմ մեղքով այրվում,
Ինչպես դժոխքի հըրերում,
Ներսըս բոցն է ելնում չարի
Հույժ առավել, քան հնոցի,
Փրկիր նրանց հետ, Տեր, և ինձ
Չար խորհըրդի կրակներից,

ԴԱՆԻ Է

Ա ՄԱԿ.

Ի կիզմանէ անբնականին
Եւ ի հրատից բնութեան ախտին:
Յօղ Քո իջցէ, երբ ի հնոցին,
Անձրև կենացդ առաւօտին
Ջիւմ շիջուցէ ըզբոց տապին,
Փոխարկեսցէ յամպ ցօղագին,
Եւ զանվախճան հուր գեհենին՝
Ջոր ժառանգեն հրեշտակք չարին,
Ըզդառնագոյնն և զխաւարին,
Որ է ծընունդ մեղաց ախտին,
Ջոր վառեցի անձամբ անձին
Բորբոքեցի փըշմամբ չարին,
Շիջոյինէն հայցմամբ նոցին,
Արժանացոյ լուսոյդ վերին,
Պաղատանօք մարգարէին
Ի մանկութեան տեսանողին,
Դանիէլի հոգւով ծերին,
Մարմնով ծերոց կըշտամբողին,
Ջանյայտ տեսիլսըն մեկնողին
Բաբիլացւոց մեծ արքային,
Ջվէմըն հատեալ առանց ձեռին
Ջառ ի Կուսէն Քո ըզմարմին.
Եւ ըզգալըստեան Քո օր վերջին,
Որպէս տեսեալ ծանուցողին,
Ջհայր Հին աւուրց անլանողին
Եւ զՔեզ ընդ ամպըս տեսողին,
Եղիազար Մակաբէին՝
Ինքնաըւեր քահանային,
Եւ ըստ հոգւոյ որդւոց նորին
Եօթն եղբարց և մօր նոցին.
Որք ի վերայ հարցն Օրինին
Մարմնով մեռան և ոչ լուծին,
Եւ զԱնտիոքն երևելին
Եւ զանմարմինն անարգեցին.
Ջիս ազատեա՛ հայցմամբ նոցին
Ի բըռնութեանց Բելիարին,
Չարչարակցօք Քո առաջին,
Գուշակողաց զխորհուրդ խաչին:

Անբնական կիզումներից,
 Անձիս ախտի մորմոքներից,
 Քո ցողն ինձ տուր այս հնոցում,
 Կենաց անձրևըդ առավոտի,
 Որ մեղմացնի բոցըս տապի
 Եվ վերածի ցողի ամպի:
 Անվախճան հուրը գեհենի,
 Որ ժառանգում են խավարի
 Հրեշտակները դառն ու չարի,
 Որ ծընունդ է մեղքի ախտի
 Եվ որ ինքըս անձամբ վառի,
 Բորբոքեցի փըշմամբ չարի,
 Հանգցրու իմ մեջ խնդրով նըրանց,
 Արժանացրու վերին լույսիդ
 Պաղատանքով մարգարեիդ,
 Մանկությունից տեսանողի
 Եվ հոգով ծեր Դանիելի,
 Մարմնով ծերերին կըշտամբողի,
 Բաբելոնի մեծ արքայի
 Անհայտ տեսիլքը մեկնողի,
 Առանց ձեռքի հատված վեմի,
 Կույսից առած Քո մարմընի,
 Քո գալըստյան վերջին օրվա
 Լույսը տեսնող-ծանուցողի,
 Հորն Հինավուրց անվանողի
 Եվ Քեզ ամպերում տեսնողի:
 Եվ եղիազար Մակաբեի
 Ինքնանըվեր քահանայի,
 Իր հոգևոր որդիների,
 Այն մոր և յոթ եղբայրների,
 Որ Հայրերի Օրենքը Հին
 Թեև մեռան, բայց պահեցին,
 Երևելի Անտիոքին
 Եվ կուռքերը նախատեցին:
 Բելիարի բըռնությունից
 Ինձ ազատիր հայցմամբ նրանց՝
 Քո առաջ տառապողների,
 Խաչի խորհուրդը տեսնողների:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՇՆՈՐՀԱԼԻՆ	Բայց այսքանեօք բժիշկք անձին
ՀԱՅՐԱՄԱՆՈՒԹՅԱՆ	Ոչ բուժեցաւ ախտ մարդկային.
ՄԵՋ ԻՇՈՂԱՅԻՆ	Քանզի կարեօք բնութեամբ էին,
ՄԻՏՔԷ Է ՀԱՅՏ-	Եւ բըժըշկել ոչ կարացին.
ՆՈՒՄ, ՈՐ ՀԻՆ	Զի ըստ հըզօր ցաւոց վիրին
ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՐ-	Հըզօր դեղոց պիտանային.
ԳԱՐԵԼԵՐԸ ՀՈԳՈՒ	Զոր ըզգածեալ տըկար մարմին
ԴԵՂ ՈՒՆԵՐԸ, ԲԱՅՅ	Ապաքինել ոչ բաւէին.
ՄԱՐԴԱՌԻԹՅԱՆԸ	Մինչև զկենաց դեղդ երկնային
ՄԱՔՐՈՂԸ ԶԻՒՄ-	Էարբ զբնութիւն մեր ախտային,
ՏՈՍԸ Է՝ «ԱՐՏԱ-	Եհեղ ըզմաղձըն ցաւագին,
ԿԱՐԳ ԲԺՐԸԿԸ»	Փոխեալ ի կեանսըն յառաջին,
(ՕՐԻԳԵՆԵՍ)	Նախ ի Հոգւոյդ աստուածային
	Մաքրեալ հոգի սըրբոյ Կուսին,
	Եւ զօրութիւն Հօրըդ վերին
	Հովանացեալ գոլով նըմին,
ՂՈՒ. Ա. 35	Ապա Որդիդ Հօր միածին
	Կամաւ իջեալ յորովայնին,
ԱՍՏՎԱԾԱՅԻՆՏԵՆՈՒ	Ճշմարտապէս առեր մարմին
ԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ	Աստուած և մարդ՝ մի երկոցին.
	Ծընար մարմնով ըստ մարդկային,
	Որ ի Հօրէ՛ նախ անմարմին:
	Լուծեր զերկունս նախաստեղծին,
	Տերեապատն ի խանձարրին.
ՄԱՏ. Բ	Բանդ ի մըսուրըն անբանից,
	Գոլ կերակուր բանականին.
	Լոյսդ յայտնեալ լուսով աստղին,
	Մոգքըն նովաւ երկիրպագին:
	Դասք հրեշտակաց իջեալ յայրին,
	Սուրբ ծընընդեան Քո սպասէին.
ՂՈՒ. Բ. 8	Հովուացն ազդեալ աւետէին,
	Փառք ի բարձունս վերերգէին:
	Ըստ նախահարցըն սուրբ Ուխտին
	Թըլփատեցար յութօրէին,
ՂՈՒ. Բ. 21	Զի զանթըլփատ սիրտ մարդկային
	Թըլփատեսցես Հոգւով Քոյին:
	Օրինադիրդ ըստ Օրինին
ՂՈՒ. Բ. 25	Մըտեր յընծայ ի տաճարին
ՀԱՄՏ. ԴԱՆԻ. Է. 9	Եւ զՀին աւուրցըդ ծերունին
	Գըգուէր տըղայ ի սուրբ գըրկին:

Այսքան բժիշկներով անձի
 Չըբուժվեց ախտը մարդկային:
 Բընությունն էր ուժը նըրանց,
 Ինչպես բըժըշկեին մարդկանց:
 Քանզի հըզոր ցավը վերքի
 Հըզոր դեղի կարիք ունի,
 Տըկար մարմին ունեցողին
 Ապաքինելու բավ չէին:
 Մինչև կենաց դեղդ երկնային
 Խըմեց բնությունը մեր ախտային,
 Հեղեց իր մաղձը ցավագին,
 Ըստացավ կյանքըն առաջին:
 Նախ Քո հոգուց աստվածային
 Մաքըրվեց սուրբ Կույսի հոգին,
 Հորըդ վերին կամքը հըզոր
 Դարձավ նըրան հովանավոր,
 Ապա Որդիդ Հոր միածին
 Իջավ նըրա մոտ կամովին,
 Ճըշմարտապես առավ մարմին,
 Աստված և մարդ մի միասին,
 Մարմընով ծընվեցիր մարդկային,
 Որ Հորից էիր անմարմին,
 Քանդիր երկունքը նախաստեղծի
 Խանձարուրում տերևալի,
 Բանըդ մըսրում անբանների
 Կերակուր էիր ասունների,
 Լույսըդ հայտնվեց լույսով աստղի
 Մոգերը նրան խոնարհվեցին,
 Հըրեշտակներն՝ իջած այրին,
 Սուրբ Ծընընդյան ծառայելով՝
 Ավետեցին հովիվներին՝
 «Փառք ի բարձունս» վերերգելով,
 Նախահայրերի սուրբ ուխտով
 Թըլփատվեցիր օրն ութերորդ,
 Որ թըլփատես Դու Քո Հոգով
 Անթըլփատ սիրտը մարդկային:
 Օրենսդիրըդ, ըստ Օրենքի,
 Ընծայվեցիր սուրբ տաճարին,
 Եվ Հինավուրց այն ծերունին
 Գըզվեց տըղային սուրբ գըրկի:

ՄՍՏ. Բ, 16-17,
13-15

ՂՈՒ. Գ, 21-23
ՄՍՏ. Գ, 13-17

ՂՈՒ. Դ

Զիս, որ մեղօք ծընեալ յախտին,
Ծընար դարձեալ յաւազանին.
Զոր մերկացայ խաբամբ չարին,
Շաղախեցայ յախտըս կըրկին,
Սըրբեմ ծնընդեամբ Քո վերըստին
Ընծայելով Հօր ի յերկին,
Աղաչանօք Աստուածածնին
Եւ ծերունւոյն Սիմեօնին:
Որ յերկիւղէ տղայասպանին՝
Մանկակոտոր Հերովդէին
Գնացեր յաշխարհ Եգիպտոսին
Ըստ բարբառոյ մարգարէին:
Զիս երկիւղէ գիշերային
Մարդախողխող բըռնաւորին
Ամրացուցես աշով Քոյին
Ի գաղտնաձիգ նետից նորին:
Որ շըրջեցար խոնարհ յերկրի,
Զգեցեալ ըզկերպըս մարդկային,
Զիս վերացն յերկրէ յերկին՝
Զանկեալս ի մեղս անդընդային:
Որ յետ լընլոյ երից տասին՝
Աճման մարմնոյ Քո հասակին,
ԶՔեզ մըկըրտեաց սուրբ ամլորդին,
Վըկայելով Հայր և Հոգին,
Ոչ թէ կարօտ մաքրագունին՝
Մեզ պարգևիչ մաքրող բանին,
Այլ զի ըզմեղս ադամային
Լուսացես ջըրով Յորդանանին.
Եւ զիմ լըա զյանցանս անձին,
Զտիղմըն մեղաց սևագունին,
Որպէս երբեմն յաւազանին,
Զոր հնացուցի մեղօք կըրկին:
Ընդ յաղթութեան Քո երրակին
Ի փորձութեան յանապատին,
Տո՛ւր ինձ յաղթել չար իշխանին՝
Աներևոյթ բըռնաւորին,
Գընալ բանիւ Քում հրամանին
Յիժին վերայ և ի քարբին,
Կոխել ոտիւք գարշապարին
Զգլուխ կամակոր վիշապ օձին:

Իսկ ես, ծընված ախտի մեղքով,
Վերածընված ավազանով,
Բայց մերկացա խաբամբ չարի,
Նորից ընկա մեջն ախտերի:
Սըրբիր ծնունդով Քո վերստին,
Ընծայելով Հորըդ՝ երկինք,
Աղաչանքով Աստվածածնի
Եվ ծերունի Սիմեոնի:
Որ երկյուղից մանկասպանի,
Մանկակոտոր Հերովդեսի,
Գնացիր երկիրը Եգիպտոսի,
Ըստ խոսքերի մարգարեի:
Մարդախողխող բռնակալի
Երկյուղից ինձ գիշերային
Զըրահիր Քո աջով ահա,
Գաղտնաձիգ նետերից նըրա:
Որ շըրջեցիր երկրով խոնարհ,
Որ մարդկային կերպը առար,
Ինձ բարձրացրու երկրից երկինք,
Ընկած մեղքում անդնդային:
Եվ Դու, որ երբ դարձար հասուն
Եվ ըստ տարիքի՝ երեսուն,
Քեզ մըկըրտեց սուրբ ամլորդին,
Վկայեցին Հայրն ու Հոգին:
Դու կարոտ չես մաքրագույնի,
Այլ պարգևող մաքրող խոսքի,
Զի մեղքերը ադամային
Կմաքես ջրով Հորդանանի:
Հանցանքներն էլ լըվա անձիս,
Մաքրիր մեղքերի սև տիղմից,
Ինչպես այնժամ ավազանով,
Որ հընացրի նոր մեղքերով:
Հաղթությունով Քո եռակի
Փորձության մեջ անապատի
Տճր ինձ հաղթել չար իշխանին,
Աներևույթ բըռնավորին,
Գընալ խոսքով Քո հրամանի
Իժի վըրայով և քարբի,
Գարշապարով կոխել ոտքի
Կամակոր զանգը վիշապի:

ՂՈՒ. Զ, 12-16 ՉԻՆՎՈՒՄ ՉՈՒՊԱՆ ԻԲՐԵՎ ՄԵՐԺԱԾ	Ընդ ընտրելոց մետասանին, Զոր ընտրեցեր գերաշխարհին, Հրաւիրեցեր զիս ընդ նոսին Լինիլ կըցորդ լաւագունին: Բայց ես հոգով հեղզըս վերջին Խոտան գըտայ ըստ Յուդային. Թէպէտ և ոչ տիրականին, Այլ մատն եղէ անձամբ անձին: Ի քէն մաղթեմ հայմամբ նոցին, Դարձեալ ուղղել լուսոյ շաւղին. Առնել գործով զքարոզ բանին, Զոր հրամանաւ Քո ուսուցին: Ի հարսանիսըն մարդկային,
ՅՈՎՆ. Բ, 1-11	Յոր կոչեցար ընդ մօր Քոյին, Փոխարկեցեր զջուրն ի գինին, Ի Քէն հրաշից նախ առաջին.
ՀՄՄՏ. ՅՈՎՆ. Զ, 54	Եւ զիմ լուծեալ յախտից բնութիւն Փոխարկեցես ի կարծրութիւն. Յամաքեցն զջուր հեղեղին, Արբո զբաժակ պատուիրանին:
ՅՈՎՆ. Դ, 46... ՂՈՒ. Է, 1-10	Դարձեալ զորդւոյ թագազարմին Բանիւ լուծեր զախտըս ջերմին: Եւ ես մաղթեմ ընդ Հօր նորին Զառողջութիւն հիւանդս անձին:
ՄՍՏ. Ե	Ելեալ նըստար բարձր ի լերին, Որպէս երբեմն իջեր ի Սին, Յամպոյն խօսեալ զՕրէնսըն Հին, Զնորս ուսուցեր, բանդ ի մարմին. Բացեր զբերանդ աստուածային, Երանեցեր զորս ի բարին
ՄՍՏ. Ե, 12	Ընդ տախտակաց տասըն բանին, Նորոյս ետուր զինն երանին: Սանդուղք եղիր յերկրէ յերկին Ինըն մատամբք աստիճանին. Հաներ նովաւ զազգ երկրածին, Դասակցեցեր իննեակ դասին. Բայց ես այնքան եղէ ստորին Մեղաց ախտիւք ծանրագունին, Մինչ զի և ոչ ելի ընդ նմին

Տասնմեկի հետ ընտրված՝
Գերաշխարհի համար ջոկված,
Հըրավիրի նրանց հետ ինձ,
Որ մասնակցեմ լավագույնին:
Բայց ես՝ հոգով ծուլլըս վերջին,
Խոտանվեցի ըստ Հուդայի,
Թեպետ իմ անձը մատնեցի
եվ ոչ թե անձը տերունի:
Քեզ եմ խընդրում հայցմամբ նըրանց՝
Լուսի շավիղ տանել դարձյալ,
Գործ դարձնել քարոզը խոսքի,
Ըստ Քո ասած հըրամանի:
Հարսանիքներում մարդկային,
Ուր կանչվեցիր Դու մորըդ հետ,
Փոխարկեցիր ջուրը գինու,
Որ հըրաշքն էր Քո առաջին,
Արդ ախտահար իմ բընություն
Դարձըրու, Տեր, Դու կարծրություն,
Ֆամաքեցրու ջուրն հեղեղի,
Տուր բաժակը պատվիրանի:
Խոսքով բուժիր ախտը ջերմի
Դարձյալ որդու թագազարմի:
Նրա Հոր հետ խընդրում եմ ես
Առողջություն հիվանդ անձիս:
Բարձըր լեռը ելար-նըստար,
Ինչպես այնժամ Սինա իջար,
Ամպից ասիր Օրենքը Հին,
Ապա Նորը սովորեցրիր,
Իբրև Բանը՝ հագած մարմին
Բացիր բերանդ աստվածային,
Երանության արժանացրիր
Նըրանց, ով ապրում է բարի,
Տախտակների հետ տասը բանի
Տըվիր նոր ինը երանին:
Սանդուխք դրիր երկինք երկրից
Կազմած ինը աստիճանից,
Այդ սանդուղքով ազգն երկրածին
Դասակցեցիր իննյակ դասին:
Բայց ես այնքան ստոր եմ՝ ցած,
Մեղքի բեռան տակ կըռացած,
Որ առաջին աստիճանին

Յաստիճանաց իններորդին:
 Չաղջատացայ հոգևով չարին
 Յարքայութեանըն պատճառին,
 Այլ միշտ փարթամ կամ ի նոսին,
 Աղջատ բարեաց ամենսին:
 Ոչ սուգ էառ հոգիս ներքին,
 Լալ արտասուօք զմահ իւր ինքնին,
 Զի սփոփէի յայնմ աշխարհին
 Ծիծաղական անուամբ բանին.
 Այլ ի սնոտիս յայս ծիծաղիմ,
 Եւ խրախճանամ ի վնասս անձին,
 Որում և վայն փոխանակին
 Եւ ատամանց կափմամբ լալին:
 Ոչ հեզ զբանիւ առ համազգին
 Խօսակցեցայ ըստ հրամանին,
 Զի ընդ պահող սուրբ Օրինին
 Ժառանգէի զերկիր վերին:
 Ոչ քաղցեցայ արդար հացին
 Եւ ոչ ծարաւ է յիս բանին,
 Զի յագէի սիրով Քոյին
 Ի յըմպելոյդ աստուածային:
 Չողորմեցայ ես աղքատին
 Իմում յուսոյդ կերպարանին,
 Զի յօր մեծի դատաստանին
 Ողորմէիր թըշուառս անձին:
 Ոչ սըրբեցի յաղտոյ չարին
 Զիմ անմաքուր սիրտս և հոգին,
 Զի տեսութեանդ աստուածային
 Արժանացայց մինչ ի մարմին:
 Խաղաղարար հակառակին
 Չեղէ առ իս Լ'ոչ յօտարին,
 Որով Որդի Հօրըդ վերին
 Լինիլ ըստ Քեզ գործով Քոյին:
 Հալածեցայ, բայց տըժգոհիմ
 Ի գործակցաց չարախոհին,
 Զոր թէ կամաւ ժառանգէին
 Զարքայութիւն Քո երկնային:
 Բանիւք բազմօք նախատեցին,
 Բամբասանօք զկըծեցուցին.

տւս. Ը, 12

սեւ տւս. Ե, 4

ՅՈՎԲ. ԺԹ, 26

Իննաստիճան այն սանդուղքի
Նույնիսկ մոտիկ չըզնացի,
Չազատվեցի հոգով չարից,
Արքայության դեմ հանցանքից,
Այլ միշտ հարուստ եմ նրանով,
Քո բարիքից՝ աղքատ ու սով:
Սուգը չառավ հոգիս ներքին,
Ես չողբացի մահն իր ինքնին,
Որ ըսփոփվեր հոգիս անդին
Ցընծուն, խընդուն անվամբ Բանի.
Բայց փուչս այստեղ եմ ուրախանում,
Ի վնաս անձիս զըվարճանում,
Որի տեղ վայն ինձ կըտանի,
Ողբն ու կըրճտումն ատամների:
Չըխոսեցի ըստ պատվերի
Հեզ խոսքով հետն ինձպեսների,
Որ իբր պահող սուրբ Օրենքի
Վերին երկիրը ժառանգեի:
Արդար հացի քաղց չըզգացի,
Ոչ էլ ծարավ եղա Բանի,
Որ Քո սիրով հագենայի,
Աստվածայինը՞ ըմպեի:
Չըխըղճացի ես աղքատին,
Իմ հույսերի նըմանակին,
Որ օրը Մեծ դատաստանի
Խըղճայիր իմ թըշվառ անձին:
Չըսըրբեցի աղտից չարի
Իմ անմաքուր սիրտն հւ հոգին,
Որ տեսությանդ աստվածային
Արժան լինեմ, հագած մարմին:
Ոչ ինձ համար, ոչ օտարի
Չեղա դերում հաշտարարի,
Որով, Որդի Հորըդ վերին,
Լինեմ գործով Քո՝ Քո կողքին:
Մըմըռալով հալածվեցի
Ընկերներից չարագործի,
Որ կամովին ժառանգեի
Արքայությունը՞ երկնային:
Շատ խոսքերով նախատեցին,
Մեղադրանքով ինձ խոցեցին,

ՄՍ. Ե, 13

Բայց ոչ ընդ Քո կամ սուտ նոքին,
Այլ արդարև ճշմարտեին:
Արդ պաղատիմ, Տէր, լալագին,
Գիրկս արկանեմ Տեառնըդ ոտին.
Թեթևացո զիս ի մարմին
Ի ծանրութեանց մեղաց բեռին,
Զի հնար լիցի հոգւոյս ստորին
Ելից առ Քեզ մըտօք յերկին
Ընդ սանդղաձև բանիւ Քոյին
Գոնէ մասամբք աստիճանին:
Անապական աղդ երկնային,
Զոր յաղեցեր զազգ մարդկային,
Աղ անուանեալ հայցմամբ գընդին,
Զիս յաղեսցես բանիւ Քոյին.
Զանհամութիւնս իմոյ անձին
Համեմեսցես շնորհիւ բանին,
Զի մի անհամ գըտեալ աղին
Արտաքս անկեալ կոխան լիցիմ:

ՄՍ. Ե, 14

Լոյս ի լուսոյ Հօր միածին,
Լուսով լըցեր զազգ երկրածին.
Եւ զաշակերտս լուսոյ բանիդ
Լոյս ասացեր անուամբ Քոյին.
Լուսաւորեա լուսով նոցին
Զանգիտութեան խաւարս անձին,

ՄՍ. Ե, 15

Թէպէտ և ոչ յաշտանակին,
Այլ իբր ըզճրագ ընդ գրուանին:
Ի Նոր Օրէնըս հրամանին
Հրամայեցեր զայս ըստ կարգին,
Թէ ոք լուծցէ ինքեամբ ըզմին,
Փոքըր կոչի առ արքունին.
Զհնչ արասցէ առ այսպիսին
Հոգիս լուծող զամենեսին,
Որ և միոյ թէ քըննիցին,
Չէ կատարող պատուիրանին:

ՄՍ. Ե, 17

Պահանջեցեր ըզկնի նորին
Առաւելուլ յարդար մասին,
Քան ըզդպրաց Հին Օրինին,
Զաշակերտացըն Մովսիսին.
Ես ոչ միայն չեմ յաւելին,

Բայց Քո առաջ չէին սըտում,
Այլ ճըշմարիտն էին ասում:
Արդ խընդրում եմ, Տեր, լալագին,
Թող ես կախվեմ Քո ոտքերից,
Ծանրությունից մեղքի բեռի
Թեթևացրու ինձ, որպես մարդ,
Որ իմ ստորին հոգին ելնի
Թեկուզ մըտքով Քեզ մոտ՝ երկինք,
Սանդուղքաձև Քո խոսքերով
Գոնե մեն մի աստիճանով:
Անապական աղդ երկնային,
Որ համ տըվիր մարդկանց ազգին,
Աղ համարված մարդկանց խընդրով,
Ինձ էլ դարձնես աղ Քո խոսքով,
Անհամությունը իմ անձի
Համեմես Դու ձիրքով Բանի,
Որպեսզի ես, դարձած անհամ,
Ոտքի տակ ընկած չըմընամ:
Լույսըդ լույսի Հոր միածին,
Լույսով լըցրիր ազգն երկրածին.
Աշակերտներին խոսքիդ լույսի
Քո անունով լույս կոչեցիր,
Լուսավորիր լույսով նըրանց
Անձիս խավարն անգիտության,
Թեկուզ չլինեմ ես աշտանակ,
Այլ իբր ճրագ գըրվանի տակ:
Նոր Օրենքով պատվիրանի
Հրամայեցիր այս ըստ կարգի,
Թե մեկը մի կետն է խախտում,
Փոքր է կոչվում արքունիքում:
Իսկ ինչ անես դու այսպեսին,
Ամեն ինչ է խախտում հոգին,
Որին եթե մեկը քըննի՝
Կատարող չի պատվիրանի:
Ապա սկսեցիր պահանջել
Արդար մասը ավելացնել,
Քան Հին Ուխտի դըպիրներին՝
Աշակերտներին Մովսեսի:
Ես ոչ միայն չեմ հավելել,

ԱՄՏ. Ե, 27-30

ՀԱՄՏ. Ա ԿՈՐ. Զ
9-10

Այլ և նուազ համեմատին.
Նա և թափուր ամենևին.
Ի Հին և Նոր Կտակարանին:
Զի պարտաւոր հրոյ գեհեւին
Զիս արարի ցասմամբ սըրտին.
Եւ բարկացայ ես ընկերին,
Տարապարտուց շարժեալ յախտին:
Աչօք նայիմ ցանկականին
Ի գեղ դիմաց իգականին.
Ի սիրտս առնում զխոցուած նետին,
Ոչ գիտելով առ իս ձգողին:
Ոչ շատանամ միով խոցին
Ի միանգամ հայեցուածին,
Այլ յօժարիմ բազմագունին,
Մինչ կարեւեր խոցեալ լինիմ,
Եւ այն զի ձայն Քո հրամանին
Միշտ ի յականջս հնչեալ լըսին,
Թէ որ հայի տըռփմամբ ի կին,
Շնացաւ անդէն յիրում սըրտին:
Ում դատաստանն յայտնի լինին
Յառաքելոյ Քո սուրբ տառին,
Թէ շունք և գողք, որք ի կարգին,
Յարքայութեան Քում արտաքսին:
Բայց զինչ ասեմ ըզսոսկալին,
Ըզսարսափումն իմոմս անձին.
Զի թէ աստուտ այնքան տուժին,
Զինչ յանբնականն, որք ախտասցին.
Որով հարեալըս յերկոսին
Ի մահաբեր նետից չարին,
Աղաղակեմ ըստ ախտակրին,
Դիր դեղ հոգւոյս խոցոյս խորին.
Յաչաց մըտաց զախտից փոշին
Մաքրեա՛ զներքին և զարտաքին,
Որով յըստակ տեսից յերկին
Ըզկերպարանս նախատըպին:
Եւ ընդ լըրոյ տըգեղ բանին,
Յունակութիւն լըսարանին
Տըպաւորեա զբան սուրբ տառին
Աստուածախօս Կտակարանին:

Այլև Հինն էլ չեմ պահպանել,
Չեմ հետևում տարին բոլոր
Կտակարանին թե Հին, թե Նոր:
Հուր գեհենին ինձ մատնեցի
Պարտադրաբար ցասմամբ սըրտի,
Ընկերոջ վրա ես բարկացա
Իզուր տեղը, ախտից դըրդված,
Աչքով նայում եմ ցանկալի
Դեմքի գեղին ես կանացի:
Սիրտս պահում խոցող նետին,
Չիմանալով արձակողին:
Չեմ գոհանում ես մի խոցով,
Մի անգամվա հայեցվածով,
Այլ նետում եմ ինձ վար ու վեր,
Թեև խոցված եմ կարևեր,
Մինչդեռ ձայնն է Քո հրամանի
Ականջիս մեջ հընչում ուժգին,
Թե կընոջն ես տարփմամբ նայում,
Շընանում ես դու քո սրտում:
Ով տեղյակ է դատաստանից,
Քո սուրբ տառի առաքյալից,
Թե շուն, թե գող ըստ իր կարգի
Արքայութունից կարտաքսվի:
Էլ ինչ ասեմ ահաբեկված,
Սարսափի մեջ անձըս ընկած,
Ջի շատերն են սրանից տուժում
Անբընական այդ ախտերում,
Նետահարված երկու կողմից,
Չարի մահաբեր նետերից,
Գոռում եմ ես հիվանդագին,
Դեղ դիր հոգուս խոցին ներքին.
Մըտքիս աչքից մաքրիր փոշին
Ախտի ներքին և արտաքին,
Որ երկինքը տեսնեմ հըստակ,
Նախատիպիդ սուրբ կերպարանք:
Ունակության մեջ ականջի,
Որ լըսում է տըգեղ բանի,
Տըպիր բանը Քո սուրբ տառի,
Աստվածախոս Կըտակարանի,

Դիր պահապան շրթանց լեզուին,
 Ոչ բարբառիլ ի վնաս անձին.
 Այլ միշտ խօսիլ կամաւ Քոյին
 Ի շնորհ և ի շահըս լըսողին:
 Ձեռաց շնորհեա գործարանին
 Ըզմնացական գործել բարին,
 Ոչ հեշտական վարիլ սովին
 Ի վնասակար շօշափելին.
 Սպանող անձին ըզսիրելին
 Ի յոչ տուժել բոլորովին
 Եւ թէ զըթեալ գայթակղեսցին:
 Տհւր հետևիլ ըստ հրամանին:
 Զոտըն հոգւոյս ուղղեա յերկին,
 Եւ հաստատեա յանշարժ վիմին,
 Զի մի գլորմամբ բոլորս անձին
 Անկման ի հուր առիթ լիցին:
 Բերան բացեալ անդուռն ունիմ,
 Որով բարիս ոչ բարբառիմ,
 Այլ վայրապար դատարկ բանին
 Հետևեցայ վնասակարին:
 Եւ երանի թէ դատարկին,
 Թէ և համար տալ պահանջին,
 Եւ ոչ թունօք մահաբերին
 Սուտ և նենգող չարախոսին:
 Օր ըստ օրէ Քում հրամանին
 Լըսեմ ունկամբ մարմնականին,
 Թէ մի երդնուլ ամենևին
 Ոչ յերկրայինս և ոչ յերկին.
 Եւ իմ խըցեալ զականջս անձին
 Ոչ տամ տեղի և մուտ բանին,
 Այլ հակառակ բերիմ նըմին
 Եւ անհնազանդ պատուիրանին,
 Զի ոչ միայն յաթոռ մեծին
 Եւ ի ստորև պատուանդանին,
 Այլ որ նըստիսդ յերկնից երկին,
 Եւ էակից Հայր և Հոգին,
 Զոր ոչ յոգւոյս բըղխէ Հոգին,
 Այլ է ազդումըն բանսարկուին.
 Զ' ի Քէն այոն է ճըշմարտին,

ՄՍ. Ե, 34

Դիր պահապան շըրթին լեզվի,
 Որ չըխոսի ի վնաս անձի,
 Այլ միշտ խոսի ըստ Քո կամքի,
 Ի շնորհ և ի շահ լըսողի:
 Լըսողությանն իմ շընորհիր
 Մընացածում գործել բարի,
 Եվ ոչ լըսել ձայնը ունայն,
 Վընասակար և նյութական,
 Որ անձն է սպանում սիրելի,
 Թող չըտուժեմ ամենևին:
 Թե գայթելով գայթակըղվեմ,
 Պատվիրանիդ թող հետևեմ:
 Հոգուս ոտքը ուղղիր երկինք
 Եվ հաստատիր անշարժ վեմին,
 Որ հըրի մեջ ամբողջ անձի
 Անկման պատճառը չըլինի:
 Անդուռ բերանըս եմ բացում,
 Որով բարին չեմ բարբառում,
 Այլ վայրենի, դատարկ խոսում,
 Հանցավորին եմ հետևում,
 Որից Աստված տա՝ ազատվեմ.
 Թեկուզ կանգնեմ պատասխանի,
 Բայց ոչ թույնով մահաբերի,
 Սուտ և նենգող չարախոսի,
 Այլ հրամանին Քո օրական
 Լըսեմ ականջով մարմնական,
 Թե մի երդվիր ամենևին
 Ոչ երկրով, ոչ էլ երկընքով,
 Իսկ ես խըցած ունկն իմ անձի
 Տեղ չեմ թողնում Աստծո խոսքի,
 Այլ՝ հակառակն անում նըրա,
 Չեմ լըսում ոչ մի պատվիրան,
 Եվ ոչ միայն մեծի գահին,
 Այլև ստորին պատվանդանին,
 Ուր նըստած ես երկնից երկինք,
 Քեզ էակից Հայրն ու Հոգին,
 Որ հոգուցս չի բըխում Հոգին,
 Այլ՝ ազդումը բանսարկուի,
 Քեզնից է այոն ճըշմարիտ,

ՏԵՄ ՅՈՎԷ Ը, 44

ԾՆԼ. Գ, 4-5

ՅՈՎԷ Ը, 44

ՄԱՏ. Ե, 39-40

Եւ ոչն ի բաց հրաժարելին,
Իսկ աւելին քան զայն՝ չարին
Ի սկըգբանէ մարդասպանին.
Ջորս ի յիւրոց անտի խօսին,
Որպէս յառաջ ի ձեռն օձին:
Բայց որ ետուր գործի բանին
Ջմիտս և զլեզու՝ զշունչ օղային,
Բայց ըզբերանս Հոգւով Քոյին,
Լից օրինութեամբ հոգևորին,
Խօսիլ յՕրէնս աստուածային,
ՅԱւետարանս Նորոյ Կտակին,
Յիմաստութիւն տեսականին
Եւ ի խորհուրդ գործնականին:
Հեռի արա զբան հերձուածին,
Ջհայհոյութիւնն աններելին,
Եւ ըզտըրտունջ ընդ բամբասին,
Ըզքըրթմընջիւնն ընդ շոգմոգին.
Ջխաբէութիւնն առ ընկերին
Եւ զմատնութիւն նենգաւորին.
Ջերդմանըն բան երդմնահարին,
Ըզսուտ խօիլն, որ է չարին:
Ջգըրգըռութիւն կըռուասիրին
Իբրև ըզշունս առ կերակրին.
Որք անհեթեթըս բարբառին,
Ի թըշնամանս միմեանց բերին.
Ըզծաղրածու խեղկատակին
Եւ զախտաշարժ բանըս նոցին.
Ջանլուռ բերան բազմախօսին
Եւ ըզսնապարծ բան յիմարին.
Ըզշատախօս դիւականին,
Եւ զղօղանջիւն դիմագրաւին.
Եւ զհամօրէն հոյլըս բանին,
Որ յետ խօսիցըն զըղջասցին:
Եւ տհր ինձ բան, Բանդ ի մարմին,
Ի՛միշտ խօսիլ բանիւ Քոյին,
Ի շնորհըս տալ իմ լըսողին
Ի շինութիւն քակտեալ անձին:
Ոչ մատուցի հարկանողին
Յետ աջ ծնօտին զկողմն ահեկին.

Ինչպես և ոչը մերժելի,
Մինչ տարված եմ խոսքով չարի՝
Ի սկզբանե մարդասպանի,
Որ իրենն է միայն ասում,
Ինչպես առաջ օձն էր խոսում:
Բայց տըվեցիր շընորիք խոսքի,
Միտք և լեզու՝ շունչ օդային,
Բաց բերանըս Դու Քո Հոգով,
Լըցրու օրհնությամբ հոգևոր,
Ասել Օրենքն աստվածային,
Ավետարանով Նոր Ուխտի,
Իմաստությամբ տեսականի
Եվ խորհուրդով գործնականի:
Հեռացրու խոսքն հերձվածողի,
Հայհոյությունն աններելի,
Բամբասողի հետ տըրտընջալն
Ու դըժգոհի հետ ջըրթմընջալն,
Ընկերոջ դեմ խաբեությունն
Ու նենգավորի մատնություն,
Երդման խոսքը այն խախտողի,
Սուտ խոսքը, որ գործն է չարի,
Բորբոքումը կըռվասերի,
Հանց շներ մոտը կերակուրի,
Որ բարբառում են անհեթեթ,
Թըշնամանում են միմյանց հետ,
Ծաղրուծանակը խեղկատակի
Եվ ախտաբեր նըրա խոսքի,
Անլուռ բերանը բազմախոս,
Սնապարծ խոսքը հիմարի
Եվ շատախոս սատանայի
Եվ դողանջյունը հանդուգնի,
Եվ խոսքերը բազմապիսի,
Որից հետո զըղջան պիտի:
Տուր խոսքը Քո, Բան մարմնացած,
Որ միշտ խոսեմ բանով կենաց:
Շընորհներ տամ ինձ լըսողին,
Եվ շինություն քանդված անձին:
Չըմոտեցրի ապտակողին
Աջից հետո ձախ կողմն այտի,

ՄՍՏ. Ե, 41-44

Եւ ոչ գնացի ընդ վարողին
Տարապարհակ մըղոն կըրկին:
Ոչ սիրեցի ըզթըշնամին
Եւ ոչ ցուցի գութ ատողին.
Եւ ոչ ետու փոխ աղքատին,
Որոց փոխան տալ ոչ ունին:
Այլ ատեցի ըզսիրելին,
Չար հատուցի բարերարին:
Սիրեմ շրթամբ շարժմամբ լեզւին
Նըման գոլով նենգաւորին:

ՄՍՏ. Զ, 1-4

Չըզգուշացայ Քոյոյ բանին
Յողորմութիւն տալ աղքատին,
Այլ ծախեցի զնըւազ չընչին
Ընդ մարդկայնոցըս գովեստին.

ՄՍՏ. Զ

Զի ոչ միայն ահեակ ձեռին,
Որ են կողմանք հակառակին,
Այլ և փողոյ նըման ձայնին
Հըռչակեցի զոչ ինչ բարին:
Ըստ աղօթից պատուիրանին
Չմըտի մըտօք ի տուն սըրտին
Եւ ոչ յանկեան հրապարակին
Գոնէ ունիլ վարձ մարդկային.
Այլ հեղգացայ ես յերկոսին
Առ կերպարանն և ճըշմարտին.
Զի ծուլութիւնս յաղթեաց յուսին
Երկրաւորիս և երկնային:
Արդ ըզբնութեամբ Քո Հայր յերկին,
Զոր մեզ ետուր շնորհիւ Քոյին,
Տուր ինձ կարդալ բոլորովին
Ի սուրբ սըրտէ զանուն նորին:
Արջայութիւն տիրականին
Գայցե տիրել իմումս անձին.
Եւ յերկրաւորս առ իս լըցցին
Կամըք նորա որպէս յերկին:
Զհաց առօրեայ և զմիշտ էին՝
Զմարմնոյս դարմանն և ըզբարին,
Տացէ քառտ կարօտս անձին
Զիմանալին և զըզգալին:
Թողցէ զյանցանս իմում պարտին,

Չըգնացի վարողի հետ
 Որպես պարիակ երկու մըղոն,
 Չըսիրեցի իմ թըշնամուն,
 Չըգըթացի ատող մարդուն
 Եվ աղքատին փոխ չըտըվի,
 Որ փոխելու ոչինչ չունի,
 Այլ ատեցի ինձ սիրողին,
 Չար հատուցի բարերարին:
 Սիրում եմ ես տալ իմ լեզվին,
 Նըմանվելով նենգավորին:
 Ուշ չըդըրի ես Քո խոսքին՝
 Ողորմություն տալ աղքատին,
 Այլ ծախվեցի գընով չընչին
 Տարբեր մարդկանց գովեստներին,
 Եվ ոչ միայն ձեռքով ահյակ
 Կանգնեցի կողմը հակառակ,
 Այլև ձայնով, նըման փողի,
 Չեմ հըռչակել խոսքը բարի:
 Պատվիրանի աղոթքներով
 Սըրտի տուն չըմըտա մըտքով,
 Հրապարակի անկյունում
 Մարդկային վարձ էլ չեմ առնում,
 Այլ ծուլացա երկու դեպքում՝
 Ճըշմարտի մեջ, թե կեղծիքում:
 Զի ծուլությունը ինձ հաղթեց
 Երկրի, թե երկընքի հարցում:
 Արդ բընությամբ քո, Հայր վերին,
 Որ մեզ տըրվեց քո շընորհիվ,
 Տուր ինձ կարգալ ողջանըվեր
 Նըրա անունը սուրբ սըրտով,
 Արքայությունը տիրական
 Թող գա՝ տիրի և իմ անձին,
 Երկրավորիս հոգին լըցնի
 Կամքով նըրա, հանց երկընքում:
 Հացն առօրյա, աստվածային
 Մարմնիս դարմանն է և բարին,
 Թող հագեցնի կարոտս անձի՝
 Մըտավորի, զգալիի,
 Թողություն տա հանցանքներիս,

Որպէս և ես պարտապանին.
 Կամ մանաւանդ թէ զերկոսին
 Թողուլ տացէ, զի ինձ թողցին:
 Եւ մի տացէ թոյլ փորձողին
 Փորձել ըզծոյլս որպէս զարին,
 Այլ պահեսցէ ի սրոյ նորին,
 Ինքն մարտիցէ ընդ դէմ չարին:
 Ոչ ճընշեցի պահօք զմարմին,
 Գոնէ հանգոյն կեղծաւորին.
 Եւ ոչ Հոգւովն օծի զհոգիս
 Իւղով լուսոյ պատուիրանին:
 Ոչ լըացի զմիտըս խըղճին,
 Որ ի յերեսս օրինակին.
 Այլ պարպատմամբ որովայնին
 Լուծի զկանոն սուրբ պահողին:
 Աղօտ լուսոյ առօրէին
 Ճըրագ մարմնոյ աչքըս մըթին.
 Իսկ աչք հոգւոյս բանականին,
 Միտքըս նըսեմ խաւարային:
 Արդ եթէ զլոյս պատկեր Քոյին
 Մեղօք փոխեմ գիշերային:
 Խաւարն իրքան յիս զօրասցին
 Անկեալն յերկնից Արուսեկին:
 Այլ աղաչեմ զլոյսդ երկնային
 Զփառաց ծագումնըդ հայրենին,
 Զպատրոյկ մըտաց հոգոյս ճրագին
 Դարձեալ վառեա լուսով Քոյին:
 Երկուց տերանց, որք ներհակին,
 Ծառայեի գործովք կըրկին.
 Կերպարանօք իսկականին
 Եւ ճըշմարտիւ խաբէբային:
 Ի սէր ժըխտող մամօնային
 Զիս կապեցի կամաւ յախտին,
 Եւ զՔոյդ լուծի առողջային
 Ըզկապ սիրոյ պատուիրանին:
 Պատուիրեցեր չհոգալ զվաղուին
 Ըզկերակուր և զըմպելին,
 Զի պատրաստեալ ի Քէն լինին,
 Ըստ ագռաւուցն որ կերակրին:

ԱՐՈՒՍԵԱԿ — ԵԱ.
 ԱՎԿՈՒԷ ԱՍԵԿ
 ՍԱՏԱՆԱ, ԼՅՈՒԹԻ-
 ՅԵՐ

ՄԱՏ. Զ, 24

ՄԱՏ. Զ, 24

Որպես ես այն պարտապանին.
Կամ մանավանդ երկուսն էլ թող
Ներվեն, որ ես առնեմ ներում,
Եվ փորձողին թույլ չըտըրվի՝
Փորձել ծուլիս, իբրև քաջի,
Այլ թող պահի նըրա սըրից
Եվ մարտընչի ընդդեմ չարի:
Պահքով մարմինըս չեմ ճընշել
Գոնե հանգույն կեղծավորի,
Հոգով հոգին իմ չեմ օծել
Յուզով լույսի պատվիրանի,
Չըլըվացի միտքըս խըղճի,
Օրինակով երեսների,
Այլ որովայնըս լըցրեցի,
Պահքի կանոնը քանդեցի:
Ամենօրյա աղոտ լույսից
Մարմնի ճըրագ աչքս է մըթնել,
Իսկ հոգուս աչքը բանականի
Միտքս է նըսեմ, խավարային:
Արդ եթե լույս պատկերը Քո
Փոխում եմ գիշերվա մեղքով,
Խավարն ինչքան կըզորանա
Երկնից ընկած Արուսյակից:
Արդ խընդրում եմ լույսդ երկնային,
Փառքի ծագումըդ հայրական,
Մըտքի պատրույզն հոգուս ճրագի
Դարձյալ լույսով Քո թող վառվի:
Երկու տիրոջ համար ներհակ
Ծառայեցի երկու տեսակ,
Մեկ իսկական կերպարանքով,
Մեկ էլ խաբեբայի տեսքով,
Հանուն ժըխտող մամոնայի
Կապվեցի իմ կամքով ախտի,
Կապն էլ սիրո պատվիրանի,
Որ հիմնել ես, ես քանդեցի:
Պատվիրեցիր չհոգալ վաղվա
Ըմպելիքն ու կերակուրը,
Որ դու ինքըդ ես պատրաստում,
Այդպես հավքերն են կերակրվում:

տւս. է, 3-5
ՂՈՒ. Զ, 41-42

տւս. է, 6

տւս. ԽԵ, 6

տւս. է, 13-14

Չհաւատացի խոստման բանին
Եւ ոչ տեսլեամբն շուշանին,
Այլ ծիրեցայ հոգօք նոցին
Եւ մաշեցի զկեանս ընդ նոսին:
Ամաց յառաջ ժամանակաւ
Ամբարեցի զնիւթ երկրային,
Որպէս անմահ մահկանացուն
Եւ անվախճան առօրէին.
Եւ չխընդրեցի զարքայութիւն
Ըստ հայրօրէն բարւոյ խրատին,
Զի և տըւեալըք լինէին
Ինձ հարկաւորքն և աւելին:
Մեղօք խաւար տեսարանին
Ոչ նըկատեմ յիս գերանին.
Սրատես լինիմ յայլում շիւղին,
Նըման գոլով կեղծաւորին:
Ըզսըրբութիւն աւազանին
Եւ զմարգարիտ Քոյոյ շնորհին,
Շանց և խոզից նըմանողին
Կամաւ ետու պըղծասիրին:
Բայց արդ խընդրեմ զոր ոչ ունիմ,
Տճւր ինձ, իմ յոյս, ըզխընդրելին.
Հայցեմ ի Քէն, զոր կորուսի,
Արձ գտանել լուսով ճրագին:
Բաղխեմ ըզդուռնըդ երկնային
Նախ քան զփակելն ընդ դէմ հընգին.
Զողորմութեան դուռըդ բաց ինձ,
Մինչ դեռ փակեալ չէ ճըշմարտին:
Ընդ պողոտայն չոքայ ստորին,
Լայն և արձակ ճանապարհին,
Ի կորըստեան յօթեանին՝
Յորում բազումք հետևեցին,
Ուղղե՛ն զոտս իմ յանձուկ շաւղին,
Թեթև արա զմեղաց բեռին,
Զի կարացից ընդ սակաւին
Թեթև թըռչիլ ամպով յերկին:
Մոյծ զիս ընդ Քեզ Դուռնըդ վերին,
Ածցես առ Հայր Քո երկնային
Ճանապարհաւ նեղ և նըրբին

Չհավատացի խոստման բանի,
Ոչ էլ տեսիլքին շուշանի,
Նըրանց հոգսով ես հյուծվեցի,
Նըրանց հետ կյանքըս մաշեցի,
Ամբողջ կյանքիս տարիներին
Երկրային նյութ ամբարեցի,
Իբր անմահ է մահկանացուն
Եվ առօրյան՝ հավերժական:
Արքայություն չըխընդրեցի
Ըստ հայրական՝ բարի խրատի,
Ջի տըրվածներն են լիուլի
Ինձ բավարար և ավելի:
Մեղքով խավարած աչքերով
Չեմ տեսնում գերանն իմ աչքի,
Կեղծավորի նըմանվելով՝
Շյուղն եմ տեսնում ես ուրիշի:
Սըրբությունը ավագանի,
Մարգարիտը Քո շընորհի
Շըների ու խոզերի պես
Ես տըվեցի պըղծասերին:
Բայց արդ խընդրում եմ՝ ինչ չունեմ,
Հույս իմ, տո՛ւր՝ ինչ ես Քեզ խընդրեմ,
Այն եմ հայցում, ինչ կորցըրի,
Գոնե գըտնեմ լույսով ճրագի,
Բախում եմ դուռըդ երկնային
Մինչև փակես ընդդեմ հինգի,
Ողորմության դուռը ինձ բաց,
Մինչ ճշմարիտը չի փակված:
Լայն և արձակ ճանապարհին
Պողոտան անցա ստորին,
Դեպ օթևանը կորըստյան,
Որին շատերն հետևեցին:
Ոտքըս ուղղիր շավիղը նեղ,
Թեթևացրու բեռը մեղքիս,
Որ քըչերի հետ կարենամ
Թեթև թըռչել ամպով երկինք:
Քեզ հետ տար ինձ դուռը վերին,
Տար դեպի Հայրը երկնային
Ճանապարհով նեղ ու նըրբին,

Մատ. Ե, 45

Ուղիղ վարուք աստուածային:
Այլ որ չարեաց ապաշնորհին
Եւ արդարոց, որք ի բարին,
Տաս հաւասար ցօղ անձրևին
Եւ ըզծագման լոյս արևին,
Ինձ՝ որ մեղօք մեռեալ չարին
Եւ ապաշնորհ առ Զո բարին՝
Յօղեա ըզցօղ շնորհաց Քոյին,
Եւ ըզծագումն իմանալին:
Ջեկեալս առ Զեզ ըստ հաւատին
Եւ ըզլըսող կենաց բանին
Շինել շնորհեան ըստ արժանին
Ի վերայ Զո անշարժ վիմին.

Մատ. Ը, 1-4

Մատ. Ա, 40-43

Զի ի շընչել հողմոյ չարին
Եւ ի յառնել գետոց փորձին,
Տանըս հիմունք մի շարժեսցին

Ըստ յիմարին, որ յաւազին:

Ասա և ինձ ըստ բորոտին

Եւ հաւատով մերձեցողին,

Կամիմ՝ սրբեանց բոլորովին

Եւ մաքրեցիք յաղտոյ չարին:

Զինուորեցայ կայսեր ստորին,

Որպէս և պետըն հարիւրին.

Բարբառեցայց ես ընդ նըմին

Զաղերսական բանըս նորին.

Չեմ արժանի թէ ընդ յարկաւ

Մըտցես ընդ յիմըս տաճարին.

Այլ հրամայեան, Բանըդ, բանիւ,

Զախտ իմ մաքրեա ընդ ծառային:

Տագնապեցայ ջերմամբ ախտին

Պոռնըկական զազրագունին,

Եւ յանկողինըս գարշելին

Մեղկեալ անկայ անկանգնելին:

Ընդ զոքանչի Սիմոն վիմին

Զիս յարուցես, աջ հըզօրին,

Զի պաշտեցից ես ընդ նըմին

Զկենդանատուդ իմոյ անձին:

Աղբիւր կենաց, ջուր խընդորեցեր

Սամարուհոյն ի ծարաւին

Եւ խոստացար ջուր կենդանին

ՄԱՏ. Ը, 14-15

ՄԱՏ. Ա, 29-31

ՅՈՎ Դ, 7-42

Ուղիղ վարքով աստվածային:
Դու, որ անշընորիք չարերին,
Բարիով լի արդարներին
Հավասար ցողն ես անձրևի
Բաշխում և լույսըն արևի,
Ինձ էլ՝ մեղքով մեռած չարի
Եվ ապերախտ դեպ Քո բարին,
Յողիր ցողը Քո շընորի
Եվ ծագումը բանականի:
Քեզ մոտ եկել եմ հավատով
Կենացըդ խոսքը լըսելով:
Ըստ իմ չափի թող կառուցեմ
Վեմի վըրա Քո անսասան,
Որ հողմերից չարի շընչի
Եվ գետերի բարձրանալուց
Տանըս հիմքերն անշարժ մընան,
Ոչ թե տան պես այն հիմարի,
Որ կանգնեցրեց ավազուտում:
Ասա ինձ էլ, հանց բորոտին
Եվ հավատով Քեզ դիպչողին,
Կուգեմ՝ սըրբվես ամբողջովին
Եվ մաքըրվես աղտից չարի:
Զինվոր եմ կայսեր ստորին,
Ինչպես և պետը հարյուրի,
Թող բարբառեմ նըրա հետ ես
Աղերսական խոսքեր նույնպես:
Արժանի չեմ, որ Դու, արդար,
Ինձպեսի հետ մըտնես տաճար.
Այլ հրամայիր, Բանըդ, խոսքով,
Ախտն իմ մաքրիր ծառայի հետ:
Տըկար եմ ես տենդով ախտի
Պոռնըկական հույժ զազրելի
Եվ անկողնուս մեջ գարշելի
Նըվաղ ընկա անկանգնելի:
Զոքանչի հետ Սիմոն Վեմի
Ինձ կանգնեցրու հըզոր աջով,
Որ նըրա հետ ես էլ պաշտեմ
Կյանք տըվողիդ և իմ անձի:
Աղբյուր կենաց, ջուր խընդրեցիր
Սամարուհուց պապակ ժամին,
Եվ անցավոր ջըրի տեղակ

	Փոխանակել յանցաւորին. Շնորհեաւ և ինձ, կենաց աղբիւր, Ըզիողնոր սուրբ ըմպելին, Գետահետեալ յորովայնէ Ջառատաբուղիս շնորհաց հոգին: Ընդ բազմամեայ լուծեալ անձին Պրոպատիկէ յաւազանին, Յորում և ես զոք ոչ ունիմ, Զի զիս արկցէ մինչ յուզեսցին, Ասա բառնալ իմոյ մահճին, Ա՛յս է մարմնոյս թանձրագունին, Ոչ մեղանչել դարձեալ կըրկին Յետ ողջութեանն ըստ հրամանին: Որ ի խռովիլ ալեաց ծովին Եւ յընկըղմել բարձեալ նաւին, Դու սաստեցեր և լռեցին, Ալիք ծովուն հանդարտեցին, Տուր և ինձ ձեռն ըստ Պետրոսին Վերաբերել յալեաց չարին, Զի մի մեղաց շարժեալ ալին Հեղձուցանէ զիս ի նըմին: Ընդ դիւատանջըս մոլեգին Ի գերեզմանսըն բնակողին Տանջիմ և ես յոյժ ցաւագին Ի խորհըրդոց, որ չերևին. Սաստեա և իմ չարադիւին, Որպէս և յայն ժամ առ նոսին, Եւ անդընդոց մատնեա խորին, Որպէս ըզխոզս երամակին: Որ զանդամօք լուծեալ մարմին Կարծրացուցեր Հոգւով բանին, Շնորհեաւ և ինձ լըսել ձայնին, Թէ մեղքք քո թողեալ լիցին: Իշխան մըտօք ընդ Յայրոսին Բուռըն հարից Տեառնըդ ոտին Վասըն դըստեր մեռեալս անձին Ի տուն մարմնոյս մահաբերին. Խոնարհեսցիս յիս ընդ նըմին, Դադարեցո՛ղ զձայն կականին. Կա՛լ ըզձեռաց բանականին,
ՅՈՒԼ Ե, 1-13	
ՄԱՏ. Ը, 23-27	
ՄԱՏ. Դ, 33-40	
ՄԱՏ. ԺԴ, 31	
ՄԱՏ. Ը, 28-34	
ՂՈՒ. Թ, 26-40	
ՄԱՏ. Թ, 1-8	
ՄԱՏ. Թ, 18-26	
ՄԱՏ. Ե, 22-43	
ՂՈՒ. Ը, 41-57	

Խոստացար ջուրը կենդանի.
Շնորհիւր և ինձ, կենաց աղբյուր,
Ըմպելիքը սուրբ, հոգևոր,
Ներսըս գետի պես ողողի
Առատաբուխ շնորհքի Հոգին:
Պրոբատիկե ավազանում
Անդամալուծի հետ բազմամյա
Մի մարդ չունեմ, որ ինձ գրցի
Ավազանը, երբ ջուրն հուզվի:
Ասա՝ մահիճը իմ վերցնեմ,
Այսինքն մարմինըս թանձրագույն,
Առողջացած ըստ հրամանի՝
Չըմեղանչեմ դարձյալ, կըրկին:
Երբ ծովն սկսեց ալեկոծվել,
Իսկ բարձած նավըն՝ ընկըղմվել,
Դու սաստեցիր, և լռեցին,
Ալիքները հանդարտվեցին,
Տուր ձեռքըդ ինձ, հանց Պետրոսին,
Մատնըված չար ալիքներին,
Որ ալիքն իմ մեղքից ծնված
Խորքն իր չըտանի ինձ հանկարծ:
Գերեզմանաբընակ, ահեղ
Դիվատանջների պես խելահեղ
Տանջվում եմ ես հույժ ցավագին
Չերևացող խորհուրդներից.
Սաստիւր իմ մեջ էլ չար դևին,
Հանց նըրանց մեջ մի ժամանակ,
Անդունդներին մատնիր խորին,
Ինչպես խոզերի երամակ,
Որ մարմինն այս անդամալուծ
Կարծրանա Քո հոգով հիմա:
Շնորհիւր ինձ էլ լըսել ձայնին,
Թե ներում կա քո մեղքերին:
Իշխան մըտքի, Հայրոսի հետ
Տիրոջըդ ոտքը թող գըրկեմ
Հանուն դըստեր մեռյալ անձիս,
Տանը մահաբեր մարմընիս.
Ինձ էլ հակվիր, ինչպես նըրան,
Որ դադարեն լաց ու կական,
Բըռնիր ձեռքը բանականի,

ՄԱՏ. Ե, 25-34

ՂՈՒ. Ը, 43-48

ՄԱՏ. ԺԱ, 5

ԵՍ. ԼԵ, 6

ՄԱՏ. Թ, 32-34

ՄԱՏ. Է, 32-37

ՄԱՏ. ԺԲ, 10-14

ՄԱՏ. Գ, 1...

ՂՈՒ. Զ, 6...

ՂՈՒ. Է, 11-17

ՂՈՒ. Է, 37-50

Դարձն այսրէն յիս ըզհոգին
Եւ ընդ միւսոյ ախտաւորին,
Ի քղանցըս Տեառնըդ հըպողին,
Մաքրեա՛ն զհոսումըն վըտակին
Յարեան մեղաց զազրագունին:
Յոյժ կաղացայ պատուիրանին
Եւ կուրացայ լուսով բանին,
Կանգնեա և զիս, Տէր, ընդ կաղին
Եւ լոյս ծագեա ինձ ըստ կուրին,
Զի վազեցից իբր եղջերին
Ըստ կանխասաց մարգարէին
Եւ զարուսեակդ առաւօտին
Տեսից ի փառըս հայրենին:
Ես համրացայ բարեաց բանին,
Որպէս բերանն այսահարին,
Նըմանելով խուլ և համրին
Եւ ի դիւաց խըցեալ խըլին.
Ընդարձակեա՛ն զկապըս լեզուին,
Բարբառեցո՛ն ինձ ըզբարին
Եւ խից զականջս ընդ դէմ օձին,
Զի մի լըւայց ըստ Եւային:
Որ գօսացեալ գործնականին
Եւ չորացեալ յախտէ ձեռին,
Չայն տիրական Քո հրամանին
Ի զգայութիւն փոխարկեցին,
Հընչեա՛ն յիմում մեռեալ մասին
Կենդանարար ձայնիւ Քոյին,
Զի կարկամեալս անհընարին
Ի գործ բարւոյ արձակեցին:
Այրի հոգիս լայ ընդ այրին,
Իբր ի Նային մեռեալ զորդին.
Գըթա՛ն և յիս, Տէր, ընդ նըմին,
Արժանացո կենաց ձայնին:
Եւ ընդ կընոջ մեղաւորին
Բուռն հարից կենացդ ոտին,
Տո՛ւր համբուրել ինձ ընդ նըմին
Որպէս և նա սիրով սըրտին,
Բըղխել աղբերս արտասուելին,
Լըսել ըզձայնդ աստուածային,
Հաւատըք քո զքեզ կենցուցին,

Նորից դարձրու և ինձ Հոգին,
Եվ ախտավորի հետ մյուս,
Որ փեշիդ հըպվեց լիահույս,
Մաքրիր հոսումը վըտակի
Արյան զազրագույն մեղքերի:
Պատվիրանում հույժ կաղ դարձա,
Բանիդ լույսից ես կուրացա,
Կանգնեցրու, Տեր, կաղի հետ ինձ,
Լույս շնորհիր, ինչպես կույրին,
Որ ես վազեմ հանց եղջերու,
Ըստ կանխասաց մարգարեի,
Եվ Արուսյակդ առավոտի
Տեսնեմ փառքի մեջ հայրենի:
Բարի խոսքից ես համրացա,
Ինչպես բերանն այսահարի,
Նըմանվելով խուլուհամրին
Եվ դևերից խլացածին:
Բացիր կապերըն իմ լեզվի,
Բարբառիր ինձ համար բարին,
Խըցիր ականջըս օձին ընդդեմ,
Որ Եվայի պես չըլըսեմ,
Որ գործնական կյանքից ընկա,
Ախտի ձեռքից որ չորացա:
Հրամանիդ ձայնը տիրական
Փոխարկվեց զուտ զգայության,
Եվ իմ մեռյալ մասի համար
Հընչեցրու ձայնըդ կենարար,
Ջի կարկամած ամողջապես
Բարի գործեր ինչպես գործես:
Հոգիս այրի այրիի պես
Որդու մահն է ողբում ասես,
Ինձ էլ գըթա նրա հետ, Տեր,
Թող լըսեմ ձայնըդ կենսաբեր,
Եվ մեղավոր կընոջ հետ ես
Թող գըրկեմ ոտքըդ նըրա պես,
Եվ համբուրեմ քըղանցքը Քո,
Ինչպես և նա, սիրող սըրտով,
Թող բըխի ակն արցունքների,
Լըսելով ձայնդ աստվածային.
Քեզ ապրեցրեց հավատը Քո,

ՄԱՏ. ԺԸ, 6-11

Գընա՛ յանքոյթ խաղաղութիւն:
Կաւով մարմնոյս լըպըրծողին
Գըթեաց ընկեց զիս թըշնամին
Անկմամբ իմով գայթակղեցին,
Որք փոքր ոգիք յիմաստս էին,
Որ ինձ պատժոց գերագունին
Քան զիմ յանցանս առիթ լինին,
Զպարանոցես ծանր արձանին
Անկմամբ ի ծովըն գեհեւին:
Այլ, որ հընարդ ես անհնարից,
Կանգնեա՛ւ և զիս այժմ ի յոտին,
Զի որք գթեալք վասն իմ կանգնին
Եւ որք կանգունքն են՝ գոհասցին:

ՄԱՏ. ԺԳ, 24...

Յագարակի թըշուառս անձին,
Յոր ցանեցեր սերմն ըզբարին,
Ի քուն լինիլ հիգոյս հոգին,
Յանեաց զորոմըն թըշնամին:
Որք նախ հընձոց ժամանակին
Քաղեալ յինէն ի բաց դիցին,
Զի մի զցորեանն առցես շնորհին,
Զորոմըն տաս հրոյ գեհենին:
Յոյժ կարծրացայ ըստ ապառաժին,
Եղէ նըման ճանապարհին.

ՄԱՏ. ԺԳ, 3-9

Փուշք աշխարհի զիս հեղձուցին
Եւ անպըտուղ զանձնըս արարին.
Այլ՝սերմանող՝ Տէր՝ ըզբարին,
Յիս աճեցո ըզբոյս բանին.
Զի տաց պըտուղ միոյ փոխան
Հարիւր, վաթսուն կամ զերեսնին:
Ոչ ծախեցի զդիւր վատնելին
Ընդ գիւտ գանձի ագարակին,
Զոր գողացաւ իմ թըշնամին
Եւ ետ փոխան ըզկապտելին:
Ըզթեզ, որ գանձդ ես երկնային,
Մաղթեմ սըրտիւ բոլորովին.

ՄԱՏ. ԺԳ, 44

Տո՛ւր ինձ իմաստ գանձել յերկին
Եւ անդր ունել զխորհուրդ սըրտին.
Որ ի գողոյն գիշերային
Գաղտնի ական ոչ հատանին,
Այլ զգուշութեամբ ամրապահին

Գընա հանգիստ, խաղաղ հոգով:
Կավե մարմնով սայթաքողիս
Ջարկեց, գըցեց ինձ թըշնամին,
Իմ անկումով սայթաքեցին
Պոքրոզիներն Աստծու ճամփին,
Եվ արժեմ ես շատ մեծ պատժի,
Քան առիթն իմ հանցանքների,
Պարանոցիս՝ ծանըր քարի,
Որ ընկնեմ ծովը գեհենի:
Դու, որ հնարն ես անհընարի,
Կանգնեցրու ինձ այժմ ոտքի,
Ինձնով ընկածները կանգնեն,
Իսկ կանգունները գոհ լինեն:
Արտի մեջ իմ թըշվառ անձի,
Ուր ցանեցիր սերմը բարի,
Քուն մըտավ իմ թըշվառ հոգին,
Ցանեց որոմն իր թըշնամին,
Որ մինչ ժամանակը հընձի
Թող քաղհանվեն, նետվեն մեկդի,
Որ չառնես շնորհը ցորենի,
Որոմը տաս հուր գեհենին:
Ապառաժի պես կարծրացա,
Ճանապարհի նըման եղա,
Աշխարհի փուշը ինձ խեղդեց
Եվ անպըտուղ անձըս դարձրեց,
Ո՛վ սերմանող Տերըդ բարի,
Ինձ աճեցրու հանց բույս Բանի,
Որ տամ պըտուղ մեկի փոխան
Հարյուր, վաթսուն կամ երեսուն:
Չըծախսեցի հեշտ վատնելին՝
Առնելով գանձն իմ արտերի,
Որ գողացավ իմ թըշնամին,
Տեղը տըվեց կողոպտելին:
Քեզ, որ գանձըդ ես երկնային,
Մաղթում եմ ես ամբողջ սըրտով,
Թող երկընքում իմաստ գանձեմ,
Այնտեղ սըրտումս խորհըրդածեմ,
Որ գողերը գիշերային
Չըհանեն այն մուտքով գաղտնի,
Այլ խընամքով այն պահպանվի,

ՄԱՏ. ԺԳ, 45-46

Ըստ Քոյ լուսոյ պատուիրանին:
Ոչ ի խընդիր Քո մարգարտին
Ելի նըման վաճառողին,
Եւ ոչ փոխան անփոխանին
Ետու ըզսէր անցաւորին.
Չվաճառեցի ըստ հրամանին
Ըզցանկութիւն նիւթականին
Առ ի ստացումըն մեծագնին
Եւ ցողածին լուսաբերին:
Մարգարտօրէն ծընունդ Կուսին
Աստուած և մարդ մի երկոքին,
Տհր ինձ սիրոյդ աստուածային
Լինիլ խընդրող խանդակաթին.
Բաց զառաքաստ փափագողին,
Մհտ ի սենեակ տարփմամբ սրտին.

ՄԱՏ. ԺԳ, 31...

Տաճարացո՛ղ զիս վերըստին
Եւ ընդգըրկեա՛ն աջով Քոյին:
Զհաւատ բոլոր մանանեխին
Զարքայութեան օրինակին
Ոչ ստացայ յիմումս անձին,
Զի չար լերինք փոփոխէին:
Եւ ո՛չ նըման թըռչնոց երկնին ...
Յոտըս հանգեայ պատուիրանին,
Յորում հոգիք մաքուր հանգչին
Ժառանգք երկնից սուրբ խորանին:
Եւ ո՛չ եղէ խիստ ըստ համին
Կամ կարծրագոյն ճըճեաց մըտին.

ՄԱՏ. ԺԳ, 33...

ՂՈՒ. ԺԳ, 21

Յորոց մանրեա՛ն մանր ըզժանին
Եւ զիս կառն յոստըս ծառին:
Խըմոր եղէ վատթար և հին
Եւ ոչ առակ աճման բանին,
Զայն, որ թաքոյց յալիւրընկին,
Յեկեղեցի զխորհուրդ Քոյին:
Զի նա ի Քէն առեալ նախկին,
Նովաւ ծանեան դասըն վերին.
Եւ ընդ զանգուածս ադամային
Խառնեալ բոլորն խըմորէին:
Զըրկեալ միայն ես յերկոսին
Յանճառելի լոյս իմաստին.
Ում արասցես հաղորդ կըրկին,

Ըստ Քո լույսի պատվիրանի:
Ոչ հանուն Քո մարգարիտի
Ելա նրման վաճառողի,
Այլ փոխարեն անգին գանձի՝
Սերըս տըվի անցավորի.
Չեմ ծախել, ըստ պատվիրանի,
Ցանկությունը նյութականի
Ստացվածքին այն մեծագին
Եվ լուսաբեր և ցողածին:
Մարգարտի պես ծընունդ Կույսի,
Աստված և մարդ մեկ, միասին,
Տուր ինձ սիրուցդ աստվածային՝
Խընդրող լինել բաղձալիին,
Բաց վարագույրը փափագողիս՝
Մըտնեմ սենյակ տարփմամբ սըրտիս,
Տաճարացրու ինձ վերըստին
Եվ ինձ զըրկիր աջով Քո պինդ:
Հավատը ողջ մանանեխի
Արքայության օրինակով
Չըստացա իմ անձի համար,
Ջի փոխվեցին լեռները չար,
Ոչ երկընքի հավքերի պես
Ոտքըս հանգավ պատվիրանին,
Ուր հոգիներն են ջինջ հանգչում,
Երկնի խորանը ժառանգում,
Կըծու չեղա նըրա նրման
Կամ էլ կարծըր ճիճվի համար.
Ատամներով նըրանց փըշրի,
Ինձ կանգնեցրու ոստին ծառի:
Խըմոր եղա վատթար և հին
Եվ ոչ նրման աճման բանին,
Քո խորհուրդն, ինչպես ալյուրի,
Եկեղեցում ես չըթաքցրի:
Ջի Նա քեզնով դարձավ Նախկին
Եվ նըրանով ճանաչվեցին
Նրանք՝ դասերը այն վերին
Եվ զանգվածով ադամային
Խառնվելով խըմորվեցին:
Լոկ ես զըրկվեցի երկուսից՝
Իմաստության անձառ լույսից,
Որին հաղորդ անես կըրկին,

ՄԱՏ. ԺԳ, 47-49

Տացես դարձեալ զոր կորուսին:
Ընդ որսացեալսն ի յուռկանին
Հաներ և զիս յեզըր ծովին.
Բայց յընտրութեան Քո ըզբարին
Անկայ ի բաց ըստ խոտանին,
Որով ի նոյն ջուրըս խորին
Դարձեալ իջի ի գէճ տըղմին,
Յորում անդունդք անհընարին
Ջիգուոյս մասունքն պաշարեցին:
Այլ Դու կարող յամենայնին,
Վերաբերեա՛ զիս վերըստին
Եւ ի բարի սուրբ յամանին
Ժողովեսցես ընդ ընտրելին:

ՄԱՏ. ԺԿ, 17-21

ՅՈՎԷ. Զ, 9...

Որ ի հընգից նըկանակին
Նըշխարեցեր հինգ հազարին
Եւ ի չորից դարձեալ զնոսին
Կերակրեցեր յանապատին,
Ջիս, որ քաղցեալ եմ Քո հացին
Աստուածայնոյդ երկնաւորին,
Արա լընուլ հոգւոյս նովին
Յերկնից իջեալ և անմահին:
Քանանուհւոյն լուար ձայնին
Եւ շնորհեցեր ըզհայցելին.
Աղաղակեմ ես ընդ նըմին,
Շնորհեա՛ և ինձ զիմ խընդրելին.
Ջի եթէ շուն կոչես վերջին,
Արագապէս լըսեմ ձայնին,
Ճեպել յընթացս ի կոչ հուվուիդ
Եւ հալածել զօտարոտին:
Թէ և մանկանցն անարատից
Չեմ արժանի կըցորդ մասին,
Այլ փըշրանաց սուրբ սեղանին
Արժանացո՛ կենաց հացին:
Կարկամ եղէ ես առ բարին,
Նըման կընոջըն կարկամին,
Ձեռըն տացես ինձ ընդ նըմին,
Ջանկեալ հոգիս կանգնել յոտին:
Որ յայտնեցեր զաստուածութիւնդ
Աշակերտաց Քոց ի լերին,
Եւ զանճառ փառսըն հայրենին

ՄԱՏ. ԺԵ, 22...

ՂՈՒ. ԺԳ, 10-17

ՄԱՏ. ԺԵ, 1-8

Տաս դարձյալ այն, որ կորցրեցին:
 Հետն ուռկանով որսածների
 Հանիր և ինձ ափը ծովի,
 Բայց բարու հետ դեռ չընտրված՝
 Ընկա նույն ծովը խոտանված,
 Դարձյալ իջա տիղմը խոնավ,
 Ուր անդունդները անհընար
 Հոգուս մասերը պաշարեցին:
 Լոկ դու, կարող ամենայնի,
 Ինձ վերջստին վերև հանիր,
 Շուրջը բարի սուրբ ամանի
 Թող մընամ հետն ընտրյալների:
 Դու՛ես, որ հինգ նըկանակից
 Բաժին հանիր հինգ հազարին,
 Ապա նըրանց Դու չորս հացից
 Անապատում կերակրեցիր:
 Ինձ, որ կարոտ եմ Քո հացին,
 Երկնավորիդ աստվածային,
 Թող հագենա և իմ հոգին
 Հացով անմահ և երկնային:
 Քանանուհու ձայնը լըսիր,
 Շընորհեցիր խընդրածը իր,
 Աղաղակում եմ, նա ինչպես,
 Որ իմ խընդրածն էլ շընորհես,
 Ջի եթե շուն կոչես վերջին,
 Իսկույն լըսեմ ես Քո ձայնին,
 Հասնեմ արագ հովվիդ կանչին
 Եվ հալածեմ օտարոտին:
 Թեև անմեղ մանկանց բուլլի
 Կըցորդ լինել չեմ արժանի,
 Սոսկ փըշրանքին սուրբ սեղանի
 Արժանացրու կենաց հացի:
 Բարու առաջ եղա կարկամ
 Այն լուռումունջ կընոջ նըման,
 Ինձ ձեռքդ տուր, ինչպես նըրան,
 Որ հոգիս էլ կանգնի ոտքի:
 Աստվածությունը Քո հայտնեցիր,
 Լեռան վըրա երբ կանգնեցիր,
 Աշակերտներիդ աչքերին
 Անճառ փառքը Քո նախնական

	Փայլեալ ցուցեր աչաց նոցին, Մաքրեա՛ն և զիմ միտքըս մըթին Եւ զգայարանըս խաւարին, Անդ յայտնապէս ի յերկրորդին Յագիլ փառօք աստուածային:
ՄԱՏ. ԺԷ, 14-20	Ընդ լուսնական այսահարին Մանկանըն հօր անհաւատին Օրըստօրէ տանջիմ նովին Ի հուր ցասման ի ջուր գիճին: Յորոց հընար ըստ մարդկային Չէ ողջութեան ինձ յերկոսին, Այլ թէ Քէն, Տէր երկնային, Յաւոցն առիթք հալածեսցին.
ՍԱՂ 3Ի (ՃԻԱ), 6	Զի ջերմութիւնք տուընջենային Եւ լուսնականքըն գիշերին Մի մեղիցեն ինձ ըստ Դաւթին, Եւ մի մեղաց պատճառ լիցին:
ՄԱՏ. ԺԸ, 21-22	Ի հարցնելն ըզՔեզ Վիմին, Քանիցս թողուլ եղբօրն յանցին, Ոչ ասացեր, ըզեօթնեկին,
ԸՍՏ ԵՆՈՐԴԱԼՈՒ 70 x 7 = 490, ԸՍՏ ԱՎԵՏԱՐԱՆԻ 77 ԱՆԳԱՄ	Այլ չորս հարիւր ընդ իննըսնին. ... Զոր կենցաղոյս ամբըն թուին Անցաւորիս եօթեանց դարին. Թե որչափ եմք ի յայս մարմին, Պարտ է թողուլ զըղջականին: Եւ ես թէպէտ եղէ վերջին Ի յոչ թողուլ պարտապանին Վասն ախտաւոր բնութեանս անձին Եւ անկատար գոլ ի բարին, Սակայն առ իս ի Քէն լըցցին Քո ինձ եղեալ բան հրամանին, Թողուլ ըզմեղս առ Քեզ պարտին, Որ քան զաւագ շատ է զծովին. Ոչ յաղքատիս միայն չափին Եօթանասնիցըն կանոնին, Այլ առաւել Քոյդ զօրասցին Ըստ ողորմութեանդ, որ ոչ թըլին. Կենդանական չլուայ ձայնին,

Փայլատակած ցույց տըվեցիր:
Մաքրիր և իմ միտքը մըթնած,
Զգայարանքըս խավարած,
Որ այնտեղ ես այդ երկուսով
Լըցվեմ աստվածային փառքով:
Այսահարված լուսնոտի հետ՝
Երեխայի անհավատ հոր,
Ամեն օր դա է ինձ տանջում
Ցասման հըրում, վավաշ ջըրում,
Մարդկային ուժով երկուսից
Փըրկություն չի լինելու ինձ,
Միայն Քեզնով, Տեր երկնային,
Վերջ կըգա ցավիս պատճառին,
Որ ջերմությունը ցերեկվա,
Կամ էլ լուսինը գիշերվա
Մեղք չբերեն ինձ ըստ Դավթի
Եվ չըդառնան պատճառ մեղքի:
Վեմի հարցին՝ քանի անգամ
Պետք է թողնել մեղքը եղբոր,
Դու չասացիր՝ թե յոթ անգամ,
Այլ չորս հարյուր և իննսուն,
Որ տարիներն են մեր կյանքի՝
Մեր անցավոր յոթ դարերի,
Քանի կանք մեջն այս մարմնի,
Պետք է ներել զըղջացողին:
Իսկ ես թեպետ եղա վերջին,
Չըներեցի պարտապանին,
Բնությամբ լինելով տըկար
Եվ բարիի մեջ անկատար,
Բայց թող Քեզնից ինձ համակի
Տըրված խոսքը պատվիրանի,
Թողնել մեղքը Քո պարտքերի,
Որ ավագից շատ է ծովի.
Ըստ յոթանասնի օրենքի,
Ոչ ըստ իմ աղքատիկ չափի,
Այլ Քեզանով սըրտապընդված,
Ողորմությամբըդ, որ թիվ չունի:
Չեմ լըսել ձայնըդ կենդանի,

ՄԱՏ. Ը, 21-22

ՂՈՒ. Թ, 59-60

ՂՈՒ. Թ, 61-62

ՄԱՏ. ԺԹ, 10-12

Որ ոչ թաղել զհայրըն թողին,
Այլ և մեռայ ընդ մեռելին
Մեռելոտի գործովք չարին:
Բուռն հարի զմաճոյ բանին,
Բայց ոչ նըման մաճակալին,
Զի նա չհայի անդր ի յետին,
Այլ ի յակօսն, որ յառաջին.
Եւ ես թողի զխորհուրդ վերին,
Ըզճանապարհ մըտից յերկին,
Դարձայ այսրէն յերկիր ստորին,
Ուստի հաներ իջմամբ Քոյին:
Արդ բարձրացո՞ղ զիս վերըստին
Առ Քեզ հանցես յերկնից յերկին.
Մի տար դառնալ առ թըշնամին,
Զի մի հարցէ ընդ խաւարին:
Ի ներքինեացն երից բաժին,
Զոր որոշեաց բանըն Քոյին,
Յորովայնէ և մարդկային
Եւ ընդ վարուց երկնաւորին,
Նըւիրեցայ և ես մասին
Հրեշտակական կուսականին,
Պատերազմել ընդ դէմ ախտին
Եւ ընդ բնութեանըս շարժողին:
Բայց թոյլ գըտայ յասպարիսին
Եւ զէն ընկեց ի ճակատին,
Յորում և նետըք մուխ չարին
Ի սիրտ հարան տիրականին:
Չպահանջեցեր զանկարելին,
Այլ զիս եդիր իշխան նըմին,
Թէ որ կարողքն են՝ տանիցին,
Եւ որք տըկարք՝ ոչ պահանջին.
Վասն այնորիկ ո՞չ ունիցիմ
Պատճառ բանի խոցմանս անձին,
Եւ ոչ դիպող զպատասխանին
Ի Քո արդար դատաստանին:
Այլ որ քըննիչդ ես խորհըրդին
Եւ տեսանող գաղտնեաց սըրտին,
Մարտիր փոխան պարտեալս անձին
Ընդ թըշնամոյն իմ յաղթողին:

Ոչ հոր թաղումը թողեցի,
Այլ մեռա հետը մեռելի,
Մեռելոտի գործով չարի,
Չեռքըս առա մաճը Բանի,
Բայց ոչ թե նըման մաճկալի,
Քանզի ետև նա չի նայում,
Այլ՝ ակոսին իր առաջի:
Ես խորհուրդը թողի վերին,
Ճանապարհը մըտքի՝ երկինք,
Ապա դարձա երկիրն ստորին,
Բայց հանեցիր Քո իջնելով:
Արդ բարձրացրու ինձ վերստին
Քեզ մոտ հասցրու՝ երկնից երկինք,
Մի թող դառնամ դեպ թըշնամին,
Որ չըհարեմ ես խավարին:
Ներքինիներից երեք կարգի,
Որ սահմանվեց, ըստ Քո խոսքի,
Մորից ծընված, մարդու կըռտած
Կամ էլ երկընքին նըվիրված.
Նըվիրվեցի և ես մասին՝
Հրեշտակային կուսականին,
Պատերազմել ընդդեմ ախտի
Եվ մեր բնությանն հուզողի:
Մարտադաշտում բայց թուլացա,
Ճակտիս վերքից ես ցած ընկա,
Չարի նետերը մըխվեցին,
Տիրասեր սիրտըս խոցեցին:
Անկարելին չես պահանջել,
Նըրան իշխան ես ինձ դըրել,
Ով ուժեղ է՝ կըղիմանա,
Ով տըկար է՝ կըթուլանա.
Ուստի ինչո՞վ արդարանամ,
Թե ինչո՞ւ է անձըս խոցվել,
Չուներմ դիպուկ ես պատասխան,
Երբ գա արդար Քո դատաստան:
Երբ Դու քըննիչն ես խորհըրդի,
Տեսնող սըրտի գաղտնիքների,
Կըռվիր տեղն իմ պարտված անձի
Ընդդեմ հաղթող ինձ ոսոխի,

ՂՈՒ. Ժ, 15-24

Մի տար տեղի յիս փորձողին
Մարմնոյ ախտիւք յիս պատրողին,
Այլ պարագրեա թևօք Քոյին,
Որպէս ըզտիպսըն բիբ ակին:
Յընթրիսըն մեծ կազմեալ մեծին
Տեառնըդ ծառայք զիս կոչեցին,
Յորմէ ի բաց հրաժարեցի,
Պատճառելով խրատու չարին,

ՍԱՂ. 29, 6-7

Վասն աշխարհի ագարակին
Եւ վասն եզանց զգայականին
Եւ ընդ կընոջ հեշտասիրին՝
Որով կապեալ կամ ի սոսին.
Լուծիչ կապից դըժոխային,
Լոյծ ըզկապանս իմ զերեսին,
Հան ի հովտէս այս տըրտմագին,
Տար ի տաճար յուխտեալ տեղին.

ՂՈՒ. Ժ, 29-37

Արժանացո՛ կենաց հացին
Եւ ըմպելոյդ աստուածային,
Ուրախանալ գինեաւ բանին՝
Զոր խառնեցեր անըզգամին:
Յերուսաղէմ մերոյ դրախտին
Ընդ Ադամայ յանցաւորին
Ի յերիքովս իջի ստորին,
Անկայ ի ձեռս աւազակին.
Որք ի լուսոյն մերկացուցին
Զհոգիս մեղաց վիրօք լըցին.
Ո՛չ կիսամահ թողեալ գնացին,
Այլ յետ մահու պատերազմին.
Զոր և Մովսէսըն ղևտացին
Եւ Ահարովն քահանայն հին
Տունըն մեծի նահապետին
Եւ մարգարէք Հնոյ Օրինին,
Զվերըս ցաւոց անհնարին
Եւ ըզխոցուածըս սաստկագին
Դեղով բանից անցեալ տեսին
Եւ բըժըշկել ոչ կարացին:
Սամարացւոյդ՝ զոր կոչէին
Տոհմըն ժըպիրի հրեականին,

Տեղի մի տուր ինձ փորձողին,
Մարմնի ախտով ինձ պատրողին,
Այլ թևերով Քո ինձ գրկիր,
Պահիր, ինչպես բիրը աչքի:
Տիրոջ ծառաներն ընթրիքին
Մեծ հըրավերք ինձ արեցին,
Սակայն նրանց ես մերժեցի՝
Պատճառ բռնած խրատը չարի,
Հանուն աշխարհի կալվածքի,
Զգայականի եզների,
Հեշտասիրության կանացի,
Որով կապված եմ կամ գերի:
Քանդող կապերը դժոխքի,
Քանդիր կապերն էլ իմ անձի,
Հանիր հովտից այս տըրտմագին,
Տար տաճարը ուխտատեղի,
Արժանացրու կենաց հացին,
Ըմպելիքին աստվածային,
Ուրախացրու գինով Բանի,
Որ հասցրիր և անըզգամին:
Երուսաղեմ մեր դըրախտին
Միացրեցիր Դու Ադամին,
Իսկ ես Երիքով իջա ստորին,
Ընկա ձեռքը ավազակի.
Որ լույսի տակ ինձ մերկացրին,
Հոգիս մեղքի վերքով լըցրին,
Կիսամահ ինձ չըթողեցին,
Այլ մահից հետո կռվեցին:
Նաև Մովսեսը դևտացին,
Ահարոնը՝ քահանան հին
Եվ տունը մեծ Նահապետի,
Մարգարեներն Հին օրենքի
Վերքերի ցավն անհնարին
Եվ խոցվածքները սաստկագին
Տեսան՝ կանցնի դեղով Բանի,
Բայց բժըշկել ոչ կարացին:
Սամարացու նման, որին
Կանչեց տոհմը հրեաների,

Յուցից ըզցաւս իմոյ անձին
 Տեսող աչացոյ աստուածային.
 Գըթն և յիս ըստ Ադամին,
 Դիր դեղ հոգւոյս խոցոյս խորին,
 Պատեա՛ զգեստիւքն իմ առաջին,
 Զոր աւազակքն մերկացին.
 Ա՛րկ ի վերայ զձեթ և զգինին,
 Զդեղըն կենաց հոգւոյս վիրին,
 Տալով զօծման դարձեալ զհոգին
 Եւ ըզբաժակ նորոյ ուխտին:
 Բարձ ի վերայ գրաստու խաչին,
 Տար ի պանդոկ յեկեղեցին.
 Յանձնեա գըլխոյ քահանային
 Քեզ ըստ մարմնոյ պատարագին:
 Տո՛ւր ընդ երկուս դահեկանին
 Զբան Հին և Նոր Կտակարանին,
 Տանել դարման հոգւոյս նովին,
 Որպէս կեցցէ հացիւ մարմին:
 Նախ քան ըզգալ բարեկամին
 Հոգւոյս իմոյ պահանջողին,
 Ի յերկնայնոցն երկնաւորին
 Եւ զիս յերկինս ուղևորին,
 Բնութեամբ բարւոյ բարեկամիդ,
 Զոր ատեցի սիրով չարին,
 Առ դրունս լուսոյ առաւօտիդ
 Կանխեմ հոգւով գիշերային.
 Տո՛ւր ընդ երիս նըկանակին
 Զդաւանութիւն երիցոյ անձին.
 Եւ ըզմարմին Քո երկնային,
 Որով ծանեաք զերիսոյ ի մին:
 Զի ի բարեաց գործոց մասին
 Չունիմ դընել բարեսիրին.
 Միայն զհաւատ շնորհաց Քոյին
 Եւ ըզթոշակ կենաց վերջին:
 Ընդ դէմ անժամ աղաչողին
 Մի պատճառեր ըզդրանց փակին
 Եւ ըզմանկանցն ի յանկողին,
 Զանմեղ հոգւոցն ի հանգըստին.

ՊՈՒ. Ժ, 33-35

ՊՈՒ. ԺԱ, 5...

Տույց տուր ցավերը իմ անձի,
Տեսնող աչքով աստվածային:
Գըթա և ինձ Ադամի պես,
Դեղ դիր հոգուս խոր խոցերին,
Զգեստներն իմ հագցրու նախկին,
Որ ավազակները հանեցին.
Վըրաս ցանիր ձեթ և գինին,
Կենաց դեղը հոգուս վերջին,
Տալով օծման նորից հոգին,
Նաև բաժակը Նոր ուխտի:
Բարձիր գրաստի վըրա խաչի,
Տար իջևան, եկեղեցի,
Հանձնիր ինձ մեծ քահանային՝
Քեզ ըստ մարմնի պատարագին:
Տուր հետն երկու դահեկանի
Բանը Հին և Նոր Կտակարանի,
Որ այն հոգին իմ դարմանի,
Ինչպես հացով կեցցե մարմին:
Նախքան գալը բարեկամի
Եվ իմ հոգին պահանջողի,
Երկնայիններից երկնավորի
Եվ ինձ դեպ երկինք ճամփողի,
Բնությանմբ բարու բարեկամիդ,
Որ ատեցի սիրով չարի,
Դռան մոտ լույս առավոտիդ
Կանխում եմ հոգով գիշերի:
Տուր հետն երեք նըկանակի
Դավանությունն երեք անձի.
Եվ մարմինը Քո երկնային,
Որ մեկով հայտնեց երեքին:
Բայց բարիքի մի մաս չունեմ՝
Բարեսերի առջև դընեմ,
Այլ լոկ հավատը շընորհի
Եվ պաշարը կյանքիս վերջի:
Աղաչողի անժամանակ
Առջև մի թող դըռները փակ,
Երբ մանուկներն են անկողնում՝
Հոգիներն են անմեղ ջընում:

ՂՈՒ. ՃԱ. 3...

Եւ մի ասեր անկարելին,
Որ չկամելոյն փոխանակին:
Զի Քո կամելն ամեննին
Ի կատարեալ գործ ի բարին.
Այլ տուր ժըտել ըստ առակին,
Զի ընկալայց ըզխընդրելին.
Ոչ ընդ սիրոյն, զոր կորուսի,
Այլ ընդ ժտութեան աղաղակին:
Ընդ մեծատանըն յիմարին,

ՂՈՒ. ՃԲ. 13-21

Որում ետուն անոք տոհմային,
Յիմս աճեցին սերմանք չարին
Եւ բազմացան ի միտս անդին,
Մինչև քակել շտեմարանին,
Հոգւոյս մասանց բանականին,
Եւ մեծագոյն գործել զտեղին
Յոգնաբեղուն պըտղոյ չարին:
Զորս մանգաղաւ Քով երկնային
Հատցես ըզբոյս դառնաբերին,
Եւ աճեցո՛ր յիս ըզբարին
Պըտղաբերել Քեզ ի յերկին:

ՂՈՒ. ՃԱ. 24-26

Ի մաքրութեան աւազանին,
Յորում ստեղծեր զիս վերըստին,
Այսքըն չարեաց յինէն ելին,
Այնք, որ յօձէ անդըր մըտին.
Որոյ շըրջեալ ընդ անջըրդին
Յոգիս յախտից ցամաքային,
Որ հանգըստեան վայր ոչ գըտին,
Յոր ըստ կամաց իւր, ո՛չ էին,
Եւ զի աղբիւր մեղաց ախտին
Միշտ անըսպառ յինէն վիժին,
Որով պատշաճ իսկ յարդարի
Տուն և տեղի հոգիս նըմին,
Առեալ զընկերս եօթանեսին
Ըստ կենցաղոյս չարք ընդ չարին,
Խառնեալ յինքեան այսն առաջին
Դարձաւ նոքօք ի տունս անձին.
Որ գերազանց չարըս վերջին
Եղև ինձէն քան ըզնախնին.

Եվ մի ասա անկարելին,
Չըկամենալու փոխարեն,
Զի Քո կամքը ամբողջովին
Կատարված գործն է ի բարին:
Թող սիրտ առնեմ ըստ առակի,
Որ դու կանսաս իմ խընդրանքին,
Ոչ թե իմ սիրուն, որ կորցրի,
Այլ սըրտագին աղաղակին:
Եվ մեծատան նըման հիմար,
Որ ժառանգեց հանդ անհամար,
Իմում աճեցին սերմեր չարի,
Բազմացան հանդում իմ մըտքի,
Մինչև քանդվի շտեմարանն
Հոգուս մասերի բանական
Եվ գործի տեղը մեծագույն
Չար պըտուղի բազմաբեղուն:
Որ մանգաղով Քո երկնային
Կըտրես բույսերը դառնաբերք
Եվ աճեցնես իմ մեջ բարին՝
Պըտղաբերեմ Քեզ ի երկինք:
Մաքրության մեջ ավազանի,
Ուր ստեղծեցիր ինձ վերըստին,
Ելան այսերն ինձնից չարի,
Որ օձից են մըտել այնտեղ,
Որն անջըրդի վայրեր չըրջեց
Հոգիների մեջ ախտավոր,
Բայց հանգըստյան վայրը չընտրեց,
Ինչ որ իրեն էր հարկավոր,
Զի աղբյուրը մեղքի առատ
Ինձնից վիժում է անընդհատ,
Որ և պատշաճ հարդարեցի
Տուն ու տեղն այդ ոգիների,
Առած ընկեր յոթանասուն
Իրեն հարմար չար չարքերից,
Եկավ նըրանցով անձիս տուն,
Իրեն խառնած այն այսերին.
Եվ հըզոր է չարքը վերջին
Նախկինից և նըման ինձին,

ՂՈՒ. Ը, 2

ՄԱՏ. Թ, 9-13

ՂՈՒ. ԺԹ, 1...

Ջի յաղբերէն այլ ոչ մաքրիմ,
Այլ տաժանմամբ և դժուարին.
Եւ զգուշագոյն գոլով նըմին
Յետ ըմբռման ամրականին,
Որում տիրեաց դարձեալ կըրկին
Ըստ առաջնում յարացուցին.
Ջոր հերքեսցես Դու վերըստին
Ի յանապատն անդընդային,
Թէպէտ և ոչ ըստ Օրինին,
Այլ ըստ առատ Քո պարգևին.
Եւ ըստ չարեացն եօթանեկին,
Ջոր մերժեսցես ըստ ներհակին,
Բնակեցուցես յիս ըզՀոգին
Ի յեթնարփեան շնորհաց Քոյին:
Ըստ Մարեմայ Մագդաղենին,
Յորմէ և եօթըն դէքն ելին
Եւ ըստ Ջակքեայ մաքսաւորին
Եւ ըստ բազմացն օրինակին:
Չեղէ նմանող Քում ծառային,
Որ ակն ունէր Տեառնըդ դարձին
Եւ ոչ յերկրորդ կամ յերրորդին
Պահու սպասեմ գալոյ Քոյին:
Ըստ այսմ և ոչ յուսամ վեհին
Եւ անպատում խոստման պատուին,
Ածել ընդ մէջ Քո ըզգօտին,
Անցեալ պաշտել ըստ ծառային.
Այլ եմ նըման յուսահատին
Քում ծառայից հարկանողին,
Արբեցողի և կերողին
Եւ զինչըս տեառնըդ վատնողին.
Եւ երանի թէ տըգիտին
Եւ ոչ հանգոյն չարիմաստին,
Ջի չըմպէի գան սաստկագին,
Այլ յոյժ սակաւ չափով վնասին:
Բայց արդ գիտուն եմ վատթարին,
Տըգէտ կամաւ լաւագունին.
Չեմ զգուշական պահող անձին
Արթուն մըտօք ըստ հըսկողին:
Ի քնոյ զարթո՞ն մահաբերին,

Ձի աղբյուրից չեմ մաքրովում,
Այլ տաժանքի մեջ եմ դըժվար,
Քանզի նա է ըզգուշագույն,
Երբ ինձ փակեց խոր զընդանում
Եվ իմ հոգին տիրեց կըրկին
Օրինակով առաջինի:
Նըրան հեռացրու վերըստին
Դեպ անապատն անդընդային
Թեկուզ և ոչ ըստ Օրենքի,
Այլ ըստ առատ Քո պարգևի,
Եվ ինչպես այն յոթ չարքերին,
Կըմերժես և գլխավորին:
Բընակեցրու իմ մեջ Հոգին
Քո շընորհով յոթնարփենի,
Հանց Մագդաղինացի Մարիամին,
Որից հանեցիր յոթ դեին,
Ինչպես Ջակբե մաքսավորին
Եվ ինչպես որ շատ շատերին:
Նըման չեղա Քո ծառային,
Որ ակն ուներ Տիրոջ դարձին,
Ոչ էլ երկրորդ կամ էլ երրորդ
Պահին եմ սպասում Քո գալու,
Ուստի հույս չունեմ ես վեհի
Պատվի խոստմանն անպատմելի,
Քո մեջքով անցկացնել գոտի,
Ըստ ծառայի Քո պաշտոնի:
Այլ նըման եմ հուսահատի,
Ծառաներին Քո ձաղկողի,
Հարբեցողի և լափողի,
Տիրոջըդ ինչքը վատնողի.
Երանի տգետ լինեի,
Ոչ թե գիտակ չար մըտքերի,
Որ չուտեի ծեծ սաստկագին,
Այլ քիչ վնասով դուրս գայի:
Բայց արդ գիտուն եմ վատթարի,
Տըգետ կամովին այն լավի,
Զգուշ պահող չեմ իմ անձի,
Իրթուն մըտքով միշտ աղոթքի:
Քո խոսքով երբեք մահագույժ.

	Զի զգուշացայց աւագակին: Տուր ակն ունիլ առաւօտին, Զի յագեցայց տեսլեամբ Քոյին: Արա նըման զիս ծառային Ծառայակցաց կերակրողին Տալ ի ժամու զիմաստ բանին Իւրաքանչիւր քաղցեալ անձին: Զարիական տո՛ւր ինձ գօտին, Պընդել ըզմեջ ցանկականին. Լոյց ըզճրագ պատուիրանին Յոգիս յանլոյս և խաւարին. Կարկամութիւն կռամու ախտին Ողորմութեամբ խորտակեսցին. Եւ քսակըն հին փոփոխեսցին Յառանց հնութեան ունող գանձին:
ԱՄՏ. Մ, 45-51	
ԵՓԵՍ. Ե, 5 ԿՈՂ. Գ, 5	
ՂՈՒ. ԺԲ, 32	Ի դասս ընտրեալ փոքրիկ հօտին Խառնեա՛ զծուլիս անբեր հոգին, Զի Հօր Քո կամք հաճոյացցին, Զարքայութիւն տալ ընդ նոսին: Հեղեր յերկիր զհուրդ երկնային, Որով մարդկան հոգիք մաքրին, Բորբոքեցո՛ յանձն իմ ցըրտին, Զհոգիս ջեռո՛ սիրով Քոյին:
ՀՈՍՄ. Ը, 35-39	Դու, Տէր, միայն լեր ինձ բաժին Ըստ Պօղոսի՝ զՔեզ սիրողին, Չփոխանակել էից մասին, Ոչ տանջանաց զանազանին:
ՂՈՒ. ԺԲ, 57-59	Զհաշիւն ես ոչ ըստ ոսոխին Ետու յաստեաց ճանապարհին, Առ ի չմատնիլ դատաւորին Ընդ մատնութեան չարախօսին: Որոց բերանքըն կարկեսցին, Ո՛չ դատախազ լինիլ վասն իմ: Զիս ի ձեռաց կորզեա՛ դահիճին Եւ հան յանել բանտէ նորին:
ԱՄՏ. Բ, 21 ՂՈՒ. Ե, 36	Ի նոր ձորձոյ աւագանին Ափածայ զմեղաց կապերտըն հին, Որ ընկալաւ ի լրոյ նորին Ըզգոյն տըխուր և զաղտեղին.

Ավազակից լինեմ ըզգույշ,
Առավոտին որ ես հուսամ,
Լույս տեսիլքով Քո հագենամ:
Նըման դարձրու ինձ ծառային,
Իրպեսներին կերակրողին՝
Թող իմաստը խոսքի բաշխեմ
Յուրաքանչյուր քաղցած անձին:
Տուր ինձ գոտին արիացնող՝
Մեջքըս պընդեմ ցանկության դեմ:
Վառիր ճրագը պատվիրանի
Հոգուս մեջ Դու անլույս, խավար
Համրությունը կռամուլ ախտի
Ողորմությամբ կըխորտակվի.
Եվ հին քըսակը թող փոխվի
Հնություն չունեցող գանձի:
Ընտրած դասում փոքրիկ հոտի
Խառնիր ծուլլիս անբեր հոգին,
Հաճո լինենք Հորըդ կամքին
Արքայությամբ մեր միասին:
Սըփռիր երկրում հուրն երկնային,
Որ մաքրում է մարդկանց հոգին,
Եվ բորբոքիդ անձն իմ ցըրտին,
Տաքացրու սիրով իմ հոգին:
Տեր, Դու եղիր լոկ ինձ բաժին,
Նըման սիրող Քեզ Պողոսին,
Որ չըփոխեմ մասն էական
Տանջանքների հետ զանազան:
Հաշիվն իմ այս ճանապարհի
Տըրված է ոչ ըստ ոսոխի,
Եվ մատնությամբ չարախոսի
Թող չըմատնեն դատավորին,
Դրանց բերանը թող փակվի,
Թող չըլինեն դատախազն իմ:
Ինձ դուրս կորզիր ձեռքից դահճի
Եվ հան նըրա անել բանտից:
Նոր ձորձն առած ավազանի,
Կարպետը հին հագա մեղքի,
Որ ընդունեց վըրան նորի
Մի գույն տըխուր և աղտեղի:

ՄԱՏ. Բ, 22
ՂՈՒ. Ե, 37-39

ՂՈՒ. ԺԴ, 7-11

ՂՈՒ. ԺԴ, 28

Զերծ առ յինէն ըզքուրձ զգեստին
Եւ ըզգեցո զուրախալին.
Եւ զպատմունճան հոգւոյս ներքին
Լըւա՛ն աչաց ջուրբ արտասուին:
Չնորացուցի ըզտիկըն հին
Ի հնութենէ մեղաց զհոգին,
Զի նոր գինի պատուիրանին
Առանց հեղման յիս պահէին.
Նորացուցես զիս վերջստին,
Աջըդ կարող Հոր հըզօրին.
Զի հայրատունկ որթոյդ գինին
Անապական յիս պահեսցին:
Ի վեհագոյն նըստայ բարձին
Յաստիճանաց Քոց առաջին:
Ոչ յառաջեալ կոչմամբ Քոյին,
Այլ յինքնաշարժ փառամուլին:
Յորժամ կոչես զազգ երկրածին
Ի հանրական կոչարանին,
Մի յանդըզնիս բան կոչողիդ
Ի վայր մատիր բարբառեսցին.
Այլ և անկեալս այժմ ի գետին
Լըւայց բարեացն ի Քէն բանին.
Ի վեր մատիր բարեկամին
Ի բարձրութիւնս աստուածային:
Զելից յերկինս աշտարակին
Եւ զամրութիւն ընդդէմ չարին,
Ըզկուսութիւն հրեշտակային
Եւ որովայն մաքուր պահին:
Ոչ հաշուեցայ զծախըս վարձին
Եւ ոչ զերկունքս շինուածին,
Այլ հիմն արկի կրօնից կարգին
Առանց գըլխոյ կատարածին.
Բայց կատարիչդ յամենայնին,
Կերտող բոլոր էականին,
Զիմ կատարեա՛ն շինուածս անձին,
Յօդեա ի գլուխըդ վերջստին,
Զի մի անցորդք ծիծաղեսցին
Յառանց լըրման թողեալ շինիլն.
Այլ Քո բանիւ պըսակեսցին
Հիմն և աւարտն ի միասին:

Պոկիր ինձնից շորը ջրջոտ
 Եվ հագցրու ինձ շոր ծիծաղկոտ,
 Եվ պատմուճանն հոգուս ներքին
 Լըվա արցունքներով աչքի:
 Չընորացրի ես տիկը հին՝
 Մեղքի հնությունից հոգին,
 Որ նոր գինին պատվիրանի
 Առանց թափվելու ինձ պահի,
 Ինձ վերըստին դարձըրու նոր,
 Աջըդ կարող՝ Քո հըզոր Հոր,
 Որ հայրատունկ որթիդ գինին
 Անապական ինձ պահպանի:
 Ես վեհագույն նստա բարձին
 Աստիճաններիդ առաջին,
 Բայց ոչ ելած վեր Քո կանչով,
 Այլ փառամոլության տենչով:
 Երբ կանչես ազգը երկրածին
 Ընդհանրական Քո հավաքին,
 Թե հանդըգնեմ Քեզ Բան կոչել,
 Մի թող՝ «վար նետիր» բարբառեն:
 Նաև ընկածս այժմ գետին
 Թող լըսեմ Քո խոսքի բարին,
 Վեր բարձրացրու բարեկամին
 Դեպի բարձունքն աստվածային,
 Հանիր երկինքն աշտարակի
 Եվ ամրոցը ընդդեմ չարի,
 Որ կուսությունս հրեշտակի
 Եվ որովայնըս մաքուր լինի:
 Չեմ հաշվել գումարը ծախսի,
 Ոչ չարչարանքը շինվածքի,
 Այլ հիմնեցի կարգ կրոնի
 Առանց գըլխի կատարածի:
 Բայց, կատարիչդ ամենայնի,
 Ստեղծող համայն գոյականի,
 Շինիր և շինվածքն իմ անձի,
 Հոգիր գըլխին Քո վերըստին,
 Որ անցորդները չըծաղրեն,
 Թե շինվածքը չեմ ավարտել:
 Այլ Քո խոսքով թող պըսակվեն
 Հիմքն ու ավարտը միասին:

Իմ թագաւոր իշխան հոգիս,
 Յորժամ մըտի յաշխարհ նովին,
 Ընդ աշխարհակալքս խաւարին
 Եմուտ ի մարտ պատերազմին.
 Նախ ոչ խորհել եդ ի մըտին,
 Եթէ տասամբք հազարին,
 Իւր և մարմնոյ զգայարանին,
 Չիցէ կարող մըղել մարտին
 Ընդ այնմ որ գայ բռնաւորին
 Հանդերձ զօրոք քսան հազարին,
 Որք իմ տասամբք ինքեամբք կրկին
 Իմովս ընդ իս անդուլ մըրցին:
 Զորս և տեսողք զիս գովէին
 Իբր ըզգիտող չափոյ անձին,
 Ի մարտ մըտեալն ընդդէմ տկարին
 Եւ ոչ քան զիս դիմագրաւին:
 Այլ առաքեալ իմ հրեշտակին
 Նախ քան ըզգալ պատերազմին,
 Ըզկամս իշխող ընտրականին,
 Զի Օրինօք խաղաղասցին:
 Սակայն չեդի ունկըն խրատին
 Առականոր Քում հրամանին,
 Որով անկայ ի մէջ մարտին,
 Խոցեալ վիրօք անհընարին:
 Զայլըս տեսի համամարտին
 Յաղթող զըտեալ յասպարիսին,
 Եւ կարծեցի զիս ընդ նոսին
 Յաղթել կըռւոյ մենամարտին,
 Բայց փորձութիւնքն իբրև հասին,
 Զանժութիւնսս իմ յայտնեցին.
 Յառաքինեացն որոշեցին
 Եւ ընդ վատացըն զիս լըքին:
 Այլ թագաւորդ իմ երկնային,
 Ամենազօր Հօր միածին,
 Լեր մարտակից տըկարս անձին
 Ի հոգևոր պատերազմին:
 Հմար ըզհազարս, որ յահեկին,
 Որք յայտնապէս չարեօք կըռուին,
 Եւ զբիւրաւորս յաջակողմին,
 Որք և բարեաւ կերպարանին:

ԱՌԱՎ. ԼԵ, 8-10

Իմ թագավոր իշխան հոգին,
Երբ նըրանով աշխարհ եկա,
Աշխարհակալի հետ խավարի
Իսկույն մարտի մեջ նա մըտավ:
Նախ չըխորհեց իր մըտքում նա,
Որ տասի դեմ հազարը կա,
Որ մարմընով զգայական
Չես կարող կըռվել հաղթական:
Երբ բըռնավորն էլ ժամանեց
Քըսան հազար զորքով հանդերձ,
Որի դեմ իմ տասն է կըրկին
Ինձ հետ անդուլ կանգնած մարտի:
Ըստ այդ մարտը տեսնողների,
Պիտի զգայի չափն իմ անձի,
Մարտընչեի ընդդեմ թուլի
Եվ ոչ թե ինձնից հըզորի,
Առաքելով իմ հրեշտակին
Մինչ սկսվելը պատերազմի,
Որ գիտե կամքն ընտրագույնի,
Որ Օրենքով խաղաղվեի:
Բայց ունկ չըդըրի խըրատին,
Առակավոր հրամանին,
Ուստի ընկա մարտում զարկված,
Ահավոր վերքերով խոցված:
Ուրիշներին տեսա անդուլ,
Որ հաղթեցին մարտադաշտում,
Ինձ էլ նըրանց պես կարծեցի,
Թե կըհաղթեմ մենամարտում,
Բայց փորձության մեջ երբ ընկա,
Անհամբերության զոհ դարձա:
Քաջերն ինձնից բաժանվեցին,
Վախկոտների հետ լըբեցին:
Իսկ Դու, արքադ իմ երկնային,
Ամենազոր Հոր միածին,
Դարձիր նեցուկ անձիս մոլոր
Պատերազմում այս հոգևոր,
Հազարներին զարկ դու ձախից,
Որ կըռվում չար են հայտնապես,
Բյուրավորներին զարկ աջից,
Որ առել են բարիի տեսք:

ՂՈՒ. ԺԵ, 3-7

Զիս ամրացո ի սրոյ նոցին
Ճըշմարտութեան զինու Քոյին.
Եւ պահպանեա զվեհ անդամիս
Սաղաւարտաւ Քո նըշանին:
Մոլորեցայ ըստ ոչխարին
Ի բանաւոր հօտէ Քոյին.
Նըւազեցի զթիւ հարիւրին,
Զոր յանապատ թողեր վերին:
Եկիր խընդրել սիրով ըզմին,
Գըտեալ հաներ ուսով յերկին.
Լըցեր ըզթիւ անկեալ դասին
Յուրախութիւն հրեշտակային:
Եւ զիս բարձեր, Տեր, ընդ բազմին,
Լուացեր յաղտոյ մեղաց տըղմին.
Յորում դարձեալ արդ թաւալիմ
Ըստ անմըտի աղբասիրին:
Լուա դարձեալ զիս արտասուօք,
Զոր շնորհեսցես անզեղջս անձին
Առատ վըտակ և սաստկագին,
Ըստ յորդութեան աւազանին
Եւ զմոլորեալս կամաւ կըրկին
Դարձո ի կամս աստուածային,
Զիշխանական կամս իշխողին
Բարձ, որ Քոյումդ ոչ հնազանդին,
Թէ արտաքոյ է բնականին,
Զոր շնորհեսցեր բնականին.
Այլ զի պատճառ է ինձ չարին
Ի թուլութեան թըշուառս անձին:
Զարքունական պատկեր Քոյին,
Դրոշմեալ ի դէմըս մարդկային,
Խոր թաղեցի յաղբես ախտին
Կորըստական խրատուք չարին,
Զոր խնդրեսցես լուսով ճրագին
Աստուածութեանդ, որ ի մարմին.
Եւ տանս աւել ան ըստ բանին,
Մաքրեալ յախտից ըստ աշխարհին,
Քով հրամանաւ գործեալ զայսկին
Եկեղեցւոյ օրինակին,
Կոչել զդրացիս գերաշխարհին
Յուրախութիւն իմոյ դարձին

ՂՈՒ. ԺԵ, 8-10

Ուժ տուր ընդդէմ նըրանց սըրի
Ճըշմարտությամբ Դու Քո զենքի
Եվ պահպանիր վեհ անդամիս
Սաղավարտով Քո նըշանի:
Մուլորվեցի ոչխարի պես
Քո բանավոր հոտից այսպես,
Նըվազեցրի թիվն հարյուրի,
Որոնց վանքն ես թողել վերին:
Արի, սիրով փընտրիր մեկին,
Գրտիր, հանիր ուսով երկինք,
Լըրացրու պակասը դասի,
Ի խընդություն հրեշտակների:
Բարձրացրո՛ւ ինձ շատերի հետ,
Մեղքի աղտից մաքրիր ինձ, Տեր,
Ուր թավալ եմ տալիս այսպես,
Աղբասեր ու անմիտ ինչպես:
Լըվա դարձյալ ինձ արցունքով,
Որ շընորհվի անդարձ անձիս
Ուժգընահոս առատ վըտակ
Ավազանի նըման անտակ:
Եվ իր կամքով մուլորվածին
Դարձրու կամքիդ աստվածային:
Վերացրու կամքը իմ անկախ
Որ հընազանդ չի Քեզ անգամ:
Ինչ որ դուրս է բնականից,
Որ շնորհել ես բանականին,
Այն է պատճառ դառնում չարի
Եվ թուլության թըշվառ անձի:
Արքայական պատկերը Քո,
Դըրոշմված մարդկային դեմքով,
Աղբակույտում խոր թաղեցի
Կորըստաբեր խրատով չարի,
Որ լույսով ման գան ճրագի
Աստըծուդ պատկեր առած մարմնի.
Տունըս ախտերից աշխարհի
Մաքրիր ավելով ըստ Բանի,
Համաձայն Քո հըրամանի,
Եկեղեցու օրինակի,
Հոգիներին անդրաշխարհի
Կանչիր խընդությանն իմ դարձի

ՂՈՒ. ԺԵ, 11-32

Եւ զիս կըցորդ արա նոցին
Ի խրախուրթիւնն, որ է վասն իմ,
Զըւարճանալ ընդ ցընծալին,
Որք ըզմեղաց սուգն ոչ առին:
Հետեցայ ըստ անառակին
Ի հեռաբնակ տարաշխարհին,
Զհայրենական վատնեալ բաժին,
Զոր ընկալայ յաւազանին.
Յորում սովիմ կենաց հացիդ
Եւ ըմպելոյդ աստուածային:
Ի յարածել խոգերամին,
Չյագիմ մեղօք քաղցր եղջերին.
Զհայրըդ կոչեմ ըստ կըրտսերին,
Մեղայ ասեմ Քեզ ի յերկին.
Թէ և Որդւոյ կոչման ձայնին
Չեմ արժանի Հօրըդ վերին,
Արա՛ զիս մի ըստ վարձկանին,
Որք ընդ վարձու գործեն զբարին.
Ընդ ապրելոցն երրորդ կարգին,
Քանզի լուծի զսէր հայրենին,
Ի գիրկս ընկալ խնամոց վեհիդ,
Արժանացո՛ սուրբ համբուրին.
Փոխարկելով զհոտ անմահիդ
Ընդ դիակնեալ հոգւոյս հոտին:
Տո՛ւր ինձ ըզմիս պարարակին,
Ըմպել գինին, որ ի խաչին,
Զըւարճացո զդասս անմարմին
Ընդ մեռելոյս կենաց գիւտին:
Երեց որդի եբրայեցին
Եւ կամ որ են յարդար մասին,
Որք յօրինացն ագարակին
Յեկեղեցի Քո մերձ եկին,
Միայն լուան հեռուստ ձայնին
Պարակցելոյ մանկանց նորին,
Է ի տաճար անդր ոչ մըտին
Իբր ախտացեալք ըստ մարդկային.
Նախանձաբեկ գոլով նոցին
Առ փըրկութեամբ հեթանոսին,
Որոց նախնիքըն պարծեին,
Զի զՕրինօք Քո ոչ անցին.

ՂՈՒ. ԺԵ, 25...

Եվ ինձ նըրանց ընկեր դարձրու
Պատվիս տըրվող խըրախճանքում,
Որ ցընծալով զըվարճանամ
Նըրանց հետ, որ սուգ չունեցան:
Անառակին հետևեցի,
Հեռու երկրում բընակվեցի,
Հորըս բաժինը վատնեցի,
Որ ըստացա ավազանից,
Արդ կարոտ եմ կենաց հացիդ,
Աստվածային ըմպելիքիդ.
Խոզերի հետ եմ արածում,
Քաղցըր մեղքից չեմ հագենում,
Արդ Հորըդ եմ կանչում կըրկին,
Ինչպես այն հոր կըրտսեր որդին,
Մեղա ասում Քեզ ի երկինք,
Թեև որդու կոչման ձայնին
Չեմ արժանի Հորըդ վերին:
Չըլինեմ նըման վարձկանին,
Որ վարձով են գործում բարին.
Ապրողների հետ թող երրորդ,
Զի քանդել եմ սերը Քո Հոր:
Գըրկիր ինձ խընամքով վեհիդ,
Արժանացրու սուրբ համբույրիդ,
Փոխանցելով հոտն անմահիդ
Դիակի պես նեխած հոգուս:
Տուր ինձ միսը պարարտացած,
Ըմպեմ գինիդ խաչին թափված:
Թող ցընծան դասերն անմարմին
Ինձնով, որ կյանք առա կըրկին:
Ավագ որդին եբրայեցի
Կամ արդարները այդ ազգի,
Որ Օրենքով էին գընում,
Եկեղեցուն Քո մոտենում,
Լոկ լըսեցին ձայնը հեռվից
Նըրա հետ մանկանց դասակից,
Բայց մոտ չեկան այն տաճարին,
Իբր հիվանդ ախտով մարդկային,
Եվ լըցվեցին մեծ նախանձով,
Որ հեթանոսներն են փըրկվում:

ՀՈՍԵԱ, 16,
Թ, 1-5

ՂՈՒ. ԺԲ, 41-46

Որք ոչ միայն պարարակին
Զենմամբ Որդւոյդ չազատէին,
Այլ ոչ փոքու զենեալ ուլին
Հրեշտակական կամ մարդկային:
Թէ և նոցունց պարգևէին
Նախնի բարիքն ամենեքին,
Կըտակարանքն ըստ Պօղոսին
Եւ աւետիքն և Զոյդ մարմին,
Բայց առ ինն չհամեմատին
Միտք այսոցիկ, զի ոչ յանգին:
Այլ նախանձոտ իմ թըշնամին,
Ըստ արարչութեանն երեց որդին,
Որք չարախօս զինէն լինին
Միշտ անդադար Հօրդո վերին,
Որպէս Յոբաւ ծանուցանին
Եւ այլ բազմօք, որ ըստ կարգին,
Զորոց կարկել հայցեմ լեզուին
Եւ ոչ դընել ունկըն բանին,
Եւ մի մատնել փորձասիրին,
Թէ և խընդրէ զիս ըստ նըմին:
Արարչական բնութեամբ Զոյին
Մի տուն շինեալ բանականին,
Տընտես գոլով մարդն առաջին,
Յատակըս տանս այս երկրային.
Եւ յառաջեալ ծնընդոց նորին,
Տընտեսք ի Զէն զանազանին.
Ոմանք մարմնով գերափառին,
Եւ այլք բաշխօղք հոգևորին
Ի վեհ սկըսեալ թագաւորին
Մինչ ի խոնարհ գործակալին,
Եւ ի պետէ հարցն առաջին
Մինչ յիններորդ դաս խորանին,
Իւրաքանչիւր ոք ըստ կարգին
Տընտեսք ի Զէն կարգեալք լինին.
Ոմանք գոյից նիւթականին
Եւ այլք աննիւթ պարգեալ բանին:
Յորում եհաս վիճակ մասին
Եղեռնական թըշուառս անձին

Նախնիներն էին պարծենում,
Որ Քո օրենքը չեն անցնում,
Սակայն նրանք չազատվեցին
Ոչ միայն պարարտ զոհերով,
Այլև Որդուդ զոհաբերմամբ,
Փոքրը զոհեր չըմատուցին
Հրեշտակային կամ մարդկային,
Թեև նրանց նըվիրվեցին
Նախնի բարիքը ամենքին՝
Կտակարաններն, ըստ Պողոսի,
Ավետիսն ու մարմինը Քո,
Բայց այն ամենն, ինչ արեցին,
Արածիս հետ չես բաղդատի:
Չէ որ նախանձ իմ թըշնամին,
Ըստ արարչության երեց որդին,
Որ ինձնից է չարախոսում
Վերին Հորըդ միշտ, անդադրում,
Ինչպես պատմության մեջ Հովբի,
Եվ ըստ Գըրքի, շատ շատերի,
Չարի լեզուն դարձրու կարկամ,
Եվ մի լըսիր նըրան անգամ,
Թե ինձ ուզի, ինչպես Հովբին:
Քո բնությամբ արարչական
Կառուցվել է տուն բանական.
Մարդն է տընտեսը առաջին,
Հատակը տան այս երկրային:
Նըրանց զարմերն ես իմանում,
Իբրև տընտես զանազանում,
Ոմանք մարմնով են փառավոր,
Ոմանք բաշխող են հոգևոր՝
Ըսկսած վեհ թագավորից,
Մինչև խոնարի գործակալը,
Պետից առաջին հայրերի
Մինչ իններորդ դասը վերին,
Յուրաքանչյուրն ըստ իր կարգի
Տընտեսներ են կարգված Քեզնից,
Ոմանք նյութական գոյերի,
Ոմանք աննյութ վճիտ Բանի,
Ընդ որում ինձ ընկավ վիճակ
Թըշվառ անձի չար ու անարգ,

ՂՈՒ. ԺԶ, 1...

Ա ԿՈՐՆ. Թ, 17...

Տընտես լինել տանըն Քոյին,
Բաշխող Բանիդ աստուածային,
Տալ ի ժամու ծառայակցին
Ըզկերակուր կենաց հացին,
Ջոր ոչ ետու քաղցեալս անձին,
Այլ սովամահ թողի զնոսին:
Դարձեալ տընտես հաւատարիմ
Մարմնոյ Լ'հոգւոյ միտք անմարմին,
Զիւրաքանչիւր պէտըս նոցին
Տնօրինաբար տալ ըստ կարգին,
Կերակրելով բանիւ զհոգին
Եւ դարմանել չափով զմարմին.
Եւ յերկոցունց կացեալ միջին,
Պահել անվրէպ ըզկարգ նոցին:
Ի ծառայի գլով մասին,
Որպէս ստեղծէր կարգել զմարմին
Եւ տիրական իշխան զհոգին
Ըստ նախատիպ Քո պատկերին.
Բայց անիրաւս ի յերկոսին,
Ի յիմս անձին և յօտարին,
Նըմանեցայ անիրաւին,
Իմ վատութեանս օրինակին:
Որ ամբաստան զինէն լինին
Վասըն չարեացս, որ միշտ գործին,
Սուրբ պահապանս իմ անմարմին
Եւ մարմնաւորք, որք տագնապին:
Եւ ես չունիմ իմաստութիւն
Զօգուտն ընտրել ժամանակին,
Ոչ առ ի կեանս մինչ ի մարմին
Եւ ոչ կենաց անվախճանին,
Թէ ոչ ի լրումըն կենցաղոյս
Կարեմ գործել ես ըզբարին,
Եւ ոչ մուրալ յորոց ունին,
Զի ամաչեմ յոչ տալ նոցին:
Այլ Դու, առատ յամենայնին,
Տճւր ըզզըղջումն անգեղջս անձին,
Դառնալ առ Քեզ բոլորովին,
Նախ քան կոչման զիս յատենին,
Պարտապանաց դատաստանին՝

ՂՈՒ. ԺԶ, 3

Քո տան վերա տընտես լինել,
Աստվածային խոսքը բաշխել,
Ժամասացության ժամանակ
Կենաց հացի կերակուր տալ,
Որ չըտըվի քաղցած անձանց,
Այլ սովամահ թողի նըրանց:
Դարձրի տընտես հավատարիմ՝
Մարմնում պահել միտքն անմարմին,
Յուրաքանչյուր պետքը հոգալ,
Տնօրինաբար ըստ կարգի տալ,
Կերակրելով Բանով հոգին,
Դարմանելով չափով մարմինն
Ու երկուսից ընտրել միջինն,
Անվրեպ պահել կարգը վերին:
Հանց ստեղծել ես, կարգել մարմինն
Իբրև մասը ծառայական,
Հոգեկանն՝ իշխան տիրական,
Ըստ նախատիպ Քո պատկերի:
Բայց փուչ եղա ես երկուսին՝
Թե իմ անձին, թե օտարին,
Նըմանվեցի անիրավին,
Իմ վատության օրինակին,
Որին ես եմ ամբաստանում
Նրա գործած չար գործերում,
Սուրբ պահապաններս են տագնապում
Մարմընավոր և անմարմին,
Եվ ես չունեմ իմաստություն՝
Օգուտ քաղել ժամանակից,
Ոչ կյանքի մեջ մարմնական,
Ոչ էլ կյանքում հավերժական,
Ես չեմ կարող գործել բարի
Ընթացքի մեջ ամբողջ կյանքի,
Ոչ ունեցողներին մուրալ,
Զի ամաչում եմ՝ ետ չըտալ:
Իսկ Դու առատ ամեն ինչով,
Թող զըղջամ իմ անզեղջ անձով,
Դեպ Քեզ դառնամ ամբողջովին,
Մինչ կանչելն ինձ դատաստանի՝
Պարտապանների ատյանին,

ՂՈՒ. ԺԶ, 1...

Մասն ինչ թողուլ գոնե պարտին,
Հոգւոյս զյիսունըն մար ձիթին,
Մարմնոյս ըզքսան ըռո ցորենին.
Դարձեալ ըզկնի օծման շնորհին
Մեղուցելոյ զըղջականին,
Բազում շնորհել զյիսներեկին,
Տըկար բնութեանըն պատճառին:
Իսկ որ ի հաց Քո երկնային
Անմաքրապէս ըստ իմ մերձին,
Սակաւ թողուս թըլով քսանին,
Քանզի կարեօք չբըռնադատին:
Նա և ըզմեղս, որ ըստ հացին,
Գործով ծանո թանձրագունին.
Եւ զխորհրդովն, որ ըստ ձիթին,
Մաքրեա յինէն շնորհիւ Քոյին:
Շնորհեա՛ և ինձ ընդ տընտեսին.
Լինել արժան Քում գովեստին.
Թէ և որդի եմ աշխարհին,
Տո՛ւր ինձ զիմաստ մեղաց դարձին:

ՂՈՒ. ԺԶ, 19-31

Ընդ մեծատան փափկասիրին
Ես փափկացայ յառօրեին
Մարմնովս այսու անասնային
Ի փափկութիւն անըզգամին:
Զգեցայ զբեհեզն և զծիրանին,
Ի յանկուածոց բազմագունին.
Թէպէտ և ոչ զերևելին,
Այլ բազմագոյն կեղծօք զբարին:
Սեղան զեղխեալ ամենալին
Յոգնահանճար խահարարին,
Թակոյկ լըցեալ զանոյշ գինին
Զյիմարութեան առաջնորդին.
Ուրախ եղէ ես յայսպիսին
Յուրախութիւն անցաւորին.
Յերգ և քընար ձայն ախտային
Փոխան երգոցն աստուածային.
Եւ յայսպիսեաց բարեաց բազմաց,
Զոր շնորհեցեր պարզ և մասին,
Ո՛չ դարձուցի զտասներորդին
Քեզ ի Քոյոցըն պարզակին.

Մարել գոնե մասն իմ պարտքի,
Հոգուս հիսուն մարը ձեթի,
Մարմնիս քսան քոռը ցորենի:
Դարձյալ, մեղքերըս երբ զըղջամ
Եվ շընորհներդ ստանամ,
Շատ շընորհիր տեղն հիսունի՝
Տըկար բընությանըս պատճառի:
Իսկ երբ հացը Քո երկնային
Հասնի իմ անմաքուր անձին,
Քիչ թող ներվի, ըստ քսան թըվի,
Որ հոգին չըբըռնադատվի,
Այսինքըն մեղքն, ըստ ցորենի,
Որ թանձրագույն մասն է մեղքի.
Խորհըրդով ձեթի համեմատ
Մաքրիր ինձնից գութով առատ,
Տընտեսիդ հետ թույլ տուր և ինձ
Արժանանալ Քո գովեստին.
Թեև որդի եմ աշխարհի,
Տուր իմաստը մեղաց դարձի:
Ես մեծատան հետ փափկասեր
Վայելեցի կյանքն անցավոր,
Այս մարմընով անասնային
Եվ մեղկությամբ անըզգամի,
Հագա բեհեզ և ծիրանի
Բանվածքներով բազմագունի.
Բայց դըրսից ցույց չըտըվեցի,
Որ բարին ես միշտ կեղծեցի,
Վայելեցի սեղանը լի
Բազմաճարտար խոհարարի,
Լըցրած գավում անուշ գինի,
Որ առաջնորդն է հիմարի.
Եվ այսպիսով եղա ուրախ
Ես անցավոր ուրախությամբ,
Երզն ու քընար՝ ձայն ախտային,
Երգերի տեղ աստվածային.
Եվ այն բազում բարիքներից,
Որ իբր պարգև տըվել ես ինձ,
Տասներորդ մասն էլ չըդարձրի
Ինձ շընորհված պարգևների:

ՄԱՏ. ԻԵ, 31-40

ՄԱՏ. ԺԵ, 22-28

ՄԱՏ. Է, 17-23

ՂՈՒ. ԺԶ, 19...

Այլ սեպհական ինձ կարծէի,
Զորս ընդ յարկաւ ժողովէի
Յերկրէ, յօդոց և ծովային
Բիւրապատիկ բարիք Քոյին.
Յորոց չետու ես աղքատին
Եւ ոչ բարձի զպէտըս նոցին.
Ոչ կերակուր քաղցեալ անձին
Եւ ոչ ծածկոյթ մարմնոյ մերկին.
Ոչ հանգըստեան տուն տընանկին,
Ոչ օթեան հիւր օտարին.
Ոչ տեսութիւն առ հիւանդին
Եւ ոչ խնամել զորս ի բանտին,
Ոչ տըրտմակից եղէ վըշտին
Տըրտմելոյ յիրս առանձին,
Եւ ոչ խընդալ ընդ խընդալին,
Այլ նախանձու վառեալ նովին:
Որք և Ղազարք օրինակին,
Բազմապատիկք են և ոչ մին.
Առ դրունս անկեալ իմ արտաքին
Աղաղակեն ողորմագին,
Եւ ես անլուր ձայնից նոցին
Չտալով փըշրանս ըզսեղանին.
Յորում պոռնիկքըն յագէին
Եւ հացկատակք պարպատէին:
Շունք օրինաց Քոց արտաքին
Գոնէ լեզուաւ ողորկէին.
Եւ ես լըսող Քո հրամանին
Լեզուաւ հարի զՔո նըմանին:
Ի միտ չառի զմիտըս բանին՝
Զաստուածախօս Քո առակին,
Որք միշտ լըեալ անտես լինին,
Քանզի չունիմ ականջ ներքին:
Ոչ յիշեցի զմահ աղքատին՝
Ի հրեշտակաց տանել զհոգին,
ՅԱբրահամու նահապետին
Ի հաւատոց հանգչել զոգին:
Թէ օրինակ է մարդկային
Աղքատութեանց համբերողին,
Զի յետ ճըգանցըն վախճանին

Այլ իմն էի ես համարում
Այն, ինչ տանս էի ամբարում՝
Բարիքը Քո բյուրապատիկ
Երկրից, ծովերից և օդից,
Որ չըտըվի ես աղքատի,
Չըհոգացի պետքը նըրանց,
Ոչ կերակուր անձին քաղցած,
Ոչ էլ ծածկույթ մերկ մարմնին,
Ոչ հանգըստի տուն տընանկին,
Ոչ օթևան օտար հյուրին,
Ոչ այց արեցի հիվանդին,
Ոչ նայեցի բանտարկվածին,
Ոչ տըրտմակից եղա վըշտին,
Տըրտում բաներին առանձին,
Ուրախի հետ չըխընդացի,
Այլ նախանձով ես վառվեցի:
Որոնք նըման են Ղազարին,
Եվ բազմաթիվ են, ոչ թե մին.
Դըռներիս մոտ ընկած կըրկին,
Աղաղակում են ողբագին,
Ես չեմ լըսում նըրանց ձայնին,
Փըշրանք չեմ տալիս սեղանի,
Պոռնիկներն են որ վայելում,
Ծաղրածուներ շրջապատում,
Շունն անգամ, դուրս Քո Օրենքից,
Գոնե լեզվով է ողորքում.
Իսկ ես՝ լըսող պատվիրանիդ,
Լեզվով զարկի Քեզ նըմանին,
Միտըս չառա միտքը Բանիդ,
Աստվածախոս Քո առակի,
Որ անտեսում եմ լըսելով,
Քանզի չունեմ ականջ ներքին,
Չըհիշեցի մահն աղքատի,
Հըրեշտակի տարած հոգին,
Որ հավատով հանգավ գոգին
Մեր Աբրահամ նահապետի:
Զի օրինակ է մարդկային
Աղքատությանը համբերել,
Որ երբ տանջանքը փարատվի,

Յարքայութեան Տեառնըդ հանգչին.
 Եւ ոչ ըզմահ յըզփասիրին,
 Որ ի դըժոխս էջ ստորին:
 Յորում լեզուն պապակէին
 Ի տապ բոցոյ դառնագունին,
 Որ կարօտէր կաթիլ ջրիին
 Ի Ղազարէ ծագիւ մատին,
 Ընդ թակոյկաց լի բաժակին
 Բարձեալ մատանց մատըռուակին:
 Թէ մեծատանց, որ յախշարիի
 Սա առ ի խրատ բոլորովին,
 Մի պարարեր որդանց զմարմին,
 Այլ փոքր ինչ տալ և աղքատին:
 Արդ մի լըւայց զպատասխանին
 Ընդ մեծատանն զԱբրահամին,
 Թէ ընկալար Դու ըզբարին,
 Զոր գործեցեր զփոխարինին,
 Եւ Ղազարոս փոքու չարին
 Հատոյց ըզվրեժ ցաւօքն անձին.
 Որով սա աստ մըխիթարի,
 Դու պապակիս ի գեհենի.
 Այլ տուր աստէն զղջումն անձին,
 Ապաշաւել, զոր գործեցին:
 Ընդ յըզփութեան որովայնին,
 Պահօք ճընշել ըզստուար մարմին.
 Եւ ընդ երգոցըն պոռնըկին
 Ի գինարբուսն անառակին,
 Տուր ձայնս ողբոց արտասուագին,
 Լալ ինձ ի տուէ և գիշերին,
 Զի բորբոքեալ նոքօք հնոցին
 Վառումն այրմանց շիջանիցին,
 Եւ խորափիտ մեծի վիհին
 Լըցեալ անցայց ես առ նոսին:
 Եւ ընդ բարուց անողորմին
 Խառնե՛ն յիս գութ ողորմագին,
 Զի յողորմել իմ աղքատին՝
 Ողորմութեան հասից Քոյին:
 Ի յիմ քաղաք մարմնոյս դընին
 Աթոռ մըտաց դատաւորին,

Արքայութեանը մէջ հանգչել.
Եվ ոչ մահով հրդիասերի
Իջնել դժոխքը ստորին:
Մինչդեռ լեզուն էր պապական
Բոցի տապի մէջ դառնագուն,
Կարոտելով մի պուտ ջրի
Ղազարոսի մատի ծայրին,
Սափորից լըցված բաժակին
Ձեռքի վրա մատըռակի:
Մեծատուններին աշխարհի
Սա պարտադիր խըրատ է մի,
Մի չաղացրու դու որդերին
Այլ մի քիչ էլ տուր աղքատին:
Թող չըլսեմ պատասխանը
Աբրահամի՝ մեծատանը,
Թե կըստանաս դու քո բարին
Փոխարենը քո գործերի,
Չարիքն ընդդէմ Ղազարոսի
Կըհատուցվի ցավով անձի,
Որով նա կըմըխիթարվի,
Դու կընկնես հուրը գեհենի:
Այստեղ զըղջում տուր իմ անձին,
Ապաշավանք իմ գործերին,
Հըղփութեան տեղ որովայնի
Պահքով ճընշել մարմինը գիրգ,
Եվ երգերի տեղ պոռնիկի,
Խընջույքի տեղ անառակի
Արտասվագին ձայն տուր ողբի,
Որ արտասվեմ գիշեր ու տիվ,
Որ բորբոքված հուրն հընոցի
Արտասուքներով իմ հանգչի,
Եվ մեծ վիհի խորխորատից
Դուրս գամ հետը աղքատների:
Եվ հետն անողորմ բարիքիս
Խառնիր և գութ ողորմագին,
Ողորմելով որ աղքատին՝
Հասնեմ ես քո ողորմութեան:
Քաղաքում է դըրված մարմնիս
Գահը մըտքի դատավորի,

ՂՈՒ. ԺԸ, 1-8

ՄԱՏ. ԻԵ, 1...

ՄԱՏ. Բ, 19-20

ՄԱՏ. ԺԲ, 41-44

ՂՈՒ. ԺԸ, 2-8

Ի յաստուծոյ աներկիւղին
Ի՛ի մարդկանէ անամօթին,
Զի անձնիշխան է յայսպիսին,
Յոչ երկնչելն և յերկիւղին,
Եւ անպատկառ ըստ խորհրդոյն,
Զի յումեքէ ոչ տեսանին:
Աստ և հոգիս ի Քէն այրին
Ի փեսայէդ իւր երկնային,
Քանզի սեղեխն օտարոտին
Ի յառագաստ եմոյծ Քոյին.
Որ անդադար այրմամբ սըրտին
Աղաղակէ մըտաց խըղճին,
Իւր դատ առնել ընդ ոսոխին
Զըրկող մարմնոյ քաղաքակցին.
Զներքինն առնել դարձեալ վերին
Եւ ըզվերինն առնել ստորին,
Որպէս կարգեալ է արարչին՝
Հոգւոյ ծառայ լինել մարմին:
Ոչ կամելով անիրաւին,
Լըսել ձայնի աղաղակին
Վասն երկիւղի աստուածային
Եւ ամօթոյ ինչ մարդկային.
Սակայն աշխատ առնել այրւոյն
Յիշատակաւ խոցեալ վիրին,
Դատաստանի լըսեալ նորին
Ի նըշխարեալ ժամանակին:
Այլ դատաւորդ իմ երկնային,
Որով երկինք և՛երկիր դատին,
Դատաւորիս իմումս անձին
Դատել տացես զիս ըստ կարգին,
Զի մի յաւուր դատաստանին
Դատապարտիմ ընդ դատողին:
Յորժամ կապես ի միասին
Հոգւով զմարմին յանլոյծ կապին,
Ես զայրեցեալս ի Քէն դարձեալ
Կապակցեսցես սիրով Քոյին,
Փեսայ լինել հոգւոյս հարսին,
Յօդմամբ ի գլուխ Քո վերըստին:
Եւ զհակառակս ոսոխ մարմին
Նահանջեսցես ներքոյ նորին.

Աստծու առաջ աներկյուղի,
Մարդկանց առաջ անամոթի,
Զի անձնիշխամ է այդպիսին,
Որ վախ չունի, չի երկյուղում,
Որ խորհուրդից չի պատկառում,
Քանզի իրեն մարդ չի տեսնում:
Աստ հոգիս է այրվում Քեզնից՝
Վառվում երկնային փեսայից,
Քանզի սեղեխն օտարական
Քո առագաստը մուտք գործեց,
Որ անդադար այրմամբ սըրտի
Գոռա հոգիս խըղճի մըտոք,
Իր դատն անի նա ոսոխին,
Մարմնի բնակչին զըրկողին,
Որ ներքինն է դարձնում վերին,
Իսկ վերինը դարձնում ստորին,
Մինչդեռ կարգով արարչական՝
Մարմինն է լոկ հոգու ծառան,
Բայց անիրավը չի ուզում,
Որ լըսես ձայնն աղաղակիս
Վասն երկյուղի աստվածային
Եվ ամոթի այն մարդկային:
Բայց խոցվում է ամեն այրի
Հիշատակով խոցված վերքի՝
Դատաստանը լըսեց նըրա՝
Նախատեսված ժամանակին:
Դու՝ դատավորըդ իմ երկնային,
Որ դատում է երկիր, երկինք,
Դատավորին Դու իմ անձի
Դատել տուր ինձ ըստ պատշաճի:
Որ օրն ահեղ դատաստանի
Չըդատվեմ հետն ինձ դատողի:
Իսկ երբ կապես Դու միասին
Պինդ կապով հոգին և մարմին,
Եվ քեզանով այրվող հոգին
Կապիր Քեզ հետ սիրով խորին,
Փեսա դարձիր հոգուս հարսին
Զողելով զըլխիդ վերըստին,
Հակառակը՝ ոսոխի մարմինն
Արդ նահանջի ներսը խորին,

ՂՈՒ. ԺԸ, 10-14

Ծառայապէս լըսել բանին
Եւ անյապաղ գործել զբարին:
Օրինաւոր փարիսեցին
Աղօթելով ի տաճարին,
Դնէր առաջի զգործեալ բարին
Ամենատես աչաց Քոյին.
Հըպարտանայր յիմար հոգին
Առ հեռաւոր ազգ մարդկային,
Եւ ի վերայ մերձաւորին
Աղօթակից մաքսաւորին,
Զոր ոչ միայն զաղօթելին
Չէառ լեզուաւ մեծաբանին,
Այլ և յարդար գործոց նախկին
Վրիպեաց սնապարծ իւրով բանին:
Բայց զինչ ասեմ իմումս անձին
Ախտասիրիս բոլորովին,
Բարեաց գործոց հեղգագունին,
Չարեաց մասանց ժողովողին.
Զի բարութեանցն ոչ հետևիմ,
Յոր պանծացաւ փարիսեցին:
Եւ գերազանց լինիմ նըմին
Ի փառամոլ հըպարտ ախտին:
Այլ տո՛ւր ըզձայն մաքսաւորին,
Բաժել հոգւոյս մաքսապետին,
Աղաղակել բանիւ նորին՝
Աստուած, քաւե՛ա՛ զմեղս իմ անձին:
Արդարացո զիս ընդ նըմին,
Որպէս ըզնա միով բանին,
Խոնարհեցո զմիտս իմ ներքին,
Զի բարձրացայց շնորհիւ Քոյին:
Ընդ Ղազարու բարեկամին
Մեռեալ եղայ ի տապանին,
Ո՛չ քառօրեայ, այլ բազմամին
Մեռեալ հոգիս է ի մարմին.
Չայնըդ հնչե՛ա՛ յիս երկնային
Եւ լըսելի արա բանին,
Լո՛յծ ի կապից դժոխային,
Հա՛ն ի տանէս խաւարային:
Ընդ Զակեէի մաքսաւորին
Ո՛չ բարձրացայ յերկրէ ստորին

ՅՈՎԷ. ԺԱ, 1-10

ՂՈՒ. ԺԹ, 1-10

Ծառայի պես լըսի բանին
Եվ անհապաղ գործի բարին:
Օրինավոր փարիսեցին
Աղոթելով տաճարի մեջ
Յույց էր տալիս գործն իր բարի
Քո աչքերին ամենատես,
Հպարտանում էր հիմար հոգին
Հեռավոր ազգով մարդկային,
Ո՛չ իր կողքի մերձավորով,
Ջերմ աղոթող մաքսավորով,
Որ ոչ միայն աղոթքներում
Չասաց խոսքեր մեծաբերան,
Այլև արդար իր գործերով
Ջրպարծեցավ դատարկ խոսքով:
Իսկ ինչ ասեմ ես իմ անձին՝
Ախտասերին այդ գրլխովին,
Բարի գործում ծուլացողին,
Չար մասունքներ ժողովողին,
Ջի չեմ հետևում բարության,
Որով պանծաց փարիսեցին,
Այլ գերազանցում եմ նըրան
Հիվանդությամբ փառամուլի:
Դե ձայն տուր ինձ մաքսավորի
Հոգուս վարձ տամ մաքսապետին,
Աղաղակեմ խոսքով նըրա,
Աստված, քավիր մեղքն իմ անձի,
Արդարացրու նըրա հետ ինձ,
Խոնարհեցրու միտքըս ներքին,
Որ շընորհով Քո բարձրանամ:
Ղազարի հետ Քո բարեկամ,
Որ դըրված եմ տապանի մեջ,
Ոչ թե չորս օր, այլ տարիներ
Հոգիս մեռած է մարմընում.
Հընչեցրու ձայնըդ երկնային,
Լըսող արա ինձ Քո բանին,
Քանդիր կապը դըժոխային,
Հանիր տանից խավարային:
Ջաքեի հետ՝ մաքսավորի,
Չըբարձրացա երկրից ստորին
Բարձրագույն ծառը իմաստի՝

ՂՈՒ. ԺԹ, 9

ՄԱՏ. ՌԱ. 1-9

ՄԱՏ. ՌԱ. 18-22

ՄԱՏ. ՃԱ. 13-14

Ի բարձրագոյն ծառ իմաստին,
Ի տեսութիւնդ աստուածային.
Փռքըր հասակ հոգեւորին
Բարեաց գործովք յիս չաճեցին,
Այլ յարակայ նըւագեցին,
Մինչ կաթնարբու զիս արարին:
Դարձեալ յառակ հակառակին,
Ելի ի ծառ մարմնոյ ժանտին,
Ի քաղցրահամ սէր երկրային,
Որպէս և նա ի թըզենին.
Յորմէ հըզօր բանիւ Քոյին
Փութով իջո զիս ընդ նըմին,
Ագանելով ի տունս անձին
Ընդ Քեզ և Հայր և Սուրբ Հոգին,
Հոգւոյս զրկման տալով զմարմին
Զծառայութիւնըն չորեքկին,
Եւ զկէս գոյից մարմնականին
Աղքատացեալ տիրականին.
Զի փըրկական առ նա բանին
Արժանացայց Քոյոյ ձայնին,
Որդիս գոլով Աբրահամին
Ըստ հաւատոյ նահապետին:
Որ յօրինակ հրեականին
Եւ անմաքուր հեթանոսին,
Նըստար ի յէշ յաւանակին
Զգօնացելոյն և տըրմըղին,
Մաքրեա՛ և զիս ըստ առակին
Եւ յիս հանգիր Հոգւով Քոյին.
Արա՛ աթոռ զիս երկնային,
Բազմեաց յոգիս ըստ քրովբէին:
Եւ ըստ միւսում օրինակին
Հրէից ազգաց առ թըզենին,
Զոր ի խընդիր գոլով պըտղին,
Ոչ ընծայեաց զերախայրին,
Մի՛ անիծեր զիս ըստ նոցին,
Թէ և նըման եմ անբերին,
Զի մի տերևըն հաւատին
Պըտղով գործոցն իմ չորասցին.
Այլ հաստատեա՛ զիս ի բարին,
Որպէս և զուռն ի սուրբ որթին,

Տեսությանըդ աստվածային:
Փոքր հասակըս հոգևոր
Չաճեց իմ մեջ բարի գործով,
Այլ մըշտապես այն նըվազեց
Մինչև կաթնակեր ինձ դարձրեց:
Դարձա նման իմ ոսոխին,
Ելա ծառը ժանտ մարմընի,
Սիրով քաղցըր ու երկրային,
Ինչպես ելավ նա թըզենին,
Այնեղից Քո հըզոր խոսքով
Նըրա պես ինձ ցած բեր փութով,
Տունն իմ անձի զարդարելով
Քեզ հետ Հորով և Սուրբ Հոգով:
Հոգիս զըրկված հանուն մարմնի՝
Ծառայեցի ես քառակի
Գոյին մարմընական կեսի,
Տեր Աստծուց աղքատացած,
Որ փըրկական խոսքով առ նա
Ես Քո ձայնին արժանանամ,
Որդի գալով Աբրահամի,
Ըստ հավատի Նահապետի:
Օրինակով հրեաների,
Անմաքուր հեթանոսների,
Նըստար էշին, ավանակին,
Որ մեկ խելոք է, մեկ էլ գիժ,
Մաքրիր և ինձ, ըստ առակի,
Մեջըս հանգչի թող Քո Հոգին,
Բազմեցրու գահն ինձ երկնային
Հոգիների, ըստ քերովբեի:
Եվ ըստ մըլուս օրինակի՝
Թըզենու և հրեա ազգի,
Որից պըտուղը խընդըրվեց,
Երախայրին բայց չընծայվեց,
Մի անիծիր ինձ նըրանց պես,
Թեև այդպես անբեր եմ ես,
Եվ թող տերևը հավատի
Չըչորանա գործով պըտղի,
Այլ բարու մեջ ինձ հաստատիր,
Ինչպես որ մատը սուրբ որթին,

ՄԱՏ. ԻԲ, 18-22

ՄԱՏ. ԺԲ, 15-17

ՂՈՒ. Ի, 24-26

Զոր մըշակէ Հայրըդ վերին,
Պըտղաբերէ յաճումն Հոգին:
Եւ զանպըտուղ ծառըս քաղցրին
Եւ զպըտղատուս դառնագունին
Մի հատաներ յայգւոյ Քոյին,
Այլ փոփոխեմ բրելով յաղբին:
Հրաւիրեցայ յառաւօտին
Իմ ի սկըզբան յաշխարհ մըտին,
Գործել յայգի պատուիրանին,
Ընդ Քո պատկեր դահեկանին.
Եւ ես չլուայ հրաւիրողին,
Մըտանելով միայն յայգին.
Բայց հեղգացայ ի գործ բանին,
Որով չունիմ ակըն վարձին:
Այլ, Տէր, առատ յամենայնին,
Տնւր ինձ ձերի զպարգև շնորհին
Ընդ մըշակաց մետասանին
Մըտեալ յայգի յԱդին դրախտին:
Ի հարսանիսն աստուածային՝
Զոր Հայր արար Քեզ, Միածին,
Կոչեաց և զիս ձայն քարոզին,
Ուրախանալ յանճառելին.
Աստ ի խորհուրդ Քո խորանին
Եւ անդ աննիւթ քաղաք վերին,
Յաւեթական յանպատմելին
Յանփոխական ուրախալին:
Եւ քանզի զգեստ պայծառ չունիմ
Արժանաւոր հարսնարանին,
Զի սևագոյն մեղօքս անձին
Աղտեղեցի զաւազանին,
Զգեստ և զգեցող Տէր անքընին,
Զգեցն զիս Քև այժմիկ կըրկին.
Եւ զպատմուճանըն զառաջին
Պայծառացն զայժմ աղտեղին,
Զի մի լըւայց Տեառնըդ ձայնին,
Զընկերն անուն ընդ եղկելին,
Եւ մատնեցայց նըման նըմին
Ի բանտ անել դըժոխային:
Չիմաստնացայ ես յերկոսին՝
Ըստ իմաստնոց կուսից հընգին,
Զի զդիւրագինն ընդ դըժուարին

ՄԱՏ. ԻԵ, 1-13

Որ մշակում է Հայրըդ վերին,
 Պըտղաբերում աճամբ Հոգին:
 Անպըտուղ է ծառըս քաղցրից,
 Բայց պըտղատու դառնագույնից,
 Ինձ մի հատիր այգուց Դու Քո,
 Այլ փոփոխիր սընունդ տալով:
 Աշխարհ գալուս օրից ի վեր
 Առավոտվա կար հըրավեր՝
 Տընկել այգին պատվիրանի
 Քո առակով դահեկանի:
 Հրավիրողին ականջ չարի
 Եվ ես միայն մըտա այգի,
 Բայց ծուլացա բան ու գործից,
 Ուստի չունեմ ես հույս վարձի:
 Դու, Տեր, առատ ամենայնի,
 Տուր ինձ ձըրի պարգև շնորհի,
 Մըշակների հետ տասնըմեկ
 Եդեմական այգին մըտնեմ:
 Հարսանիքին աստվածային,
 Որ Հայրն արեց Քեզ, Միածին,
 Քարոզի ձայնն ինձ էլ կանչեց,
 Որ ես անչափ ուրախանամ.
 Աստ խորհուրդով Քո խորանի,
 Անդ՝ քաղաքով աննյութ վերին՝
 Հավերժական անպատմելի
 Եվ մըշտապես ուրախալի:
 Բայց ես չունեմ պայծառ զգեստ
 Հարսանյաց տանը արժանի,
 Ջի սևագույն մեղքերիս հետ
 Ավազանն իմ աղտոտեցի:
 Ջգեստ հագցնող Տեր անքնին,
 Քեզնով հագցրու և ինձ կըրկին
 Եվ պատմուճանըս առաջին
 Մաքրիր, հանիր դու կեղտերից.
 Չըլըսեմ ձայնըդ տիրական,
 Ընկեր անունն հետն եղկելու,
 Չըմատնըվեմ նըրա նըման
 Անել բանտին դըժոխային:
 Չիմաստնացա այդպես կըրկին
 Նըման իմաստուն հինգ կույսին,
 Դըժվարի տեղ հեշտը առա,

ՄԱՏ. ԻԵ, 14-30

ՂՈՒ. ԺԹ, 12-27

Ո՛չ ըստացայ ես ըզբարին,
Այլ յիմարացն եղէ յետին,
Ո՛չ պահելով իւղ լապտերին,
Ընդ կուսութեան զողորմութիւն
Եւ կամ զօծումն աւազանին:
Որք ի գիշերն անգործ վերջին
Ինձ արծաթով ոչ վաճառին.
Որով և դրունք հարսնարանին
Հեղգացելոյս ընդդէմ փակին:
Այլ աստանօր մինչ ի մարմին,
Փեսադ իմ, լճւր հոգւոյս հարսին,
Զոր փոխան անդր աղաղակին
Այժմիկ գոչեմ ողորմագին.
Բայց ինձ ըզդուռնըդ երկնային,
Մոյծ յառագաստըդ Քո վերին,
Արժանացո սուրբ համբուրին
Անախտական մաքուր գըրկին:
Ինձ մի լիցի լըսել ձայնին,
Զոչ գիտական պատասխանին,
Այլ տո՛ւր վառել շիջեալ ջահին
Մըտաց կուրիս լուսով Քոյին:
Նըմանեցայ չար ծառային,
Ի տաղանդացն ոչ շահողին,
Եւ գերազանց գըտայ նըմին,
Զի կորուսի զպարգև շնորհին:
Ոչ գործեցի ըզՔոյն կըրկին,
Քառեակ զերկուս տասն ըզհնգին,
Զի տիրէի բոլորովին
Տասըն քաղաք զգայականին.
Այլ թագուցի յերկիր ըզմին
Ծրարեալ ախտիւք վարշամակին:
Չարկի զարծաթն ի սեղանին,
Զի խընդրէիր ըզտոկոսին:
Ա՛յս է ըզբան պատուիրանին
Ի լըսելիս տիրականին,
Որք են սեղան իմանալի
Իմաստութեան կենաց հացին:
Վասն այսորիկ ես ակն ունիմ
Ընդ մէջ հատմանն և խաւարին,
Մինչ ի խընդիր գաս տաղանդին,

Այդպես բարին ես չըստացա,
 Հիմարներից վերջինն եղա,
 Չըպահեցի ձեթը լապտերի,
 Կուսության հետ ողորմություն
 Կամ էլ օծումն ավագանի,
 Որ անգործ եղած գիշերով
 Չեն վաճառի ինձ արծաթով:
 Ուստի դըռներն հարսանյաց տան
 Ծուլլիս առաջ փակել կըտան:
 Ուստի մարմնիս մեջ եմ քանի,
 Փեսա, լըսիր հոգուս հարսին,
 Աղաղակի տեղ դըժոխքի
 Այժմ եմ գոչում ողորմագին:
 Բնաց ինձ դուռը Քո երկնային,
 Տար առագաստը Քո վերին,
 Արժանացրու սուրբ համբույրին
 Անախտական մաքուր գըրկին,
 Թող չըլըսեմ ես Քո ձայնին,
 Ոչ ամոքիչ պատասխանին,
 Այլ թող ջահը հանգած վառի
 Քո սուրբ լույսով մըտքով կույրիս:
 Նըմանվեցի չար ծառային,
 Տաղանդներից չըշահողին
 Եվ օրինակ նըրան դարձրի,
 Կորցրի պարզևը շընորհի:
 Քո տաղանդը՝ կըրկընակի,
 Երկու տաղանդը չորս չարի,
 Ոչ էլ հինգը տասը դարձրի,
 Զի ինձ իշխեց և այս անգամ
 Տասը քաղաքն ըզգայական.
 Այլ հողի մեջ մեկը թաքցրի,
 Մեղքի շորում ծըրարեցի:
 Սեղանին արծաթ չըդրի
 Ըստ Քո խընդրած տոկոսների:
 Սա է և խոսք, և պատվիրան,
 Լըսել միշտ Բանըդ տիրական,
 Որ սեղան է իմանալի
 Իմաստության կենաց հացի:
 Ահա ինչու եմ ես սպասում
 Լույսի-խավարի սահմանում,
 Որ տաղանդը ետ դարձնես ինձ,

Զոր շնորհեցեր յաւազանին:
Այլ փըրկողիդ իմոյ անձին
Լալով յինէն այս ասացին.
Թէ մինչ ի ձեռս է ինձ բարին,
Տո՛ւր Զեզ Խաճոյ լինիլ Նովին.
Որով լըւայց զուրախալին
Ընդ ծառայի հաւատարմին,
Թէ մուտ ի տունն իմ յերկնային
Յուրախութիւն Տեառնըն Քոյին:
Ունայնութեամբ անկեալս անձին
Սա սակս յիշման կատարեսցին,
Կենաց բաշխողք միշտ անթերին
Ի ձեռք և մեզ ձիր շնորհեսցին:

Որ շընորհվեց ավագանից,
Ահա Փըրկողիդ իմ անձի
Ինձ համար լալով ասացին.
Թե մինչ ձեռքիս մեջ կա բարի,
Թող նա էլ քեզ հաճո լինի,
Որ լըսվի լուրն ուրախալի
Ծառայի հետ հավատարիմ:
Թե երկնային տունըս գընա,
Որ Տերը քո ուրախանա,
Ունայնությամբ ընկած անձիս
Աղոթքի իղձը թող լինի,
Կյանքի բաշխողը անթերի
Ձեզնից թող մեզ ձիրք շընորհի:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՆՈՐԻՆ ՆԵՐՍԷՍԻ ՎԱՍՆ ԽԱԶԻ ԵՒ ՉԱՐԶԱՐԱՆԱՏՆ

ՅՈՂՎ. ԺԳ, 1-20

ՄԱՏ. ԽԶ, 36...

ՆՈՒ. ԽԳ, 42...

Որ զփըրկական խորհուրդ խաչին
 Յյայտնեալ ցուցեր յերեկոյին
 Եվ զկենարարըդ Քո մարմին
 Բաշխեալ ետուր ընդ բաժակին,
 Արա և զիս ընդ սուրբ դասին
 Հաղորդ լինել Քում սեղանին,
 Կենաց հացիդ, յորմէ սովիմ,
 Եվ ըմպելւոյդ, ում ծարաւիմ:
 Որ մաքրեցեր յաւազանին
 Մաքուր ձեռօք զոտըս նոցին
 Եւ ուսուցեր զխոնարհութիւն,
 Զոր նախ բանիւ յայնժամ յիրին,
 Լըւան և զիմ տիղմըն չարին
 Աղաչանօք սըրբոյ գընդին
 Եւ ըզգընացս ուղղեան զոտին
 Խոնարհութեամբ ելիւք յերկին:
 Որ ըզբնութիւն Քո մարդկային
 Յուցանելով ի գիշերին,
 Տազնապեցար Դու յերկիւղին,
 Աղօթեցեր առ Հայր յերկին,
 Փըրկեան և զիս գաղտնի նետին
 Եւ յերկիւղէ գիշերային,
 Մասունք հոգւոց մեր և մարմին
 Յերկիւղ Քո սուրբ բեռնեսցին:
 Որ կապեցար ընդ կապելոյն,
 Արձակեցեր զհանգոյց կապին,
 Զիս արձակեան յինքնակապէս
 Կապից մեղաց դժոխսային:
 Որ ընդ մեղօք պարտաւորին
 Կացեր անմեղդ ի յատենին,
 Յորժամ փառօք գաս հայրենին,
 Մի դատեսցես զիս ընդ նմին:

**ՆՈՒՅՆ ՆԵՐՍԵՍԻ ԳՐԱԾ՝ ԽԱՉԻ ԵՎ
ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Խաչի խորհուրդը փըրկական
Դու հայտնեցիր երեկոյան
Եվ կենարար մարմինը Քո
Բաշխեցիր մեզ բաժակի հետ:
Սուրբ դասի հետ դարձրու և ինձ
Սուրբ սեղանիդ հաղորդակից,
Իմ փափագած կենաց հացիդ,
Իմ պապական ըմպելիքիդ:
Ավագանո՛ւմ Դու մաքրեցիր
Նըրանց ոտքը մաքուր ձեռքով,
Խոնարհությունն սովորեցրիր,
Որ իմաստով է իսկությունն,
Լըվա միջիս տիղմը չարի
Աղաչանքով Քո սուրբ գընդի
Եվ ընթացքը ուղղիր ոտքիս՝
Խոնարհական ելքով երկինք:
Դու բընությունը մարդկային
Ցույց տըվեցիր կեսգիշերին,
Տազնապեցիր Դու երկյուղով,
Դիմեցիր Հորըդ աղոթքով,
Փըրկիր և ինձ գաղտնի նետից
Եվ գիշերվա երկյուղներից,
Մարմինն ու մասերը հոգու
Թող բւեռվեն Քո երկյուղին:
Որ կապվածի հետ կապվեցիր,
Կապի հանգույցն արձակեցիր,
Արձակիր ինձ էլ Դու ինքնին
Կապից մեղքի դժոխային:
Որ մեղքերով մեղապարտի
Անմեղ ելար մեջն ատյանի,
Երբ գաս հայրական Քո փառքով՝
Ինձ չդատես իմ մեղքերով:

ՄԱՏ. ԻԷ, 30

ՄԱՏ. ԻԶ

ՄԱՏ. ԺԴ

ՂՈՒ. ԻԲ

ՅՈՂՎ. ԺԸ

ՄԱՏ. ԻԷ, 28...

ՄԱՏ. ԺԵ, 17...

ՄԱՏ. ԻԷ, 29

Որ ձաղեցար ի թուք պղծին
Վասն ամօթոյ նախաստեղծին:
Ջընջեան զամօթ մեղաց լըրբին,
Որով զերեսս իմ ծածկեցին,
Որ ներեցեր չար ծառային,
Ածեալ ձեռք Քեզ ապտակին:
Հար ուժգնակի զդմըս չարին,
Որպէս և զիս եհար յուժգին,
Որ ոչ թողեր հոսիլ վիմին,
Ի խոր մեղաց անդընդային,
Այլ դառնապէս լալով սըրտին,
Քաւիչ եղեր ուրացողին:
Կանգնեան և զիս նըման նըմին
Ի գլորմանէ սայթաքողին,
Յորդ արտասուս տալով աչացս
Եւ ջուր գըլխոյս նըման ծովին:
Որ ըզգեցար ըզծիրանին,
Արկար քղամիդ կարմիր յանձին,
Նախատանաց, զոր կարծէին,
Ջինուորք Պոնտայ Պիղատոսին,
Ըզքուրձ մեղաց մերկեան յինէն,
Ջորդան կարմիր արեան գունին
Եւ ըզգեցն զուրախալին,
Որ զգեցուցեր զմարդն առաջին:
Ի ծունր իջեալ կատակէին,
Խաղ առնելով ծիծաղէին,
Յոր հայեցեալ զօրք երկնային,
Ահիւ երկիր պագանէին,
Ջի ըզբնութեանս ադամային,
Քարձցես զամօթ մեղսասիրին
Եւ զիմ հոգւոյս մըտաց խըղճին
Լուծցես զամօթըն տըրտմագին:
Որ ըզգլուխ Քո զերկնային,
Յորմէ սարսեալ սերովբէին,
Ծածկեալ ձորձովքըն կըռփէին
Եւ եղեգամք հարկանէին:
Վասըն գըլխոյ հողեղինին,
Խոնարհելոյ կընոջն ոտին,

Որ թուք ու մուրը կերար պիղծի,
Վասն ամոթի նախաստեղծի,
Հան ամոթը լըրբի մեղքի,
Որով երեսն է իմ ծածկված,
Որ ներեցիր չար ծառային,
Կըրելով ցավը ապտակի,
Զարկիր ուժով չարի դեմքին,
Ինչպես նա ինձ զարկեց ուժգին:
Որ չըթողիր ընկնել վեմին
Մեղքի խորքը անդընդային,
Այլ լաց եղավ նա դառնագին,
Քավիչ եղար ուրացողին:
Ինձ էլ նըրա պես կանգնեցրու
Գըլորումից սայթաքելու,
Հորդ արցունքներ բեր իմ աչքին
Եվ ծովի պես ջուր իմ գըլխին:
Դու, որ առար վառ ծիրանին,
Ալ ջըղամիդը Քո անձին՝
Նախատինքի տակ եղկելի
Պիղատոսի զինվորների,
Պոկիր ինձնից բուրձը մեղքի,
Որդան կարմիրն արյան գույնի,
Հագցրու ինձ շոր ուրախալի,
Որ առաջին մարդուն հագցրիր:
Խընդում էին ծուներ իջնելով,
Ծաղրում էին խաղք անելով,
Մինչ երկնային զորքն էր նայում՝
Ահով Քեզ էր երկըրպագում:
Ադամային իմ բնությունից
Հան ամոթը մեղսասերի:
Հոգուս ամոթը տըրտմագին
Ցըրիր, հանիր մըտոք խըղճի:
Նըրանք գըլխին Քո երկնային,
Որից սերովբեն էր սարսում,
Ձորձով ծածկած զարկում էին
Եվ հարվածում եղեգներով,
Գըլխի համար հողեղենի,
Ոտքերիդ ծուներ իջնող կընոջ,

ՄԱՏ. ԻԷ, 29

ՄԱՏ. ԻԷ, 34

ՅՈՂՎ. ԺԹ, 29-30

ՅՈՂՎ. ԺԹ, 17

Զի վեհագոյն երկնից դասին
Ըզնա դիցես ի Քոյդ մարմին:
Եւ զիմ անկեալ մինչ ի գետին
Եւ խոնարհեալ ոտից չարին
Վասըն գործոյ անօրինին,
Որ զիս յերկիր կործանեցին:
Մի թողուցու խաղալ նովին,
Որպէս մանկանց գընտակ խաղին,
Այլ փըրկեսցես ի թըշնամոյն,
Յօդել ի գլուխ Քո վերըստին:
Որ ի բոլոր Քոյին մարմին
Եւ բովանդակ մասն անդամին
Առեր սաստիկ զհարուածս գանին
Յետ վըճըռոյ դատաւորին:
Զիս որ յոտից մինչև ցըգլուխ
Յաւօք նեղիմ անհընարին,
Առողջացն դարձեալ կըրկին,
Որպէս շնորհօք աւագանին:
Որ փոխանակ մեղաց փըշին,
Զոր մեզ անէծքըն բուսուցին,
Պըսակ ի փշոց ի գլուխ եդին
Մըշակք այգւոյն Իսրայէլին,
Խըլեան ըզփուշ մեղաց յինէն,
Զոր յիս եհար իմ թըշնամին
Եւ ողջացն զխայթուած վիրին,
Զի սպիք մեղացըն ջընջեսցին:
Որ ընդ պըտղոյ քաղցրագունին,
Դառըն խայթիւ մահացուցչին,
Ճաշակեցեր զխառնեալ լեղին
Եւ ըզքացախն ի ծարաւին,
Ըզդառնութիւն թունաւորին,
Զոր ի մասունս հոգւոյս արկին:
Մաքրեան ի բաց հանդերձ նովին
Եւ քաղցրասցի սէր Քո ի սմին:
Որ փոխանակ մահաբերին
Ծառոյն բուսեալ ի մէջ դրախտին,
Բարձեր ի յուս Քո զփայտ խաչին,
Մինչ ի տեղի Գողգոթային,

Որ վեհագույն երկնի դասում
Նա էլ ելնի Քո մարմնում:
Իսկ ես՝ ընկած մինչև գետին
Եվ խոնարհված չարի ոտքին
Գործի համար այն անօրեն,
Որ ինձ երկրում կործանեցին:
Մի թող նըրան խաղալ ինձնով,
Ինչպես մանուկը գընդակով,
Այլ ազատիր ինձ թըշնամուց,
Հոգիի գըլխիդ հետ վերըստին:
Որ բովանդակ Քո մարմնով,
Մարմնիդ բուրբ անդամներով
Առար հարվածը ծեծերի
Վըճռից հետո դատավորի,
Ինձ, որ ոտքից գըլուխ մինչև
Ցավով նեղվում եմ հարատև,
Առողջացրու դարձյալ, կրկին,
Ինչպես շնորհով ավազանի:
Որ փոխանակ մեղքի փըշի,
Որ աճեցրեց անեծք մեր մեջ,
Գըլխիդ դըրին պըսակ փըշի
Այգեպաններն Իսրայելի,
Խըլի՛ր ինձնից փուշը մեղքի,
Որով զարկեց ինձ թըշնամին,
Ապաքինի՛ր խայթը վերքի,
Թող սպիները ջնջվեն մեղքի:
Որ քաղցրագույն պըտուղի հետ
Դառը խայթով մահացնողի
Ճաշակեցիր խառնած լեղին
Եվ քացախը ծարավ պահին,
Դառնությունը թունավորի,
Հասած հոգու իմ մասերին,
Մաքրի՛ր հոգիս դառնությունից,
Թող քաղցրանա սերըդ դեպ ինձ:
Որ փոխանակ մահաբերի՝
Դրախտի մեջ բուսած ծառի՝
Ուսիդ բարձած խաչը փայտյա,
Տարար այնտեղ՝ դեպ Գողգոթա,

Զիմ առ ի մեղս անկեալ հոգի
 եւ ծանրագոյն բարձող բեռին,
 Թեթևացո՛ղ քաղցըր լըծով
 եւ փոքրոգի բեռամբ խաչին:

ՄԱՏ. ԺԵ, 25-27 Որ յուրբաթու ժամ երրորդին,
 ՄԵԾ ՈՒՐԲԱԹՆ Զօր պատրանաց նախաստեղծին
 ՆԿՐՎԱԾ ՏԱՂՈՒՄ Բնեռեցար Տէր ի խաչին
 ԸՆԴՈՒՆԱԼԻՆՔՐԻՍ- Ընդ անօրէն աւազակին:

ՏՈՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԷ- Ձեռք, որ զերկիր հաստատեցին,
 ՆԵՐԸՅՈՒԳՈՐԴՈՒՄ Տարածեցեր զայն ի խաչին,
 Է ԱՌԱՋՈՆՄԵՂԵՐ Փոխան նոցա ձըգման ձեռին,
 ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ: Զոր ի ծառոյն մահ կըթեցին:

ԱՐԱՄԻ ԵՎ ԵՎԱՅԻ Զիս որ յանցեայ նըման նոցին
 եւ առաւել քան ըզնոսին,
 Ձեռամբ տընկեալ տունկ Գոմորին,
 Պըտող կըթեալ սողովմային,
 Մի տուժեսցես չափով չարին,
 Մի պահանջեր զհամար պարտին:

Այլ լեր քաւիչ իմոյ յանցին,
 Որպէս նոցա անյոյս վայրին:
 Որ բարձրացար ի սուրբ խաչին,
 Բարձեր զյանցանըս մարդկային
 եւ ըզբնութեան զթըշնամին
 Բնեռեցեր Դու ի նըմին,
 Զիս ամրացո՛ղ ընդ հովանեաւ
 Ամենայաղթ Քո նըշանին
 եւ ի ծագելն յարևելից
 Լուսաւորեա՛ւ լուսով նորին:

ԴՈՒ. ԻԳ, 38-44 Որ աջակողմ աւազակին
 Բացեր ըզդուռն Ադին դրախտին,
 Յիշեա՛ւ զիս, Տէր, յորժամ գայցես
 Արքայութեամբ Քո հայրենին,
 Լուայց և ես ըզգընծալին
 ԶՔո ասացեալ պատասխանին,
 Այսօր ընդ իս իցես յԱդին
 Ի հայրենիս Քո առաջին:

Որ ողբալով բախմամբ սըրտին
 Տեառնըդ իմոյ մայր առ խաչին,

Մեղքում ընկած հոգիս էլ առ
եվ ծանրագույն բեռիդ հետ տար,
Թեթևացրու քաղցըր լըծով՝
Այն է՝ խաչի թեթև բեռով:
Որ ուրբաթի երրորդ ժամին,
Օրը խաբման նախաառեղծի
Բևեռվեցիր, Տեր, Դու խաչին
Հետն անօրեն ավազակի,
Ձեռքըդ, որ երկիրը ստեղծեց,
Խաչի վըրա լայն տարածվեց,
Փոխարենը նըրանց ձեռքի,
Որոնք ծառից մահ քաղեցին:
Նըրանց պես ես մեղանչեցի
եվ նըրանցից էլ ավելի,
Ձեռքով տընկի տունկ Գոմորի,
Պըտուղն առա ես Սողոմի,
Մի պատժիր ինձ չափով չարի,
Մի պահանջիր սակը պարտքի,
Եղիր քավիչ իմ հանցանքի,
Ինչպես նըրանց անհույս վայրում:
Դու, որ սուրբ խաչը բարձրացար,
Մարդկանց հանցանքը վեր առար,
Եվ բընությամբ մեր ոսոխին
Բևեռեցիր Դու նըզովքին,
Ինձ էլ վերցրու հովանուդ տակ
Ամենահաղթ սուրբ նըշանիդ
Եվ ծագման հետ արեգակի
Ինձ լույսը տուր Քո խորհուրդի:
Այն աջ կողմի ավազակի
Համար բացիր դուռը դրախտի,
Հիշիր ինձ, Տեր, երբ այստեղ գաս
Արքայությամբ Քո հայրական,
Թող լըսեմ ես էլ ցընծալի
Ձայնը տըված պատասխանի.
Այսօր ինձ հետ մըտնես եդեմ՝
Հայրենիքը Քո առաջին:
Որ ողբալով բախմամբ սըրտի
Մայրն իմ Աստծու, մոտը խաչի,

ՄԱՏ. ԴԷ, 46

ՄԱՏ. ԺԵ, 34

Յորժամ լըսէր ըզծարաւին,
Հեղոյր արտօսըր ցաւագին:
Տացես և ինձ հեղուլ վասն իմ
Յորդ արտասուս նըման ծովին,
Զի լըւացից գյանցանս անձին
Եւ զաղտ հոգւոյս պատմուճանին:
Որ յահագին գոչման ձայնին
Բարբառելով զէլի էլին
Հիմունք երկրի տատանէին,
Լերինք բարձունք սասանէին
Եւ վարագոյր Հին օրինին
Վերուստ ի վայր պատառէին
Եւ գերեզմանըք բանային,
Մարմինք սըրբոցըն յառնէին,
Արեգական լոյս քօղարկեալ
Խաւարանայր միջօրէին,
Նա և լուսինն, օրինակին,
Փոփոխելով յարեան գունին,
Քանզի ըզՏերդ իւրեանց տեսին,
Մերկ ի խաչին, չհանդուրժեցին:
Որ փոխանակ բանականին
Անբան տարերջըն սարսէին,
Արդ ընդ վիմացն, որ շարժէին,
Շարժեան զանշարժ սիրտս ի բարին,
Ընդ մեռելոցն, որ կանգնէին,
Կանգնեան զմեղօք մեռեալ հոգիս,
Ընդ պատառել վարագուրին,
Վասըն պարտեացն նախաստեղծին:
Զիմ պատառեան զհնութիւն չարին,
Զընջեան ըզգիր մեղացս անձին,
Ընդ խաւարիլ լուսաւորին,
Հերքեան յինէն զգունդ խաւարին,
Ընդ լուսանալ յիններորդին,
Լուսաւորեան զիս վերըստին,
Ընդ մերկանալ Քո ի փայտին
Ընդ մերկութեան նախաստեղծին:
Զիս ծածկեսցես փառօք Քոյին
Յաւուր մեծի հրապարակին:

ՄԱՏ. ԺԵ, 34

ՄԱՏ. ԴԷ, 44

Երբ լըսում էր, ծարավ ձայնին,
 Արցունք էր թափում ցավագին:
 Թող ինձ համար թափեմ և ես
 Հորդ արցունքներ՝ ծովը ինչպես,
 Որ լըվացվի հանցանքն անձիս,
 Աղտը հոգուս պատմուճանիս:
 Երբ ահարկու ուժով ձայնը
 Աղաղակով՝ էլի էլի,—
 Երկրի հիմքերը շարժվեցին,
 Վես լեռները սասանվեցին,
 Վարագույրներն Հին օրենքի
 Վերից մինչ վայր պատռվեցին,
 Գերեզմանները բացվեցին,
 Եվ մարմինները սըրբերի
 Շիրիմներից վեր հառնեցին,
 Արեգակի լույսը պայծառ
 Միջօրեին խավար դարձավ,
 Եվ լուսինն էլ նըրա նըման
 Գույնն իր փոխեց գույնով արյան,
 Քանզի Տիրոջն իրենց տեսան
 Մերկ խաչին և չըդիմացան:
 Եվ երբ տեղը բանականի
 Անբան տարերքն էր սարսափում,
 Հետը շարժվող այն վեմերի
 Շարժիր անշարժ սիրտս ի բարին,
 Մեռելների հետ այն հառնող
 Հարություն տուր հոգուս մեռնող,
 Հետը պատռած վարագույրի,
 Տեղն Ադամի հին պարտքերի,
 Պատռիր հընությունն իմ չարի,
 Ջընջիր մեղքի գիրն իմ անձի,
 Լուսատուների մարման հետ
 Քշիր ինձնից գունդը չարաղետ
 Լուսանալով ինը ժամին՝
 Լուսավորիր ինձ վերըստին,
 Քո մերկությանմբ վըրան փայտի
 Մերկության հետ նախաստեղծի,
 Ծածկիր ինձ Քո փառքով հզոր
 Դատաստանի օրն ահավոր:

Որ փոխանակ խաչահանուաց
 Տանըն լըքեալ հրէից ազգին,
 Աղօթէիր առ Հայր յերկին,
 Թողուլ ըզմեղան, որ գործեցին:
 Ինչ որ հոգւով հաւատացեալ,
 Երկըրպագեմ քեզ, Միածին,
 Թող զիմ զյանցանս, որ գործեցի,
 Մի յիշեսցին մեղքն առաջին:
 Որ յետ լընլոյ գրելոյ բանին,
 Աւանդեցեր առ Հայր զհոգին,
 Տիգով հարեալ զինաւորին,
 Աղբիւր բըղխեաց ի սուրբ կողին:
 Ջուրն ի լուացումն աւազանին,
 Արիւնն յարբումըն խորհըրդին:
 Վասըն վիրացըն կողածնին,
 Որով մեռաւ մարդն առաջին:
 Զիս, որ յախտէ ծընեալ մարմին
 Եւ ի հողոյ զանգեալ արին,
 Զոր մաքրեցեր ցօղով կողին,
 Եւ ես դարձեայ ի նոյն կըրկին:
 Մի թողուցուս կալ ի նըմին,
 Այլ լըւասցես զիս վերըստին,
 Թէ ոչ պարգւեքըն շնորհեսցին,
 Այլ արտասուօք ոռոգեսցին:
 Բաց ըզբերան իմ վըտակին
 Քո սուրբ արեան կողահոսին,
 Որպէս տըղայի ստընդիային,
 Որ զմօրն յինքեան ձըգէ ըզստին,
 Զի ես արբից զուրախալին
 Եւ զմայլեցայց ի Սուրբ Հոգին
 Եւ քաղցրասցի համ բաժակին,
 Սէր անարատ անապակին:
 Որ ի մահու Քո անմահիդ,
 Զոր ընկալար մահ ի մարմին,
 Յանմահութիւն զիս փոխեցեր,
 Զմահու հատեր զջիլըս վերջին,
 Զիս, որ մեղօք մեռայ կըրկին
 Եւ կորուսի զանմահ բարին,
 Կենդանացո՛ր կամօք Քոյին

Որ Դու հանուն խաչողների՝
Տունը լըքած հրեա ազգի,
Աղոթեցիր Հորըդ երկինք՝
Թողնել մեղքը, որ գործեցին,
Ինձ, որ հոգով եմ հավատում,
Քեզ՝ Միածին, երկըրպագում,
Ներիր հանցանքներըս կըրկին,
Մի հիշեցրու մեղքն առաջին:
Երբ կատարվեց խոսքը գըրված,
Հոգիդ Հորըդ ավանդեցիր:
Որ զինվորի զարկած տեղից
Աղբյուր բըխեց Քո սուրբ կողից,
Զուրն է լվացում ավազանով,
Արյունն՝ արբումը խորհըրդով,
Հանուն մեղքի կողածինի,
Որով մեռավ մարդն առաջին,
Ինձ, որ մարմին առա մեղքով,
Հողաշաղախ այս արյունով,
Որին մաքրիր ցողով կողի,
Բայց ես դարձա նույնը կըրկին:
Մի թող մընամ, ինչպես Ադամ,
Այլ լըվա մեղքըս այս անգամ,
Ոչ թե պարգև ինձ շընորհվի,
Այլ արցունքով թող ոռոգվի,
Բաց բերանըս բըխման առաջ
Քո արյան, կողից սկիզբ առած,
Այնպես, ինչպես ծըծկեր որդին,
Որ ձըգտում է մոր ստինքին,
Որ արբենամ ես բերկրանքով
Եվ ըզմայլվեմ Սուրբ Հոգիով,
Որ քաղցրանան համ ու բաժակ
Սիրով անսուտ և անապակ:
Որ մահվանով Քո՝ անմահի,
Որ մահ առար մեջը մարմնի,
Անմահություն տըվեցիր ինձ,
Կըտրած մահվան ջիւղ վերջին,
Ինձ, որ մեռա մեղքով կըրկին,
Որ կորցրեցի անմահ բարին,
Կենդանացրու կամքով, Աստված,

տւս. ԲԵ, 57-59

տւս. ԺԵ, 43-46

տւս. ԲԸ, 1...

տւս. ԺԶ, 1...

ԴՈՒ, ԲԳ, 1...

ՅՈՂՎ, Բ, 1...

Արդարութեամբ պատուիրանին.
Ջանանց պարգևսդ անցաւորին
Ի պարգևի խընդրեալ մասին,
Ըզպարգևիչդ արարածոց՝
Մահկանցուաց և անմահին
Ընդ Յովսեփայ Արեմաթին,
Արդար և սուրբ աշակերտին,
Ինձ պարգևեա՛ զՔեզ ձիր շնորհին,
Կենաց բաշխօղ յամենայնի:
Որ պատեցար սուրբ կըտաւօջ,
Եդար ի նոր գերեզմանին,
Զիս մի թողուր նըման լինել,
Որք իջանեն ի գուբ ներքին,
Այլ մեռուցես զանձն իմ ախտին,
Կենդանացո՛ւ երկնաւորին,
Առ ի խորհուրդ սուրբ զըմըռսին,
Անուշահոտ մաքուր խընկին:
Որ ի դասուց հոգեղինաց
Ահիւ պատուիս յիմանալին,
Նոյն պահեցար ի զինուորացն,
Պահպան անջուն Իսրայելին:
Զիս պահպանեա՛ աջով Քոյին
Եւ յանձն արա սուրբ հրեշտակին,
Պահել ամբողջ ի զիշերին
Յաներևոյթ պատերազմին:
Որ կընքեցար Դու մատանեաւ
Դասուբ լուծեալ քահանային,
Գանձըդ կենաց անմահութեան,
Ծածկեալ եդար ի սիրտ երկրին,
Ըզդրունս մըտից ըզգայութեանց,
Յորս է բարւոյդ մուտ և չարին,
Կընքեա՛ խաչիւ Քո նըշանին
Եւ հաստատեա՛ յիս ըզբարին:
Որ ի կանանցն իւղաբերից
Արտասուեցար յառաւօտին,
Շնորհեա՛ և ինձ կաթիլ սըրտիւ,
Զերմ արտասուս տարփմամբ Քոյին
Եւ աւետօջ Սերովբէին,
Որ ի վերայ գոչէր վիմին:

Արդարությամբ պատվիրանի:
Անանց պարգևս անցավորի,
Իբրև պարգև ընտրյալների,
Պարգևողըդ ստեղծվածների,
Մեռնողների, անմահների,
Հովսեփի հետ Արիմաթի,
Արդար և սուրբ աշակերտի,
Պարգևիր ինձ ձիրքը շընորհի,
Կենաց բաշխող ամենայնին:
Որ ծածկվեցիր սուրբ կըտավում,
Դըրվեցիր նոր գերեզմանում,
Մի թող նըրանց հետ ինձ կըրկին,
Որ իջնում են գուբը ներքին:
Այլ մեռցըրու ախտն իմ անձի,
Կենդանացրու հանուն երկնի ,
Հանց խորհուրդը սուրբ զըմուռսի,
Անուշահոտ մաքուր խընկի:
Քեզ պատվում են իմաստորեն
Ահով դասերը հոգեղեն,
Դու պահվեցիր զինվորներից,
Իսրայելը հըսկողներից,
Պահպանիր ինձ Քո սուրբ աջով,
Հանձնարարիր հըրեշտակին
Սատար կանգնել գիշերն ի բուն
Աներևույթ պատերազմում:
Որ մատանով Դու կընքեցիր,
Քահանայի դասը քանդիր,
Գանձըդ անմահության կյանքի,
Ծածկված դըրվիր սիրտը երկրի,
Դուռը մըտքի զգայության,
Մուտքը բարու և չարության,
Քո նըշանի խաչով կընքիր
Եվ բարու մեջ ինձ հաստատիր:
Քեզ յուզաբեր կանայք ծեգին
Արտասուքով ջերմ ողբացին,
Մի կաթիլ էլ տուր ինձ սըրտով,
Ջերմ արցունքները Քո սիրո
Եվ ավետմամբ սերովբեի,
Որ գոչում էր վըրան վեմի,

ՅՈՎԸ Ի, 17

ՅՈՎԸ Ի, 19-23

ՊՈՒ ԻՊ, 13

Ինձ լըսելի արա՛ զհընչիւն,
Զձայն Յարութեան փողոյն վերջին:
Ի նոր և կոյս գերեզմանէն
Յարեար մարմնով Քո կուսածին,
Եղեալ պըտուղ և անդրանիկ
Նընջեցելոց մեզ առաջին:
Զիս որ կապեաց իմ թըշնամին,
Ախտիւ մեղաց, որ ի մարմին,
Արձակեսցես զիս վերըստին
Որպէս զհոգիս, որ ի բանտին,
Որ յայտնեցար ի պարտիզին
Մարիամու Մագդաղենին,
Եւ մերձենալ ո՛չ ներեցեր,
Որ յեւայի ազգէն կըրկին:
Յայտնեաց և ինձ յուրերորդին,
Մեծ և վերջին առաւօտին
Եւ ներեսցես յայնժամ մերձիկ
Անարժանիս իմոյ անձին:
Որ Յարութեան յերեկոյին,
Միաշաբաթ կիրակէին
Երևեցար մետասանին,
Փակեալ դրամբք ի գիշերին
Եւ ըզփըչումըն զառաջին,
Զոր կորուսաք մեք ի դրախտին,
Պարգևեցեր դարձեալ նոցին
Նոքօք բնութեանըս մարդկային:
Զիս, որ զհոգւոյս փակեալ ունիմ
Զդրունս մըտից Քոյոյ բանին
Եւ անճաճանչ խաւարային,
Իբրև ըզտուն գոլով մըթին,
Մի թողուցուս յանլոյս յարկիս,
Մի օթակից լինել չարին,
Այլ զառագաստ բաց ըզսըրտիս,
Փայլեա՛ ի սա զլոյս արփենին,
Ի նմին աւուր կիրակէին
Յէմաւուսայ ճանապարհին,
Կղեովպեանց, մինչ երթային՝
Խօսակցելով Քո ընդ նոսին,

Հընչուենն արա ինձ լըսելի՝
Հարության ձայնը վերջին փողի:
Գերեզմանից թարմ ու դալար
Հաղություն Դու մարմնով առար,
Նընջեցյալներից առաջինն,
Իբրև ավագ և կուսածին:
Իսկ ինձ կապել է թըշնամին
Ախտի մեղքով՝ հատուկ մարմնին,
Ա՛խ, արձակիր ինձ վերըստին,
Որպես հոգիները բանտից:
Դու պարտեզում հայտնըվեցիր
Մագդաղինացի Մարիամին
Եվ մերձենալ չըթողեցիր
Դու Եվայի ազգին կըրկին:
Հայտնըվիր ինձ ութերորդին
Վերջին և մեծ առավոտին
Եվ թող այնժամ Քեզ մերձենալ
Իմ անարժան դարձած անձին:
Որ Հարության երեկոյին,
Միաշաբաթ կիրակիին
Երևացիր տասնըմեկին,
Դըռներով փակված, գիշերին
Եվ փըչումից այն առաջին,
Որով դըրախտը կորցըրինք,
Դու նըրանցով դարձրիր կըրկին
Բընությանը մեր մարդկային,
Ինձ, որ փակել եմ իմ հոգին՝
Խոսքիդ առաջ դուռն իմ մըտքի
Եվ անճաճանչ խավարային
Ասես տուն եմ մըտել մըթին,
Մի թող անլույս այս սենյակին
Ապավինեմ հետը չարի,
Այլ առագաստը բաց սըրտիս,
Շողա այնտեղ լույսն արփենի:
Եվ նույն օրը կյուրակեի
Էմաուսի ճանապարհին
Կղեովպեի հետ երթալիս
Նըրանց հետ Դու խոսակցեցիր,

ՄԱԻ. ԻՊ, 35

Ծանօթ ետուր յօթևանին
Ի բեկանել սըրբոյ հացին,
Անտես եղեալ յաչաց նոցին,
Ճըմլեալ սըրտիւք վարանէին:
Ծանո՛ւ և ինձ զանճառելին,
Զծածուկ տեսիլ Քո բաղձալին,
Եւ ճըմլեսցի սիրտ իմ յանձին,
Յիշմամբ սիրոյ Քոյ երկնային,
Յայսըմ հովտես տըրտմականէ
Ելս ի սըրտի դընել յերկին,
Յոր ուխտեցեր մեզ, Միածին,
Զարքայութիւնըդ Քո վերին:
Որ ի յաւուր ութերորդին,
Մըտեր դարձեալ, Տէր, առ նոսին,

ՅՈՎՂ. Ի, 24-31

Լըցեր զըղձումն աշակերտին,
Թերահաւատըն Թովմային,
Շօշափելով զխոցուած կողին
Եւ զբւեռացըն սուրբ տեղին,
Որով առաք մեք զերանին,
Որք ո՛չ տեսաք, որպէս նոքին:
Զիս, որ հոգւով հաւատացեալ,
Տէր և Աստուած խոստովանիմ,
Չայնիւ գոչեմ զայս ընդ նըմին,
Որպէս ուսայ բանիւ նորին:
Արժանացո՛ւ յօրըն վերջին,
Յորժամ գայցես փառօք Քոյին,
ԶՔեզ տեսանել մարմնով նովին,
Ողջագուրել սիրով սըրտին:

ՅՈՎՂ. ԱԼ

Որ առ ծովուն Տիբերային
Ներգործեցեր, հրաշքս կըրկին
Լըմմամբ ձըկանցն ի յուռկանին
Եւ նորաստեղծ ձուկն ի կրակին:
Զիս, որ ալիք այս երկրային
Ի ծով մեղաց ընկըղմեցին,
Վերաբերեա՛ն յանախտ բարին
Սուրբ ուռկանաւ պատուիրանին:
Որ երրակի սիրով բանին,
Հարցանելոյ Քոյ յետ ճաշին

Ծանոթացրիր օթևանին
 Եվ բաժանմանը սուրբ հացի,
 Նըրանց աչքին եղար անտես:
 Պատմիր և ինձ անձառելին,
 Ծածուկ տեսքը Քո բաղձալի,
 Թող ճըմըլվի սիրտն իմ անձի,
 Հիշելով սերըդ երկնային:
 Եվ տըրտմական այս հովիտից
 Ելնելու ուխտ դիր իմ սըրտին,
 Որ ուխտեցիր մեզ. Միածին,
 Արքայութունը Քո վերին:
 Որ ութերորդ օրը կըրկին
 Նըրանց մոտ Դու եկար այցի,
 Կատարիր իղձն աշակերտի՝
 Թերահավատ այն Թովմայի,
 Որ շոշափեց վերքը կողի
 Եվ սուրբ տեղը բևեռների,
 Որով առանք մենք երանի,
 Չըտեսած տեղը վերքերիդ:
 Ինձ, որ հոգով եմ հավատում,
 Տեր և Աստված խոստովանում,
 Արդ կանչում եմ նըրա ձայնով,
 Որ ուսեցի նըրա խոսքով,
 Արժանացրու օրը վերջին,
 Երբ գաս փառքով Քո վերըստին,
 Տեսնել նըրա պես Քո մարմինն,
 Ողջագուրվել սիրով սըրտի:
 Դու Ծովի մոտ Տիբերայի
 Կատարեցիր հըրաշք կըրկին,
 Ուռկանն արիր ձըկներով լի
 Եվ նորաստեղծ ձուկն եփեցիր:
 Ինձ ալիքներն այս երկրային
 Մեղքերի ծովն ընկըղմեցին,
 Հանիր, տա՛ր ինձ անախտ բարին
 Սուրբ ուռկանով պատվիրանի:
 Դու եռակի սիրով բանի
 Ուրացութունը Պետրոսի
 Ճաշից հետո երբ փորձեցիր,

Զուրացութիւնըն զերեսին
 Բըժըշկեցեր ըզՊետրոսին,
 Յիս, որ թէ բիւր հարցափորձիմ,
 Բարեաց մասունք ոչ երևին:
 Առողջացո՞ն զվերըս խոցին
 Եւ դիր ի խոր ըզսպեղանին,
 Զի խոցեցայց սիրով Քոյին,
 Քեզ ընդգըրկեալ սիրտ իմ լըցցին:
 Որպէս երգեալ առակողին
 Ըզսէր հարսին առ փեսային
 Եւ ուղղեսցես զիս ընդ նըմին
 Հետեանալ Քեզ ի յերկին:
 Թէպէտ նըմանն ինձ անհնարին,
 Բայց Քեզ հընար ամենակին:

ՅՈՎՀ. ԱԼ, 23-24

Որպէս միւսում աշակերտին,
 Սիրեցելոյն Քո ըստ անձին
 Խոստանայիր բանիւ Քոյին
 Ո՞չ ընդ մահու լինիլ ձեռին,
 Որ վերլուծեալ այլաբանին
 Անմահ մընալ բանից նորին
 Կամ թէ կամաց իմ չներհակին,
 Թէ կամիցիմ ըզկեալ դորին:
 Զիմ ըզմեռեալ հոգիս կըրկին
 Կենդանացո՞ն, Տէր, վերըստին
 Եւ գալըստեամբըն Քո վերջին
 Անմահացո՞ն զիս ընդ նըմին:
 Եւ ընդ օդոյս իշխանութեան,
 Զոր բըռնութեամբ այժմիկ ունին,
 Անխռովաբար խաղաղութեամբ
 Զիս անցուցես հայցմամբ նոցին:
 Որ ի լըման քառասնեկին
 Յետ Յարութեան սուրբ պասեքին
 Ի Ձիթենեաց հաներ լերին
 Զընտրեալ ըզդասս մետասանին
 Եւ զաւետիս Հօր ըզՀոգին
 Խոստանայիր շնորհել նոցին
 Եւ օրհնելով, Տէր, ըզնոսին
 Վերհամբարձար փառօք յերկին

ՂՈՒ. ԽԳ, 50-53

ԳՈՐԾ. Ա, 2-11

Ապա նըրան բըժըշկեցիր:
 Ինձ բյուրավոր անգամ փորձես՝
 Գուցե բարու մաս չըզըտնես,
 Առողջացա՞յու վերքը խոցի
 Եվ դիր խորքը ըսպեղանի,
 Որ խոր խոցվեմ ես Քո սիրով,
 Սիրտըս լըցվի Քեզ գըրկելով,
 Ինչպես երգում առակողի՝
 Սերն է հարսի դեպի փեսան:
 Եվ ինձ ուղղիր նըրա նըման,
 Որ հետևեմ Քեզ, գամ երկինք:
 Թեև հընար չիք ինձ համար,
 Բայց Քեզ համար միշտ կա հընար:
 Ինչպես մըլուս աշակերտին,
 Անձիդ համար սիրելիին,
 Դու խոստացար Քո բերանով,
 Որ չի ընկնի ձեռքը մահի,
 Թե մեկնությամբ այլաբանեն,
 Խոսքն անմահ նըրա կմընա,
 Կամ որ կուգեմ, որ դա կենա,
 Եվ իմ կամքին ներհակ չի դա:
 Իմ կրկնակի մեռած հոգին
 Կենդանացրու, Տեր, վերըստին
 Եվ գալըստյանը Քո վերջին
 Անմահացրու նըրա հետ ինձ:
 Եվ օդային իշխանությամբ,
 Ուր տիրում են նըրանք հիմա,
 Ինձ անխըռով խաղաղությամբ
 Հասցնես վերև հայցմամբ նըրանց:
 Պասից հետո սուրբ Հարության,
 Երբ քառասուն օրը անցավ,
 Դու Ձիթենյաց լեռ հանեցիր
 Ընտրյալ դասը տասնըմեկի,
 Իբրև ավետիս Հոր՝ Հոգին
 Դու խոստացար շնորհել նըրանց:
 Եվ օրհնելով տասնըմեկին՝
 Վեր բարձրացար դեպի երկինք

Եւ ըզբնութիւնըս մարդկային,
 Զոր չարն արար անդընդային,
 Բարձրացուցեր գեր ի վերոյ,
 Քան ըզբնութիւնըս հրեղինին:
 Նըստար յաջմէ Քում ծընողին,
 Ըստ կանխասաց մարգարէին,
 Երկըրպագեալ յանմարմնական
 Զօրացն ընդ չօր և ընդ չոգին,
 Եւ զիս անշարժս առ ի բարին
 Վերաբերեա՛ն ընդ Քեզ յերկին,
 Զնեխեալ անդամս այս երկրային
 Յօդեա՛ ի գլուխըդ վերըստին,
 Թէ և վերջին յամենայնին,
 Իբրև ոտից գարշապարին:
 Սակայն ի թիւ սուրբ անդամին
 Համարեցայց ես ընդ բազմին,
 Որ յիսներեակ յոբելինին,
 Ի կատարման պենտակոստին,
 Առաքեցեր զՔո Սուրբ Հոգին
 Ի վերնատունըն խորհրդդին,
 Ըստ կանխագոյն խոստման բանին
 Եւ աւետեաց Քոց հրամանին,
 Մըխիթարել ըզտըրտութիւն
 Աշակերտաց մետասանին,
 Զորում անտեսն և անջընին
 Հընչեաց նըման հողմոյ ուժգին,
 Ելից ըզտունն, յոր նըստէին,
 Մաքրիչ բոցով ծախող չարին,
 Յորմէ պարգևք աստուածային
 Հրեղէն լեզուօք բաժանէին,
 Ի հաւաքումն ընտրեալ Բանին,
 Որ ցրուեցան յաշտարակին:
 Յիս, որ թախծեալս եմ տըրտմագին
 Ի հեռանալ շնորհաց Քոյին
 Վասըն մեղաց, որ միշտ գործին
 Յանձն իմ սիրող կամաւ չարին:
 Առաքեսցես զառատ Հոգին,
 Որ է անծախ ի պարգևին,

Եվ բնությունըս մարդկային,
 Որ դարձրեց չարն անդընդային,
 Բարձրացրու Դու անսահման վեր,
 Քան բնությունը հըրեղեն:
 Նըստար աջում Քո ծընողի,
 Ըստ կանխասաց մարգարեի,
 Երկըրպագեց Քեզ անմարմին
 Զորքը Հոր հետ և Սուրբ Հոգու:
 Ինձ, որ անշարժ եմ ի բարին,
 Վերև հանիր Քեզ հետ երկինք,
 Նեխած անդամներն երկրային
 Հողիդ գըլխին Քո վերըստին:
 Թեև վերջինն եմ բոլորից,
 Նըման ոտքի գարշապարին,
 Սակայն թըվում սուրբ անդամի
 Թող լինեմ հետը շատերի:
 Որ հիսնօրյա հոբելյանին,
 Պենտեկոստեի ավարտին,
 Առաքեցիր Քո Սուրբ Հոգին
 Դեպ վերնատունը խորհըրդի,
 Ըստ նախապես տրված խոսքի,
 Հըրամանիդ ավետիսի,
 Որ տըրտմությունը ամոքվեր
 Այն տասնըմեկ աշակերտի,
 Որտեղ անտես և անքընին
 Հընչեց հողմի նըման ուժգին,
 Բըռնեց տունն, ուր նըրանք կային,
 Մաքրող բոցով մաքրեց չարին,
 Հոգուց ձիրքերն աստվածային
 Լեզուներով հուր բաշխվեցին
 Ընտրյալ խոսքի այդ հավաքում
 Եվ ցըրվեցին աշտարակում:
 Ես, որ թախծում եմ տըրտմագին,
 Անմատուլյց՝ Քո շընորհներին,
 Մեղքի համար, որ միշտ գործի
 Անձն իմ գերող կամքով չարի:
 Առաքիր ինձ առատ Հոգին,
 Որ անմաշ է իբրև պարգև,

Լինել սփոփիչ տըրտումս անձին
 Ի մաքրութիւն չար խորհըրդին
 Եւ նորոգեա՛ն զուղիղ հոգին,
 Որ ոչ հնանայ ամենւին:
 Յիս ի հնացեալ մեղաց բագին
 Եւ յօթարան կամակորին,
 Հոգւով հաստեա տիրականին
 Եւ մի հաներ յինէն զՀոգին:
 Այլ առաջնորդ ինձ ի յերկին
 Հոգիդ լիցի սուրբ և բարին:
 Պաղատանօք Աստուածածնին
 Անապական և միշտ կուսին
 Եւ Յովհաննու Կարապետին,
 Յանապատէ բարբառ ձայնին,
 Աղաչանօք մաքուր դասին,
 Առաքելոց նախ առաջին,
 Որք ըզհոսանս Հոգւոյն արբին
 Եվ ընդհանուր մեզ արբուցին,
 Աշակերտաց գերագունին,
 Սուրբ հաւատոյ անշարժ Վիմին
 Եւ Անօթոյ ընտրեալ բանին
 Անձառելեացըն լըսողին,
 Մաքուր որդւոցըն Զեբեթին,
 Որք ի վերուստ որոտացին,
 Եւ Անդրէի Քում խաչակցին
 Եւ Մատթէի քարոզ բանին,
 Փիլիպպոսի զհայր հարցողին,
 Բարդողիմեայ զմեզ կոչողին,
 Յակոբոսի Մակալափենին
 Եւ Թովմայի երկուորեկին,
 Նախանձայոյզ Շըմաւոնին
 Եւ Յակոբեանըն Յուդային
 Եւ շահաստեալ ըստ անուան եղբօր Քոյին,
 Արդար անուն հայրապետին,
 Եօթանց սըրբոց, զոր ընտրեցին
 Սարկաւագաց փոքու հօտին,
 Որոց նախկի պարուց դասին
 Պըսակ անունն է ընդ նոսին:

ՊԵՏՐՈՍ ԱՊՈՍՏՈՍ

ԸՍՏ ԱՎԱՆՂՈՒ
 ԹՅԱՆ, ԱՆՊԵԱՍԸ
 ԽԱՉԿԵԼ Է
 ԲԱՐՈՒԴԵՆՈՍԸ
 ԶՐԻՍՏՈՍԻՈՒՄ-
 ՍՈՒՆՔԸ ԱՎԱՆՂԱ-
 ԲԱՐ ՏԱՐԱԾԵԼ Է
 ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
 ԵՎ ՀՆԴԱՍՏԱՆՈՒՄ
 ՀԱՎՈՐ ՏՅԱՆԵՂ-
 ԲԱՅՐ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ
 ԱՊՈՍՏՈՆ ԵՂԻՍԿՈ-
 ՂՈՍԸ

Որ ըսփոփի տըրտում անձիս,
Որ ինձ մաքրի չար խորհուրդից:
Շիտակ դարձրու Դու իմ հոգին,
Որ չըմաշվի ամենևին:
Ես՝ հընացած մեղքի բագին,
Բընակարան կամակորի,
Հաստիր հոգով ինձ տիրական
Եվ մի հանիր ինձնից Հոգին,
Այլ առաջնորդ դեպի երկինք
Լինի Հոգիդ սուրբ և բարի:
Պաղատանքով Աստվածածնի,
Անապական և միշտ կույսի
Եվ Հովհաննես Կարապետի,
Չայնն այն, լըսված անապատից,
Աղաչանքով մաքուր դասի,
Սկզբում առաքյալների,
Որոնք շընչով Հոգու արբին,
Բոլորի հետ մեզ արբեցրին,
Աշակերտներից գերագույնի՝
Սուրբ հավատի անշարժ վեմի
Եվ անոթի ընտրյալ բանի,
Անճառ բաները լըսողի,
Զեբեդի պարզ որդիների,
Որ երկընքից որոտացին,
Քո խաչակից Անդրեասի,
Բանիդ քարոզ Մատթեոսի,
Հորը փնտրող Փիլիպպոսի,
Մեզ կանչող Բարդուղիմեոսի
Եվ Մակալփյան Հակոբոսի
Եվ երկվորյակ այն Թովմայի,
Նախանձահույզ Շըմավոնի,
Նաև Հակոբյան Հուդայի,
Եղբորդ անունը կըրողի,
Արդար անվամբ հայրապետի,
Քո ընտրած յոթը սըրբերի,
Փոքր հոտի սարկավագների,
Որ առաջին դասը եղան,
Վըկայի պըսակ ըստացան,

ԵԿԵՂԵՑՈՒՐԸ ՊԱ-
ՍԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍ-
ԽԱՆՈՒՄ ԵՆ ԵՐԿ-
ՆԱՅԻՆ ԲԱԶԱՆԱ-
ՅԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐՈՒՐԸ ՊԱՍԵՐԻՆ
(ՌԵՆԵՍԱՆՍԱՐԻՍ-
ՊԱՊԱՅԻ, ՆԵՐՍԵՍ
ԼԱՍԲԵՐՈՆԱՅԻ)

Եւ Քում ընտրեալ եօթանասնին,
Աշակերտաց քարոզ բանին,
Եւ որք Նոցայն հետնեցին
Յիւրաքանչիւր ժամանակին,
Հայրապետաց հանուրց ազգին,
Վարդապետաց ուղիղ բանին,
Որք զՔեզ Որդի Հօր միածին
Խոստովանել մեզ ուսուցին,
Սպասաւորաց սուրբ խորհրդրդին,
Իննեակ դասուց յեկեղեցին,
Համանմանի վերնագունին,
Փառատրողաց աստուածային,
Նաև Նոցունց, որք են յերկինս,
Հայցմամբ վեհիցն ողորմեա՛ ինձ,
Որք և վասն իմ Քեզ պաղատին
Անտես չառնել զգործըս ձեռին,
Մարտիրոսօքն անթիւ անձին,
Որք վասըն Քո զարիւնս հեղին,
Տո՛ւր ինձ արտօսըր ցաւագին
Հեղուլ փոխան արեան Նոցին,
Ի վըկայէն սուրբ առաջին
Ստեփաննոսէ զՔեզ տեսողին
Մինչ ի վըկայս բնաւից վերջին,
Որք ի նեռնէն կատարեսցին:
Չարչարանօք ամենայնին
Ի տանջանաց փըրկեա՛ չարին
Եւ կամաւոր մահուամբ Նոցին
Ի մահուանէ անվախճանին:
Խաւար բանտիւք արգելանին
Լուսաւորեա՛ զխաւարս անձին
Եւ կուրութեամբ աչաց Նոցին
Յաչըս հոգւոյս փայլեա՛ զարփին:
Հատմամբ ունկանց լըսարանին
Զիմըս բացցես Քոյոյ ձայնին
Եւ ծայրակըտուր փողոց օդին
Յոգիս բուրեա զհոտ անմահին:
Կըտրեալ լեզուօք սըրբաբանիցն
Զիմս արագեա՛ բանիւ Քոյին
Եւ ատամանց քաղմամբն ուժգին
Բա՛ց ըզբերանս առնուլ զՀոգին,

Եվ Քո ընտրած յոթանասնի՝
 Քեզ քարոզող աշակերտների
 Եվ հետևորդների նըրանց,
 Ամեն մեկն իր ժամանակին,
 Հայրապետական ողջ ազգի,
 Վարդապետների ուղիղ խոսքի,
 Որ Քեզ, Որդի Հոր միածին,
 Խոստովանել մեզ ուսուցին,
 Սպասավորների սուրբ խորհրդի,
 Եկեղեցու ինը դասի,
 Իրենց նըման վեհագույնի,
 Աստըծուն փառք տըվողները,
 Նաև երկնում եղողների
 Հայցմամբ վըսեմ ողորմա ինձ:
 Որ հանուն ինձ խընդրում են Քեզ
 Արածներըս անտես չառնես,
 Եվ մարտիրոսներով անթիվ,
 Որ Քեզ համար արյուն թափին,
 Տուր արցունքներ ինձ ողբագին
 Հեղել տեղը նըրանց արյան,
 Եվ առաջին սուրբ վըկայից՝
 Քեզ տեսնող այն Ստեփանոսից
 Վըկաները մինչև վերջին,
 Որ Նեռից նահատակվեցին,
 Չարչարանքով այդ բոլորի
 Տանջանքներից փըրկիր չարի
 Եվ կամավոր մահվամբ նըրանց
 Հանիր մահից այս անվախճան,
 Բանտից խավար այս մըշտական,
 Լուսավորի խավարն անձիս
 Կուրուքյամբ նըրանց աչքերի,
 Թող աչքն հոգուս լույսով փայլի.
 Կըտրելով ունկը ատյանի,
 Իմ ականջը բաց Քո ձայնին,
 Շընչած օդով հատված քըթի
 Հոտն անմահիդ հոգիս բուրի,
 Սրբախոսների կըտրած լեզվով՝
 Արտահայտվեմ Քո խոսքերով,
 Ատամների քաշմամբ ուժգին
 Բաց բերանըս՝ առնեմ Հոգիս,

Հատմամբ յուսոց երկուց ձեռին
 Զիմս արձակեա՛ն միշտ ի բարին
 Եւ կոտորմամբ մասանց նոցին
 Զիմս գըրեսցես անուն յերկին:
 Հերձմամբ մաքրոցն որովայնին
 Հերձ առ յինէն զխորհուրդ չարին
 Եւ կըտրելով ոտից նոցին
 Ոտք իմ գըթոտք հաստատեսցին:
 Քերմամբ մորթոց սըրբոցն անձին
 Բորըք մեղացն իմ քերեսցին
 Եւ մորմոքմամբ հարման աղին
 Հեշտախտութիւնքն իմ մաքրեսցին:
 Ընդ բազմահնար տանջման նոցին
 Տանջանք հոգւոյս բըժըշկեսցին
 Եւ ընդ հատեալ մասանց յօդին
 Ցաւք յօդուածոց իմ ողջասցին:
 Բեկմամբ բարձիցըն յօդուածին
 Զիմըս պընդեա յողդողդ մարմին
 Եւ խիստ գանիւ գաւազանին
 Ըզխըստութիւն կակզեա՛ն սըրտին:
 Ընդ տատասկաց սուր երկաթին
 Ըզսուր Քո հա՛ն ընդդէմ չարին
 Եւ բւեռօք գարշապարին
 Զիս բւեռեա՛ն յերկիւղ Քոյին:
 Ընդ նետաձիգն, որ առ նոսին,
 Զիս խոցեսցես սիրով Քոյին
 Եւ ընդ գելոց գելարանին
 Զիմ ճըմլեսցես սիրտս առ բարին:
 Ընդ եռացումըն կապարին
 Զոր ի բերանսն արկանէին,
 Շիջո՛ն գեռանդ բոցոյ ախտին
 Եւ եռացո՛ն յիս ըզՀոգին:
 Ընդ սպառնալեաց դառնագունին,
 Զոր առ ո՛չ ինչ համարէին,
 Ի սպառնալեաց փըրկեա չարին
 Եւ դարձուցես ի գլուխ նորին:
 Եւ ընդ խոստման անցաւորին,
 Յորոց ի բաց հրաժարէին,
 Մի՛ մատնեցայց ես պատրողին՝
 Խաբիլ սիրով հիւթանիւթին:

Ուսից երկու ձեռքը հատած
Ինձ արձակիր միշտ բարիով,
Կոտորումով դըրանց մաս մաս,
Գրիր անունըս երկընքում:
Փորի հերձմամբ սուրբ այրերի
Հերձիր խորհուրդն ինձնից չարի,
Եվ կըտրելով ոտքը նըրանց՝
Սայթաքող ոտքն իմ հաստատիր:
Սըրբերի մորթը քերելով՝
Թող քերվի բորն իմ մեղքերի,
Նըրանց վերքին դըրված աղով
Հեշտախտությունըս թող սըրբվի,
Նըրանց բազում տանջանքներով
Հոգուս տանջանքը բըժըշկվի,
Հատման հետ նըրանց հոդերի
Իմ հոդերի ցավը բուժվի,
Նըրանց գիստերի կոտորումով
Պընդացրու մարմինս երերուն,
Եվ խիստ ծեծով գավազանի
Կակղիր խստությունն իմ սըրտի,
Ցըցերի հետ սուր երկաթի
Սուրըդ հանիր ընդդեմ չարի,
Բևեռներով գարշապարի
Բևեռիր ինձ Քո երկյուղին,
Նըրանց հասած նետերի պես
Ինձ էլ խոցիր սիրով Քո վես,
Գելարանի տանջանքներով՝
Ճըմիր սիրտըս դեպի բարին,
Եվ եռացման հետ կապարի,
Որ բերաններն էին շըրջում,
Հանգցրու ուժը բոցի ախտի
Եվ եռացրու իմ մեջ հոգին,
Սպառնալիքների հետ դառնագույն,
Որ համարում էին ոչինչ,
Փըրկիր չարի սպառնալիքից,
Շըրջիր նըրա գըլուխն ինձնից,
Եվ խոստման հետ Քո առաջին,
Որից շատերն են ետ կենում,
Թող պատրողին չըմատնըվեմ,
Հյուսթանյութով ես չըխաբվեմ:

Կախաղանօք սլորբոցն ոտին
 Զընթացս ուղղեա առ Քեզ յերկին
 Եւ կապանօք ծանր երկաթին
 Թեթևացն զհոգս երկրային:
 Ընդ շըղթայից պարանոցին
 Զիս կապեսցես սիրով Քոյին
 Եւ ընդ կոճեղս, որ յոլոքին,
 Զիս ի կապից խըլեա՛ չարին:
 Որք վասըն Քո ընդ հուր անցին:
 Եւ ընդ եռանդըն կաթսային,
 Շիջն՝ զիմ հուր մեղաց ախտին
 Եւ ըզվառումըն գեհեհնին:

ՓՈՔՐ ՀԱՅՔՈՒՄ
 ՍԵՔԱՍՏԱՅԻ ԶԱՌԱ-
 ՍՈՒՆ ՎԿԱՆՆԵՐԸ

Եւ ծովահերձ սառմամբ ցըրտին,
 Որով նոքա համբերեցին,
 Զիմ ըզպաղեալ սիրտս առ բարին
 Զեռն սիրովդ աստուածային
 Որք վասըն Քո ողորէին
 Ըզչար գազանսն ուտել զնոսին
 Զիս ի ժանեաց փըրկեա չարին,
 Եւ յեղջերէ միեղջերուին:
 Ընդ բազմօրեայ քաղցի նոցին
 Տհր ինձ ըզհաց Քո երկնային
 Եւ ընդ պասքումըն ծարաւին
 Զանապական աղբիւր կողիդ
 Ընդ օձաբնակ խաւար զրբին
 Յոր Լուսատուն էր իմ անձին,
 Հան զիս ի գոյ ախտասիրին
 Տըղմուտ կաւոյ հայցմամբ նորին:
 Եւ զինչ ասեմ, զի ոչ թըլին
 Լեզուաւ մարդկան տանջանք նոցին,
 Որք այժմ առ Քեզ ծածկեալ պահին
 Եւ անդ յայտնի հատուցանին:
 Որոց տուժիւք զանազանին,
 Բուժեա՛ ըզցաւս իմոյ անձին,
 Զփարմնոյ զհոգւոյս և ըզմըտաց
 Եւ զխորհըրդոց, զգործոց բանին:
 Եւ ընդ հատման զըլխոց նոսին
 Որով զըլխոյդ անդամք լինին,
 Զիս յարմարեա՛, Տէր, ընդ նոսին
 Առնուլ աճումն ընդ բոլորին:

ԳՐԻԳՈՐ
 ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Կախաղաններով բոլորի՝
 Ոտքից կախված այն սըրբերի,
 Ընթացքն ուղղիր իմ դեպ երկինք,
 Կապանքներով ծանր երկաթի
 Թեթևացրու հոգսն երկրային,
 Շղթաներով պարանոցին
 Քո սիրո հետ ընդմիշտ կապիր,
 Կոճղերիս հետ, մեջն սրունքի՝
 Հանիր. խըլիր չարի ձեռքից,
 Որ հանուն Քեզ հըրով անցան,
 Նույնիսկ եռուն կաթսան ընկան,
 Հանգցրու հուրը մեղքի ախտի
 Եվ հըրդեհները գեհենի
 Եվ ծով պատռող սառցով ցըրտի,
 Որին նըրանք համբերեցին,
 Իմ պաղած սիրտս առ բարին
 Վառիր սիրովդ աստվածային:
 Որ Քո անունն էին կանչում,
 Երբ գազանն էր իրենց լափում,
 Ինձ էլ փըրկիր չար ժանիքից,
 Միեղջերվի սուր եղջույրից,
 Տեղն օրերով նըրանց քաղցի
 Տուր ինձ հացը Քո երկնային,
 Եվ ծարավի հետ անսահման,
 Կողիդ աղբյուրն անապական,
 Օձաբընակ խավար փոսից,
 Որ լուսատուն էր իմ անձի,
 Հանիր գուրից ախտասերի
 Տըղմուտ կավից նըրա հայցմամբ:
 Եվ ինչ ասեմ, ինչը մնաց
 Տանջանքներից անհուն նըրանց,
 Որ Քեզանից ծածուկ լինի,
 Հատուցումով անդ հայտնըվի,
 Ջըրկանքի տեղ բազմապիսի
 Բուժիր ցավերը իմ անձի,
 Մարմնիս, հոգուս և իմ մըտքի,
 Խորհուրդների և գործերի
 Եվ գլխատման տեղը նըրանց,
 Որով գըլխիդ հետ սերտացան,
 Երբ իմ հիմ, Տըր. նըրանց շրջառում,

ՍԲ. ԱՆՏՈՆ — ՇԵՎ.
251թ., ՎԵՐՐԷԵ-
ԳՐԴՏՈՍՈՒՄ: ԱՆԱ-
ՊԱՏԱԿԱՆ: ՎԱՄԱ-
ԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅ-
ՐԸ: ՆՐԱ ՎԱՄՔԸ
ՀԱՐՈՒՄՏ Է ՀԸ-
ՐԱՇՔՆԵՐՈՎ:

Ճըզնաւորօքն յանապատին,
Հետևողաց կենաց ձայնին:
Տո՛ւր ինձ թողուլ զսէր աշխարհի,
Վառիլ ի սէր Քո յերկնային
Եւ բարձողաց ուսով խաչին
Մեռո՛ւ և զիս ըստ աշխարհին:
Եւ Քո ըզկնի ընթացողին
Ըզգընացս իմ ուղղեա զոտին,
Պաղատանօք մեծն Անտոնին,
Հեղինակի սուրբ երամին:
Եւ ոյք նովաւ յայս կարգ եկին,
Մինչև յայժմոյս և որք լինին:
Զանազանեալ վարուք նոցին
Եւ ծաղկերանգ Քեզ ընծային:
Շնորհեա՛ փոխիլ անբերս անձին
Ըստ պըտղաբեր Քոյոյ տընկին,
Որք զաղօթից ըզշնորհս առին
Եւ զարտասուաց յորդ վըտակին,
Չըզեա՛ և զիս հայցմամբ նոցին,
Թէ և հեղգամ ի նոյն բարին:
Եւ ոյք պահօքըն մեռուցին
Զախտըս մարմնոյ սկըզբնաչարին,
Տո՛ւր ինձ նոքօք առ ցանկալին
Սանձել ըզկիրս որովայնին:
Որք խորհըրդովքըն յաղթեցին
Պոռնըկական պատերազմին,
Տո՛ւր յաղթութիւն ծուլիս անձին
Գոնէ լըրման գործոց չարին:
Եւ որք ի խուն փոքու նիւթին
Ազահուրեանըն տիրեցին,
Տո՛ւր ինձ յաղթել անիրաւին
Եւ շատանալ բաւականին:
Քաջ եղելովքն յարիւրութիւն
Ընդ ձանձրութիւն միջօրէին:
Արիացո՛ զհեղզս առ բարին
Եւ զերագողս առ վատթարին:
Որք բարկութեանըն յաղթեցին
Եւ զտըրտմութիւնըն սանձեցին:
Նոքօք սանձեա, Տէր, զերկոսին,
Մինչ տարապարտ առ իս շարժին:

Անապատում ճըգնողների,
Կենաց ձայնը լըսողների,
Թույլ տուր թողնել սերն աշխարհի,
Վառվել սիրով Քո երկնային,
Բարձողների հետ սուրբ խաչի
Մեռցրու և ինձ կարգով երկրի,
Ընթացողի հետ Քո հետքից
Ուղղիր գընացքը իմ ոտքի,
Պաղատանքով մեծն Անտոնի,
Սուրբ երամի առաջնորդի,
Նըրանց, ով եղավ այդ կարգում
Մինչ այժմ և ապագայում,
Նըրանց վարքով զանազանված
Եվ ծաղկերանգ Քեզ ընծայված,
Շնորհիր փոխել անձըս անբեր
Ըստ տունկերի Քո պըտղաբեր:
Որ շնորհ առան աղոթքով,
Արտասվահորդ վըտակներով,
Նըրանց հայմամբ ձըգիր և ինձ,
Թեև ծույլ եմ բարի գործից,
Եվ որ մեռցրին պաս պահելով
Մարմնի ախտը սկզբնաչարի,
Նըրանցով տուր ինձ ցանկալին՝
Սանձել բեռը որովայնիս:
Որ խորհուրդով էին հաղթում
Պոռնըկական պատերազմում,
Հաղթություն տուր և ծույլ անձիս,
Գոնե վերջ տամ չարի գործին:
Ովքեր քիչ-քիչ փոքըր նյութի
Դիմադրությունը հաղթեցին,
Անիրավին թող ես հաղթեմ,
Թող քըչով էլ բավարարվեմ
Քաջերի հետ արի կամքի,
Չանձրույթի մեջ միջօրեի:
Ուժ տուր հեղգիս էլ առ բարին,
Ինձ, որ ձըգտում եմ վատթարին:
Որ բարկությանը հաղթեցին
Եվ տըրտմությունը սանձեցին,
Սանձիր նըրանց հետ երկուսին,
Երբ փուչ բաներ մոտենան ինձ:

Եւ որք հըպարտ փառամուլին,
 Յաղթող զըտան յասպարիսին,
 Զիս փըրկեսցես հայցմամբ նոցին
 Յաջակողմեան մենամարտին,
 Որք գերազանց պատուիրանին
 Քան զբնութիւն ժուժկալեցին:
 Տուր ինձ գոնէ բառնալ Քոյին
 Քաղցըր լըծով թեթև բեռին:
 Եւ թէպէտ ո՛չ ընդ առաջին
 Ճանապարհորդս, որ ի յերկին:
 Սակայն վերջնոցն եղեց վերջին,
 Հետևելով հետոց նոցին:
 Եւ թէ վեհիցն օթևանին
 Չեմ արժանի Հօր Քո յերկին,
 Արժանացո՞յ յոյժ խոնարհին,
 Քան ըզբնաւից թերևս յետին:
 Միայն ի թիւ օդեաց դասին
 Կացո՞ւ և զիս յաջակողմին
 Եւ լըսեցո՞ւ ըզգընծալին
 Զերանաւետ ձայնըն Քոյին:
 Յորժամ գըրեալքըն կատարին,
 Որ զայնմ աւուր մեզ պատմեցին
 Մարգարէից բանքըն յարգին
 Առաքելոցըն վըճարին:
 Յորժամ տարերքըն դըղըրդին,
 Հաստատութիւնքըն սասանին,
 Իբր ըզծովու կոհակք կուտին
 Ի յեռանդեանըն կաթսային,
 Լայնատարած դողայ գետին,
 Ի թանձրութեանց հիմանց շարժին,
 Մի ըզմիոյ հետ խափանին,
 Կասեալք յերկուցըն տատանին,
 Լերինք հիմամբըզ զարհուրին
 Եւ ուժգնակի բախմամբ թընդին,
 Կարծըր բնութիւնք վիմաց հալին
 Եւ ամենայն նիւթք հըրդեհին,
 Մինչ գետք հրեղէնք յորդահոսին,
 Իբր ըզհեղեղ ջուրց ծաւալին,
 Հողմով հանդերձ սաստիկ հընչին
 Եւ միգախառըն մըռմըռին,

Ովքեր հըպարտ փառամուլին
 Ասպարեզի մեջ հաղթեցին,
 Ինձ էլ փըրկիր հայցմամբ նըրանց,
 Երբ դեպի աջ կանչես հանկարծ:
 Ով պատվիրաններդ պահեց,
 Բընությունն իր հաղթահարեց,
 Տուր ինձ գոնե տանել Քեզ հետ
 Քաղցըր լըծով բեռը թեթև,
 Թող չըլինեմ ես առաջին
 Ճանապարհորդը դեպ երկինք,
 Վերջիններից լինեմ վերջին՝
 Հետևելով նըրանց հետքին,
 Եվ թեկուզ վեհ օթևանին
 Քո Հոր՝ երկնում չեմ արժանի,
 Արժանացրու ցածըր հարկի,
 Ամենից ցածըր և հետին:
 Միայն ոչխարների շարքում
 Ինձ էլ դասիր աջակողմում
 Եվ հընչեցրու ինձ ցընծալի
 Երանավետ ձայնըդ բարի:
 Եվ երբ գըրվածը կատարվի
 Օրվա մասին, որ մեզ ասվեց
 Մարգարեից խոսքով հարգի,
 Առաքելոց՝ ըստ ամենայնի,
 Եվ երբ տարերքը դըղըրդա,
 Համայն աշխարհը սասանվի,
 Հանց ծովն հուզված, ալեկոծվի,
 Կաթսայի մեջ ասես եռա,
 Լայանատարած հողը դողա,
 Հիմքերն ամուր տեղաշարժեն,
 Երբ մեկը մեկին խափանեն,
 Իրար բախվեն ու ծառս լինեն,
 Հիմքից լեռները զարհուրեն
 Եվ բախումով թընդան ուժգին,
 Կարծրությունը քարի հալվի,
 Եվ ամենայն նյութ հըրդեհվի,
 Հորդան գետերը հըրերի,
 Ջըրհեղեղի պես ծավալվի,
 Հողմի ձայնով խիստ մըռընչան
 Եվ միգախառը մըռմըռան

Խըրթնահայեաց դիմօք վառին
 Եւ զթափանցիկ վայրաբերին,
 Իբր ըզտերն մի բորբոքին
 Բնութիւնք ամէն հողեղինին,
 Բըլուրք լերամբքք հալեսցին
 Եւ դաշտաձև աշխարհ լինին,
 Ծովու ալիքըն ցամաքին
 Եւ կենդանիք նորա նուազին,
 Յորժամ բարբառքըն նըւագին
 Փողըն գոչէ Գաբրիէլին
 Յանկարծակի մէջ գիշերին
 Ի յեղակարծ ժամանակին,
 Յորժամ Հոգիքըն սըլասցին,
 Ուր ամբարեալքն այժմիկ պահին,
 Գան միանան ընդ սոյն մարմին,
 Որք յԱդամայ և անդ լինին,
 Մինչ գերեզմանք մարդկան բանին
 Փըտեալ մարմինքըն նորոգին
 Եւ զոր կերեալ ձըկանց ծովին
 Եւ զոր գազանքն ի ցամաքին,
 Քանզի տարերք ամենեքին
 Առնուն յաւանդ ըզմեր մարմին
 Եւ անկորուստ պահեն նոքին,
 Զի հնազանդին Քո հրամանին,
 Եւ ի լըսել ահեղ ձայնին,
 Աստուածորդւոյդ կենսաբաշխին,
 Զհրաքանչիւր պահեստ մարմին
 Բերեն յառաջ ըստ Ղազարին:
 Ի նոյն բնութիւն դարձեալ խառնին
 Ըստ արուեստաւոր Քոյոյ բանին,
 Ոչ ի պահոյս լուծանելին,
 Այլ ի յանեղծն, որ ի դրախտին,
 Ոչ ծերն ի ծեր յառնէ մարմին,
 Եւ ոչ տըհաս տըղայն ի նմին,
 Այլ հաւասար երեսնամին,
 Ի չափ յառնեն նախաստեղծին,
 Եւ ոչ բնութիւն այլ է արուին,
 Ոչ ճանաչի՝ թէ սա է կին,
 Ոչ բընութիւն գոյ ախտային
 Եւ ոչ կըրիւք նեղի մարմին,

ՅՈՎԷ ԺԱ 1-45

Եվ այլանդակ դեմքով վառվեն
Եվ թափանցիկ գահավիժեն,
Տերևի պես բոցավառվի
Բնությունն ամեն հողեղենի,
Լեռնակույտերն հալվեն գընան
Եվ դաշտաձև աշխարհ դառնան,
Ծովի ալիքները ցամքեն,
Կենդանիները նըվազեն,
Երբ որ ձայնը այն նըվագի
Փողով հընչի Գաբրիելի,
Հանկարծակի կեսգիշերին,
Անակընկալ ժամանակին,
Երբ հոգիները սըլանան,
Ուր այս պահին ամբարված կան,
Գան միանան նույն մարմնին,
Ուր Ադամն է, լինեն այնտեղ,
Գերեզմանները երբ բացվեն,
Երբ մարմինները նորոգվեն,
Ում որ կերավ ձուկը ծովի,
Ով կեր դարձավ գազանների,
Քանզի տարրերը ամենայն
Մարմինը մեր ավանդ առան
Եվ անկորուստ պահպանեցին՝
Հընազանդ Քո հըրամանին
Եվ լըսելով ահեղ ձայնին
Կյանք ընծայող Աստվածորդու,
Յուրաքանչյուր պահված մարմին
Կըրեցին, ինչպես Ղազարին,
Եվ կըդարձնեն նույն բընություն,
Ըստ Քո բանի բազմահըմուտ,
Ոչ քայքայման պահի նըման,
Այլ դըրախտում՝ անեղծական,
Ոչ ծերը ծեր մարմին կառնի,
Ոչ էլ տըղան երեխայի,
Այլ կըլինեն երեսնամյա,
Տարիքի չափ նախաստեղծի,
Երբ բնությունն այլ չէ արուի,
Իսկ կինն ի՞նչ է, չի իմացվի,
Եվ ոչ բնությամբ ախտային,
Որ ծանրությամբ նեղի մարմնին,

ՄԱՏ. ԻԲ, 30

Այլ հրեշտակաց նըման բերին,
Ըստ կանխասաց բանից Քոյին:
Յորժամ նըշան Քո սուրբ խաչին,
Որպէս փայլակն երևեսցին
Յարևելից ճառագայթին
Ի չորս անկիւնս տարածին
Արեգական լոյս նըլաղին
Եւ լոյս լուսնին խաւարեսցին:
Աստեղք յերկնից թօթափեսցին
Եւ զօրութիւնքն շարժեսցին
Եւ հրեական ազգըն կոծին,
Զի տեսանեն զոր խոցեցին:
Մահմէտականքըն կորընչին,
Որք անարգեն զնըշան խաչին,
Երկըրպագուքըն Քեզ պարծին
Եւ խաչակցեալքըն բերկրեսցին:
Իսկ մեղաւորքըն թախանձին,
Որք ծուլութեամբ զկեանս անցուցին:
Լապտերք կուսից պայծառ վառին,
Որք զիւղն յառաջ պատրաստեսցին:
Իսկ յիմարացըն շիջանին,
Որք անագան ի գնել գնացին,
Յորժամ Հայր Քո և Սուրբ Հոգին
Ընդ Քեզ յերկիր խոնարհեսցին,

ՀՄՄՏ. ՊԱՆ. Է, 13

Որպէս տեսեալ Դանիէլին
Ըզհինաւուրցն և զմիշտ էին:
Զի արարածք արժանասցին
Յայնժամ տեսլեան երրեակդ անձին
Ի վըկայել Քեզ, Միածին,
Ըստ Յորդանան և ի լերինն,
Ընդ Քեզ և զօրք վերինք հոսին,
Մինչ զի թափուր մընայ երկին:
Հրեշտակք յառաջ ընթանայցեն,
Հրեշտակապետք պարունակին,
Սուրբ Զօրութեանցըն դաս կարգին
Եւ Պետութեանցըն գումարին,
Իշխանութիւնքըն զարհուրին
Եւ Տէրութիւնքըն սարսափին,
Սերովբէքըն թևսքօղին
Եւ ի խոնարհ ըզդէմս ունին,

ՄԱՏ. Գ, 16-17

ՄԱՏ. ԺԷ, 5

Այլ նըմանվեն հրեշտակներին,
Նըման կանխասաց Քո բանին,
Եվ երբ նըշան տաս սուրբ խաչի,
Այն փայլակի պես կըվառվի,
Արևելքից կըճառագի,
Չորս անկյունով կըտարածվի,
Լուսն արևի կընվաղի,
Լույսը լուսնի կըխավարի,
Կընկնեն աստղերը երկընքի,
Զորությունները կըշարժվեն,
Հրեական ազգը կըլացի,
Տեսնելով, թե ում խոցեցին,
Մահմեդականք կանհետանան,
Զի անարգին խաչի նըշանն,
Պաշտողները Քեզ կըպանծան,
Խաչակիցներդ կուրախանան,
Մեղավորները կըխընդրեն,
Որ ծուլությամբ են կյանքն ապրել,
Նախապես յուզը պատրաստած
Լապտերները սուրբ կույսերի
Կըշողշողան ու կըվառվեն,
Հիմարներինը կըհանգչեն,
Որ ուշացան յուզը գընել,
Երբոր Հայրըդ և Սուրբ Հոգին
Քեզ հետ հակվեն դեպի երկիր,
Հանց տեսիլքում Դանիելի՝
Հինավուրցի և միշտ էի:
Էակները կարժանանան
Այնժամ տեսլին Եռյակ Անձի,
Վըկայելով Քեզ, Միածին,
Հորդանանում, Թաբոր լեռին:
Քեզ հետ կըգա գորքը վերին,
Դատարկ թողած տունն երկընքի:
Նախ կընթանան հըրեշտակներ,
Պարունակի հրեշտակապետներ,
Ապա սուրբ դասը Զորությանց
Դասին գումարված Պետությանց,
Իշխանությունները կապշեն,
Տերությունները կըսարսեն,
Սերովբեներ, Քերովբեներ
Իրենց կարգով ու թներով

Եւ Քերովբէք աթոռ կարգին,
 Զի զթագաւորդ ընդունիցին:
 Իսկ թագաւորդ ի մեծ բեմբին
 Նըստիս յաթոռ դատարանին,
 Զի Հայր չդատէ զոք երկրածին,
 Այլ Քեզ միայն ետ, Միածին,
 Հովուիդ հանդէպ գան ժողովին
 Հօտից նըման ազգք երկրածին:
 Օդիքն յաջեայ դասըս կարգին,
 Ուլքն ի ձախմէ Քումմէ դասին,
 Անդ թագաւորք ոչ երկին
 Եւ ոչ իշխանըք պատուեսցին,
 Ոչ մեծամիտք հըպարտասցին
 Եւ ոչ հըզօրըք բարձրասցին,
 Զի միայնակ միայն լինին
 Առանց զօրու, զոր ոչ տեսին
 Եւ ճանաչեն թէ ստուեր էին:
 Աղքատք հոգւով թագաւորեն
 Եւ բարեգործըք մեծասցին,
 Քաղցեալք կենաց հացիւ լցցին
 Եւ մեծատունք ունայնասցին,
 Լեզուք ճարտարք անդ համրասցին
 Եւ հայիոյիչքըն կարկեսցին,
 Զի ոչ ունին պատասխանին
 Տալ Քում արդար դատաստանին:
 Անդ կարկամիցըն ձեռք կապին,
 Որ ի յաղքատս ոչ արձակին,
 Ի Քէն լըսեն ըզսոսկալին.
 Ի հո՛ւրն երթայք յաւիտենին:
 Անդ զըրկողաց կըշիռք դընին,
 Որչափ զըրկեացըն պահանջին
 Եւ ի գողոց գողանք խընդրին,
 Դառնալ ի Տէրն ուստի՜ առին:
 Եւ զի թափուր և մերկ լինին,
 Հատուցանել ոչ ունիցին,
 Զգործըս բարեաց փոխան առնուն,
 Թէ ոչ ըզշնորհս աւագանին:
 Անդ և սպաննողքըն պատժեսցին
 Անպարտ արեանցըն, զոր հեղին,
 Եւ բորբոքեալքն ի բոց ախտին,
 Պոռնիկքն անշէշ հըրով տանջին:

Կըծածկեն դեմքն իրենց խոնարհ,
Որ ընդունեն թագավորիդ:
Իսկ թագավորըդ մեծ բեմին
Կելնի գահը իր ատյանի,
Երկրածնին՝ Հայրը չի դատում,
Այլ, Միածին, Դու, միայն Դու
Կըտաս հովվի խրատ ժողովին,
Խառն ազգերին, ինչպես հոտին:
Որ գառները աջում լինեն,
Իսկ ուլերը ձախում դասվեն,
Որ չերևան արքաները
Եվ չըպատվվեն իշխանները,
Չըհոխորտան գոռոզները,
Չըպարծենան հըզորները,
Որ միայնակ ու դատարկ գան
Առանց զորքի, ահա այնժամ
Ըստվեր լինելը կիմանան,
Աղքատն հոգով՝ կարքայանա,
Բարեգործը կըմեծանա,
Քաղցածը հաց կառնի կենաց,
Մեծատունը կունայնանա,
Ճարտար լեզուն կըհամրանա,
Հայիոյողները կըլըռեն,
Զի պատրաստ չեն պատասխանի
Կանգնել արդար դատաստանի,
Կըկապվի ձեռքը գծուծների,
Որ կապեցին աղքատներին,
Կըլըսեն Քո խոսքը սաստող՝
Գընացնք հուրը հավերժող:
Ջըրկողներին կըտա դատի,
Ջըրկանքի չափը կըպահանջի,
Գողից գողունը ետ կառնի,
Տիրոջը կըվերադարձնի,
Իսկ ով մերկ ու դատարկ լինի,
Ոչինչ, ոչինչ չի հատուցի,
Բարի գործերն են հատուցվում
Ավագանի շընորհներով:
Սպանողներն անդ կըպատըծվեն
Զուր թափած արյան փոխարեն,
Եվ բորբոքված բոզերն ախտով
Պիտի տանջվեն անշեջ հըրով,

Անդ ամենայն գաղտնիք յայտնիւ,
Զոր ի ծածուկ աստ գործեցին
Քո առաջի և Հօր Քոյին
Եւ հրեշտակաց ամենայնին:
Միայն որք աստ խոստովանին,
Լինին ծածկեալք և ոչ յիշին
Եւ որ զամօթ կըրեն առ մին,
Ո՛չ պատկառին յայնմ ատենին:
Որք ի մարմին սերմանեցին,
Հընձեն զորոմըն հրոյ լուցկին:
Եւ ոյք յոգիս պըտղաբերին,
Առնուն զորայն ատորք հասկին,
Որք յերգարանս գինեաւ լըկտին
Եւ պագշոտեալ ծաղու լըցցին,
Լան և ողբան ի գեհենին
Եւ ատամունքըն կափկափին:
Որք զորովայնըն պաշտեցին
Եւ զամօթոյսըն պատուեցին,
Յանմահական հացեդ սովին
Զգենուն զամօթն յաւիտենին:
Որոց պըղծեալ են անկողինք
Եւ պագշոտեալ առ ցանկալին,
Ի կայծականց վերայ նիրհին,
Անքուն որդանցըն կեր լինի:
Որք ի կըշիռ տուրևառին
Վաճառականքըն խաբեցին,
Յարդարամէտ Քո կըշըռին
Բազմապատիկ պահանջեսցին:
Որք յաշխարհի գործ արուեստին,
Առ ի յոսկւոյ՝ կամ յարծաթին
Եւ կամ յայլ ինչ նիւթեղինին
Զտեարըս նիւթոցըն նենգեցին,
Հատուցանեն անդէն նոցին
Ի Քո արդար դատաստանին,
Ո՛չ թե ըզնիւթըն, զոր առին,
Այլ թե զբարիս, աստ գործեցին:
Որք դատաւորք են երկրային
Եւ ոչ զաղքատս ուղիղ դատին,
Ի յանաչառ Քո ատենին
Յանդիմանեալք կըշտամբին:

Ամեն գաղտնիք կրհայտնըվի,
 Որ պահվել է երկրում գաղտնի,
 Քո առաջ, Տեր, նաև Քո Հոր,
 Հրեշտակների առաջ բոլոր:
 Լոկ ով այստեղ խոստովանի,
 Կըծածկվի մեղքն ու չի հիշվի,
 Ով ամոթով է մընացել,
 Այն ատյանում չի պատկառի,
 Ովքեր մարմին սերմանեցին,
 Կըհընձեն հուրը բոցերի:
 Պըտղաբերեց ով որ հոգով,
 Կառնի խըրձեր առատ հասկով,
 Ով շըփացավ պանդոկներում,
 Լըկտի աջ ու ձախ էր ծաղրում,
 Կողբա, կըլացի գեհենում,
 Կըկափկափի ատամներով,
 Ովքեր ստամոքսը պաշտեցին,
 Խայտառակ բաներ արեցին,
 Անմահական հացն ուզեցին,
 Կառնեն ամոթն հավիտենի:
 Ովքեր պըղծել են անկողին
 Եվ պագշոտել առ ցանկալին,
 Կնիրհեն վըրան կայծակների,
 Կեր կըլինեն ժիր որդերի:
 Ովքեր առևտրում կըշռելիս
 Խաբեցին բան վաճառելիս,
 Արդարամետ Քո կըշռեքին
 Բազմապատիկ կըպահանջվի:
 Ովքեր աշխարհիկ արհեստում,
 Արծաթի կամ ոսկու գործում
 Եվ կամ ուրիշ այլ նյութերում
 Տիրոջ նյութերն են խարդախել,
 Այնտեղ պիտի տան հատուցում
 Հենց Քո արդար դատաստանում,
 Ոչ թե շահած նյութի համար,
 Այլ բարիքի այստեղ գործած:
 Ով դատավոր է աստ եղել,
 Աղբատներին ճիշտ չի դատել,
 Քո ատյանին ճիշտ, անաչառ
 Կըկըշտամբվի հանդիմանված:

Որք տէրութիւն յաշխարհ ունին,
 Իշխան բազմաց կամ նըւագին,
 Եւ դառնագոյն սրտիւք լինին
 Առ հնազանդեալըս հրամանին:
 Քո քաղցրութիւնդ ամեննին
 Ի դառնութիւն փոխի նոցին
 Ի երեսաց Քոց որոշին
 Եւ ի յանել բանտ արկանին:
 Որք ընդ փոքու ինչ պատճառին
 Հատին զանդամ Քո ստեղծուածին
 Եւ կամ սպանին բոլորովին,
 Զոր ոչ Օրէնք Քո դատեցին,
 Պահանջեսցես զարիւն նոցին
 Եւ ըզհատեալ մասն անդամին:
 Եւ իբրև ոչ տալ ունիցին,
 Մատնես ի մահ յաւիտենին:
 Որք նենգաւորք միմեանց լինին,
 Դաւաճանեն զանմեղ հոգին,
 Գաղտնիք նոցա յանդիմանին
 Եւ ըստ չարեացըն տուժեսցին:
 Որք ոխակալ են ի սըրտին
 Եւ ոչ թողուն յանցաւորին,
 Յայնժամ ի Քէն ոչ ընկալցին
 Ըզթողութիւն իւրանց պարտին:
 Որոց իժից թունօք լեզուին
 Հայիոյութեամբ առ Քեզ խօսին
 Եւ որք յերդմունըս յանդըգնին,
 Եւ ի յիշոցըս զազրալին,
 Լեզուք նոցա հրով տոչորին
 Եւ ի գեհեանըն պապակին:
 Քանզի համար տալ խընդրեսցին
 Դատարկ բանից ըստ հրամանին:
 Որք բամբասանս ընդ նախանձին
 Յօդեն ստութեամբ առ ընկերին
 Ըզչափ մեղացն՝ որով ստեցին,
 Յանձինս իւրանց ընդունիցին:
 Որք, որպէս ես, այժմ երանին
 Եւ չարք եղեալ՝ բարիք կոչին,
 Տիեզերաց ծանակ լինին
 Մինչ մերկանայ մարդըն ներքին:

ՄԱՏ. ԺԲ, 36

Ովքեր տերն են այս աշխարհի,
Իշխան ընչի կամ շատերի,
Կըլիկեն սըրտով դառնագույն,
Հըրամանիդ դարձած հըլու,
Քո քաղցրությամբ ամենևին
Նրանց դառը վերջը չի փոխվի,
Հայացքիդ տակ պիտի ջոկվեն
Նըրանք և բանտ անել ընկնեն:
Ովքեր պատճառով մի չընչին
Կըտրին անդամը ստեղծածիդ
Կամ սպանեցին ինչ-որ մեկին,
Չպատժեցին Քո օրենքով,
Կուզես արյունը Դու նըրանց
Եվ անդամի մասը հատված,
Եվ եթե տալ չըկարենան՝
Մահին կըմատնես հավիտյան.
Ովքեր միմյանց հանդեպ նենգեն,
Անմեղ հոգուն դավաճանեն,
Նըրանց գաղտնիքը կըբացվի
Եվ կըտուժեն ըստ չարիքի:
Ովքեր ոխ են պահում սըրտում
Եվ չեն ներում հանցավորին,
Այնժամ Քեզնից չեն ընկալի
Թողությունը իրենց պարտքի:
Իսկ ով թունոտ լեզվով օձի
Հայհոյությամբ Քո դեմ խոսի
Եվ խոսքերում իր հանդընի
Տալ հիշոցներ զարհուրելի,
Նըրա լեզուն հուրը կայրի
Եվ գեհենում կըպապակի,
Քանզի պետք է տա պատասխան,
Ինչպես ասում է պատվիրանն:
Ով նախանձի բամբասանքով
Ընկերոջն է կապում սըտով,
Մեղքի չափով իր սըտերի
Հատուցումը իր կընդունի:
Ինձպեսն այժմ երանելի,
Որ չար եղավ, կոչվեց բարի,
Տիեզերքից կըծանակվի,
Մինչ մերկանա մարդը ներքին:

Դարձեալ որք ինձ համեմատին
 Եւ կոյր աչօք լոյս անուանին,
 Մինչ խաւարին գործքն յայտնին
 Ի կոչողացն նախատին:
 Որք յերկիւղէ ինչ մարդկային
 Կամ ընդ փառաց անցաւորին
 Ջառ Քեզ հաւատ յոր մըկըրտին
 Փոխանակեն ընդ խաւարին,
 Հօր առաջի և հրեշտակաց
 Յուրաստ լինիս վասըն նոցին,
 Յանհաւատին դասըն կարգին,
 Որոց անշէշ հուրն է բաժին:
 Որք ի խորհուրդ Քո երկնային
 Մեռեալ մեղօք հոգւով մերձին,
 Ընդ աստուածասպանսըն կարգեսցին
 Կայիափայ և Աննային:
 Եւ ամենայն որք յայնմ աւուր
 Անապաշխար մեղօք լինին,
 Իւրաքանչիւր ոք զարժանին
 Աոցեն ի Քէն չափով յանձին:
 Նա և բարւոյն կողման մասին
 Պարզեք բարեաց ի քէն տացին
 Ըստ հաւատոցն և ըստ գործոց
 Եւ ըստ շնորհացն աւագանին:
 Նախ առաքեալքն Քո դասին
 Յերկոտասան աթոռ նըստին,
 Ջերկոստան ազգըն դատին
 Մեղուցելոյ Իսրայէլին:
 Անդ մարգարէքն յարդարին
 Երամ երամ դասաւորին,
 Որք զայնմ աւուր մեզ պատմեցին
 Յառաջագոյն, գոր ինչ լինին:
 Անդ նախաստեղծքն հիասցին
 Եւ նահապետքն ըսքանչասցին,
 Ջայնքան տեսեալ ազգ մարդկային,
 Որ ի յինքեանց յառաջ եկին:
 Անդ և հովիւքն քաջ պարծին
 Եւ զբրաբիոնն ընդունիցին,
 Իսկ հեղգացեալքն տուժեսցին,
 Որք ի գայլոցն ոչ պահեցին:

Նորից, ով հետս համեմատվի
Եվ կույր աչքով լույս համարվի,
Մինչդեռ գործերն են խավարի,
Կանչողներից կընախատվի:
Ով երկյուղից սոսկ մարդկային
Կամ էլ փառքով անցավորի
Մըկըրտութեամբ հավատը Քո
Փոխանակում են խավարով
Հոր առաջ և հըրեշտակաց,
Քեզ ուրանում վասըն դըրանց,
Անհավատների դաս կընկնեն,
Որոնց անշեշ հուրն է բաժին:
Ով խորհըրդին Քո երկնային
Մեղքով մեռած հոգով դիպչի,
Կարգ կանցնի Աստվածասպանի՝
Կայիափայի և Աննայի:
Ամեն մարդ, ով օրն այն վերջին
Չապաշխարված մեղքով ելնի,
Յուրաքանչյուր ոք արժանին
Քեզ կտա չափով իր անձի:
Նաև բանի համար բարի
Քեզնից պարգև կըհանձնըվի
Ըստ հավատի, ըստ գործերի,
Ավագանի շընորհների:
Թույլ կտաս նախ առաքյալներին
Որ բազմեն տասներկու գահին,
Տասներկու ազգն Իսրայելի
Իր մեղքերով պիտի դատվի:
Մարգարեներն այնտեղ արդար
Կըգումարվեն երամ-երամ,
Որ օրերում այն պատմեցին
Ինչ որ հետո պիտի լինի,
Նախաստեղծները կըհիանան,
Նահապետները կըսքանչանան,
Տեսնելով ցեղը մարդկային,
Որ իրենցից առաջացան,
Հովիվներն անդ քաջ կըպանծան,
Իրենց պըսակը կըստանան,
Իսկ ծուլերը պիտի տուժեն,
Որ գայլերից չըպահվեցին:

Անդ մարտիրոսքըն պըսակին,
 Որք և մարտեան՝ ըստ Օրինին,
 Կոյսքըն մաքուր թագիւ պըճնին,
 Որք փեսայիդ ըսպասեցին,
 Արեգական նըման ծագին,
 Փայլեն հանգոյն Արուեսեկին,
 Պէսպէս փառօք զանազանին
 Ըստ աստեղացն, որ ի յերկին:
 Իւրաքանչիւր ոք զարժանին
 Առցեն ի Քեն, զոր գործեցին,
 Ամուսնացեալքն՝ ըստ Օրինին
 Եւ ճըզնաւորք, որք առանձին,
 Եւ ամենայն ոք ըստ կարգին
 Զիւրոյ անձին գործեալ բարին
 Քեզ ընծայեն իբր ըզծաղիկ
 Ի հոտ անոյշ և երկնային.
 Ոմըն զաղօթըս սուրբ սըրտին
 Եւ զարտասուսն, որ միշտ հեղին,
 Այլ ոմն ըզսէրն աստուածային
 Եւ որ յեղբարսն է ըստ անձին,
 Ոմն ըզհըսկումըն գիշերին
 Եւ ըզկանխումն առաւօտին:
 Ոմն զպահոցըն պընդութիւն
 Ըզկերակրին և ըզլեզուին.
 Ոմըն զառատ տուրս աղքատին,
 Զոր ընդունիս ձեռամբ նորին,
 Ոմն ըզբաժակըն ցուրտ ջրին,
 Զոր ասացեր, թէ չկորընչին:
 Ոմն ըզխընդալն ընդ խընդալին
 Եւ զարտասուելն ընդ արտասուին,
 Այլ ոմն ըզտեսըն հիւանդին
 Եւ զհետևումն, որ ի բանտին:
 Մինն ըզծածկոյթ լինիլ մերկին
 Եւ զհովանի յարկ տընանկին,
 Այլ ոմն ըզհայր լինել որբոց
 Եւ խնամ ածել զըթով զայրին:
 Ոմանք զյաղթելըն խորհըրդին,
 Այնմ որ շարժեն ըզբոց ախտին,
 Այլք ըզփակելն զգայարանին,
 Ըզպատուհանսն ընողէմ չարին:

տւս. ժ, 42

Անդ Օրենքի համար կըռված
Վրկաները կըպըսակվեն,
Իսկ կույսերը պերճ թագ կառնեն,
Փեսայիդ են քանզի սպասել,
Արեգակի պես կըծագեն,
Արուսյակի պես կըլիայլեն,
Պեսպես փառքով կըտարբերվեն,
Ինչպես աստղերը երկընքի:
Ամեն մեկը քեզնից կառնի
Հատուցումն իր կատարածի,
Ամուսնացածն՝ ըստ Օրենքի,
Եվ ճըգնավորը իր չափի,
Եվ ամենայն ոք ըստ կարգի
Իր անձի կատարած բարին
Քեզ կընծայի իբրև ծաղիկ
Հոտով անուշ և երկնային,
Մեկն աղոթքը իր սուրբ սըրտի,
Եվ հեղումն իր արտասուքի,
Մըյուսը սերն աստվածային
Եղբոր հանդեպ իր մարմնի,
Մեկն արթնությունը գիշերվա
Եվ կանխումը առավոտվա,
Մեկն ամրությունը իր պահքի,
Չափը կերակրի և լեզվի,
Մյուսն առատ տուրքն աղքատին,
Որ կըտեսնես նրա ձեռքին,
Մեկը բաժակը պաղ ջրի,
Որ ասացիր, թե չի կորի,
Մեկն իր խինդը ուրախության
Եվ արտասուքը տըրտմության,
Մըյուսը այցը հիվանդին
Եվ խընամքը ներսում բանտի,
Մեկը հագուստ տալը մերկին
Եվ հովանի հարկ՝ տընանկին,
Մեկն հայրությունը որբերի
Եվ գըթությունը առ այրին,
Ոմանք հաղթելը խորհըրդին,
Որ շարժում է բոցը ախտի,
Մեկն էլ փակելն ընդդեմ չարի
Պատուհանն իր զգայարանի,

Ոմն ըզպարկէշտ ամուսնութիւն,
 Միւսն զամբիծ ըզկոյս հոգին,
 Ոմըն զարիւնըն պանծալի
 Եւ զչարչարանսն, որ ի մարմին:
 Մինն ըզներող լինել սըրտին
 Ի բարկութեան ժամանակին
 Եւ թըշնամոյն առնել բարին
 Վասըն սըրբոյ Քոյ հրամանին:
 Բայց ես, թափուրս յամենայնին
 Մեծամեծաց և նըւագին,
 Զհնչ տաց յայնժամ Քեզ ընդ բազմին
 Բարեաց աղքատս ամենեկին:
 Զի յայսցանէ, զոր ասացի,
 Զոր յընտրելոց Քեզ ընծային,
 Չունիմ մի մասն ի բոլորին,
 Այլ եմ ունակ հակառակին:
 Վասն այնորիկ նոցա տացին
 Վարձս ըստ գործոց զանազանին,
 Եւ ես զըրկեալ ամենեկին
 Յառատաձիր Քո պարգևին:
 Արդ ի յաղերս բանիւ խօսիմ՝
 Կամեցողիդ բարեաց վասն իմ,
 Զիս փոփոխեա՛ն այժմ ի բարին,
 Զի մի անփոխ մատնիմ տուծին,
 Աղաչանօք ընտրեալ հօտին,
 Որք յաջակողմըն Քո դասին:
 Ի յԱբելէ սրբոյ նախկին
 Մինչ ի յարդար մարդըն վերջին,
 Նահապետաց՝ մարգարէից
 Նախ քան զՕրէնսն և յՕրինին,
 Առաքելոց Նորոյ կտակին
 Եւ ոյք նոքօք հաւատացին,
 Ի յարձակել մահու զհոգիս
 Եւ ի կապել Քո վերըստին:
 Ողորմեսցիս ինձ յերկոսին,
 Զի քաղցրագույն երևեսցին
 Եւ լըսեցո՛, Տէր, ընդ նոսին
 Զերանաւէտ բարբառ Քոյին.

Մեկը՝ պարկեշտ ամուսնությունն,
Իսկ մյուսն՝ անբիծ ու կույս հոգին,
Մեկն էլ արյունն իր պանծալի,
Չարչարանքները մարմնի,
Մեկը ներող լինելն հոգու
Պահին բարկության, զայրույթի
Եվ լավությունն՝ իր թըշնամուն
Հանուն Քո սուրբ հըրամանի:
Բայց ես՝ թափուր այդ ամենից,
Թե մեծերից և թե փոքրից,
Ինչ տամ ես շատ շատերի պես,
Որ բարուց զուրկ էի այսպես,
Զի այսքանից, որ ասացի,
Մի բան չունեմ՝ Քեզ պատշաճի,
Մասն իսկ չունեմ այդ ամենից,
Այլ ունակ եմ միայն վատի:
Եվ կըտըրվի նըրանց միայն
Ըստ գործերի վարձ զանազան:
Եվ ես զըրկված ամեն ինչից,
Առատաձիր Քո պարգևից,
Խոսում եմ արդ աղերսագին
Կամեցողիդ բարու վասն իմ:
Դու ինձ շարժիր դեպի բարին,
Որ չըմատնըվեմ Քո պատժին,
Աղաչանքով ընտրած հոտի,
Որոնք դասն են Քո աջ կողմի,
Սկսած առաջին սուրբ Աբելից
Մինչև արդար մարդը վերջին,
Նահապետներից, որ նախքան
Օրենքները աշխարհ եկան,
Մարգարեներից, որ հետո
Շարժվում էին Քո Օրենքով,
Նաև Նոր կտակարանի
Առաքյալներից և բոլորից,
Ովքեր Նըրան հավատացին,
Մահից հոգիս արձակելիս,
Հետո մարմնի հետ կապելիս,
Ինձ ողորմիր, Տեր, երկուսում,
Որ քաղցրագույն տեսք ունենան,

եկայք օրհնեալք Հօր իմ վերին,
 Ժառանգեցէք զանճառ բարին:
 Եւ ոչ միայն իմումս անձին,
 Այլև իմոցն այս եղիցին,
 Նախնի ծնողաց հարցն առաջին,
 Այժմու եղբարցս և ոյք լինին,
 Եւ որք բարի մասն ինձ ցուցին
 Կամ անարգիս պատիւ եղին:
 Հատո՛ն նոցա զպարտըս վարձին,
 Իբր արժանւոյ թէ արարին:
 Նա՛ ղչ միայն որք սիրեցին,
 Այլ ողորմեա՛ն և ատողին
 Եւ թըշնամեացն իմումս անձին
 Թողցես զյանցանս առ իս պարտին,
 Հանուրց ծնելոց աւագանին,
 Որք այժմ ի Քեզ հաւատացին,
 Անծանօթից և ծանօթին
 Ողորմեսցիս յայնմ ատենին:
 Եւ ինձ շնորհեա՛ն, Տէր, ընդ նոսին
 Յօթևանաց Հօր Քո վերին:
 Թէպէտ և ոչ առ առաջինն,
 Այլ հուսկ յետոյ, վերջնոցն յետին:
 Եւ որք ի բանս աստուածային,
 Զոր շնորհեցեր իմումս անձին,
 Ի յընթեռնուլն աշխատեցին
 Եւ յաղօթելըն տաժանին:
 Շնորհեա՛ն նոցա զաղօթելին,
 Հատո՛ն ըզվարձս աշխատողին,
 Լոյս տուր աչաց, որք նայեցին,
 Մաքրեա՛ն զլեզուսն, որք վերծանին,
 Նա և ձեռամբ մակագրողին
 Եւ ուղղապէս փոխարկողին,
 Այլ և գոյիւք ըստացողին
 Մասունք բարեաց ի Քէն տացին:
 Եւ աննախանձ փափագողին
 Եւ ջերմեռանդ ընթերցողին,
 Եւս ի բերան զբանս առողին
 Լըցցես սովաւ զիղձըս սըրտին:

Եվ լըսեցրու նըրանց հետ Դու
Երանավետ բարբառը Քո,
Եկայք օրհնեալք Հօր իմ վերին,
Ժառանգեցեք անճառ բարին,
Եվ ոչ միայն լոկ իմ անձին,
Այլև նրանց՝ իմիններն,
Նախ հայրերին իմ առաջին,
Եղբայրներիս, ապրողներին,
Որ բարին ինձ ցույց տըվեցին
Եվ պատիվ՝ ինձ պես անարգին:
Հատուցիր պարտքը նրանց վարձի
Ըստ իրենց արժանիքների,
Նըրանց հետ, որ ինձ սիրեցին,
Ողորմիր և ատողներին,
Թըշնամիներին իմ անձի,
Թողնես հանցանքը իմ պարտքի,
Ավագանով ծընվածներին,
Որ այժմ Քեզ հավատացին,
Անծանոթին, թե ծանոթին,
Ողորմիր Դու այն ատյանին,
Եվ նըրանց հետ, Տեր, շընորհիր
Օթևաններն Հորըդ վերին,
Ոչ օթևանը առաջին,
Այլ հետինը վերջիններից:
Եվ ովքեր խոսքն աստվածային,
Որ շընորհել ես իմ անձին,
Պիտի կարդալ կարողանան
Եվ դըժվար աղոթքում մընան,
Շնորհիր նըրանց աղոթելին,
Հատուցիր վարձն աշխատողի,
Աչքերին լույս տուր նայողի,
Մաքրիր լեզուն, որ վերծանի,
Նաև ձեռքով արտագրողին,
Խըմբագրողին, սըրբագրողին,
Այլև կյանքում ստացողին
Մասը բարու Քո պարգևի
Եվ աննախանձ փափագողին
Եվ ջերմեռանդ ընթերցողին,
Նաև անգիր սովորողին,
Սրանով լըցրու իդձը սըրտիս:

Այլ թէ և յախտ ոք շարժեսցին
Պարսաւադէտ բանիս լինին,
Որք ո՛չ յինէն յառաջ եկին,
Այլ յաննախանձ Քո պարգևին:
Մի համարիր մեղըս նոցին,
Այլ մաքրեսցես զախտըս սըրտին՝
Քաջ իմանալ զիմաստ բանին,
Որ ամբարեալ կան ի սոսին:
Եւ որք ինչ և կամ յետ իմ,
Այսու բանիւ Քեզ պաղատին,
Համարեսցիս միշտ ընդ նոսին
Զիս ըզներսէս մաղթել սովին:
Եւ առ հոգիս իմ յաւանդին
Եւ ի մարմինս ի տապանին,
Բարեաց ազդումն ի Քէն լիցին
Եւ ցընծացեալըք կայտոեսցին:
Եւ մանաւանդ զիս յիշողին
Եւ թողութիւն ինձ խընդրողին,
Բարեբարոյ ընթերցողին,
Զմիտըս բանիցըն քըննողին,
Ողորմութեանց պարգևք տացին
Յառատաբուղիս բարեաց Քոյին,
Եւ հաւասար զամենեսին,
Տէր իմ, յիշե՛ա՛ յօրըն վերջին
Եւ Քեզ ընդ Հօր Քում, Անծընին,
Անեղ, աներբ, իսկականին
Եւ ընդ Հոգւոյդ Քում էակցին,
Անճառ բըղխմանըն հայրենին
Միոյ բնութեանդ աստուածային,
Մի տէրութեանդ և միշտ էին,
Գերակատար երիցդ անձին
Կատարողի արարածին,
Փառք և պատիւ և զօրութիւն
Եւ բարձրագոյն իշխանութիւն,
Յանցեալն, յայժմոյս, յապագային
Եւ անըսպառ յաւիտենին:

Իսկ թե մեկը ախտով շարժվի
Եվ խոսքերը իմ պարսավի,
Որ ինձանից չեն դուրս եկել,
Դու ես աննախանձ շընորհել,
Մի համարի՛ր դըրանք մեղքից,
Այլ մաքրի՛ր ախտերը սըրտից,
Թող ճանաչեն իմաստը բանի,
Որ ամբարված է սըրանում,
Եվ որ ինձ հետ են կամ հետո,
Այս բանով են Քեզ պաղատում,
Համարի՛ր ինձ միշտ նըրանց հետ,
Որ Ներսեսին սրանով հիշեն
Եվ իմ հոգուն, որ կավանդեմ,
Եվ մարմընիս՝ տապանի մեջ:
Ուժը բարու Քեզնից է, Տեր,
Ցընծացողները կըբերկրեն:
Եվ մանավանդ ինձ հիշողին
Եվ թողություն ինձ խընդրողին,
Բարյացակամ ընթերցողին,
Խոսքերիս միտքը քըննողին,
Ողորմության պարգև տըրվի
Առատաբուխ Քո բարիքից
Եվ հավասար թող ամենքին
Տերն իմ հիշի օրը վերջին,
Եվ Քեզ հետ Քո Հայրը, անծին,
Անեղ, աներբ և իսկական,
Եվ Հոգին, Տեր, Քո խոսակից,
Անճառ բըխումը հայրական,
Մի բընություն աստվածային,
Մի տերություն, միշտ էական,
Գերակատար եռյակ անձով
Արարածներին ըստեղծող
Փառք և պատիվ և գորություն
Եվ բարձրագույն իշխանություն,
Անցյալում, այժմ, ապագայում
Եվ անըսպառ հավիտյանում:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՂԹԱՆԱՅ ԲԱՆԻՑՍ ՆԵՐՍԷՍԻ

551 + 601 = 1152

ՔԵՐԹՎԱԾԻ ԳՐԱՆ

ՏԱՐԵԹԻՎԸ

Ի վեց հարիւր Հայոց թուական
 Եւ առաջին սկըսեալ նոր ամ,
 Բանըս գրեցաւ աղօթական
 Երկհազարեան տամբ յանկական:
 Սկիզբն ի հօրէն մեր նախնական
 Մինչ ի վերջին դարուս վախճան
 Ըզբան և զգործ համանգամայն
 Առ իս փոխեալ դիմառական,
 Արթուն հոգւոց խրախճանական
 Ի բանս և յիրըս զանազան:
 Ընդ Աստուծոյ դէմ յանդիման,
 Խօսակցելով անձն անարժան:
 Քանզի սիրոյն արարչական,
 Որ սերմանեալ ի մեզ բնական,
 Սա՛ զարթուցիչ ներբուսական,
 Հանող յաճումն արդիւնական,
 Զհոգին մըթին նըսեմական,
 Զզանգեալն ի հողս այս նիւթական:
 Սա՛ փոփոխէ լոյս պարզական
 Խառնէ ի գունդն անմարմնական:
 Զմիտս անմաքուրս աշխարհական,
 Որ ըստ ծովու ալեաց ծըփման,
 Սա՛ վերբերէ հրոյ նըման,
 Որպէս բնութիւնն է վերնական:
 Զանձն ըզգածեալ և հոգեկան
 Ի պատճառէ ինչ տըրտմական,
 Սա՛ ներգործէ ուրախական
 Ի թախծութեանցըն հիւթական:
 Եւ որք արբեալ են թըմբրական,
 Ըմպողք գինւոյն յիմարական,
 Սովաւ զարթնուն և զգաստանան,
 Թէ ընթեռնուն մըտառական:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԵՐՍԵՍԻ ՄԱՂԹԱՆՔՆԵՐԻ ԽՈՍՔԻ

Վեց հարյուր հայոց թըվական
Եվ առաջին ըսկըսվող ամ,
Երբ գըրվեց բանս աղոթական
Երկու հազար տուն հանգական,
Նախ հոր մասին մեր նախնական՝
Մինչև վերջին դարի վախճան,
Եվ բան, և գործ ընդհանրական
Իմ անունից դիմառնական,
Արթուն հոգուն ուրախության
Խոսքն ու դեպքերը զանազան:
Աստըծու հետ դեմ հանդիման
Խոսեցրի անձըս անարժան,
Քանզի սերը արարչական,
Որ սերմանվեց մեզ բընական
Արթնացնող է ներբուսական
Եվ աճեցնող արդյունական,
Մըթին հոգին նըսեմական՝
Խառնած հողին այս նյութական:
Սա տալիս է լույս պարզական,
Խառնում գընդին անմարմնական:
Միտքն անմաքուր աշխարհական,
Ալիքներում ծովի նըման,
Սա հայտնում է հրի նման՝
Բընությունն ինչ է վերնական:
Անձն զգայական և հոգեկան
Պատճառներից է տըրտմական,
Սա ազդում է ուրախությամբ
Թախծոտ մըտքերին նյութական:
Ովքեր արբել են թըմրությամբ՝
Ըմպած գինին հիմարության,
Սա կարթնացնի, կըզգաստացնի,
Եթե կարդան այն լըրջությամբ,

Որք Աստուծոյ տեսոյն բաղձան,
 Գերագունին լուսոյն ցանկան,
 Սորին թևօք վերասլանան,
 Մերձին ի տիպն անտեսական:
 Եւ զփոքրագոյն անձըն մարդկան,
 Որ է պատկեր ծառայական,
 Անտանելոյն և տիրական
 Բնութեանն առնէ սա օթարան:
 Ըզծայրագոյնըն բարձրութեան,
 Որ ի յերկնից երկին բնական,
 Սա վայրբերէ խոնարհական,
 Որք յիւր անուն ժողովեցան:
 Եւ զարարիչըն հանրական,
 Որով բոլոր էակք ստեղծան,
 Սովաւ կոչել որդիք մարդկան,
 Հայր ըստ շնորհի արժանացան:
 Վասն այսորիկ տաժանեցայ
 Գըրել չափով ըզբանս ի սմա,
 Ներսէս եղբայր Գրիգորիսի,
 Հայրապետիս ազգին Հայկայ:
 Այսմ, որ յօքունց գոլ գերակայ,
 Նախ նըստելոց յաթոռ սորա,
 Արեանառու լոյս ծագողին
 Եւ հետևող հոտոց նորա:
 Բայց ես հոգւով գոլ բացակայ,
 Մարմնով չօգտիմ թէ մերձակայ,
 Զի ոչ յիմոցըս խրատեցայ
 Եւ ոչ յայլոց, զոր ընթերցայ:
 Արթուն թուէի և թըմբեցայ
 Եւ իմաստուն, յիմարեցայ:
 Լոյս կարծէի, խաւարեցայ,
 Եւ միջօրեայ, նըսեմացայ,
 Լուսաւորիչ անուանեցայ,
 Բայց մառախուղ մըթին յիս կայ:
 Բըժիշկ այլոց հրաւիրեցայ,
 Բայց ես ախտիւք մեղաց լըցայ,
 Փոխան մեծի ես կոչեցայ,

ԳՐԻԳՈՐԻՍ (ԿԱԹՈ-
 ՂՅՈՍ 1133-1166)

ՀԱՌՐԶԱԼԻՆ
 ՍՐ. ԳՐԻԳՈՐԻՍ
 ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ
 ՏՈՀԱՄԹ Է:

Ովքեր Աստծո տեսքն են տեսչում,
Գերագույն լույսը ցանկանում,
Սրա թւերով կըսուրան
Դեպի կերպը անտեսական,
Եվ փոքրագույն անձը մարդկանց,
Որ պատկերն է Քո երկրային,
Անընկալելի, տիրական
Բընությանն է սա կացարան,
Որ է ծայրագույն բարձրության
Երկընքից երկինք բընական,
Սա կըբերի խոնարհությամբ,
Որ ժողովվեցին Քո անվամբ:
Եվ արարիչը բոլորի,
Որն արարեց էակներին,
Այս գըրքով վեր պիտի կանչի
Նըրանց, ով Հորն է արժանի:
Ահա ինչու չարչարվեցի՝
Գըրել չափով խոսքն այս գըրքի,
Ներսես՝ եղբայրըս Գրիգորի,
Հայկի ազգի հայրապետի,
Որ շատերից է գերակա,
Որ նըստեցին գահը նըրա,
Իբր ազգական լույս ծագողի
Եվ խընամող նըրա հոտի:
Բայց ես հոգով եմ բացակա,
Թեև մարմնով եմ մերձակա,
Ոչ մերոնցից խըրատվեցի,
Ոչ ուրիշից, ում կարդացի,
Իբր արթուն էի, թըմբեցի,
Եվ իմաստուն՝ հիմարացա,
Իբր լույս էի, խավարեցի,
Իբր միջօրե՝ նըսեմացա,
Լուսավորիչ անվանեցին,
Բայց մառախուղ մըթում կացա,
Իբր բըժիշկ հըրավիրվեցի,
Մեղքի ախտին գերի դարձա,
Մեծի տեղ ինձ ընդունեցին

Յանգուգական աթոռ նորայ,
 Եւ ի նմանոյն յոյժ հեռացայ,
 Որքան երկին առ ստորակայ,
 Քանզի ճրագի նըմանեցայ,
 Որ տեսողաց ըզլոյսըն տայ:
 Այլ ինքն մըրո՞վ տըգեղանայ
 Եւ յիւր լուսոյն չպայծառանայ
 Եւ կամ աչացս, որ ի մեզ կայ,
 Տեսող այլոց գոլ ի բացեայ:
 Բայց ինքն յինքեան անտեսանայ
 Եւ ըզսղալանսն անգիտանայ,
 Եւ կամ քարին այն յեսանայ,
 Որ սուսերաց ըզսուրըն տայ,
 Եւ ինքըն գուլ ո՛չ սըրանայ,
 Թէ և բազում անգամ ջանայ:
 Սոյնպէս և ես յայս յարակայ
 Զայս մաղթանաց բան խօսեցայ,
 Թէպէտ և ոչ յիս ազդէ սա,
 Սակայն արթնոց մաքրիչ մընայ:
 Եւ մի ի յայս ոք ախտանայ,
 Թէ չափաւոր բանիւ է սա
 Եւ արտաքին կարծի մընայ,
 Որպէս և զերզն Ափրոդիդա:
 Զի եթէ սուտն որ ձևանայ
 Սովաւ այնքան գեղեցկանայ:
 Քանի արդեօք վայելչանայ
 Ճըշմարտութեան բանն որ ի սմա:
 Երգոյն հանգոյն Սողոմոնի,
 Սա, որ Երգոց երգ անուանի,
 Որ զփեսային երկնաւորի
 Ըզսէրն առթէ հարսին կուսի,
 Եւ կամ Դաւթեանըն Սաղմոսի,
 Այսահալած մարգարէի,
 Որ յօծմանէ Սամուէլի
 Հոգւովն երգէր ի տասնադի:
 Եւ այլ բազմաց, որ են յայտնի,
 Որք վարեցան չափով բանի,
 Ո՛չ ի յինքեանց, այլ ի Հոգւոյն,

Անզուգական գահին նըրա,
Եվ նըրանից հույժ հեռացա,
Որքան երկիրը երկընքից,
Զի ճըրագի նըմանվեցի,
Որ տեսնողին լույս է տալիս,
Ինքը մըրով տըգեղանում,
Իր լույսով չի պայծառանում,
Կամ աչքերի, որ մենք ունենք,
Տեսնող նըրանց, որ այստեղ չեն,
Բայց ինքն իրեն նա չի տեսնում,
Սըխալներն իր չի իմանում,
Կամ էլ քարին այն հեսանի,
Որին սուսեր պիտի սըրվի,
Բայց նա չեղավ սըրի նըման,
Թեև բազում անգամ ջանաց:
Այդպես և ես այստեղ անվերջ
Մաղթանքների բան ասացի,
Թեև դա էլ վըրաս չազդեց,
Բայց կըմաքի արթուններին:
Թող չընդունեն հիվանդագին,
Թե չափեր են տըրված խոսքին,
Թե քերթված է սա արտաքին,
Ինչպես երգն Ափրոդիտեի:
Զի երբ սուտն է ձև ըստանում,
Որքան է նա գեղեցկանում,
Իսկ ինչքան կըվայելչանա
Ճըջմարտությունն, որ ունի սա:
Հանգով է երգը Սողոմոնի,
Այն, որ կոչվում է Երգ երգոց,
Որ երկնավոր այն փեսային
Կույս հարսի սերն է գովերգում,
Սաղմոսները կամ էլ Դավթի,
Այսահալած մարգարեի,
Որ օծմանը Սամուելի
Հոգով երգում էր տասնադի:
Եվ շատ բաներ, որ կան հայտնի,
Որ ստեղծվեցին չափով բանի,
Որ իրենցը չէ, այլ՝ Հոգու,

ՎԱՍՈՒԸ ԵՆՈՐԶԱ-
ԼՈՒ ՍՎԱԳ ԵՂԲԱՅ
ԲԵՆ Է. ԶՈՐԱՎԱՐԻ
ՄՅՈՐԱՆ ԵՂԲԱՅՐԸ

Այն որ շարժե յորըս կամի:
Զի մի աղքատ մեծըն կարծի
Եւ մի առատն ընդտ ասի:
Ըստ այսմ և շնորհն ոչ միակի,
Այլ ի բազումըս բաժանի:
Ոմանց տայ շնորհի մեկին բանի,
Զի հանրական լուր օգտեսցի,
Այլոց իմաստ ծածուկ ճառի,
Զի զարթուսցէ զնիրհեալ հոգի:
Ոմանց տայ բան, որ ոչ չափի,
Բայց զօրաւոր և ըստ կարգի,
Այլոց շնորհէ բանըս տաղի,
Զի և այնու միտքըն բանի:
Քանզի բնութիւն մեր է յայտնի,
Արագայագ և ձանձրալի,
Վասն այսորիկ տայ նա լեզուի
Զյոգնասեռ ազգըս բանի:
Ըստ այսմ և ես նըկարեցի
Զներտաղական բանս ի քարտի,
Ի զուարճութիւն բանասիրի
Եւ բարեմիտ ընթերցողի,
Յորում յիշման գիս արժանի
Համարեցէք սիրով սըրտի,
Զի թողութիւն ինձ պարգևի
Յառատաբաշխ Տեառնէն ձերի:
Նաև ծնողաց իմոց բարի,
Որք ի ժողովն են այժմ երկնի,
Մաղթեմ յիշմամբ աղօթելի
Յարտասուելոյն ժամանակի,
Այլ և եղբարցն իմ ըստ կարգի,
Նախ վեհագոյն տեառնըն մեծի,
Ապա Վասլին վեհ իշխանի,
Զօրավարին բարձրագունի
Եւ ծնեալ նոցունցըն զաւակի
Եւ բովանդակ ազգատոհմի:
Յինէն նորոգ բանս այս լիցի
Պատճառ բնաւից յիշատակի:
Եւ Մարեմայ ճըզնաւորի,

Որ հուզում է, ում ցանկանա,
Որ աղքատը մեծ չըկարծվի,
Առատաձեռնը ազաի ասվի,
Շնորհն այդպես ոչ թե մեկին,
Այլ բաժանվում է շատերին:
Ոմանց տրված է ձիրք մեկնելու,
Որ ամենայն մարդ օգտըվի,
Ոմանց՝ մութ իմաստ բացելու,
Արթնացնելով նիրհած հոգին,
Ոմանք խոսում են ոչ ըստ չափի,
Բայց զորավոր և ըստ կարգի,
Մեկն ստանում է շնորհիք տաղի,
Զի այդպես է միտքը գործում,
Զի բնությունն է մեր հայտնի՝
Շուտ հագեցող, ձանձրությունվ լի,
Ուստի տալիս է նա լեզվին
Բազմատեսակ ձևեր բանի:
Այդպես էլ ես ձև տըվեցի,
Ոտանավոր խոսք այս թըղթին,
Ի զվարճություն բան սիրողի
Եվ բարեմիտ ընթերցողի,
Որով հիշման ինձ արժանի
Համարեցեք սիրով սըրտի,
Որ թողությունն ինձ ընծայի
Առատաբաշխ Տերը ձերի,
Եվ իմ բարի ծընողներին,
Որ հավաքված են երկընքում,
Հիշել մաղթում եմ ամենքին
Լացով ասած աղոթքներում,
Եղբայրներիս իրենց կարգին,
Նախ վեհափառ տիրոջը մեծ,
Ապա Վասիլ մեծ իշխանին,
Բարձրագույնին՝ Զորավարին
Եվ զավակին նըրանց ծընած
Եվ բովանդակ ազգատոհմին,
Ինձնից նորոգ բանն այս լինի
Համարն բոլորի երջատակի,
Եվ մեզից մեր ճշմարտը:

Քեռ ըստ մարմնոյ մեր պանծալի
Եւ Վահրամայ իւր զաւակի՝
Հանգուցելոյն առ Քրիստոսի,
Միշտ յիշատակ սա եղիցի
Այժմ և յաւուրն ապագայի,
Թողուլ զյանցանսն, որ ի մարմնի,
Կարգիլ ի դասըն հրեշտակի,
Նաև հանուրց ամենայնի՝
Մերձակայիցս և ոյք հեռի:
Ոյք հաւատան իմ Յիսուսի,
Տէր համօրէն ողորմեսցի:
Եւ նըմա փառք յեկեղեցի
Ընդ Հօր Հոգւովն ճըշմարտի,
Յաւէտ յայժմոյս և միշտ էի
Եւ յաւիտեան յաւիտենի:

Այրունակից քաղցըր քըրոջ,
Եվ Վահրամի՝ իր զավակի,
Հանգած հանուն Քըրիստոսի,
Միշտ հիշատակ սա թող լինի
Այժմ և օրն ապագայի
Թողնել հանցանքը մարմնի,
Կարգել դասը հըրեշտակի,
Նաև հանուն այն բոլորի,
Որ մերձակա են և հեռու,
Որ հավատան իմ Հիսուսին,
Տերը նըրանց թող ողորմի,
Եվ փնռք նըրան եկեղեցում
Հոր հետ և ճըշմարիտ Հոգու,
Հավերժ այժմ և միշտ Աստծու
Եվ հավիտյանս հավիտենից:

«ԱՊՈԼՈՆ» հրատարակչություն

**ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ՀԻՍՈՒՍ ՈՐԴԻ
(վիպասանական ողբերգություն)**

**Խմբագիր՝ ՀԱԿՈԲ ՄՈՎՍԵՍ
Գեղ. խմբագիր՝ ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ ՆԵՐՍԵՍ ԱԹԱԲԵԿՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ ԱՐԹՈՒՐ ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ**

**Իջեցված է արտադրության՝ 17.10.91 թ.:
Չափսը՝ 84x108 1/16:
Թուղթ՝ տպագր. օֆսեթ: Տառատեսակ՝ «Արարատ»:
Տպագրություն՝ օֆսեթ: Պայմ. 14,0 մամ., տպ.
7 մամ., հրատ. 13,5 մամ.: Տպաքանակ՝ 40062:
Պատվեր 1081, Գինը՝ 7ռ.:**

**«Գարուն» ամսագրի «Ապոլոն» հրատարակչություն:
Երևան-15, Գրիգոր Լուսավորչի 15:**

**Շարվածքը կատարվել է ֆոտոշարվածքի արտադրական
կենտրոնում:
Երևան-9, Տերյան-89:**

**ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր
«Հարբերական» հրատարակչություն:**

Երևան, Արշակունյաց պողոտա, 3:

500m

ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



FL0682372

1111492

ԱՅԿԱՆՈՒՄ

ՀԱՐԳԵԼԻ ԸՆԹԵՐՅՈՂ, 1881 ԹՎԱ-
ԿԱՆԻՆ «ԳԱՐՈՒՆ» ԱՄՍԱԳՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆԸ ԶԵՋ ԿՆԵՐԿԱՅԱՑ-
ՆԻ ՀԵՏԵՎՅԱԼ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

ԽՈՐԽԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՍ: «ԵՐԿՈՒ ԱՐՋԱՆԵՐՆ ՈՒ
ԵՐԿՈՒ ԼԱԲԻՐԻՆԹՈՍՆԵՐԸ»

